Ս. Վ. ՉԵՖՐԱՆՈՎ

ԽՍՀՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

[illegible] ԹԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ [illegible]ՑԻ ՀԱՄԱՐ

II ՄԱՍ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

5.1.4
Չ-45

Ս. Վ. ՉԵՖՐԱՆՈՎ

20 JUL 2010
551.4
Չ-48

ԽՍՀՄ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ԹԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

II ՄԱՍ

Չորրորդ հրատարակություն

Հաստատված է ՌՍՖՍՀ Լուսժողկոմատի կողմից

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1940

17 JUL 2013

11809

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԽՍՀՄ պետական սահմանը
- ԽՍՀՄ բևեռային սեկտորի սահմանները
- Միութենական հանրապետ. »
- ԱԽՍՀ, յերկրամասերի և մարզերի »
- Ավտոնոմ մարզերի »
- Միութենական հանրապետ. կենտրոններ
- ԱԽՍՀ, յերկրամասերի և մարզերի »
- Այլ բնակավայրեր
- Կարևորագույն յերկաթուղիներ
- Նավարկելի ջրանցքներ

1530
49

С. В. Чефранов
Физическая география СССР
II часть
Гиз. Арм. ССР, Ереван, 1940 г.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԱՐԶԵՐԻ ՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ։ ԽՍՀՄ ՎԱՐՉԱ.-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ տերիտորիան շատ մեծ է, նրա զանազան մասերի բնական պայմաններն էլ շատ բազմազան են։ Վորպեսզի կարելի լինի բնութագրել յերկրի առանձին մասերը, վորոշել նրանց նմանությունը, տարբերությունն ու առանձնահատկությունները, անհրաժեշտ է ամբողջ տերիտորիան բաժանել առանձին մարզերի, վորոնց կարելի լինի համեմատել իրար հետ։ Ի հարկե, մեր յերկրի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը նման չեն իրար։ Ուրալն ու Ղրիմն իրենց բնությամբ, բնակչությամբ ու տնտեսությամբ լրիվին տարբեր մարզեր են։ Սակայն, քիչ է պատահում, վոր այդպիսի մարզերի սահմանները վորոշակի գծված լինեն, և առանձին մարզերի միջև անցումները մեծ մասամբ աստիճանական են լինում։

Առանձին մարզերի սահմանազատումը կարելի յե կատարել, հիմք ունենալով տարբեր հատկանիշներ՝ 1) ըստ ֆիզիկո-աշխարհագրական տվյալների (ռելյեֆի կառուցվածքը, կլիման, հողը, բուսականությունը և այլն. 2) ըստ տնտեսա-աշխարհագրական առանձնահատկությունների (մարդու գերակշռող զբաղմունքը—գյուղատնտեսություն, արդյունաբերություն և այլն), 3) ըստ այն վարչա-քաղաքական բաժանման, վորն ընդունված է տվյալ ժամանակում. այդ բաժանումն էլ ինքնին կատարվում է տնտեսական հատկանիշների կամ բնակչության ազգային կազմի հիմքի վրա։

Այսպիսով, նայած թե ինչ հատկանիշներ են ընդունված, մարզերը կարող են լինել՝ ֆիզիկո-աշխարհագրական, տնտեսական և վարչա-քաղաքական։

Այս գրքում ԽՍՀՄ բաժանման հիմք են ծառայել ֆիզիկո-աշխարհագրական հատկանիշները: Սակայն, մարզերի սահմանները վորոշելիս հաշվի յեն առնված նաև տնտեսա-աշխարհագրական հատկանիշները, ինչպես և Միության վարչա-քաղաքական բաժանումը Ստալինյան Սահմանադրության համապատասխան: Միության ամբողջ տերիտորիան բաժանված է տասներկու ֆիզիկո-աշխարհագրական մարզերի․ նրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարող է բաժանվել էլ ավելի փոքր շրջանների: Յուրաքանչյուր մարզ իր մեջ ունի մի շարք վարչա-քաղաքական միավորներ՝ միութենական ու ավտոնոմ հանրապետություններ, յերկրամասեր ու մարզեր:

Տասներկու մարզերից յոթը գտնվում են Միության Յեվրոպական մասում, իսկ հինգը՝ Ասիական մասում: Ասիական մարզերը շատ ավելի խոշոր են Յեվրոպականից: ԽՍՀՄ Ասիական մասի տերիտորիան ավելի քան յերեք անգամ մեծ է Յեվրոպականից, ավելի քիչ է յուրացված մարդու կողմից, ավելի պակաս է ուսումնասիրված և այդ պատճառով կարող է բնութագրվել միայն ընդհանուր գծերով:

Այնտեղ, ուր ֆիզիկո-աշխարհագրական մարզերի սահմանները լրիվ չեն համընկնում վարչական սահմաններին, այդ հանգամանքը նշվում է յուրաքանչյուր մարզի նկարագրության ժամանակ: Նկարագրության մեջ նախ տրվում է ամբողջ մարզի ընդհանուր բնութագրությունը, այնուհետև նշվում ու նկարագրվում են ավելի մանր ֆիզիկո-աշխարհագրական շրջանները, վորոնցից կազմված է տվյալ մարզը: Իսկ յուրաքանչյուր մարզի բնակչությունը, նրա տնտեսությունը, քաղաքները և հաղորդակցության ճանապարհներն ուսումնասիրվում են ամբողջությամբ:

ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) մեջ մտնում են 11 Հանրապետություն:

1. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ՌԽՖՍՀ) ըստ տարածության և ըստ ազգաբնակչության առաջին տեղն է գրավում: Նրան է բաժին ընկնում Միության ամբողջ տարածության $^4/_5$ և ամբողջ ազ-

գաբնակչության $^2/_3$ մասը: ՌԽՖՍՀ բռնում է Միության ամբողջ հյուսիսային և միջին մասը, արևմտյան սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը: ՌԽՖՍՀ մեջ են մտնում Միության Յեվրոպական մասը, բացառությամբ հարավ-արևմուտքի, ուր գտնվում են Ուկրաինական ԽՍՀ և Բելոռուսական ԽՍՀ, Կովկասի հյուսիսային կեսը, ամբողջ Արևմտյան Սիբիրը, Արևելյան Սիբիրը և Հեռավոր Արևելքը: Ազգաբնակչության գերակշռող մասը ռուսներն են ($^4/_5$): Ազգաբնակչության մեկ հինգերորդ մասը բաղկացած է այլ ազգություններից, վորոնք կազմում են 17 ավտոնոմ հանրապետություններ և 6 ավտոնոմ մարզեր: Դրա հետևանքով էլ, ի տարբերություն մյուս միութենական հանրապետությունների, ՌԽՖՍՀ հանդիսանում է ֆեդերատիվ հանրապետություն:

Մեծ մասամբ ռուս ազգաբնակչություն ունեցող տերիտորիան բաժանվում է 23 մարզերի և 5 յերկրամասերի:

2. Ուկրաինական ԽՍՀ (ՈւԽՍՀ)—Միության Յեվրոպական մասի հարավ-արևմուտքում՝ Սև ծովի և արևմտյան սահմանի միջև: Ըստ ազգաբնակչության քանակի յերկրորդ տեղն է գրավում:

3. Բելոռուսական ԽՍՀ (ԲԽՍՀ)—արևմտյան սահմանի ուղղությամբ, Արևմտյան Դվինա և Դնեպր գետերի ընթացքում:

4. Ադրբեջանական ԽՍՀ—բռնում է Անդրկովկասի այն մասը, վոր հարում է Կասպից ծովին:

5. Վրացական ԽՍՀ—Անդրկովկասի արևմտյան մասում, վորը հարում է Սև ծովին:

6. Հայկական ԽՍՀ—Անդրկովկասի հարավ-արևմուտքում, Թյուրքիայի և Իրանի սահմանագլխին:

7. Թուրքմենական ԽՍՀ—Միջին Ասիայում, Կասպից ծովի և Ամու-Դարիա գետի արանքում:

8. Ուզբեկական ԽՍՀ—Միջին Ասիայի կենտրոնական մասում:

9. Տաջիկական ԽՍՀ—Միջին Ասիայի հարավ-արևելյան մասում, Աֆղանստանի և Չինաստանի սահմանագլխին:

10. Ղազախական ԽՍՀ—բռնում է արևմուտքում Վոլգայի ստորին հոսանքի ու Կասպից ծովի և արևելքում չինական սահմանի միջև ընկած տարածությունը: Ըստ իր տարածության միութենական հանրապետություններից յերկրորդն է:

11. Կիրգիզական ԽՍՀ—Միջին Ասիայի արևելքում, Չինաստանի սահմանի մոտ:

ԽՍՀՄ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՖԻԶԻԿՈ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԱՐԶԵՐԻ, ՆՇԵԼՈՎ ԱՅՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԱՅԴ ՄԱՐԶԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՄԵՋ

I. *ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍ (Կովկասի հետ)*

1. ԽՍՀՄ Յեվրոպական մասի հյուսիսը.—*Լենինգրադի մարզ, Կարելական ԱԽՍՀ, Արխանգելսկի մարզ, Վոլոգդայի մարզ, Կիրովի մարզ, Կոմի ԱԽՍՀ։*

2. ԽՍՀՄ Յեվրոպական մասի կենտրոն.—*Մոսկվայի մարզ, Տուլայի մարզ, Ռյազանի մարզ, Իվանովոյի մարզ, Յարոսլավլի մարզ, Գորկու մարզ, Որյոլի մարզ, Կուրսկի մարզ, Վորոնեժի մարզ, Տամբովի մարզ, Պենզայի մարզ, Մորդվական ԱԽՍՀ։*

3. ԽՍՀՄ Յեվրոպական մասի արևմուտքը.—*Բելոռուսական ԽՍՀ, Սմոլենսկի մարզ, Կալինինի մարզ։*

4. ԽՍՀՄ Յեվրոպական մասի հարավը.—*Ուկրաինական ԽՍՀ (Մոլդավական ԱԽՍՀ-ով), Ղրիմի ԱԽՍՀ, Ռոստովի մարզ։*

5. Կովկաս.—*Կրասնոդարի յերկրամաս (Ադըղեական ավտ. մարզով)։ Որջոնիկիձեյի յերկրամաս (Չերքեզական ավտ. մարզով և Կարաչայի ավտ. մարզով), Կաբարդինո-Բալկարական ԱԽՍՀ, Հյուս. Ոսեթիայի ԱԽՍՀ, Չեչեն-Ինգուշական ԱԽՍՀ, Դաղստանի ԱԽՍՀ, Վրացական ԽՍՀ (Ափխազական ԱԽՍՀ-ով, Աջարական ԱԽՍՀ-ով և Հար. Ոսեթիայի ավտ. մարզով), Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ (Նախիջևանի ԱԽՍՀ-ով և Լեռն. Ղարաբաղի ավտ. մարզով)։*

6. Պովոլժյե.—*Կույբիշևի մարզ, Սարատովի մարզ, Ստալինգրադի մարզ, Թաթարական ԱԽՍՀ, Չուվաշական ԱԽՍՀ, Մարիական ԱԽՍՀ, Պովոլժյեյի Գերմանացիների ԱԽՍՀ, Կալմիկական ԱԽՍՀ։*

7. Ուրալ.—*Պերմի մարզ, Սվերդլովսկի մարզ, Չելյաբինսկի մարզ, Չկալովի մարզ, Բաշկիրական ԱԽՍՀ, Ուդմուրտական ԱԽՍՀ։*



Նկ. 1. ԽՍՀՄ Յեվրոպական մասի ֆիզիկո-աշխարհագրական մարզերի քարտեզը։

8. Արևմտյան Սիբիր.—Նովոսիբիրսկան մարզ, Ալթայի յերկրամաս (Ոյրոթական ավտ. մարզով), Ոմսկի մարզ:

9. Արևելյան Սիբիր.—Կրասնոյարսկի յերկրամաս (Խակասական ավտ. մարզով), Իրկուտսկի մարզ, Չիտայի մարզ, Բուրյաթ-Մոնղոլական ԱԽՍՀ, Յակուտական ԱԽՍՀ:

Նկ. 2. ԽՍՀՄ Ասիական մասի ֆիզիկո-աշխարհագրական մարզերի քարտեզը:

10. Հեռավոր Արևելք.—Հեռավոր Արևելքի յերկրամաս (Հրեական ավտ. մարզով):

11. Ղազախստան.—Ղազախական ԽՍՀ:

12. Միջին Ասիա.—Թուրքմենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ (Կարա-Կալպակական ԱԽՍՀ-ով), Տաջիկական ԽՍՀ (Լեռնային Բադախշանի ավտ. մարզով), Կիրգիզական ԽՍՀ:

I. ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍ

1. ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍԸ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—«Հյուսիս» անունը կրող ֆիզիկո-աշխարհագրական մարզը բռնում է ԽՍՀՄ Յեվրոպական մասի ամբողջ տերիտորիայի մոտ $^1/_3$ մասը: Այդ մի ընդարձակ յերկիր է, վորն իր տարածությամբ շատ ավելի մեծ է մյուս մարզերից: Արևմուտքում նրա սահմանը վորոշողը մեր պետական սահմանն է, արևելքում Հյուսիսային Ուրալը նրան բաժանում է Սիբիրի հյուսիսային մասից: Հարավում նրա բնական սահմանն է հանդիսանում Արևելա-Յեվրոպական հարթավայրի գլխավոր ջրբաժանը, վորն արևմուտքում անցնում է մորենային բլրաշարքով, իսկ արևելքում՝ Հյուսիսային Ուվալներով: Հյուսիսում այս յերկրամասն ամբողջովին գտնվում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի մոտ, վորի մեջ են Կոլգուև, Վայգաչ, Նոր Յերկիր կղզիները, իսկ ծայր հյուսիսում 80°-ից էլ հյուսիս՝ Ֆրանց Յոսիֆի Յերկիրը:

Ամբողջ յերկրամասի մի քառորդ մասը գտնվում է բևեռային շրջագծից հյուսիս և դրանով էլ վորոշվում է նրա բնության բնույթը, վորը խիստ է և մարդուց մեծ յեռանդ ու ջանք է պահանջում պայքարի միջոցով նրան տիրապետելու համար: Ցուրտ ծովի շրջանն է այդ, վորտեղ նույնիսկ ամռանը սառույցներ են լողում. արկտիկական ու մերձարկտիկական տունդրաների, տայգայի փշատերև անտառների, ընդարձակ ճահիճների ու տորֆավայրերի, ջրառատ գետերի շրջանն է այդ, վորի արևմտյան մասում կան բազմաթիվ մանր ու խոշոր լճեր: Յերկարատև ձմեռվա և ամառային լույս գիշերների շրջանն է այդ: Այս մարզը դեռ շատ քիչ է յուրացված մարդու կողմից, չնչին բացառությամբ շատ նոսր բնակչություն ունի: Բայց միաժա-

մանակ հանդիսանում է բնական մեծ հարստությունների շըրջան. այստեղ շատ կան անտառներ, մուշտակատու կենդանիներ, թռչունների հոտեր, ձկան ու փոկի վորսարաններ. առանձնաբար հայտաբերվում են յերկրի ընդերքի հարստությունները —ապատիտ, նեֆելին, կապար ու յերկաթ, քարածուխ ու նավթ: Յեվ, բացի այս ամենը, ունի չսառչող, ազատ յելք դեպի ովկիանոսը:



Նկ. 3. ՍՍՀՄ Եվրոպական մասի հյուսիսը

Իր ֆիզիկա-աշխարհագրական հատկանիշներով ամբողջական այս մարզին հարավ-արևմուտքում միանում է տարածու-

թյամբ համեմատաբար փոքր և բնությամբ մասամբ տարբեր մի յենթամարզ, վորն ընդգրկում է Ոնեգայի ու Լադոգայի լըճերի հարավային մասերը և Ֆիննական ծոցի արևելյան ափերը: Այդ յենթամարզը Հյուսիսի հետ կապված է վարչական կարգով: Այդպիսով, Հյուսիսը ձեռք է բերում Արևմուտքի բնութագծերը. այստեղ կլիման փոքր ինչ մեղմանում է Ատլանտյան ովկիանոսի համեմատաբար մոտիկության հետևանքով: Գետային սիստեմը պատկանում է Բալթիկ ծովի ավազանին, և հենց այստեղ, Ֆիննական ծոցի անկյունում է գտնվում մեր «պատուհանը դեպի Յեվրոպա»—Լենինգրադը, ամբողջ Խորհրդային Միության խոշորագույն ծովային նավահանգիստը:

Իր ռելյեֆով, մասամբ էլ բնական ուրիշ պայմաններով, Հյուսիսը բաժանվում է 5 մասի՝ 1) հյուսիս-արևմտյան մաս՝ Կոլա-Կարելական զանգված, 2) հարավ-արևմտյան մաս՝ Լճերի Յերկիր, 3) միջին, ավելի ընդարձակ մաս՝ Դվինա-Պեչորայի դաշտավայր, 4) արևելյան մաս՝ Հյուսիսային Ուրալ և 5) Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կղզիներ: Այս յերկրամասի հյուսիսային և հարավային ամենահեռավոր կետերը մայր ցամաքի սահմաններում գտնվում են 900—1300 կմ հեռավորության վրա:

Կոլա-Կարելական զանգված.—Կոլա-Կարելական զանգվածը բռնում է այս յերկրամասի ամբողջ հյուսիս-արևմուտքը: Արևելքում նա հասնում է մինչև Ոնեգա գետը, հարավում՝ մինչև Սվիր գետը, ընդգրկելով Ոնեգա լճի մեծ մասը և Լադոգա լճի հյուսիս-արևելյան մասը: Նրա հյուսիսային մասն է Կոլայի թերակղզին, վոր բաղկացած է բյուրեղային լեռնատռակներից և Սկանդինավյան թերակղզու հետ յերկրաբանական մի ամբողջություն է կազմում: Այստեղի ռելյեֆը ցույց է տալիս մոտավոր անցյալի սառցակալման խիստ արտահայտված հետքեր, այն է՝ լեռնաշղթաների գագաթների կլորությունը, գոգավորություններ, հղկված ժայռեր, վորոնք կոչվում են «վոչխարի ճակատներ», մորենային բլուրներ և բլրաշարքեր: Գոգավորությունները, վորոնք առաջացել են բազմաթիվ նստվածքների հետևանքով, հետագայում խորացել ու կոկվել են սառցի ազդեցությամբ: Նրանց մեջ կան բազմաթիվ լճեր, վորոնք ձգված են հյուսիս—արևմուտքից հարավ—արևելք ուղղությամբ:

Նրանց միացնող գետերը դեռ մոտիկ անցյալում հանդիսանում էյին այժմ արդեն անհետացած լճերի շղթաները: Նրանց

հովիտները մշակված չեն, հուները շատ սահանքավոր են։ Կոլա թերակղզու ներքին մասերում կան ավելի բարձր լեռներ, այն



Նկ. 4. Խիբինի տեսարաններից

է՝ Խիբինի լեռները, որոնք միջին հաշվով մինչև 1200 մ բարձրության են հասնում։ Խիբինի լեռներն իրենց մեջ պարունակում են բազմապիսի և շատ հազվագյուտ հանքեր։ Նրանցից



Նկ. 5. Ֆիորդ Կոլայի թերակղզում.

մի քանիսը տնտեսական մեծ նշանակություն ունեն, ինչպես օրինակ՝ ապատիտը, որից հանքային պարարտանյութ են պատրաստում։ Նստվածքային հովիտներում գոյացել են լճեր (Իմանդրա, Ումբոզերո)։ Իմանդրա լճից դուրս հոսող Նիվա գետը թափվում է Սպիտակ ծովի Կանդալակշի խորշը։ Կոլա թերակղզու ամենամեծ գետը Տուլոման թափվում է Բարենցի ծովի Կոլայի ծոցը։ Ջրառատ, սահանքավոր գետերը հիդրոէներգիայի զգալի պաշարներ ունեն։ Լեռնային զանգվածներում էլ ամենուրեք յերևում են սառցապատման հետքերը։ Հողմահարված լեռնատեսակներն առաջացնում են խոշոր քարքարուտներ։ Արևմուտքում ափերը բարձր են, կտրտված ծոցերով, որոնք նման են Նորվեգիայի ֆիորդներին։ Հյուսիսային ծովափը հայտնի է Մուրմանսկի ծովափ անունով։ Դեպի արևելք ափերն՝ ինչպես նաև ինքը թերակղզին՝ ցածրանում են մինչև 2000 մ և ավելի։

Խիբինյան լեռների լանդշաֆտը շատ յուրահատուկ է։ Դա իսկական հյուսիսային անապատ է, մերկ, միօրինակ ու վայրի։ Մեծ տարածության վրա մակերևույթը ծածկված է անկանոն կուտակված կունձերով. չկա ոչ մի բույս, ոչ էլ բավականաչափ քարաքոս ու մամուռ. չկա նույնիսկ ջուր. տեղ-տեղ, այն էլ շատ խորը, քարերի արանքից լսվում է հալչող ձյունից առաջացած անտեսանելի գետակների քչքչոցը։ Միայն քամին է փչում այդ հարթ տարածության վրա, միայն արևն ու սառնամանիքն են անդադար աշխատանք կատարում քայքայելով լեռնատեսակները։ Ամայի են նաև այդտեղի անտառները։ Յերբեմն-յերբեմն թռչում է մի որևէ թռչուն, յերևում է մի բևեռաղվես կամ նապաստակ։ Շուրջը ճնշող լռություն է։ Անտառը ծովափին չի հասնում։ Միայն ծովախորշում ու ծոցերում, այն էլ համարյա ջրի մոտ, աճում է կեչին։ Դրա փոխարեն բլուրների լանջերը զուգված են ծաղկուն բուսականությամբ, իսկ ժայռերում ու կղզիներում ցրված են անհաշիվ թռչուններ։ Այդ «թռչնային շուկաները» զարմացնում են իրենց բազմազանությամբ ու աշխուժությամբ։ Ամառվա ընթացքում մայր չմտնող բևեռային արևի տակ ամբողջ օրերով լսվում է թռչունների ճիչն ու աղմուկը։

Կարելիայի ռելյեֆն ավելի ցածր է ու միապաղաղ։ Ավելի բարձր տեղերը գտնվում են հյուսիսում և ֆինլանդական սահմանի մոտ, Բալթիկ ու Սպիտակ ծովերի ջրբաժանում։ Ինչպես Կոլա թերակղզում, այստեղ էլ յերկրի մակերևույթն ունի սառցադաշտի գործունեության պարզ հետքեր։ Հյուսիսային Կարելիայի համար առանձնապես բնորոշ են նեղ ու յերկար բլրաշարքերը (օզերը), որոնք, ինչպես և լճերը, ձգված են հյու-

սիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Լճեր շատ կան։ Ավելի հարավ ընկած հարթության հետ միասին Կարելիան իրոք հանդիսանում է «լճերի յերկիր»։ Նրանցից միքանիսը (Տոպոզերո, Սեգոզերո) ավելի քան հազար քառակուսի կիլոմետր տարածություն են բռնում յուրաքանչյուրը, մյուսները (Վիգոզերո) մոտավորապես այդ չափ են։ Կարելիայի ամենախոշոր լիճը Օնեգա լիճն է, վորի հյուսիսային մասը բաղկացած է ժայռոտ ափերով մի շարք ծոցերից։ Օնեգա լճի ծոցերն էլ նույն ուղղու-



Նկ. 6. Մի տեսարան Կարելիայից (մորենային լանդշաֆտ)։

թյունն ունեն—հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Գետերն այստեղ էլ սահանքավոր են, իսկ մի քանիսն ունեն նաև ջրվեժներ («պադուններ»)։ Ամենանշանավորներն են հյուսիս-արևմուտքից Օնեգա լիճը թափվող Սունա գետի ջրվեժները (Կիվաչը և Պոր-Պորոգը)։

Լճերի Յերկիր.—Յերկրամասի այն մասում, վորն ընկած է Կարելիայի գանգվածից դեպի հարավ, բյուրեղային լեռնատեսակներն արդեն գետնի յերեսը չեն դուրս գալիս։ Մակերևույթն

այստեղ ծածկված է սառցադաշտերի նստվածքներով։ Հյուսիս-արևմուտքում ու հարավ արևելքում անցնում են ծայրամորենների բլրաշարքերը, վորոնք հարավում ավելի բարձր են։ Այդ մորենային բլրաշարքերի հիմքն են կազմում նախասառցային բարձրությունները։ Նույնպիսի մի նախասառցային նստվածքային բարձրություն է անցնում Ֆիննական ծոցի հարավային ափով ու Լադոգա լճից հարավ և կազմված է կրաքարերից։ Վոլխով գետը, հոսելով այդ բարձրությունից, առաջացնում է սահանքներ, վորոնց վրա այժմ կառուցված է և Վոլխովի էլեկտրոկայանը։



Նկ. 7. Կարելիայի մի մասի քարտեզը լճերով։ Լճերը մեծ մասամբ ձգված են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։

Այդ շրջանն իր ռելյեֆով մեծ մասամբ հանդիսանում է բլրաշատ մի հարթություն, մորենային տիպիկ լանդշաֆտով, բլրաշարքեր, վորոնք կազմված են կավից, ավազից ու խճից, ամենուրեք ցրված են ճալաքարեր։ Բլուրների միջև ցածունքներում, հովիտներում և ջրբաժաններում կան զանազան ձևի լճեր։ Գետերն այստեղ ավելի հանդարտ են և հոսում են կանոնավորված հովիտներով, վորոնք սակայն յերբեմն ընդհատվում են սահանքներով ու ճալաքարերի շարքերով։ Յեվ այդպես ամենուրեք ռելյեֆի գոգավորություններում լճեր են։ Լճերի շատության պատճառով էլ այդ մասը կոչվում է Լճերի Յերկիր։ Բացի համեմատաբար մանր լճերից, վորոնց թիվը հազարների

յն հասնում, կան և շատ խոշորները։ Այստեղ են գտնվում Օնեգա և Լադոգա լճերի հարավային ծանծաղ մասերը՝ հարթ և չկտրտված ափերով, նաև Բելոյե լիճը, Իլմենը, Չուդ կամ Պեյպուս լիճը, Պսկովի լիճը և այլն։ Այդ լճերը գոյացել են ընդարձակ գոգավորություններում, որոնց յելքը փակվել է սառցադաշտային նստվածքներով, և լցվել են հալչող սառույցի ջրերով. ուստի բոլորն էլ ծանծաղ լճեր են։ Մանր լճերն առանձնապես ճահճանում են։ Այդ մասի ջրերը հոսում են դեպի Ֆիննական ծոցը, որտեղ թափվում է նաև կարճ, բայց ջրառատ Նևա գետը։ Նևան իր մեջ է հավաքում ամբողջ լճային ավազանի ջրերը (Սվիրն Օնեգա լճից, Վոլխովն Իլմենից, որի մեջ թափվում են Մստան, Լովատը)։ Միայն հարավ-արևելքի գետերը (Շեկսնան, Մոլոգան և նրանց վտակները) պատկանում են Վոլգայի ավազանին։

Նկ. 8. Պեչորայի վտակներից մեկի վրա։

Դվին-Պեչորայի դաշտավայրը.—Այս ընդարձակ դաշտավայրն աչքի յե ընկնում իր շատ հարթ, տափարակ մակերևույթով։ Մի ժամանակ այդ դաշտավայրը ծածկող սառցադաշտային նստվածքները հեղեղվել են այստեղ հասած Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ջրերով, և հետագայում պահպանվել են միայն արևմուտքում ու հյուսիսում։ Դաշտավայրը Հյուսիսային Ուվալների ոչ այնքան բարձր ջրբաժանից իջնում է դեպի հյուսիս, դեպի օվկիանոսի ափերը և կտրտված է ջրերի լայն ու զառիկող գետահովիտներով։ Հնագարյան նստվածքային ապարներից կազմված Տիմանի ցածրիկ լեռնապարն այս ամբողջ դաշտավայրը, բաժանում է յերկու մասի—արևելյան, որի ջրերը հոսում են Պեչորայի մեջ, և արևմտյան, որտեղ գլխավոր գետն է Հյուս. Դվինան։ Տիմանյան լեռնապարի շարունակությունն են հանդիսանում Կանին թերակղզու բարձրությունները։ Հյուսիսային Դվինան իր ջրբաժանների փոքր բարձրության շնորհիվ, ջրանցքներով միացած է Վոլգայի, Նևայի և Կամայի ավազաններին։ Տիմանյան լեռնապարն արգելքներ չի ստեղծում նաև հաղորդակցության համար, նա էլ ունի մի շարք վոլոկներ (քաշուկներ), վորոնք միացնում են Դվինայի ու Պեչորայի ավազանները։ Գետերը ջրառատ են և յերկար տարածությամբ նավարկելի։ Հյուսիսային Դվինան և նրա վերին հոսանքը հանդիսացող Սուխոնա գետը, վորն սկիզբ է առնում Կուբենսկոյե լճից, 1000 կիլոմետրից ավելի յերկարությամբ ջրային անընդմիջվող ճանապարհ է հանդիսանում։ Հյուսիսային Դվինան իր ստորին

Նկ.9. Հյուսիսային Ուրալի լեռնաշղթաների սխեման։

հոսանքում 3-ից մինչև 6 կիլոմետր լայնություն ունի։ Աջ կողմից Դվինայի մեջ թափվող Վիչեգդա գետն իր յերկարությամբ գերազանցում է Դվինային, իսկ խառնարանում գերազանցում է նրան նաև ջրառատությամբ։ Պեչորան էլ յերկարությամբ

գերազանցում է Դվինային. Նրա վտակներից նշանավորներն են — աջ կողմից՝ Ուսան, որն իր ջրերը հավաքում է Հյուսիսային Ուրալի արևմտյան լանջերից, և ձախ կողմից՝ Իժման: Բոլոր գետերը թափվում են ձագարաձև ծովածոցեր, որոնք այստեղ կոչվում են «գուբա» (խորշ): Մակընթացության ալիքը Հյուսիսային Դվինայով բարձրանում է ավելի քան 100 կմ և ունենում է 1,3 մետր բարձրություն: Հյուսիսային Ուվալներից դեպի հարավ, Կիրովի մարզի սահմաններում միջօրեականի ուղղությամբ ձգվում է Վյատսկի Ուվալ բարձրունքը, որ կազմված է կրակավից (մերգելից) ու կրաքարից: Այդ ամբողջ մասը զբաղված է Կամայի աջ վտակ Վյատկա գետի ավազաններով:

Հյուսիսային Ուրալ.— Հյուսիսային Ուրալն Ուրալյան լեռների ամենախիտ ու դժվար մատչելի մասն է: Նա սկսվում է Կարայի ծովից մոտ 40 կիլոմետր հեռավորության վրա. այստեղ համարյա հարթ տունդրայի մեջ բարձրանում է 450 մետրի հասնող Կոնստանտինով Կամեն լեռը: Նույն տունդրան անջատում է Ուրալից ու նրա սիստեմից Պայ-Խոյ ցածրիկ լեռնաշղթային, որն այնուհետև շարունակվում է Վայգաչում ու Նոր Երկրում: Կոնստանտինով Կամենից լեռնաշղթան ձգվում է



Նկ. 10. Մի տեսարան Հյուսիսային Ուրալում:

դեպի հարավ-արևմուտք, մինչև հյուսիսային լայնության 65°-ը, որտեղ ջրաբաշխ լեռնաշղթայից մի քիչ դեպի արևմուտք ընկած է Սաբլյա անունով խոշոր լեռնազանգվածը (1648 մ): Սաբլյայից դեպի հյուսիս-արևելք գտնվում է ամբողջ Ուրալի վերջերս հայտնաբերված ամենաբարձր գագաթը՝ Նարոդնայա լեռը (1885 մ): Հյուսիսային Ուրալի այս մասը երբեմն կոչվում է «անապատային»: Անմարդաբնակ տունդրայի մեջ Հյուսիսային Ուրալը ձգվում է մի նեղ շերտով՝ ժայռոտ, անտառազուրկ ու վայրի: Տեղ-տեղ նույնիսկ ամառը նրա վրա ձյան բծեր են մնում, իսկ վերջերս գիտական արշավախմբերը հայտնաբերել են նույնիսկ փոքր սառցադաշտեր (մինչև 0,5 կմ երկարությամբ):

Սաբլյայից սկսած Ուրալն իր ուղղությունը փոխում է դեպի հարավ՝ առաջացնելով երկու զուգահեռ լեռնաշղթա: Ամենաբարձր գագաթները, որ այստեղ սովորաբար կոչվում են «կամեն» (քար), հասնում են 1500—1600 մետր բարձրության. հս. լ. 67—65°-ից սկսած նրանց լանջերն աստիճանաբար ծածկվում են անտառներով: Հյուսիսային Ուրալն իր ամբողջ երկարությամբ մատչելի չէ միայն ամռանը, երբ փոխադրությունը կատարվում է հյուսիսային եղջերուներով:

Հյուսիսային Ուրալի գագաթները կրում են հեռավոր հնության ու քայքայման բոլոր հետքերը: Նրանք հաճախ հանդիսանում են կունձերի կույտեր, որոնք քաոսային ձևով թափված են իրար վրա, կամ ծածկված են ընդարձակ դաշտերով, որտեղ միայն ճեղքերում, ապառների, կունձերի արանքներում հավաքվում են փոքր քանակությամբ տորֆահողեր: Փլուզումներն իջնում են նաև լեռների լանջերով՝ անցնելով անտառային գոտուց ցած: Հաճախ սարերում ձյուն է նստած: Ամառվա մեծ մասը լեռները ծածկված են լինում ամպերով ու մառախուղով: Ստորոտները ծածկված են փշատերև խիտ անտառներով, որոնք շատ տեղ ճահճացած են: Սակայն լեռներն անտառների սահմանից շատ ավելի վեր են բարձրանում, նրանց քարե մերկ գագաթները կարծես դուրս ցցված կղզիներ լինեն փշատերև տայգայի անծայրածիր մթին ծովի մեջ:

Այսպես է Հյուսիսային Ուրալը:

Կղզիները.— Բոլորովին այլ աշխարհ են ներկայացնում Հյուսիսային Սառուցյալ Օվկիանոսի կղզիները: Նրանցից ամենահարավայինը Կոլգույեվն է, որ Դվին-Պեչորայի տափարակ

դաշտավայրի շարունակությունն է հանդիսանում։ Վայգաչն ու Նոր Երկիրն ընդհանրապես լեռնոտ են։

Նոր Երկրի լեռները տեղ-տեղ մինչև 1200 մ բարձրություն են հասնում և նրանց մեջ գոյացել են խոշոր ֆիորդներ (ծոցեր)։ Մատոչկին Շար ֆիորդանման նեղուցը հյուսիսային կղզին անջատում է հարավայինից։ Նոր Երկիրը Վայգաչից անջատված է Կարայի Դուռ նեղուցով, իսկ Վայգաչը մայր ցամաքից՝ Յուգորսկի Շար նեղուցով։ Այդ նեղուցներն ու նրանց սառույցների վիճակը մեծ նշանակություն ունեն նավերի նավարկության համար, քանի վոր այդ նավարկությամբ ամառն ամիսներին կապ է պահպանվում Սիբիրի հետ։

Այդ կղզիներն իրենց բնությամբ պատկանում են Արկտիկային։ Մանավանդ Նոր Երկիրը, վորը հարավից դեպի հյուսիս ձգվում է ավելի քան 900 կմ։

Նոր Երկրի ափերում ցուրտ է, փոթորկալի։ Պարզ օրերը հազվադեպ են նույնիսկ ամառը։ Հաճախ թանձր մառախուղը պատում է կղզու ափերը, ամբողջ օրերով անձրև է մաղում ցուրտ ու թանձր ամպերով ծածկված յերկնքից, իսկ ցածր ալիքները գլգլոցով զարնվում են գահավեժ ափերին։ Ուժեղ փոթորիկները մոլեգնում են մի քանի օր շարունակ՝ վեր բարձրացնելով ալիքները և յերկինք հանելով խիճն ու մանր քարերը։ Միայն յերեք ամսով ափերն ազատվում են լողացող սառույցներից։ Սակայն պատահում է, վոր ամառվա կեսին էլ, հանկարծ սառույցները շարժվում են հյուսիսից, կամ նեղուցների միջով Կարայի ծովից և շրջափակում են հորիզոնը։

Վորքան շարժվում ես դեպի հյուսիս, այնքան ավելի յեն բարձրանում լեռնաշղթաները։ Մերկ ու բուսականությունից միանգամայն զուրկ լեռնալանջերը ծածկված են սև թերթաքարի խիճով։ Ծերպերում ընկած ձյան սպիտակ բծերը խիստ աչքի յեն ընկնում լեռների սև ֆոնի վրա։ Մեռելային լռություն է տիրում այդ անապատում, և նույնիսկ ձյան ջրերի տակով հոսող լեռնային գետակների աղմուկը չի խախտում այդ ճնշող լռությունը։

Ձմեռը յերեք ամսով արեգակը չքանում է հորիզոնում, և միայն հյուսիսափայլն է, վոր աղոտ ու յերերուն լույս է սփռում ձյունածածկ հովիտների ու սառցապատ սարերի վրա։ Կղզու վրա մոլեգնում են ձյունախառն կատաղի բուքերը, վորոնք տևում են մի քանի օր շարունակ։

Սակայն մարդն իրեն է հնազանդեցրել Արկտիկան և ամուր տեղ բռնել այդ անհյուրընկալ կղզիների վրա։ Մատոչկին Շարի ափին, Նոր Երկրի հյուսիսային ծայրին՝ Ժելանիե հրվանդանում, շատ հեռու՝ դեպի բևեռ ձգվող Ֆրանց Յոսիֆի Երկրում կառուցված են խորհրդային գիտական կայաններ, վորտեղ խորհրդային գիտողները վողջ տարին ուսումնասիրում են Արկտիկան՝ նրա կլիմայի ու բնության առանձնահատկությունները։ Վերջապես բևեռում

դրեյֆող սառույցի վրա կազմակերպվեց գիտական կայան։ Խորհրդային հերոս գիտնականներն այնտեղ մի շարք կարևորագույն ուսումնասիրություններ կատարեցին և 1938 թ. գարնանը մեր սառցահատները հաջողությամբ նրանց վերցրին սառույցի վրայից։

Կլիման յեվ բուսականությունը.—Հյուսիսի կլիման աչքի յե ընկնում իր խստությամբ, մանավանդ հյուսիս-արևելքում։ Ձմեռը տևում է յերկար։ Սառնամանիք օրերի թիվը հասնում է մոտ 200-ի։ Հունվարին միջին ջերմաստիճանը Պեչորա գետի շրջանում հասնում է —20°-ի, իսկ տարեկան միջինը՝ 0°-ից

Նկ. 11. Նոր Երկրում։

ցածր է։ Սակայն Հյուսիսի հարավային մասում ձմեռը նմանապես ցուրտ է։ Ամառը թեև տաք է, սակայն կարճատև է։ Գետերը սառույցից ուշ են ազատվում։ Դվինա գետով նավարկությունն սկսվում է ապրիլի վերջին և վերջանում է հոկտեմբերին։ Պեչորայի գետաբերանում հաճախ մայիսին էլ համատարած սառույց է լինում։ Այս յերկրի մի զգալի մասն ընկած է հյուսիսային բևեռային շրջագծից դեպի հյուսիս։ Երկու ամիս շարունակ, նոյեմբերի վերջից մինչև հունվարի վերջը արեգակը չի յերևում հորիզոնում և միայն կեսօրին մոտ 2—3

Ժամով նշմարվում է նրա թույլ լույսը, վոր հիշեցնում է մեր մթնշաղը: Յերբեմն-յերբեմն պայծառորեն լուսավորում են հյուսիսափայլերը, վորոնք այստեղ կոչվում են «սպոլոխ»: Օվկիանոսի ափերը կաշկանդված են լինում սառույցով, և այդտեղից դեպի հարթ ցամաքն է փչում սառն ու սաստիկ քամին: Դրա փոխարեն մայիսի վերջից մինչև հուլիսի վերջն արեգակն ամենևին չի ծածկվում հորիզոնում, այլ շրջում է հորիզոնի վրա. այդ յերկու ամիս տևող ցերեկվա ընթացքում բնությունը շտապում է ապրել: Բայց և այնտեղ, վորտեղ արեգակի մայրամուտ է լինում, այդ էլ վոչ յերկարատև է: Կարճատև, 2—3 ժամ տևող «սպիտակ» գիշերներն այնքան լույս են, վոր կարելի յե գիրք կարդալ:

Մուրմանսկի ծովափերին կլիման բավականին տաք է, վորովհետև նրա մոտով ծովային տաք հոսանք է անցնում և օվկիանոսն ափերի մոտ չի սառչում: Հունվար ամսի միջին ջերմաստիճանը Մուրմանսկում —10° է: Նմանապես տաք հոսանքի շնորհիվ է, վոր այստեղ ավելի շատ տեղումներ ու ամպամածություն է լինում, ավելի հաճախ՝ մառախուղ է պատում: Ամառը զով է ու խոնավ, գարունը՝ ցուրտ, աշունը՝ մեղմ, սակայն անդուրեկան, վորովհետև թանձր ու յերկարատև մառախուղներ են լինում: Ձմեռը ևս շուտ է սկսվում, հոկտեմբերի վերջերին, բայց յերբեմն ձյունը տեղում է դեռ սեպտեմբերին և այդ ժամանակից էլ սկսվում են սառնամանիքները: Ձմռանը ջերմաստիճանը քիչ է պատահում, վոր —15°-ից ցածր լինի, հաճախ յեղանակը տաքանում է. բավականին սաստ ձյուն է տեղում, վորը լեռնային կիրճերում մնում է ամբողջ տարին: Ձմեռը ծովում հաճախակի լինում են ուժեղ մրրիկներ: Կոլա թերակղզու ներքին մասերում ծովի ազդեցությունն ավելի թույլ է, ուստի և ձմեռն այդտեղ ավելի ցուրտ է լինում:

Կարելիայում և Լճերի Յերկրում ծովի մոտիկությունն ու ներքին ջրերի առատությունը նույնպես մեղմացնում են կլիման, սակայն միաժամանակ դարձնում են խոնավ ու սառն: Ճիշտ է, ձմեռն այդտեղ մի քիչ ավելի մեղմ է, քան արևելքում, նույն լայնության վրա (հունվարի միջին ջերմաստիճանը Պետրոզավոդսկում —11° է, իսկ նրանից նույնիսկ մի քիչ ավելի հարավ, Ձերդինում —16°), սակայն ամառը և մանավանդ գարունն

ավելի ցուրտ է լինում: Գարունն ուշ է բացվում ու դանդաղ է անցնում, վորովհետև յեղանակի ջերմությունը սպառվում է սառույցը հալելու և խոշոր լճերի ջուրը տաքացնելու վրա: Հաճախ սառնամանիքներ են լինում, իսկ մայիսի յերկրորդ կեսին նկատվում է ջերմության խիստ նվազում, այսպես կոչված՝ ցրտերի վերադարձ, վորը տարածվում է դեպի հարավ, ԽՍՀՄ Յեվրոպական մասի միջին գոտում: Հարավ-արևելքում, Կիրովի մարզում կլիման ցամաքային է, ձմեռը տևում է 5 ամիս և Կիրովում տարեկան միջին ջերմաստիճանը հավասար է ընդամենը +1,3°-ի:

Տեղումներն այստեղ ավելի շատ չեն լինում, քան միջին գոտում, բայց և այնպես ամառն այստեղ անձրևային է, իսկ աշունը խոնավ ու մառախլապատ: Թույլ գոլորշիացման և գլխավորապես ծովից փչող քամիների շնորհիվ հաճախ ամպամածություն է լինում: Արևմտյան ծովային քամիները, վորոնք աշնանը յերբեմն փչում են մեծ ուժով, առաջացնում են այնպիսի յերևույթներ, ինչպես Նևայի հոսանքի արգելակումը, նույնիսկ հակառակ ընթացք տալը, վորի հետևանքով Լենինգրադում հեղեղումներ են լինում: Նույն այդ քամիները Լադոգա լճում ևս ջուրը քշում են դեպի արևելյան ափերը և լճում ուժեղ փոթորիկներ առաջացնում:

Ամբողջ հյուսիսի մեծ մասը ծածկված է փշատերև անտառներով, վորոնք արևմուտքում ու հարավ-արևմուտքում բավականաչափ կտրատված են, բայց հյուսիս-արևելքում դեռևս զարմացնում են իրենց վայրի վիճակով: Այդտեղ տասնյակ ու հարյուրավոր քառակուսի կիլոմետր վիթխարի տարածություններ ծածկված են մամռապատ ճահիճներով: Արևմտյան մասում անտառները, աստիճանաբար մանրանալով, հասնում են մինչև ծովը: Արևելքում, ծովեզերքին նրանք տեղի յեն տալիս տունդրային—միապաղաղ, տեղ-տեղ ալիքավոր հարթությանը: Ամռանը տունդրան սովորաբար հանդիսանում է ճահճուտ տարածություն, ծածկված կամ տորֆային թմբերով, կամ ցածրիկ ուռենու և կեչու խիտ թփուտներով, վորոնց վրա ամպի պես սավառնում են մոծակներ: Ձմռանը ձյունի տակ ծածկված այդ վայրերն ավելի ամայի յեն, ձյունակույտերը տեղից տեղ են քշվում, շնորհիվ սոսկալի բուքերի, վորոնք յերբեմն տևում են մի քանի որ: Ավելի բարձր ու քարքարոտ տեղերում տունդրան չոր

է և ծածկված քարաքոսով ու գետնատարած թփուտներով: Ամենաընդարձակ տունդրան Բոլշեզեմելսկին է, վոր գտնվում է Պեչորայից դեպի արևելք: Պեչորայի ստորին հոսանքից դեպի արևմուտք տարածվում է Մալոզեմելսկայա տունդրան: Այդ տունդրաներում հավերժ սառած հողն զգալի տարածություն է կազմում: Տունդրային բուսականությամբ են ծածկված Կոլգուևը, Վայգաչ կղզիները և Նոր Երկրի ու Ֆրանց Իոսիֆի Երկրի վորոշ տարածությունները:

Բնակչությունը: Վարչական բաժանումը.— Հյուսիսը ԽՍՀՄ Եվրոպական մասի ամենանոսր բնակչություն ունեցող մարզն է: Միջին հաշվով յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածության վրա ապրում է 6 մարդ, այն է՝ յերկու մարդ պակաս ամբողջ ԽՍՀՄ բնակչության միջին-խտությունից: Իսկ յեթե հաշվի չառնենք Լենինգրադի մարզը Լենինգրադի պես խոշորագույն կենտրոնով, ապա միջին խտությունը 1 քառ. կմ կիջնի մինչև 2,5 մարդու: Իրականում, Հեռավոր Հյուսիսի մի քանի և այն էլ ընդարձակ շրջաններում 10 ք. կմ-ին ընկնում է ընդամենը 1 մարդ: Դրանք են Կոլա թերակղզու ներքին մասերը, Կարելիայի վորոշ շրջանները և Պեչորայի յերկրամասը:

Վաղ ժամանակներից Հյուսիսում բնակություն եյին հաստատել միքանի ժողովուրդներ: Նրանցից մի քանիսը մինչև հիմա էլ ապրում են այստեղ: Թվով դրանցից ամենաբազմամարդն են՝ կարելները—արևմուտքում՝ Կոլա թերակղզու և Լադոգա ու Օնեգա լճերի միջև՝ և կոմերը—արևելքում, Պեչորա և Վիչեգդա գետերի հովիտներում. դրանցից յուրաքանչյուրը հաշվվում է 0,25 միլ. մարդ: Ավելի սակավաթիվ են՝ նենները, հյուսիսում Կանինի թերակղզու և Հյուսիսային Ուրալի միջև, և սաամները՝ (լոպարները) Կոլա թերակղզում. առաջինները մոտ 10 հազար հոգի յեն, իսկ սաամներն՝ ընդամենը 1500 հոգի:

Լենինգրադի մարզի հարավ-արևելյան մասը դեռ IX դարում բնակեցված է յեղել սլավոններով: Նրանք այստեղ ստեղծել են Նովգորոդ և Պսկով ռուսական հնագարյան քաղաքները: Այստեղից, ինչպես և կենտրոնից ռուսներն աստիճանաբար շարժվել են դեպի հյուսիս և արևելք, տեղավորվելով գլխավորապես գետերի հովիտներում ու Սպիտակ ծովի ափերին: Ինչպես այլ ծայրամասերում, այստեղ ևս բնակչությունը կազմվել

է ամենայեռանդուն ու ձեռներեց մարդկանցից, վորոնք քաշվել են դեպի վայրի ու սակավաբնակ հյուսիս, գլխավորապես իրենց տեղում կրած զանազան ճնշումներից: XVIII դարի սկզբին Պետերբուրգի հիմնումը և նրան մայրաքաղաք դարձնելը առաջին խթանը յեղավ արևմուտքում ռուս բնակչությունն ավելացնելու. այստեղ կլիմայական պայմաններն ավելի եյին հնարավորություն տալիս հողագործությամբ զբաղվելու համար:

Վարչական տեսակետից ամբողջ հյուսիսը բաժանվում է 5 մասի՝ Լենինգրադի մարզն ու Կարելական ԱՍՍՀ արևմուտքում, Արխանգելսկի և Մուրմանսկի մարզերը հյուսիսում, Վոլոգդայի մարզը հարավում, Կոմի ԱՍՍՀ և Կիրովի մարզն արևելքում: Լենինգրադի մարզը, չնայած իր համեմատական փոքրության, ավելի խտաբնակ է: Կարելական ԱՍՍՀ-ն թե իր տարածությամբ, և թե բնակչության թվով վերջին տեղն է գրավում: Լենինգրադի մարզի վարչական կենտրոնն է Լենինգրադը, Արխանգելսկի մարզինը՝ Արխանգելսկը, Վոլոգդայի մարզինը՝ Վոլոգդան, Կարելական ԱՍՍՀ-ինը՝ Պետրոզավոդսկը, Կոմի ԱՍՍՀ-ինը՝ Սըկտիվկարը: Բացի Կարելական ԱՍՍՀ-ից և Կոմի ԱՍՍՀ-ից, ըստ ազգային հատկանիշի կազմված է նաև Նենեցկան ազգային շրջանը՝ Նարյան-Մար կենտրոնով: Նենների շրջանը մտնում է Արխանգելսկի մարզի մեջ: Կոլա թերակղզին, վոր Լենինգրադի մարզից բաժանված է Կարելական ԱՍՍՀ-ով, կազմում է առանձին Մուրմանսկ օկրուգը, վորը մտնում է Լենինգրադի մարզի մեջ. կենտրոնն է Մուրմանսկը:

Տնտեսությունը.—Հյուսիսում կլիմայական և մասամբ հողային պայմաններն զգալի չափով արգելք են հանդիսանում հողագործության համար: Այդ իսկ պատճառով այստեղ հողագործությունն այն նշանակությունը չունի, ինչպես կենտրոնական ու հարավային մարզերում: Ամենատարածված մշակույթներից մեկը, մանավանդ հարավ-արևմուտքում, վուշն է, վոր այստեղ շատ լավ թելիկ է տալիս: Ներկայումս ինչպես վուշի, այնպես էլ հացաբույսերի (հաճար, գարի, վարսակ) համար վարելահողի տարածությունն աստիճանաբար ավելանում է: Միաժամանակ հաջողությամբ միջոցներ են ձեռք առնվում հողագործությունն էլ ավելի հյուսիսային շրջաններում տարածելու համար (հացահատիկային այլ կուլտուրաների թվում նաև

դարնանացան ցորենը)։ Այնուամենայնիվ Հյուսիսն առայժմ իր հացը չի բավականացնում, ուստի հացահատիկ են փոխադրում այլ մարզերից, գլխավորապես Պովոլժյեյից։ Գետահովիտներում յեղած առատ մարգագետինների շնորհիվ, այստեղ ավելի մեծ նշանակություն ունի կենդանաբուծությունը։

Ներկայումս Հյուսիսը, ինչպես և մեր Միության մյուս մարզերը, արագորեն ինդուստրացման է յենթարկվում։ Ինդուստրացման պրոցեսն ընդգրկել է նաև Հյուսիսի հեռավոր անկյունները։ Գետերի ափերին անտառոտ վայրերում կառուցված են սղոցագործարաններ, մինչև վերջին ժամանակներս ամայի վայրերում սկսում են աշխատել հանքավայրերը։ Առաջ են գալիս նոր բնակավայրեր։ Հյուսիսի ժողովուրդները՝ նենները և սաամները կազմակերպված են յեղջերվաբուծական կոլտնտեսություններում։ Նրանց բարեկեցությունն ու կուլտուրական մակարդակը նշանակալից չափով բարձրացել է։

Հյուսիսը բնությամբ հարուստ յերկիր է։ Անտառները բռնում են ամբողջ տարածության 3/5 մասը։ Օվկիանոսը, լճերն ու գետերը հարուստ են ձկներով։ Շատ կան նաև ծովային գազաններ։ Գետահովիտներն իրենց վողողվող մարգագետիններով հարմար են անասնապահության համար, տունդրան՝ յեղջերվաբուծության համար։ Բազմաթիվ վայրերում օգտակար հանքեր են հայտնաբերված, Պեչորայի ավազանում՝ քարածուխ (Վորկուտ գետի ափերին) և նավթ (Ուխտա գետի ափերին)։ Վայգաչ կղզում հայտնաբերված է կապարի հանք, Խիբինում՝ ապատիտ, նեֆելին, շատ հազվագյուտ հանքեր, ինչպես և յերկաթահանք։ Հարավ-արևմուտքում՝ Տիխվինի մոտ կա բոքսիտ, Կարելիայում լճային ծագում ունեցող յերկաթահանք, և շինարարության քար։ Կիրովի մարզում՝ ֆոսֆորիտներ։ Միայն Խորհրդային իշխանության օրոք է, որ Հյուսիսի բնական հարստությունների մշակությունն ու օգտագործումն ուժեղ թափով առաջ է շարժվել։

Առաջին տեղը բռնում է անտառարդյունաբերությունը։ Զգալի չափով ավելացել է սղոցարան-գործարանների քանակը։ Բացի այդ մեքենայացվել է փայտեղեն պատրաստելու և լաստառաք գետերին հասցնելու աշխատանքը։ Մշակված փայտեղենը խորհրդային և տարբերկրյա փայտատար նավերով արդյունա-

հանվում է արտասահման։ Փայտեղենի արտահանման գլխավոր կետերն են Արխանգելսկն ու Բելոմորսկը։ Անտառարդյունաբերության հետ միասին զարգացել են նաև արդյունաբերության այլ ճյուղերը, վորոնց համար հումույթ է հանդիսանում փայտանյութը, այն է՝ թղթի, լուցկու, քիմիական արդյունաբերությունը։ Զգալի չափով ընդարձակվել են ձկնարդյունագործարաններն ու փոկի վորսը. կատարելագործվել է վորսի տեխնիկան, վոր այժմ կատարվում է տրաուլեր կոչվող հատուկ նավերով, իսկ փոկերի վտառները դիտելու համար գործադրում են սավառնակներ։ Ձկնարդյունաբերության կենտրոնը Մուրմանսկն է։ Ուժեղ թափով մշակվում են նաև օգտակար հանածոները։ Խիբինում, վորտեղ ապատիտ է արդյունահանվում ու մշակվում, կարճ ժամանակամիջոցում ստեղծվել է արդյունաբերական մի նոր կենտրոն—Կիրովսկը։ Ջրային եներգիան օգտագործելու համար կառուցվել են հզոր հիդրոէլեկտրոկայաններ՝ Վոլխով, Սվիր, Նիվա և Տուլոմ գետերի վրա։

Հյուսիսի արդյունաբերության մեջ միանգամայն առանձնահատուկ ու բացառիկ տեղ է բռնում Լենինգրադը, վոր Մոսկվայից հետո ԽՍՀՄ ամենախոշոր արդյունաբերական կենտրոնն է։

Լենինգրադի արդյունաբերության զարգացումը զգալի չափով կապ ունի նրա աշխարհագրական բարենպաստ դիրքի հետ։ Այնտեղ միանում են արտասահման տանող ծովային ուղին և Լենինգրադը Պովոլժյեյի ու Կենտրոնի հետ կապող գետային ուղին։ Բացի այդ, բոլոր կողմերից այնտեղ յերկաթուղիներ են միանում։ Ներկայումս Լենինգրադում առանձնապես զարգացած են մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական ու քիմիական արդյունաբերությունը, նավաշինությունը, ինչպես և տեքստիլ ու սննդի արդյունաբերությունը։

Միության ընդհանուր տնտեսության մեջ Հյուսիսն առանձնահատուկ տեղ է գրավում։ Նա հանդիսանում է եքսպորտի համար փայտեղեն և մասամբ մաղեղեն մատակարարողը, ձկան մատակարարողը ներքին շուկայի համար, բոքսիտի ու նեֆելինի մատակարարողը ալյումինի արդյունաբերության

համար, ապատիտ մատակարարողը՝ պարարտացման համար։

Աշխարհագրական դիրքի շնորհիվ, Հյուսիսի թեկուզ և սակավաթիվ նավահանգիստներից ծովային ճանապարհ է բացվում դեպի յեվրոպական ու անդրօվկիանոսյան յերկրները, ինչպես և դեպի Սիբիրի ափերը։ Ուստի և մեր տերիտորիայի այդ մասի պաշտպանությունը ծովային և ցամաքային սահմաններով հանդերձ առաջնակարգ նշանակություն ունի ԽՍՀՄ համար։

Քաղաքները ու հաղորդակցության ուղիները.— Հյուսիսի ամենախոշոր քաղաքն է Լենինգրադը, վորն ունի յերեք միլիոնից ավելի բնակիչ։ Լենինգրադից հետո խոշոր քաղաքը Արխանգելսկն է, վորը 280 հազարից ավելի բնակիչ ունի։ Կիրովն ունի 140 հազարից ավելի։ Այնուհետև Մուրմանսկը մոտ 117 հազար, Վոլոգդան և Պսկովը—յուրաքանչյուրը 90 հազար բնակիչ ունի։ Ավելի փոքր են Պետրոզավոդսկը և Նովգորոդը։ Դրանցից բացի, կան նաև նոր առաջացած արդյունաբերական կենտրոններ՝ Կիրովսկը, Վոլխովստրոյը, վորոնք արդեն տասնյակ հազարավոր բնակիչ ունեն։ Մյուս քաղաքներն ավելի փոքր են, շատերը միայն մի քանի հազար բնակչով։ Չնայած դրան, այստեղ քաղաքային բնակչության տոկոսը համեմատաբար բարձր է։ Լենինգրադի մարզում, Լենինգրադ քաղաքի շնորհիվ, քաղաքային բնակչության տոկոսը նույնիսկ ավելի բարձր է, քան ԽՍՀՄ վորևէ այլ մարզում (56%)։ Սակայն Կարելական ԱԽՍՀ-ում ևս քաղաքային բնակչության տոկոսը բավական բարձր է (29%)։

Լենինգրադը ԽՍՀՄ Յեվրոպական մասի ամբողջ Հյուսիսի կարևորագույն քաղաքն է, Մոսկվայից հետո արդյունաբերական ամենախոշոր կենտրոնն է, ծովային ամենախոշոր նավահանգիստը և յերկաթուղային ամենամեծ հանգույցներից մեկը։ Լենինգրադը, վոր անցյալում ցարական Ռուսաստանի մայրաքաղաքն էր, ներկայումս Մոսկվայից հետո հանդիսանում է մեր յերկրի ամենախոշոր կուլտուրական կենտրոնը։ Այստեղ շատ կան գիտական, կուլտուր-լուսավորական հիմնարկություններ, թանգարաններ, պատկերասրահներ, վորոնց մեջ առանձնապես՝ նշանավոր են Երմիտաժն ու ռուսական արվեստի թանգարանը։ Շատ կան բարձրագույն ուսումնական հաստատություններ, այստեղ է նաև ԽՍՀՄ ամենահարուստ Հանրային գրադարանը։

Լենինգրադը (անցյալում Պետերբուրգ) գտնվում է Նևա գետի դելտայում, վոր այստեղ բաժանվում է մի քանի ճյուղի։ Պետրոս I կողմից ստեղծվելով վորպես նավահանգիստ, վոր մեր յերկիրը միացնում է Արևմտյան Յեվրոպայի հետ, Լենինգրադը XIX դարի վերջին դարձավ խոշորագույն արդյունաբերական և հեղափոխական բանվորական շարժման կենտրոն։ Այն տարածությունը, վորի վրա գտնվում է Լենինգրադը, քիչ է բարձր գետի մակերեվույթից. այդ պատճառով էլ այստեղ յերբեմն աշնանը հեղեղումներ են լինում։ Գարնանը, ընդհակառակը, Նևան չի հորդանում, վորովհետև Լադոգա լճի մեջ թափվող գետերի գարնանային ջրերը շատ քիչ են միայն բարձրացնում այդ ընդարձակ լճի մակարդակը։

Հիանալի յեն Լենինգրադի ծայրամասերը, վորտեղ գտնվում են նրա գլխավորագույն գործարաններն ու փաբրիկաները։ Դրանց շուրջը կառուցված են բանվորական ավաններ, սքանչելի տներով։ Հիանալի յե նաև Լենինգրադի նավահանգիստը, վորը լավ է սարքավորված այստեղ յեկող օտարերկրյա նավերի համար բեռնող—բեռնաթափող մեխանիզմներով։ Նևան այնքան խոր է, վոր ծովային խոշոր նավերը դյուրությամբ մուտք են գործում նրա մեջ։ Սակայն, վորպեսզի նրանք կարողանան մտնել Լենինգրադին, Ֆիննական ծանծաղ ծոցում փորված է ջրանցք, վորը սկսվում է Կրոնշտադտի մոտ և հասնում մինչև Նևայի գետաբերանը։

Լենինգրադից 30 կմ վրա, Կոտլին տափարակ կղզում է գտնվում Կրոնշտադտ ամրոցը, վորը պաշտպանում է Լենինգրադին ծովի կողմից և հանդիսանում է խորհրդային Բալթյան նավատորմի գլխավոր կայանը։

Հյուսիսի քաղաքների մեծ մասը ստեղծվել ու զարգացել է առևտրական ճանապարհների վրա (Լենինգրադը՝ Նևայի գետաբերանում, Արխանգելսկը՝ Հյուսիսային Դվինայի գետաբերանում)։ Այստեղ մինչև այժմ էլ գլխավոր ճանապարհները գետերն են, մանավանդ Հյուսիսում։ Լճերի յերկրամասում մեծ նշանակություն ունեն արհեստական ջրային ճանապարհները, վորոնք Վոլգայի ավազանը միացնում են Նևայի և Հյուսիսային Դվինայի հետ։ Յերկրի մակերևույթի հարթ ռելյեֆը, վոր անցյալում հնարավորություն էր տալիս բեռները մի գետային սիստեմից մյուսը փոխադրել քարշակներով, նորագույն ժամանակներում դյուրացրել է ջրանցքների կառուցումը։ Վոլգան Նևայի հետ միացնող յերեք սիստեմներից—Մարիինյան, Տիխվինյան և Վիշնեվոլոցկի—իր նշանակությունն է պահպանել միայն Մարիինյանը, վորով բոլոր բեռները Վոլգայից անցնում են Լենինգրադ։ Նրա 1100 կմ ընդհանուր յերկարությունից ամբողջ 300 կմ ջրանցքներն են կազմում։ Բացի սովորական «մի-

ացնող» ջրանցքներից, նա ունի նաև ջրատար ջրանցքներ Օնեգա և Լադոգա լճերի հարավային ափերի յերկարությամբ, քանի որ այդ լճերի վրա շատ ուժեղ փոթորիկներ են լինում. Սպիտակ ծովից ոչ այնքան հեռու Մարիինյան սիստեմին է միանում նաև Հյուսիսային Դվինայի ավազանը՝ Հյուսիս-Դվինյան ջրանցքի միջոցով: Այդ սիստեմներով է բեռների մեծ մասը Լենինգրադ փոխադրվում: Հակառակ ուղղությամբ ավելի քիչ բեռ է լինում: Ներկայումս Մարիինյան սիստեմը վերակառուցվում ու խորացվում է:



Նկ. 12. Սպիտակ-Բալթիկ ծովերի Ստալինի անվան ջրանցքը:

Հսկայական նշանակություն ունի վերջերս կառուցված Սպիտակ ու Բալթիկ ծովերը միացնող Ստալինի անվան վիթխարի ջրանցքը, որը ջրային չընդհատվող ուղի յե ստեղծում Լադոգա լճից մինչև Սպիտակ ծովը և մատչելի յե նաև խորանիստ նավերին:

Արևելքում Հյուսիսային Դվինա-Վիչեգդա սիստեմը Կամայի սիստեմի հետ միանում է Յեկատերինյան կարճ ջրանցքով: Նախագծվում է այդ միացումն ընդարձակել, կապելով այն նաև Պեչորա գետի հետ:

Հյուսիսն, իր տերիտորիայի մեծության համեմատ, յերկաթուղային ցանց քիչ ունի, յեղածն էլ գտնվում է յերկրամասի արևմտյան մասում: Այդտեղ միջօրեականի ուղղությամբ անցնում է յերկու կարևոր մագիստրալ՝ մեկը միացնում է Արխանգելսկը Մոսկվայի հետ, մյուսը՝ Մուրմանսկը Լենինգրադի հետ:

Յերրորդ մագիստրալը, որը ձգվում է արևմուտքից արևելք, անցնում է յերկրամասի միայն հարավ-արևմուտքով՝ Լենինգրադից Վոլոգդա, ապա՝ Կիրով-Պերմ-Սվերդլովսկ և դեպի Սիբիր: Յերկրամասի արևելյան մասում կա միայն մեկ յերկաթուղի, որը Կոտլաս քաղաքը, որտեղ Վիչեգդան թափվում է Հյուսիսային Դվինայի մեջ, միացնում է Կիրով քաղաքի հետ: Արևմտյան մասում Լենինգրադից անց են կացված մի քանի յերկաթուղի, որոնցից ամենակարևորն է Հոկտեմբերյանը՝ Լենինգրադի ու Մոսկվայի միջև, մյուս գիծն ընթանում է դեպի հարավ, Վիտեբսկի վրայով դեպի Օդեսսա:

2. ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—Կենտրոնը՝ ԽՍՀՄ Յեվրոպական մասի ֆիզիկո-աշխարհագրական խոշոր մարզերից մեկն է:

Կենտրոնի դիրքը բնորոշվում է հենց նրա անունով: Այդ իրոք, մեր Միության Յեվրոպական մասի կենտրոնական մարզն է, թեև մի քիչ դեպի արևմուտք ու հարավ ընկած: Այս մարզի կլիման «միջին» տեղն է բռնում, ավելի մեղմ է, քան հյուսիսի կլիման, այնքան չոր չէ, որքան հարավինը և միջակ քանակությամբ տեղումներ է ունենում: Այս մարզն անցումնային ռայոն է անտառներից տափաստանին, պոդզոլային աղքատ հողերից հարուստ ու բերրի սևահողին: Մարզի միջին, կենտրոնական դիրքով է բնորոշվում ոչ միայն նրա բնական պայմաններն ու տնտեսությունը, այլ և նրա քաղաքական նշանակությունը և այն առաջատար դերը, որ նա կատարել է մեր պետությունն ստեղծելու գործում:

Ըստ իր բնական պայմանների՝ Կենտրոնը բաժանվում է յերկու մասի. հյուսիսային՝ ոչ սևահողային և հարավային՝ սևահողային: Նրանց միջև սահման է հանդիսանում Օկա գետի միջին հոսանքը,

Ոչ սևահողային տարածությունը.—Կենտրոնի հյուսիսային մասը գլխավորապես դաշտավայր է, տարածվում է Վերին և մասամբ միջին Վոլգայի և նրա Մոլոգա, Շեկսնա, Կոստրոմա, Ունժա վտակների, ինչպես և Օկայի Կլյազմա և Մոսկվա վտակների հովիտներում: Այդ տափարակ կամ թեթևակի ալիքավոր հար-

թությունները, վոր ծածկված են սառցադաշտի և սառցադաշտային ջրերի բերած կավով ու ավազով, անտառոտ են ու ճահճուտ: Գետերի ափերն այստեղ հարթ են ու տափարակ, գետա-



Նկ. 13. ԽՍՀՄ Ցենտրալական մասի Կենտրոնը:

հովիտները վորոշակի սահմաններ չունեն և գարնանային հորդացման ժամանակ գետերից մի քանիսը վարարում են տասնյակ կիլոմետր՝ հեղեղելով ահագին տարածություններ և գոյացնելով ընդարձակ լճեր: Բնակավայրերը գտնվում են գետերի ու լճերի ափերին նեղ ավազաթմբերի վրա, իսկ ճահճուտ

միջագետքերը նոսր բնակչություն ունեն: Այդպիսի շրջաններից է Մեշչյորա կոչված ընդարձակ դաշտավայրը, վորը գտնվում է ստորին Օկայի վոլորաններից մեկում:



Նկ. 14. Պինդ ապարները Օկա գետի ափին:

Մոսկվայից դեպի հյուսիս անցնում է Սմոլենսկ-Մոսկովյան բարձրության շարունակությունը: Այդ բարձրությունն ամենից բարձր է Կլին և Դիմիտրով քաղաքների միջև գտնված տարածության վրա, ուստի Կլին-Դիմիտրյան բարձրություն անունն է ստացել: Նրա ամենաբարձր կետերը հասնում են 300 մ: Այդ բարձրությունը տարածվում է դեպի Վոլգայի հովիտը մոտ 60—70 մ ուղղորդ իջվածքով: Նրա վերին մասը մի ալեծուփ տափարակ է կտրտված խոր-խոր ձորերով: Այնուհետև, ավելի արևելք նա շարունակվում է առանձին բարձրություններով դեպի Իվանովո և Կոստրոմայից դեպի արևելք անցնում է Վոլգայի ձախ ափը:

Զավոլժյան Գորկու մարզի սահմաններում ցածրադիր ու հարթ ռելյեֆ ունի: Դա առավելապես ավազային բլուրների շրջան է, բլուրներ, վոր բերել են սառցադաշտային հոսանքները: Շատ կան ճահիճներ ու տորֆավայրեր: Գերակշռում են սոճի անտառները: Այդ մասը բռնում է Վոլգայի ձախ վտակ Վետլուգա գետի ավազանը:

Այս մարզի ամբողջ հյուսիսային մասը մինչ Օկա գետը գտնվում է խառն անտառների ու պոդզոլային հողերի գոտում:

Միայն Վլադիմիրից դեպի հյուսիս-արևմուտք ձգվում է մի անտառազուրկ ընդարձակ տարածություն, այսպես կոչված՝ Ոպոլյե, որը սևահողի նման իր մուգ հողերով հիշեցնում է հարավային տափաստանները։

Սևահողային տարածությունը.—Օկա գետից դեպի հարավ ռելյեֆի բնույթը փոխվում է։ Արևմտյան մասը բռնում է Միջին Ռուսական բարձրությունը, արևելյան մասը՝ այսպես կոչված՝ Տամբովի հարթավայրը, որը հանդիսանում է Օկա-Դոնյան դաշտավայրի հարավային մասը։

Ամբողջ սևահողային մասը կտրտված է գետերի ոլորապտույտ հոսանքներով, որոնք խորացրել են իրենց հովիտները։ Գետահովիտների լանջերն աջ ափին ուղղորդ են, իսկ ձախ ափին փռված են հեղեղվող մարգագետնի ընդարձակ տարածություններ։



Նկ. 15. Ձորակներով կտրտված վայր (գյուղերն ու ճանապարհները նշանակված չեն)։

Գետերի հոսանքը դանդաղ է և հանդարտ, երբեմն կտրտվում է ավազային ծանծաղուտներով։ Այս մասի գլխավոր գետերն են՝ Դոնը—Վորոնեժ և Բիտյուգ վտակներով, և Օկան—իր մեջ թափվող Մոկշայով ու վերջինիս Ցնա վտակը, արևմուտքում Սեյմը, որ Դեսնայի վտակն է։

Գետահովիտներում յեղած ջրբաժաններն իրենց հերթին կտրտված են հեղեղատներով ու ձորակներով, որոնց շատությունն այստեղ սևահողային կենտրոնի ռելյեֆի գլխավոր գծերից մեկն է։ Ձորակների արագ բազմացումն ու խորացումը հետևանք է նրա, որ լյոսը դյուրությամբ ողողատվում է։ Ձորակների ընդարձակմանը մեծ չափով նպաստել է նաև մարդը, որ անտառները կտրել է, բարձրությունների լանջերը հերկել և այդպիսով բարենպաստ պայմաններ է ստեղծել ձորակների

առաջացման համար։ Այդ ձորակները մեծ չարիք են բնակչության համար, որովհետև վարելահողերի տարածությունը կրճատում են, գետերն աղտոտում են և դժվարացնում հաղորդակցությունը՝ հարկադրելով խոշոր շրջադարձեր անել։ Ներկայումս այդ ձորակների դեմ պլանաչափ պայքար է մղվում։

Միջին Ռուսական բարձրության համեմատությամբ, Տամբովի հարթավայրը զգալիորեն ավելի ցածր է (100—200 մ)։ Ռելյեֆը բավականաչափ կտրտված է լայն գետահովիտներով ու ձորակներով։

Կլիման յեվ բուսականությունը.—Ոչ սևահողային մասն իր կլիմայով ու բնությամբ շատ նմանություններ ունի Հյուսիսի հետ։ Ձմեռն այստեղ էլ համարյա նույնպես երկարատև է ու խիստ, բայց ամառն ավելի շոգ է։ Գարունն ավելի ցուրտ է



Նկ. 16. Ձորակ։

լինում, քան աշունը։ Տարեկան միջին ջերմաստիճանը $+3^\circ$-ից հյուսիսում՝ մինչև $+4{,}5^\circ$ է հարավում։ Տեղումները լինում են համաչափ։ Դեպի հարավ-արևելք տեղումների քանակն աստիճանաբար նվազում է, սակայն յերաշտները հազվադեպ են։ Բուսականությունն անցումային է անտառային գոտուց դեպի անտառատափաստանայինը։ Դաշտային Զավոլժյեյի կեսից ա-

վելին ծածկված է փշատերև խիտ անտառներով։ Լանդշաֆտն ամենուրեք շրջափակվում է անտառի մթին տարածությամբ ավելի ցածր ու խոնավ տեղերում՝ յեղևնու, ավելի բարձր ու չոր տեղերում՝ սոճու անտառներով։ Սոճու անտառներում հաճախ պատահում են տորֆային ճահիճներ՝ ծածկված կապույտ հապալասի ու լոռամրգի բուսականությամբ։

Օկա գետից դեպի հարավ լանդշաֆտը փոխվում է, դառնում է ավելի բարձր ու չոր, անտառներն արդեն բավականաչափ կտրտված են և ավելի բազմազան են, հանդիպում են սաղարթավոր ծառերի ամբողջ պուրակներ։ Տեղ-տեղ, մանավանդ Օկայի ափերին, կրաքարային և ավազային հողերում պատահում է տափաստանային բուսականություն։ Ամեն ինչ հիշեցնում է հարևան սևահողային մարզը։ Հերկված հողերն ավելի շատ են, ամբողջ բնությունն ավելի մեղմ է, յերկնակամարն ավելի բարձր ու ավելի կապույտ է թվում։

Կենտրոնի սևահողային մասն ավելի հեռու յե օվկիանոսից և ավելի մոտ տափաստաններին։ Այդ պատճառով նրա կլիման ավելի ցամաքային (կոնտինենտալ) է։ Տարեկան միջին ջերմությունը 1,5—2°-ով ավելի բարձր է։ Ձմեռն այստեղ ավելի կարճատև է, քան հյուսիսում, սակայն համարյա նույնքան խիստ է։ Հունվարին Վորոնեժում նույնչափ ցուրտ է, վորչափ Մոսկվայում, և միայն հարավ-արևմուտքն ավելի տաք ձմեռ ունի։ Ամառն ավելի շոգ է ու յերկարատև, վորի շնորհիվ այստեղ աճում ու հասունանում են վորոշ կուլտուրական բույսեր, վորոնք ավելի հյուսիսային կլիմային չեն դիմանում։ Գարունն ավելի շուտ է բացվում և, անտառներ չլինելու հետևանքով, ձյունն ավելի արագ է հալչում։ Գարնան ամիսներն ավելի տաք են, քան հյուսիսում և նույնչափ տաք են, վորչափ և աշնանը։ Գարնանը հաճախ փչում են հարավ-արևելյան չոր քամիներ, վորոնք յերբեմն իրենց հետ բերում են չոր մառախուղ. այդ քամիները յերաշտ են առաջացնում և վատ են ազդում ցանքերի վրա։ Ամռանը հաճախ անձրևները տեղում են հեղեղի նման, վորոնց հետ լինում են խիստ ուժեղ ամպրոպներ։ Աշնանն ավելի քիչ տեղումներ են լինում։ Այդ պատճառով էլ հացահատիկների բերքահավաքը կատարվում է բարենպաստ պայմաններում, իսկ ծառերի վրա յերկար ժամանակ մնում են տերև-

ները, վորոնց դեղին և ծիրանի գույնը հատուկ գեղեցկություն է տալիս բնությանը։

Կենտրոնի սևահողային գոտու մեծ մասն անտառա-տափաստան է, վորը հարավ-արևելքում փոխվում է իսկական տափաստանի։ Դեռ հին ժամանակներում այստեղ սաղարթավոր անտառները շատ ավելի մեծ տարածություն եյին բռնում և գետահովիտներով դանդաղորեն առաջ շարժվելով՝ տափաստանն աստիճանաբար դեպի հարավ եյին մղում։ Անտառի այդ առաջխաղացումը դեպի տափաստան, դեռ հիմա էլ կարելի յե նկատել հողի բնույթից. վորտեղ առաջ անտառ է յեղել, սևահողն ավելի քիչ հումուս է պարունակում (մինչև 6% այսպես կոչված՝ դեգրադացված սևահող)։ Ընդհակառակն, այնտեղ, ուր առաջ էլ տափաստան է յեղել, սևահողի մեջ հումուսի քանակությունը շատ ավելի մեծ է, (մինչև 10% և ավելի)։ Այժմ սաղարթավոր անտառները մեծ մասամբ կտրատված են և պահպանվել են միայն հեղեղատների լանջերին ու գետահովիտներում, վարելու համար անհարմար վայրերում։ Մնացած ամբողջ տարածությունը դարձված է վարելահող. կանաչախիտ անտառների փոխարեն, վորը կազմում է մարզի հյուսիսային մասի յուրաքանչյուր պեյզաժի ֆոնը, այստեղ մինչև հորիզոնի հեռուները ձգվում են դաշտեր, վորտեղ գարնանն ուրախ կանաչին են տալիս նորաբույս արտերը, իսկ աշնանը դեղնին են տալիս հասուն, ալեծուփ հասկերը։ Յեվ այդ անծայրածիր դաշտերում տեղ-տեղ միայն յերևում են սաղարթավոր անտառների փոքրիկ կղզիներ։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.— Կենտրոնը ներկայումս ռուս բնակչության մարզ է։ Այստեղ ռուսները կազմում են ամբողջ բնակչության համարյա 95%-ը։ Նրանցից բացի, հարավում Ուկրաինայի սահմանի մոտ, ապրում են նաև ուկրաինացիներ։ Մյուս ժողովուրդներից սակավաթիվ բնակիչներ կան։ Դրանք մորդվա և թաթարներն են։

Կենտրոնը ներկայումս բաժանվում է տասնմեկ մարզի և մեկ ինքնավար հանրապետության։ Վեց մարզեր ընկած են վոչ սևահողային գոտում՝ Մոսկվայի մարզը (մարզի կենտրոնը նաև ամբողջ Միության մայրաքաղաքն է՝ Մոսկվան) Իվանովոյի մարզ (կենտրոնն է Իվանովո), Յարոսլավլի մարզը (կենտրոնը Յարոսլավլ), Գորկու մարզ (կենտրոնն է Գորկի), Տուլայի մարզը (կենտրոնը Տուլա) և Ռյազանի մարզը (կենտրոնը Ռյազան), հինգը

սևահողային գոտում են. Օրյոլի (կենտրոնը Օրյոլ), Կուրսկի (կենտրոնը Կուրսկ), Վորոնեժի (կենտրոնը Վորոնեժ), Տամբովի (կենտրոնը Տամբով), Պենզայի (կենտրոնը Պենզա) և Մորդովական ԻՍՍՀ (կենտրոնը Սարանսկ)։

Կենտրոնի բնակչության խտությունը միակերպ չէ։ Ամենից խիտ բնակչություն ունի Մոսկվայի մարզը, իսկ ամենանոսր բնակչություն ունեցողն են Իվանովոյի և Յարոսլավլի մարզերը, մանավանդ այս վերջին մարզի անդրվոլգյան մասը։ Մոսկվայի մարզն իր բնակչության խտությամբ Միության մեջ առաջին տեղն է բռնում (1 ք. կմ 91 մարդ)։

Տնտեսությունը.—Կենտրոնն ունի հսկայական քանակությամբ յերկաթահանքեր—այսպես կոչված՝ Կուրսկի մագնիսային անոմալիայի շրջան։ Յեղած այլ օգտակար հանածոների շահագործումը միայն վերջերս է սկսվել. դրանցից գորշ ածխի հանքավայրերի շահագործումն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում։ Հյուսիսային վոչ-սևահողային գոտում հողագործության զարգացման, մանավանդ հացաբույսերի մշակության համար հողային ու կլիմայական պայմանները սակավ բարենպաստ են, քան հարավային սևահողային գոտում։

Մյուս կողմից հյուսիսային մասն էլ ունի և իր շատ նշանակալից առավելությունները՝ հարավային մասի համեմատությամբ. այդ նրա աշխարհագրական դիրքն է։ Նա գտնվում է ջրային ճանապարհների կենտրոնում, այդ ճանապարհներն այստեղից ձգվում են զանազան ուղղություններով և նրան կապում են վոչ միայն մոտակա վայրերի, այլև Արևելա-Յեվրոպական հարթավայրի արևելյան ու արևմտյան, հյուսիսային ու հարավային կողմերում գտնվող հեռավոր մարզերի հետ։ Բնական ռեսուրսների համեմատաբար աղքատությունը և աշխարհագրական բարենպաստ դիրքը պատճառ են յեղել, վոր հյուսիսային մասում բնակչությունը վաղուց ի վեր սկսել է զբաղվել զանազան արդյունագործություններով ու առևտրով։ Վերջին յերկու դարերի ընթացքում այստեղ զարգացել է խոշոր գործարանային արդյունաբերությունը, վորի շնորհիվ վոչ-սևահողային կենտրոնն առաջին տեղն է գրավել ամբողջ յերկրում։ Յերկաթուղիներն էլ իրենց հերթին հասնում եյին նույն կենտրոնում—Մոսկվայում, այստեղ փոխադրելով հում նյութ և վառելանյութ՝ արդյունաբերության համար և ոննդամթերք բնակչության համար, այստեղից տանելով պատրաստի ապրանքները։ Այդպիսով, Մոսկվան դառավ ամբողջ յերկրի արդյունաբերական ու առևտրական ամենախոշոր կենտրոնը։

Սոցիալիստական շինարարությունն ու յերկրի ինդուստրացումը կենտրոնի տնտեսության մեջ շատ մեծ փոփոխություններ մտցրին։ Սկիզբ են առել, մանավանդ Մոսկվայի մարզում՝ արդյունաբերական նոր ճյուղեր՝ մետաղամշակման և քիմիական արդյունաբերությունը։ Սկսվել է տեղական էներգետիկ ռեսուրսների և տեղական հումքի լայն օգտագործումը՝ քիմիական արդյունաբերության համար։ Կառուցվել են խոշոր էլեկտրոկայաններ, վորոնք տորֆով են աշխատում (Շատուրայի) և Մերձմոսկովյան ավազանի գորշ քարածուխով (Ստալինգրադի ու Կաշիրայի)։ Ելեկտրական լարերը կապում են նրանց արդյունաբերական կենտրոնների ու Մոսկվայի հետ։ Ստեղծվել է քիմիական արդյունաբերության յերկու վիթխարի քիմիական կոմբինատ։ Ստալինագորսկի կոմբինատը՝ Տուլայից դեպի արևելք և Վոսկրեսենսկի կոմբինատը՝ Մոսկվայից դեպի հարավ-արևելք։

Տուլա քաղաքի մոտ տեղական յերկաթահանքն օգտագործելով աշխատում են յերկու մետալուրգիական գործարան։ Մետաղամշակման արդյունաբերության գլխավոր ճյուղը մեքենաշինությունն է։ Մեքենաշինական գործարանների մեծ մասը գտնվում է Մոսկվայում։ Այստեղ արտադրվում են՝ ավտոմոբիլներ, էլեկտրոմոտորներ, տրանսֆորմատորներ և ամեն տեսակի էլեկտրական սարքավորումներ, դազգյաններ, չափանոթներ, գործիքներ, գնդառանցքակալներ (խոշորագույն գործարան) և այլն։ Մոսկվայի մոտիկ գտնվում են գործարաններ, վորոնք պատրաստում են շոգեքարշեր (Կոլոմնա), յերկաթուղու և տրամվայի վագոններ (Միտիշչի), գյուղատնտեսական մեքենաներ և այլն։

Մոսկվան խոշոր կենտրոն է նաև քիմիական արդյունաբերության, ինչպես և իր նախկին՝ հիմնական արդյունաբերության գծով, այն է՝ տեքստիլ արդյունաբերության համար։ Տեքստիլ արդյունաբերության մեջ առաջին տեղը բռնում է բամբակեղե-

նի, ապա նաև բրդեղենի, մետաքսի, կտավի արդյունաբերությունը։ Մեծ նշանակություն ունի նաև Մոսկվայում կենտրոնացած կարի ու տրիկոտաժի արդյունաբերությունը։ Իվանովոյի մարզում տեքստիլ արդյունաբերությունը մինչև հիմա էլ առաջին տեղն է բռնում։ Նրա գլխավոր կենտրոնն է Իվանովոն։ Սակայն այստեղ էլ տեքստիլ արդյունաբերության կողքին զարգացած են արդյունաբերության այլ ճյուղեր, այն է՝ գունավոր մետաղների մշակությունը Կոլչուգինոում, ապակու արտադրությունը Գուս-Խրուստալնիում և այլն։ Արդյունաբերությունն առանձնապես զարգանում է Յարոսլավլի մարզի կենտրոն Յարոսլավլ քաղաքում (ավտոմոբիլի գործարան, սինթետիկ կաուչուկի արտադրություն, ավտոմոբիլի դողերի արտադրություն, քիմիական արտադրություն և տեքստիլ գործարաններ)։ Վոլգայի վերին հովտում գտնվող Ռիբինսկը հանդիսանում է նավաշինական և մեքենաշինական կենտրոն (տպագրական մեքենաների գործարան)։

Խոշորագույն արդյունաբերական կենտրոն է Գորկին, որ գտնվում է Օկա և Վոլգա գետերի խառնարանի մոտ, դեպի Ուրալ տանող ջրային ճանապարհի վրա։ Գորկիում կառուցված է մի վիթխարի ավտոմոբիլային գործարան։ Գորկու մոտ գտնվող Կրասնի Սորմովում ընդարձակված է շոգեքարշեր, երկաթուղային ու տրամվայի վագոններ պատրաստող գործարանը։ Հենց այստեղ էլ կա մի նավաշինարան՝ գետային նավեր կառուցելու համար։ Ձերժինսկում կառուցված է մի խոշոր քիմիական գործարան։ Գորկու մարզում տեղական հումքի բազայի վրա զարգացել է թղթի արդյունաբերությունը (Բալախնայի թղթի ֆաբրիկան, որ խոշորագույնն է ՍՍՀՄ-ում)։ Այստեղ էներգետիկ ռեսուրսն են հանդիսանում տեղական տորֆը և բերովի նավթը։

Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության զարգացմանը զուգընթաց իր նշանակությունը պահպանել է նաև բազմապիսի տնայնագործությունը, որ Գորկու մարզում առանձնապես զարգացած է։ Տնայնագործների թիվը չի զիջում ձեռնարկություններում աշխատող բանվորների թվին։ Տնայնագործները համախմբված են արտելներում։

Գյուղատնտեսությունը համեմատած արդյունաբերության

հետ, Կենտրոնում երկրորդական նշանակություն ունի։ Այդտեղ կամ զարգացած են գյուղատնտեսության այնպիսի ճյուղերը, որոնք սպասարկում են Մոսկվայից սկսած նաև այլ արդյունաբերական կենտրոնների բնակչությանը, այն է՝ բանջարաբուծությունը, պտղաբուծությունը (հատապտուղներ, Վլադիմիրի բալը), խոզաբուծությունը, թռչնաբուծությունը, կաթնատնտեսությունը, կամ այն ճյուղերը, որոնք աշխատում են տեղական արդյունաբերության կարիքների համար՝ վուշագործությունը, կարտոֆիլի մշակությունը՝ ոսլա և սպիրտ արտադրելու համար, որ ի միջի այլոց, օգտագործվում է նաև սինթետիկ կաուչուկի արտադրության համար, սերմնաբուծությունը, բանջարաբուծությունն ու չորանոցները և այլն։ Այդ բոլորն էլ շատ ինտենսիվ մշակույթներ են և շատ պարարտացում են պահանջում։ Հացահատիկ ցանվում է ամենուրեք, բայց ավելի շատ Մոսկվայի մարզի հարավում, Տուլայի և Ռյազանի շրջաններում։

Այլ բնույթ ունի Կենտրոնի սևահողային մասի տնտեսությունը, թեև Կենտրոնի հյուսիսային և հարավային մասերի հակադրությունը խորհրդային իշխանության օրոք համարյա հարթվել է։ Այդտեղ հողագործության մեջ գերակշռում են հացահատիկների ցանքերը՝ գլխավորապես հաճարի, վարսակի, աշնան ցորենի ցանքերը, ապա հնդկացորենի (гречиха) և կորեկի ցանքերը։ Տնտեսության կոլեկտիվացումը և միջնակների վերացումը հնարավոր է դարձրել հողի մշակման ու բերքահավաքի մեքենայացման գործադրումը։ Հերկված է հողի մեծ մասը։ Հողագործության զուգընթաց զարգանում է նաև կենդանաբուծությունը։ Հացահատիկների վերամշակման մնացորդներով գիրացվում են խոզերն ու թռչունները։ Կենդանաբուծության մթերքներն արտահանման առարկա չեն հանդիսանում։

Գյուղատնտեսության վերելքի գործում մեծ դեր են խաղում խորհտնտեսությունները, որ առանձնապես բազմաթիվ են Վորոնեժի մարզում։ Կան հացահատիկային, շաքարի ճակնդեղի, խոզաբուծական և այլ խորհտնտեսություններ։ Մեծ մասամբ հենց այս խորհտնտեսություններում էլ գտնվում են արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք վերամշակում են գյուղատնտեսության մթերքները։ Սննդային արդյունաբե-

րության զարգացմամբ սևահողային Կենտրոնն Ուկրաինայից հետո, յերկրորդ տեղն է գրավում։ Բացի այդ, զարգանում է նաև կենդանաբուծության հետ կապված արդյունաբերությունը, այն է՝ կոշտ մահուդեղենի, կոշկեղենի արտադրությունը, կաշվի արդյունաբերությունը։ Սակայն զարգացած գյուղատընտեսական արդյունաբերություն ունեցող այդ մարզում էլ առաջին տեղն են անցնում մետաղամշակությունն ու մեքենաշինությունը։ Մետաղամշակության խոշորագույն կենտրոնը գտնվում է Բրյանսկում. այստեղ են գտնվում շոգեշարժաշինական, վոր յերկրորդն է իր մեծությամբ ԽՍՀՄ-ում, վագոնաշինական, լոկոմոտիվային, ցեմենտի, ապակու և այլ ձեռնարկություններ։ Տեղական յերկաթահանք օգտագործող խոշոր մետալուրգիական գործարան է կառուցվում Լիպեցկում։ Կուրսկի մարզում յերկաթահանքը, այսպես կոչված Կուրսկի մագնիսային անոմալիայի շրջանը (KMA) բավական խորն է ընկած և նրա մշակությունը նոր է միայն սկսվում։

Միության ընդհանուր տնտեսության մեջ առաջին տեղը պատկանում է Կենտրոնին։ Նրա արտադրանքով մատակարարվում են Միության մյուս մարզերը։

Քաղաքները յեվ հաղորդակցության ուղիները։—Կենտրոնի հյուսիսի և հարավի միջև տարբերությունը յերևում է նաև քաղաքային բնակչության տեղաբաշխման թվից։ Հյուսիսային մասի քաղաքներում հինգ անգամ ավելի շատ մարդ է բնակվում, քան հարավային մասում։ Քաղաքային բնակչության տոկոսը Մոսկվայի մարզում հասնում է 80-ի։ Իվանովոյի ու Յարոսլավլի մարզերում 40-ի, Վորոնեժի մարզում ընդամենը 11,5-ի, իսկ Կուրսկի մարզում նույնիսկ 8,5-ի։ Դրա փոխարեն սևահողային գոտում գյուղական բնակավայրերը շատ ավելի խոշոր են ու բազմամարդ, քան Կենտրոնի հյուսիսային մասում։ Նրանց տիպն էլ տարբեր է հյուսիսի բնակավայրերից։ Մեծ մասամբ դրանք խոշոր գյուղեր են, յերբեմն մի քանի կիլոմետր յերկարության հասնող փողոցով։ Նրանք ձգտում են լինել ջրին մոտիկ, տեղադրվելով գետերի կամ հեղեղատների յեզերքին։ Ջրային ուղիներն այստեղ կարևոր դեր են խաղում։ Մարզի հյուսիսային մասում անցնում է Վոլգայի վերին հոսանքը, վորի մեջ հյուսիս-արևմտյան կողմից թափվում է Շեկսնան։ Շեկսնան

միացնում է Կենտրոնը Նևայի ու Հյուս. Դվինայի ավազանների հետ։ Միացնող օղակ է հանդիսանում Մարիինյան սիստեմը, վոր Կենտրոնի սահմաններից դուրս է գտնվում։

Ջրային ուղիների նշանակությունը Կենտրոնի հյուսիսային մասի համար խիստ մեծացավ, շնորհիվ Մոսկվա-Վոլգա ջրանցքի կառուցման. այդ ջրանցքն Օկա ու Վոլգա գետերի հետ կազմում է մի անընդհատ օղակ՝ մատչելի գետային խոշոր նավերի համար։

Մոսկվա-Վոլգա ջրանցքն սկսվում է Վոլգա գետից, այն է՝ Կիմր քաղաքից վերև, անցնում է Կլինսկ-Դմիտրովյան բլրաշարքի և Վոլգայի միջև ընկած ընդարձակ ճահճոտ դաշտավայրով, բլրաշարքը կտրում է մի շարք շլյուզներով, ապա օգտագործելով Կլյազմայի և ուրիշ ավելի մանր գետերի ջուրը՝ հասնում է մինչև Մոսկվա-գետը։ Վոլգայից հոսող ջրի շնորհիվ Մոսկվա գետի ջրի մակարդակը բարձրանում է։ Մոսկվա քաղաքը դառնում է գետային խոշոր նավահանգիստ։ Մոսկվա գետը խորացվում է շնորհիվ շլյուզների։ Ամբողջ այդ սիստեմով նավարկում են խորանիստ նավեր և Վոլգայի հոսանքով վեր բարձրացող բեռնատար նավերը կարող են բեռնաթափ լինել Մոսկվայի նավամատույցներում։

Կենտրոնի յերրորդ խոշոր գետը Դոնն է, վորը հոսում է մարզի հարավային մասով. Դոնը մեծ նշանակություն չունի, թե ծանծաղաջուր լինելու, և թե մարզի կենտրոնից հեռու լինելու պատճառով։

Կենտրոնի համար շատ ավելի մեծ նշանակություն ունեն յերկաթուղիները, վորոնք անցնելով բոլոր ուղղություններով, միանում են Մոսկվայում։ Մոսկվան ԽՍՀՄ յերկաթուղային ամենախոշոր հանգույցն է։ Այստեղից դուրս են գալիս 11 գծեր, վորոնք Մոսկվան միացնում են յերկրի բոլոր մասերի հետ։ Մոսկվայի մոտ նրանք իրար հետ միանում են Շրջանային յերկաթուղով. Յերկաթուղիներից մեկը (Հոկտեմբերյան) կապում է Մոսկվան Լենինգրադի հետ, մյուսը տանում է դեպի Լատվիա, յերրորդը՝ դեպի Մինսկ, ապա Վարշավա, չորրորդը կապում է Մոսկվան Կիևի հետ, մի ուրիշը կապում է Մոսկվան Խարկովի, Դոնբասի և Ղրիմի հետ։ Ապա յերկաթուղիները կապում են նաև Մոսկվան Սարատովի, Կովկասի, Ուրալի և Սի-

քիրի, Ալեքսանդրովի հետ, վերջապես Վերին Վոլգայի հետ: Երկաթուղիներից ամենակարևորը նրանք են, որոնք հարավից են գալիս: Այդ ուղիներով դեպի կենտրոն են փոխադրվում քարածուխ և մետաղ, շաքար, հացամթերք և այլ սննդամթերքներ: Այդ յերկու միջօրեականային մագիստրալներին — Հարավային և Կովկասյան — մոտ ապագայում ավելանալու յե յերրորդ մագիստրալը, որն ամենակարճ ճանապարհով և անմիջականորեն կապելու յե Մոսկվան Դոնբասի հետ:

Բացի միջօրեականային մագիստրալներից, կան նաև լայնության մագիստրալներ, որոնք կտրում են կենտրոնը արևմուտքից արևելք:

Կենտրոնի քաղաքների մեծ մասը հնագույն ծագում ունեն, մանավանդ հյուսիսում, բայց կան նաև հարավում, օրինակ, Կուրսկը գոյություն ունի XI դարից: Մի քանի քաղաք այժմ դարձել են մանր բնակավայրեր, սակավաթիվ բնակչությամբ: Նրանց պատմական անցյալից պահպանվել են միայն մի քանի հին հուշարձաններ, այն է՝ Ռոստովը, Սուզդալը: Ընդհակառակը, աճում են քաղաքներ՝ արդեն իսկ գոյություն ունեցող արդյունաբերության կենտրոն — քաղաքները, կամ բոլորովին նորերը, որ սկիզբ են առնում մեր օրերում՝ նորակառույց խոշոր գործարաններին ու էլեկտրակայաններին կից:



Նկ. 17. Մոսկվա-Վոլգա ջրանցքը:

Կենտրոնի քաղաքների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Մոսկվան: Մոսկվան միաժամանակ հանդիսանում է Մոսկվայի մարզի մարզային կենտրոնը, ՌՍՖՍՀ և ամբողջ ԽՍՀՄ մայրաքաղաքը, ամբողջ յերկրի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կարևորագույն կենտրոնը: Ներկայումս Մոսկվայի բնակչության թիվը հասնում է 4,1 միլիոնի, այսինքն Մոսկվան իր բնակչության թվով աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկն է: Բնակչությունն անընդհատ և արագ աճում է, քանի որ բոլոր տեսակետներից արագորեն զարգացող կենտրոնը դեպի իրեն է քաշում մարդկանց նորանոր մասսաներ, որոնք այստեղ իրենց ուժերի գործադրություն են գտնում սոցիալիստական շինարարության բազմապիսի ճյուղերում: Մոսկվայի ամբողջ բնակչության մեկ վեցերորդ մասը կազմում են բանվորները: Մոսկվայի բանվոր դասակարգն ամենաբազմաթիվն է ԽՍՀՄ-ում, նա իր շարքերից շատ ու շատ ականավոր գործիչներ է տվել:

Մոսկվայում են գտնվում Միութենական կառավարությունը, կառավարական բոլոր բարձրագույն հիմնարկները և Համ. Կ(բ)ԿԿ: Նա հանդիսանում է ոչ միայն մեր յերկրի սոցիալիստական շինարարության ու քաղաքական կյանքի կենտրոնը, այլ և նրա վրա յե դարձված ամբողջ համաշխարհային պրոլետարիատի հայացքը: Այստեղ են լույս տեսնում մամուլի կենտրոնական օրգանները, այստեղ են գտնվում խոշորագույն ռադիոկայանները: Մոսկվան միաժամանակ մեր յերկրի կուլտուրական խոշորագույն կենտրոնն է: Այստեղ կան գիտական բազմաթիվ հիմնարկներ՝ Գիտությունների Համամիութենական Ակադեմայի գլխավորությամբ և ԽՍՀՄ խոշորագույն ու հնագույն համալսարանը, Լենինյան հանրային գրադարանը, բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, թանգարաններ, պատկերասրահներ և պետական լավագույն թատրոններ:

Մոսկվայի արագ աճը զարկ է տվել նրա ծայրամասերի շինարարությանը՝ քաղաքի սահմանագծի մեջ և մոցված շրջակայքը: Արդեն կազմված է «Մեծ Մոսկվա»-յի պլանը, որ ընդգրկում է ահագին տարածություն. մոտ 50 կմ տրամագծով: Այդտեղի անտառները դարձվելու յեն պուրակներ: Արդյունաբերական ձեռնարկությունները տեղավորվում են ծայրամասերում, նրանց կողքին բարձրացել են բանվորական տների նոր թաղամասեր, բազմահարկ հիանալի շենքերով և հարմար ու լուսավոր բնակարաններով: Սկսված է քաղաքի հին մասի վերակառուցումը, որը տևելու յե 10 տարի: Քանդվում են հին շենքերը և նրանց տեղը կառուցվում են նոր, վիթխարի տներ, լայնացվում և ուղղվում են փողոցները, գցվում են նոր մագիստրալ-

ներ, Մոսկվա-գետի ափին կառուցվում են գետափնյա պողոտաներ, փողոցային շարժումը թեթևացնելու համար կառուցվել է ստորերկրյա յերկաթուղի՝ մետրոպոլիտեն, կամ կրճատ՝ մետրո, վորը ԽՍՀՄ-ում առաջինն է և աշխարհում լավագույնն իր հարմարություններով ու շենքերի ձևավորումով։ Ամբողջ շինարարությունն ավարտելուց հետո քաղաքի ամենահեռավոր մասերն իրար հետ միացած են լինելու մետրոյի գծերով։

Մոսկվայից, այդ ամենախոշոր կենտրոնից հետո գալիս է Գորկի քաղաքը, վորն ունի 644 000 բնակիչ և մի քանի քաղաքներ, վորոնք 200 հազարից ավելի բնակիչ ունեն, որինակ շատ արագ աճող Յարոսլավլը, Տուլան, Իվանովոն, Վորոնեժը, բոլորն էլ մեծ նշանակություն ունեցող արդյունաբերական կենտրոններ են։ Մի շարք քաղաքներ ունեն 100 հազարից ավել բնակիչ՝ Բրյանսկը, Կոստրոման, Կուրսկը, Օրյոլը, Տամբովը։ Մյուսները բնակչությամբ մոտենում են այդ թվին։ Ռիբինսկը թե արդյունաբերական և թե առևտրական մեծ ապագա ունեցող քաղաք է, վորովհետև գտնվում է Մարիինյան սիստեմի սկզբին։ Ռյազանը գտնվում է յերկաթուղային մագիստրալի և Օկայի ու մյուս գետերի ջրային ուղու հատման տեղում և այլն։

3. ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—Արևմուտք անվան տակ հասկացվում են՝ Բելոռուսական ԽՍՀ-ն և Կալինինի մարզը, վորոնց արևմտյան սահմանը միաժամանակ Միության պետական սահմանն է, ինչպես նաև Սմոլենսկի մարզը, վորը սահմանից հեռու չէ և ընկած է արևմուտքից Բելոռուսական ԽՍՀ-ի ու արևելքից Կենտրոնի միջև։

Իր տարածությամբ Արևմուտքը ԽՍՀՄ Յեվրոպական մասի ֆիզիկո-աշխարհագրական ամենափոքր մարզն է։ Բնակչությունը կրկնակի պակաս է Կենտրոնից, բնակչության խտությամբ Ուկրաինայից ու Կենտրոնից հետո յերրորդ տեղն է բռնում։ Այն հանգամանքը, վոր Արևմուտքը գտնվում է մեր յերկրի հենց սահմանագլխին, շատ մեծ նշանակություն ունի. յերկրի պաշտպանության գործում նա ամենապատասխանատու ճակատամասերից մեկն է։ Սահմանի մյուս կողմը մեծ տարածության վրա գտնվում է Գերմանիան, իսկ ամենահյուսիսում՝ Լատվիան։ Մեր տերիտորիան նրանցից բաժանված չէ բնական

սահմանագծով, ուստի և նրա պաշտպանությունը պետք է լինի շատ հոգատար։

Այդ բոլոր մարզերին վորպես մեկ ամբողջություն միացնող ընդհանուր հանգամանքը բնական-աշխարհագրական պայմանների նմանությունն է. նախ ռելյեֆը, վորի հիմնական



Նկ. 18. ԽՍՀՄ Յեվրոպական մասի Արևմուտքը։

գծերը յերկրամասի մեծ մասում դրսևորվում են սառցադաշտային ծագման պարզ արտահայտված հետքեր. ապա կլիման, վորը սակավ ցամաքային է, հետևապես ավելի խոնավ, վորքան դեպի արևելք են ընթանում։

Ռելյեֆի և նրա հետ կապված գետային ցանցի բնույթի համապատասխան, Արևմուտքը բաժանվում է յերեք մասի. 1) հյուսիսային կամ մորենային լանդշաֆտի շրջան, 2) արևելյան՝ Միջին Ռուսական բարձրություն և 3) արևմտյան՝ Պոլեսյե։

Մորենային լանդշաֆտի շրջան.—*Հյուսիսում ձգվում են միքանի մորենային բլրաշարքեր, վորոնք ընդհանուր առմամբ ընթանում են հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք: Դրանցից ամենաբարձրը* Վալդայան բարձրությունն է: *Նա բաղկացած է յերկու բլրաշարքից և նրանց միջև ընկած գոգավորությունից: Այդ գոգավորության մեջ են գտնվում* Սելիգեր, Վերխնե-վոլժսկիյե *լճերը,* Վոլգա *և* Արևմտյան Դվինա *գետերի վերին հոսանքները: Վալդայան բարձրությունն իր ամբողջ յերկարությամբ ունի մեծ թվով լճեր: Առանձնապես շատ լճեր կան Նևելից դեպի արևմուտք և դեպի արևելք: Հյուսիսում, վորտեղ բարձրությունը փոխվում է Մերձբալթյան դաշտավայրի, լճերն աստիճանաբար փոխվում են ճահիճների ու տորֆավայրերի:*

Բլրաշարքերը համատարած մորենային ծագում ունեն: Սառցադաշտային նստվածքները բավականին հաստ շերտերով միայն ծածկում են իրենց տակ ընկած հնագույն հիմնական ապառները: Այդ ապառները գնալով դեպի Իլմեն լիճը աստիճանաբար իջնում են: Սառցադաշտն իր ճանապարհին դեմ առնելով ապառային այդ արգելքին, այդտեղ թողել է մեծ քանակությամբ փշրված բեկորներ և փակել նախասառցադաշտային գետերի հովիտները, վորոնց մեջ գոյացել են Սելիգեր, Վերխնեվոլժսկիյե և այլ լճերը:

Վալդայան բարձրությունով է անցնում Բալթիկ ու Կասպից ծովերի ավազանների ջրաբաշխը: Բոլոր գետերը՝ Վոլգան, Արևմտյան Դվինան, Իլմեն լճի մեջ թափվող գետերը սկիզբ են առնում փոքր լճերից կամ ճահիճներից: Նույնը վերաբերում է նաև Դնեպրին, վորն սկիզբ է առնում ավելի հարավ, Միջին-Ռուսական բարձրությունից: Յերբեմն, մանավանդ գարնանը, միևնույն ճահճի ջրերի մի մասը մի ծայրից հոսում է դեպի մի գետ, իսկ հակադիր ծայրից, դեպի մի այլ գետ:

Այս մասի գլխավոր գետերն են՝ Վոլգան, *(վորն այստեղ իր մեջ է առնում մի շարք փոքր վտակներ և ավելի խոշոր* Տվերցան*),* Լովատը *և* Վելիկայան:

Միջին-Ռուսական բարձրությունը. — *Միջին-Ռուսական բարձրությունը մեր այս նկարագրած մարզի սահմաններում մեծ մասամբ հանդիսանում է մի բարձր, փոքր ինչ ալեձև հարթություն, վորի վրա ցրված են աննշան բլուրներ ու տափարակ ճահճուտ գոգավորություններ: Նրա ամենաբարձր մասը ջրաբաշխ է հանդիսանում արևելքում Վոլգայի և Օկայի վտակների, իսկ արևմուտքում՝ Դնեպրի ու Արևմտյան Դվինայի համար: Այստեղ է սկսվում նաև* Դնեպրը:

Նկ. 19. Նևելի քաղաքի մոտ մորենային լճեր:

Միջին-Ռուսական բարձրության հյուսիսային մասում տեղ-տեղ նկատվում են կրաքարային ապառներ, վորոնց մեջ առաջանում են փլվածքային փոսեր, հանդիպում են նույնպես և գետակներ, վորոնք գետնի յերեսից անհայտանում են կրաքարային ճեղքվածքներում: Ընդհանուր առմամբ, Միջին-Ռուսական բարձրության արևմտյան մասի ռելյեֆը քիչ է կտրատ-



Նկ. 20. Վոլգայի ակունքներում:

ված, համեմատությամբ արևելյան մասի հետ, վորտեղ շատ ձորակներ կան։

Պոլեսյե.—Պոլեսյեն գրավում է յերկրամասի ամբողջ հարավ-արևմտյան մասը։ Սա գոգանման մի ընդարձակ դաշտավայր է, վոր ընկած է Պրիպյատ գետի ու նրա վտակների ափերին, մոտ 100 հազ. քառ. կմ. տարածությամբ։

Փշատերև անտառներով ծածկված ավազային հողամասերին հաջորդում են կանգնած ջրերի՝ լճերի ու ճահիճների ահագին տարածություններ։ Վերջինները հասնում են մի քանի հազար քառ. կիլոմետրի։ Այստեղ գալարուն և ջրի մակերևույթից հազիվ բարձր ափերի միջով դանդաղ հոսում են անհամար գետակներ ու առվակներ, վորոնք իրար միացած են ճյուղավորումների ու հոսանքների խճճված ցանցով։ Այդ ճահճուտները գրավում են վոչ միայն ավելի ցածր մասեր, այլև ջրաբաշխ գծեր։ Գարնանը ջրերի հորդացման ժամանակ գետերը տարածվում են ահագին տարածությունների վրա, վորոնց մեջ կղզու նման բարձրանում են առանձին ավազաբլուրներ։

Դեռ անցյալ դարի վերջերից այստեղ սկսված եյին չորացման աշխատանքներ։ Ներկայումս փորված է մեծ ու փոքր ջրանցքների ու առուների մի ամբողջ ցանց. Պոլեսյեյի զգալի



Նկ. 21. Միջին-Ռուսական բարձրության մի տեսարան Սմոլենսկի մարզում։

մասն արդեն ցամաքեցված է և ճահիճների տեղն ստեղծվել են արժեքավոր մարգագետիններ ու վարելահողեր։

Պոլեսյեյի գլխավոր գետերն են՝ Պրիպյատը, վորն արդեն Ուկրաինայի սահմաններում թափվում է Դնեպրի մեջ, և Բերեզինան իր ստորին հոսանքում։ Ձախ կողմից Դնեպրի մեջ է թափվում Սոժը, վորը սկիզբ է առնում Միջին-Ռուսական բարձրությունից։

Կլիման և բուսականությունը.—ՍՍՀՄ Յեվրոպական մասի Արևմուտքի բնությունը մի շարք աստիճանական անցումների պատկեր է ներկայացնում։ Արևմտյան մարզի արևելյան մասում, Սմոլենսկի մարզում կլիման ու բուսականությունը նույնն է, ինչ հարևան Մոսկվայի մարզում, տարեկան միջին ջերմաստիճանը +4,5°, ձմեռը տևում է համարյա հինգ ամիս, հունվարի միջին ջերմաստիճանը —10-ից մինչև —8°, անտառներում գերակշռում է յեղևնին՝ սոճի, կեչի և բարդի ծառերի հետ խառը։ Բայց վորքան դեպի արևմուտք, այնքան ավելի ուժեղ է զգացվում ծովի մոտիկությունը. այստեղ տարեկան ջերմաստիճանն ավելի բարձր է (հարավ-արևմուտքում մինչև +6,5°) ավելի մեղմ է ձմեռը, ավելի շատ են տեղումները (600 մմ-ից ավելի)։ Հարավ-արևմուտքում ձմեռը տևում է 3 ամսից մի քիչ ավելի, հունվարին ու փետրվարին հաճախ ջերմ օրեր են լինում։ Ամառն ավելի զով է (հուլիսի միջին ջերմաստիճանը +18,5°)։ Համապատասխանաբար փոփոխվում է նաև բուսականության բնույթը. գերակշռում են լայնատերև ծառերը՝ կաղնին, լորին, հացենին, իսկ հարավ-արևմուտքում նաև հաճարին։ Մի ժամանակ այս ամբողջ յերկիրը ծածկված է յեղել անտառներով, բայց այժմ անտառապատ է ամբողջ տարածության 1/3 մասից վոչ ավելին։ Լանդշաֆտում մեծ դեր են խաղում ճահիճները, վոր կարելի յե հանդիպել այստեղ շատ բազմապիսի ձևերով. գերակշռում են բուսածածկ ճահիճները, վորոնց վրա բուսնում են յեղեգ, ճահճախոտ և բոշխ։ Փտած բուսականությունն այստեղ առաջացնում է հաստ շերտեր, այսպես կոչված՝ «խոտառատ տորֆավայրեր»։ Հողն ամենուրեք պոդզոլային է։ Պոլեսյեյում ամենուրեք ավազահողեր են, վոր ծածկված են փշատերև անտառներով, և ընդարձակ ճահիճներ։

Բնակչությունը։ Վարչական-քաղաքական բաժանումը.—Արևմուտքը բավական խիտ բնակչություն ունի. այստեղ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա բնակվում է միջին հաշ-

վով 40 մարդ։ Ամենից խիտ բնակչություն ունի բուն Սմոլենսկի մարզը։ Բելոռուսական ԽՍՀ-ն մի քիչ հետ է մնում նրանից, բայց Կալինինի մարզը շատ ավելի նոսր բնակչություն ունի։ Սակայն քաղաքային բնակչության տոկոսը Կալինինի մարզում ավելի բարձր է։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, վոր Սմոլենսկի մարզն ու Բելոռուսիան հողագործության համար ավելի նպաստավոր պայմաններ ունեն, ուստի այնտեղ գյուղական բնակչությունը շատ ավելի խիտ է։

Յերկրի արևմտյան կեսում գերակշռում են բելոռուսները, արևելյան և հյուսիսային մասերում՝ ռուսները։ Բնակչության զգալի տոկոսն են կազմում հրեաները, վորոնք ապրում են ամենուրեք, գլխավորապես քաղաքներում։ Հարավ-արևմուտքում, Պրիպյատից դեպի հարավ, ապրում են ուկրաինացիները։ Ամբողջ յերկրամասում, թեև սակավաթիվ, ցրված են նաև լեհերը։ Կալինինի մարզում կան շրջաններ, վորոնց բնակիչները կարելներ են։ Ներկայումս բելոռուս ժողովուրդն ազգային ինքնորոշման հնարավորություն է ստացել, ստեղծված է Բելոռուսական ԽՍՀ, վորը վարչական տեսակետից բաժանվում է տաս մարզի՝ Վիտեբսկի (կենտրոնը Վիտեբսկ), Մոգիլևսկի (կենտրոնը Մոգիլով), Մինսկի (կենտրոնը Մինսկ), Գոմելի (կենտրոնը Գոմել), Պոլեսսկի (կենտրոնը Մոզիր), Բարանովիչի (կենտրոնը Բարանովիչի), Բելոստոկի (կենտ. Բելոստոկ), Բրեստի (կենտ. Բրեստ), Վիլեյկայի (կենտ. Վիլեյկա և Պինսկի (կենտ. Պինսկ)։ Բելոռուսական ԽՍՀ-ի կենտրոնն է Մինսկ։ Յերկրի մնացած մասը վոր առավելապես ռուս բնակչություն ունի, բաժանված է յերկու մարզի. Սմոլենսկի մարզ Սմոլենսկ կենտրոնով և Կալինինի մարզ Կալինին կենտրոնով։ Այդ յերկու մարզերն էլ մտնում են ՌՍՖՍՀ կազմի մեջ։

Շնորհիվ խորհրդային իշխանության կիրառած ազգային ինքնորոշման քաղաքականության և այդ միջոցով ժողովրդական լայն մասսաների ստեղծագործական ուժերի բարձրացման, Բելոռուսական ԽՍՀ-ն կարճ ժամանակամիջոցում նշանակալից հաջողություններ է ունեցել տնտեսական ու կուլտուրական շինարարության բնագավառներում։ Վերացված է բնակչության անգրագիտությունը, ստեղծվել են մի շարք ուսումնական բարձրագույն հիմնարկներ և գիտական ինստիտուտներ, վորոնց գլխավորում է ԲԽՍՀ Գիտությունների Ակադեմիան, զարգացել է գրականությունն ու մամուլը բելոռուսական լեզվով։ Բելոռուսական կուլտուրայի կենտրոնը Մինսկն է։ Ձեռք բերած հաջողությունները ավելի ակնբախ են, յերբ համեմատում ենք այն դրության հետ, վոր գոյություն ուներ հեղափոխությունից առաջ։

Տնտեսությունը.—Սակավ բացառությամբ Արևմուտքի տերիտորիան գտնվում է այնպիսի կլիմայական պայմաններում, վոր բավական բարենպաստ է գյուղատնտեսության զարգացման համար. չափավոր խոնավությունն ու յերաշտների բացակայությունն ապահովում է բերքը։ Սակայն պոդզոլային, կավախառն ու ավազախառն հողերը բավականաչափ բերրի չեն։ Այդ իսկ պատճառով, այստեղ թեև հողագործության հիմնական ճյուղը հացաբույսերի՝ հաճարի ու վարսակի մշակությունն է, շատ շրջաններում ավելի ձեռնտու տեխնիկական մշակույթների ցանքի տոկոսը շատ բարձր է։ Դրանք են՝ վուշը Կալինինի և Սմոլենսկի մարզերում, կարտոֆիլը՝ Բելոռուսիայում և նրան մերձակա Սմոլենսկի մարզի շրջաններում, կանեփը՝ Սմոլենսկի մարզի հարավ-արևելքում և Բելոռուսիայի հարավում։

Բավականին զարգացած է նաև կենդանաբուծությունը, վորը պայմանավորված է կլիմայի խոնավությամբ և դրա հետ կապված խոտի առատությամբ։ Հյուսիս-արևմուտքում, Կալինինի մարզում և նրան հարակից Բելոռուսիայի շրջաններում, վորտեղ շատ մարգագետիններ ու խոտհարքներ կան, գերակշռում է կաթնատու կենդանաբուծությունը։ Բելոռուսիայի մյուս շրջաններում և Սմոլենսկի մարզում զարգացած է խոզաբուծությունը։

Յերկրամասի բնական հարստությունն անտառն է։ Ամբողջ տարածության 1/3 մասն անտառով է պատած։ Անտառային տնտեսությունն ամենից շատ զարգացած է Բելոռուսիայում, վորտեղից Արևմտյան Դվինա և Նեման գետերով փայտեղենն արտահանվում է արտասահման, իսկ Դնեպրով և Պրիպյատով՝ դեպի Ուկրաինա։

Արևմուտքի օգտակար հանածոներից ամենագլխավորը տորֆն է, վորի պաշարները շատ շատ են և կարող են վառելանյութով լրիվ ապահովել տեղական արդյունաբերությունը։ Ներկայումս Որշայի մոտ կառուցված է Ոսինովսկի խոշոր է-

լեկտրոկայանը, վորից սնուցված էներգիան տրվում է նաև Մոգիլևին ու Վիտեբսկին: Կառուցվում են մի շարք ուրիշ կայաններ ևս: Շատ տեղերում հանդիպում են ֆոսֆորիտ և տարբեր շինանյութեր, իսկ Սմոլենսկի մարզի արևելքում, վորտեղ հասնում է Մերձմոսկովյան ածխային ավազանը, կա գորշ ածուխ և յերկաթահանք:

Խորհրդային իշխանության օրով Արևմուտքի, մանավանդ ԲԽՍՀ-ի, արդյունաբերության մեջ խոշոր տեղաշարժեր են կատարվել և հիմնվել են արդյունաբերական շատ նոր ճյուղեր: Ամենից շատ տարածված է գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերությունը. վուշի (Ռժեվ) և կանեփաթելի վերամշակումը, օսլայի արտադրությունը կարտոֆիլից, յուղի ու պանրի արտադրությունը և այլն: Կենդանաբուծության մթերքների վերամշակումը՝ կաշվի ու կոշկեղենի արդյունաբերությունը, խոզանակի արտադրությունը: Անտառի հետ կապված են փայտամշակման, սղոցարանային, թղթի և լուցկու արդյունաբերությունը: Վերջին յերկու ճյուղերը համամիութենական նշանակություն ունեն:

Միության ընդհանուր տնտեսության մեջ Արևմուտքը մեծ նշանակություն ունի, վորպես վուշագործության և կտավի արտադրության խոշորագույն շրջաններից մեկը և վորպես թղթի խոշոր արդյունաբերության շրջան:

Քաղաքները յեվ հաղորդակցության ուղիները.—Արևմուտքը չունի շատ խոշոր քաղաքներ: Ամենախոշոր քաղաքների բնակչության թիվը 200 հազարից ավել է: Դրանք են՝ Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկը և Կալինինի մարզի կենտրոն Կալինին քաղաքը: Սմոլենսկի մարզի կենտրոն Սմոլենսկը 150 հազարից քիչ ավելի բնակիչ ունի: Բելոռուսիայում, Մինսկից բացի, կան նաև այլ քաղաքներ, վորոնց բնակիչների թիվն անցնում է 100 հազարից. դրանք են՝ Գոմելը, Վիտեբսկը, Մոգիլևը, Բոբրույսկը:

Ավելի խոշոր քաղաքները գտնվում են յերկաթուղիների հատման կետերում, վորով պայմանավորվում է նրանց հետագա աճը: Այդպիսի խոշոր յերկաթուղային հանգույցներ են Գոմելը, Սմոլենսկը, Վյազման, Վիտեբսկը և Մինսկը: Յերկաթուղիները, վորոնք յերկրամասը կտրում են արևելքից-արևմուտք, Մոսկվայից տանում են դեպի մեր արևմտյան սահմանները՝ Սմոլենսկի-Մինսկի վրայով դեպի Վարշավա և Ռժևի վրայով՝ դեպի

Ռիգա: Կալինինի մարզում անցնում է այն յերկաթուղին (Հոկտեմբերյանը), վոր Մոսկվան կապում է Լենինգրադի հետ: Սմոլենսկի մարզով անցնում է այն յերկաթգիծը, վորը Մոսկվայից Բրյանսկի վրայով տանում է դեպի Կիև, իսկ ԲԽՍՀ-ով անցնում է միջօրեականային մագիստրալը, վոր Լենինգրադից տանում է դեպի Օդեսսա:

Այդ յերկրամասում ջրային ճանապարհները գլխավորապես տեղական նշանակություն ունեն և ծառայում են գլխավորապես փայտեղենի փոխադրությանը: Դնեպրը Բերեզինայի վրայով Բեբեզինայի ջրանցքի միջոցով միանում է Արևմտյան Դվինային: Նախատեսված է ապագայում արմատապես վերակառուցել ջրային ամբողջ սիստեմի ճանապարհները (այսպես կոչված՝ «Մեծ Դնեպրի» պրոբլեմը), վոր հնարավորություն կտա անմիջական ջրային կապ ստեղծել Բալթիկ ու Սև ծովերի միջև: Իսկ այդ ահագին նշանակություն կունենա նաև Բելոռուսական ԽՍՀ և Սմոլենսկի և Կալինինի մարզերի համար: Այդ պրոբլեմի առաջին մասը՝ Դնեպրի սահանքների վերացումը, արդեն կատարված է:

4. ԽՍՀՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՐԱՎԸ

ԽՍՀՄ Եվրոպական մասն իր մեջ ունի յերկու հանրապետություն՝ Ուկրաինայի ԽՍՀ և Ղրիմի ԱԽՍՀ, վորը մտնում ե ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ և Ռոստովի մարզը, վորը նույնպես մտնում ե ՌԽՖՍՀ մեջ։

ՈՒԿՐԱԻՆԱ (ՈՒԽՍՀ)

Դիրքը և ընդհանուր բնութագիրը.—Ուկրաինան գրավում ե Արևելա-Յեվրոպական հարթավայրի հարավ-արևմտյան մասը, Արևմուտքում նրա սահմանը միաժամանակ Ռումինիայի ու Գերմանիայի հետ մեր պետական սահմանն ե։ Հարավում նրա սահմաններն են Սև և Ազովի ծովերը, վերջինիս ծոց Սիվաշը և Պերեկոպի նեղ պարանոցը, վոր Ղրիմի թերակղզին միացնում ե մայր ցամաքի հետ։ Արևելքում նրա սահմանագիծը կտրում ե հարավից հյուսիս Դոնեցի լեռնաշղթը և ընթանում ե դեպի հյուսիս-արևմուտք Միջին-Ռուսական բարձրության յեզերքով, վորն այդպիսով դուրս ե մնում Ուկրաինայի տերիտորիայի սահմաններից։ Հյուսիսում նրա սահմանագիծը մոտենում ե Պոլեսյեյի ճահճոտ հարթությանը։ Բացի ռելյեֆի ու կլիմայի վորոշ առանձնահատկություններից, Ուկրաինայի աշխարհագրական ամբողջականության բնորոշ մի նշան ել հանդիսանում ե նրա բնակչությունը, վորի $^{3}/_{4}$ մասը բաղկացած ե ուկրաինացիներից։ Ուկրաինայի կազմի մեջ ե մտնում նաև վոչ մեծ Մոլդավական ԱԽՍՀ-ն, վորը գտնվում ե Դնեստր գետի արևելյան ափին։ Դնեստրից դեպի արևմուտք, Դնեստր և Պրուտ գետերի միջև գտնվող Բեսարաբիան 1918 թվականին գրավվել ե Ռումինիայի կողմից։

Այդպիսով, Ուկրաինայի սահմանագծերի կեսը, արևմուտքում ու հարավում, հանդիսանում ե արտաքին սահմաններ։ Ուկրաինան իր տարածությամբ հավասար ե ԽՍՀՄ Յեվրոպա-



Նկ. 22. ԽՍՀՄ Յեվրոպական մասի հարավը։

կան մասի կենտրոնին։ Այդ մի ֆիզիկո-աշխարհագրական մարզ ե, վորն ունի մեղմ կլիմա և բերրի սևահող, ունի անտառներ ու տափաստաններ, ընդերքում բազմապիսի հարուստ հանքեր՝

քարածուխ, յերկաթ, մանգան, անդիկ, քարաղ: Քարածխի ու յերկաթի հանքերն Ուկրաինայում շատ մոտ են իրար. մի հանգամանք, վոր չենք գտնի վոչ մի տեղ Միության մեջ: Նա զգալի չափով հիդրոէներգետիկ ռեսուրսներ ունի, սահմանակից է տաք ծովի, վորը միայն կարճ ժամանակով է սառչում ափերի մոտ:

Ըստ կլիմայի և բուսականության, մասամբ նաև ըստ ռելյեֆի, Ուկրաինան բաժանվում է 3 մասի.—1) հյուսիսային անտառային մաս՝ Պոլեսյե, 2) միջին՝ անտառա-տափաստանային և 3) հարավային՝ տափաստանային: Անտառա-տափաստանային գոտում, բացի այդ, իրարից տարբերվում են Դնեպրից դեպի արևմուտք ընկած Աջափնյա մասը և Դնեպրից դեպի արևելք ընկած Ձախափնյա մասը: Տափաստանային գոտու հարավ-արևելքում ընկած է Դոնեցի վոչ այնքան բարձր լեռնաշարքը: Այդ առանձին մասերն իրար հետ կապվում են Դնեպրի միջոցով, վոր Ուկրաինային է պատկանում իր միջին և ստորին հոսանքով:

Պոլեսյե.—Պոլեսյեի այն մասը, վոր գտնվում է Ուկրաինայի սահմաններում, հանդիսանում է Բելոռուսիայից և Սմոլենսկի մարզից այստեղ տարածվող ընդարձակ Պոլեսյեի դաշտավայրի շարունակությունը: Այստեղ, ցածր ու տափարակ հարթություններում նույն ավազաններն են, ճահիճները, սաղարթավոր ու փշատերև անտառները, նույն պոդզոլային ու ճահճային հողերը: Հարավում, Աջափնյա շրջանում ուղղորդ բարձրանում է խորապես կտրտված Վոլինո-Պոդոլյան գրանիտե բարձրությունը, իսկ Ձախափնյա շրջանում կան զատ-զատ բարձրություններ, վորոնք ծածկված են լյոսով: Այստեղ աջ կողմից Դնեպրի մեջ է թափվում նրա ամենախոշոր վտակը՝ Պրիպյատը, ձախից՝ Դեսնան:

Աջափնյա մասը.—Աջափնյա Ուկրաինայի մեծ մասը բռնում է Վոլինո-Պոդոլյան բարձրությունը, վորը ձգվում է արևմուտքից Դնեստրի և արևելքից Դնեպրի հովիտների միջև: Նա ավելի բարձր է հյուսիս-արևմուտքում և շեղակի իջնում է դեպի արևելք ու հարավ-արևելք: Այդ բարձրությունը կազմված է հնագարյան բյուրեղային ապառներից, գլխավորապես գրանիտից: Բյուրեղային ապառները մերկանում են հովիտներում, գե-

տերի ջրբաժան տեղերում, մասամբ ծածկված են ավազի, կավի, կրաքարի ու մերգելի (կրակավի) ավելի ուշ գոյացած նստվածքով, իսկ դրանց յերեսին էլ՝ լյոսով: Գետերը հոսում են պինդ ապառների միջով, կազմելով խորը կիրճեր, տեղ-տեղ կտրելով բյուրեղային ապառներ: Նրանց մեջ քիչ չեն սահանքները (Դնեստրում, Հարավային Բուգում, առաջ նաև Դնեպրում): Ձորեր շատ կան: Աջափնյա մասի հյուսիս-արևմուտքում դեռևս հանդիպում ենք լայնատերև անտառների, մնացածը սևահողային տափաստան է:

Բարձրության հարավ-արևելյան ծայրը, այսպես կոչված՝ Կամեննայա կամ Մերձ-Դնեպրյան բլրաշարքը Դնեպրից դեպի արևելք շարունակվում է Մերձազովյան բլրաշարք անունով, վորն անցնում է Ազովի ծովի ափին զուգահեռ, հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք:

Ձախափնյա մասը.—Ձախափնյա Ուկրաինան բռնում է Դնեպրյան դաշտավայրը, վոր հյուսիս-արևմուտքից իջնում է դեպի հարավ-արևմուտք՝ Դնեպրի հովիտը: Նույն ուղղությամբ են հոսում Միջին-Ռուսական բարձրությունից սկիզբ առնող Սուլա, Պսյոլ, Վորսկլա գետերը. դրանք բոլորն էլ Դնեպրի ձախ վտակներն են: Միջին-Ռուսական բարձրությունն այստեղ է տարածվում իր վերջին ճյուղավորությունների լանջերով, վորոնք կտրատված են ձորակներով: Ձախափնյա մասի միապաղաղ տափարակ հարթավայրը ծածկված է լյոսով. այստեղ ամենուրեք ցրված են մանր փոսորակներ՝ «բլյուդցա» վորոնց մեջ գարնանը յերկար ժամանակ ջուր է կուտակվում և մնում: Սառցադաշտը հասել է մինչև դաշտավայրի հյուսիսային մասը և այստեղ թողել է մորենային նստվածքներ, վոր հետո ծածկվել են լյոսով: Ընդարձակ տարածություններ ծածկված են ավազահողերով, վորոնք գոյացել են սառցադաշտի ժամանակվա սառույցների հալչելու պահին: Գետահովիտները զանազան թեքություններ ունեն. մեկ ափն ուղղորդ, իսկ մյուսը շատ զառիվայր բարձրանում է մինչև ջրաբաժան: Գետերը դանդաղ ու սահուն ընթացք ունեն: Գարնանը, ձյունի միաժամանակ հալչելու հետևանքով, նրանք հորդանում են ու վողողում ընդարձակ տարածություններ, իսկ ամռանը խիստ ծանծաղում են: Անտառներ հանդիպում են գե-

ների հովիտներում, իսկ ջրաբաշխի տարածությունները միջակը տափաստաններ են յեղել, այժմ վարելահողերի յեն վերածվել:

Մերձսևծովյան դաշտավայրը: Դոնեցի լեռնաշարքը.—Մերձսևծովյան դաշտավայրը հարթություն ե, վոր ձգվում ե Սև ու Ազովի ծովերի հյուսիսային ափերի յերկարությամբ: Հարթավայրն աստիճանաբար իջնում ե դեպի ծովը և կտրտված ե բազմաթիվ գետահովիտներով ու չոր հեղեղատներով: Բուն ծովափը հաճախ իրենից ներկայացնում ե վողողակ, վորը վողողվել ե ու ավերվել ե ծովային ալիքների հարվածներից: Համեմատաբար գեոլոգիական (յերկրաբանական) վոչ վաղ ժամանակներում գետահովիտների ստորին մասերը վողողված են յեղել ծովով և գոյացրել են լիմաններ (Դնեպրո-Բուգյան լիմանը): Լիմանները հաճախ ծովից բաժանվում են ավազային լեզվակներով: Հարթավայրի միապաղաղությունը խախտվում ե միայն հեղեղատներով, վորոնք թեք լանջերով ընդարձակ հովիտներ են և, հավանորեն, հնադարյան գետերի հուներ, և կուրգաններով—շիրիմներով, վոր թողել են արել այստեղ տափաստանի հին բնակիչները: Հարթավայրի հարավում սևահողը փոխվում ե շագանակագույն հողի: Դոնեցի լեռնաշարքը (361 մ) մի բլրաշատ բարձրավանդակ ե, վոր կազմված ե ավազաքարերից, կավային թերթաքարերից ու կրաքարերից: Դա ծալքավոր լեռների մնացորդն ե. այստեղի մակերևույթը ջարդվել ե բազմաթիվ իջվածքներից, յենթարկվել ե յերկարատև քայքայման և համարյա թե վերածվել ե հարթության: Գետերի հովիտներն ու հեղեղատները խորը կերպով կտրել են այդ բարձրավանդակը: Հյուսիս-արևելքում բարձրավանդակն ուղղորդ իջնում ե դեպի Դոնեցի՝ Դոնի աջ վտակի հովիտը, վորտեղ առաջացնում ե գեղեցիկ կավճաժայռեր: Դոնեցը բաժանում ե Դոնեցի լեռնաշարքը Միջին-Ռուսական բարձրությունից:

Մերձսևծովյան դաշտավայրը վողողվում ե Դնեպր և Հարավային Բուգ գետերի ստորին հոսանքներով: Վերջինս Դնեպրի հետ միասին թափվում ե միևնույն լիմանը և, կարծես, Դնեպրի հետ կազմում ե մի սիստեմ:

Ուկրաինայի սահմանագծով հոսում ե Դնեստրը:

Դնեպր.—Ուկրաինայի ամենախոշոր գետը՝ Դնեպրը սկիզբ

ե առնում նրա սահմաններից դուրս, Սմոլենսկի մարզում: Դնեպրն իր յերկարությամբ և ավազանով Յեվրոպայի յերրորդ գետն ե: Սակայն ջրառատությամբ նա բավականին հետ ե մնում մեր հյուսիսային գետերից՝ Դվինայից ու Նեվայից, իսկ նրա հոսանքի արագությունը, Վոլգայի համեմատությամբ, յերեք անգամ պակաս ե: Դնեպրի խաղաղ ու հանդարտ հոսանքի շնորհիվ, նրա ափերը քիչ են քայքայվում: Նրա լայնությունը Կիեվից Դնեպրոպետրովսկ տատանվում ե 700—1500 մ միջև: Սկսած Կիևից Դնեպրն առաջացնում ե բազմաթիվ կղզիներ և զուգահեռ հուներ: Ստորին հոսանքում Դնեպրի հովիտն ընդարձակվում ե մինչև 10 կմ և ներկայացնում ե մի ճահճոտ դաշտավայր, կտրտված գետի բազմաթիվ ճյուղերով ու վտակներով, ծածկված յեղեգնուտով ու թփուտներով: Դա Դնեպրի հեղեղուտն ե:

Նավագնացության տևողությունը Դնեպրում ավելի յե, քան Վոլգայի վրա. տևում ե 280 որ:

Օգտակար հանածոներ.—Ուկրաինան շատ ե հարուստ օգտակար հանածոներով, գլխավորապես քարածուխով և յերկաթով: Քարածուխը գտնվում ե արևելքում՝ Դոնեցի լեռնաշարքում, վորտեղ նրա շերտերը բավականին ընդարձակ տարածություն են բռնում և գոյացնում են այսպես կոչված՝ Դոնեցի ավազանը (Դոնբաս): Այստեղ կան նաև քարաղի խոշոր հանքեր, ինչպես և ԽՍՀՄ սնդիկի միակ մշակվող հանքավայրը: Յերկաթահանքերը գտնվում են Դնեպրից դեպի արևմուտք, Կամեննայա բլրաշարում, Կրիվոյ Ռոգի մոտ:

Դնեպրի աջ ափին, Նիկոպոլի մոտ կա մանգանի հանքավայր: Քարածուխի ու յերկաթի հանքավայրերի միջև տարածությունը 450 կիլոմետրից ավելի չե:

Կլիման յեվ բուսականությունը.—ԽՍՀՄ Յեվրոպական մասի մյուս մարզերի համեմատ Ուկրաինան մեղմ կլիմա ունի: Տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում +7-ից մինչև +10°: Արևելյան մասն ավելի ցուրտ և ցամաքային ե, քան արևմտյանը: Ձմռանը հաճախ ջերմ օրեր են լինում, ամառը շոգ ե, մանավանդ հարավում, աշունն աչքի յե ընկնում իր չորությամբ և պարզ յեղանակի յերկարատևությամբ: Արևմտյան ու արևելյան մասերի միջև յեղած տարբերությունը հետևյալն ե.

արևելքում հունվարի միջին ջերմաստիճանն է -8^0, հուլիսինը՝ $+22^0$, իսկ արևմուտքում՝ -4^0 և $+19^0$։ Արևմուտքում գարունը շուտ է բացվում և ավելի տաք է լինում, վորպիսի հանգամանքը յերկարատև ու տաք աշնան հետ բարենպաստ ազդեցություն է ունենում բուսականության զարգացման վրա։

Տեղումների քանակը հյուսիսային մասում (տարեկան 500 մմ) բավարար է. իսկ հարավային մասում՝ ավելի քիչ է (400 մմ)։ Տեղումների բաշխումը (ամենաշատը տարվա առաջին կե-

Նկ. 23. Գետահովիտների բուսականությունն Ուկրաինայում։

սին) նույնպես բարենպաստ է հողագործության համար։ Ամռանը լինում են հորդ անձրևներ՝ ամպրոպով կամ կարկտախառն։

Ուկրաինայի մեծ մասն ընկած է անտառատափաստանային գոտում և ունի սևահողեր, վորոնք տեղավորված են մեծ մասամբ լյոսի կամ ուրիշ ապառների վրա։ Միայն հյուսիսային մասն է, վոր մտնում է անտառային գոտու սահմանները։ այդտեղ՝ Պոլեսյեյում շատ կան խոտածածկ ճահիճներ։ Անտառա-

տափաստանային գոտում անտառներ քիչ են մնացել։ Այդտեղի անտառները լայնատերև են. կան կաղնի, թխկի, հացենի, լորի ծառեր, արևմուտքում նաև հաճարի. աճում են դրանք առավելապես գետերի բարձրադիր ափերին, վորտեղից կանաչ ժապավենների պես հեղեղատների ու ձորակների յերկարությամբ բարձրանում են դեպի ջրաբաշխները։ Ծառաբույսերի հատուկ տեսակ են հանդիսանում «լեվադաները»՝ լաստենիների, ուռենիների, բարտիների, կաղամախենիների խիտ թփուտները, վորոնք յեզերում են գետերի ցածրադիր ու գարնանը վողողվող ափը և վորոնց մեջ ցրված են լճակներ ու գետախորշեր։ Ջրաբաշխ տարածությունները մեծ մասամբ, վաղուց ի վեր յեղել են տափաստաններ, սակայն ներկայումս տափաստանը պատմության գիրկն է անցել և փոխարինվել է ցորենի անընդհատ դաշտերով, վորոնք և գլխավոր դեր են կատարում լանդշաֆտում։ Նույնը վերաբերում է նաև Ուկրաինայի հարավային մասին, վորն արդեն գտնվում է համատարած տափաստանի գոտում։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.—Ուկրաինան ԽՍՀՄ ամենախիտ բնակչություն ունեցող մասն է։ Նրա բնակչությունը (35 միլիոն) կազմում է ամբողջ Միության բնակչության $^1/_5$ մասը, մինչդեռ տարածությունը միայն՝ $^1/_{48}$ մասը։ ՌՍՖՍՀ-ից հետո Ուկրաինան Միության մեջ մտնող հանրապետություններից ամենանշանավորն է թե բնակչության թվով և թե բնական հարստություններով։ Այդտեղ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրում միջին թվով 72 մարդ է բնակվում։ Ամենախիտ բնակչություն ունի Աջափնյա մասը և արևելքում Խարկովի շուրջը. ամենանոսր բնակչություն ունեն Դնեպրի ստորին հոսանքն ու Ազովի ծովի հյուսիսային ափերը։

Բնակչության չորս հինգերորդ մասը ուկրաինացիներ են։ Հյուսիս-արևելքում նրանց միանում են ռուսները, հյուսիս-արևմուտքում՝ բելոռուսները, ամբողջ յերկրում ապրում են հրեաները, վորոնք կազմում են քաղաքային բնակչության զգալի տոկոսը, մանավանդ Աջափնյա քաղաքներում։

Հարավ-արևմտյան կողմը, Դնեստրի հոսանքի յերկարությամբ ապրում են մոլդավները, վորոնց տերիտորիան առանձ-

նուցված է վորպես Մոլդավական Ավտոնոմ Հանրապետություն՝ Տիրասպոլ կենտրոնով։ Նա բռնում է վոչ խոշոր մի տերիտորիա Դնեստրի ձախ ափին և այնտեղ մոլդավները կազմում են բնակչության $^1/_3$-ից մի քիչ ավելի մասը. իրենց թվով գերազանցելով այնտեղ ապրող ուկրաինացիներին, ինչպես և ռուսներին ու հրեաներին։

Ինչպես խորհրդային իշխանության շնորհիվ ազգային ավտոնոմիա ստացած բոլոր ժողովուրդները, այնպես և մոլդավները խոշոր հաջողությունների յեն հասել և՛ տնտեսական և՛ կուլտուրական բնագավառում։ Մոլդավական ԱԽՍՀ-ն մտնում է Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմի մեջ, վորի մայրաքաղաքն է Կիևը։ Ուկրաինայի սահմաններում ապրում են սակավաթիվ լեհեր (արևմուտքում), գերմանացիներ, բուլղարացիներ (հարավում), հայեր, հույներ, (առափնյա քաղաքներում)։

Վարչական տեսակետից Ուկրաինան բաժանվում է քսանմեկ մարզի. Կիևի (կենտրոնը Կիև), Չերնիգովի (կենտրոնը Չերնիգով), Պոլտավայի (կենտրոնը Պոլտավա), Սումիի (կենտրոնը Սումի), Խարկովի (կենտրոնը Խարկով), Ստալինոյի (կենտրոնը Ստալինո), Վորոշիլովգրադի (կենտրոնը Վորոշիլովգրադ), Դնեպրոպետրովսկի (կենտրոնը Դնեպրոպետրովսկ), Զապորոժյեյի (կենտրոնը Զապորոժյե), Նիկոլաևի (կենտրոնը Նիկոլաև), Կիրովգրադի (կենտրոնը Կիրովգրադ), Ոդեսայի (կենտրոնը Ոդեսա), Կամենեց-Պոդոլսկի (կենտրոնը Կամենեց-Պոդոլսկ), Վիննիցայի (կենտրոնը Վիննիցա), Ժիտոմիրի (կենտրոնը Ժիտոմիր), Վոլինի (կենտ. Լուցկ), Դրոգոբիչի կենտ. Դրոգոբիչ), Լվովի (կենտ. Լվով), Ռովնոյի (կենտ. Ռովնո), Ստանիսլավի (կենտ. Ստանիսլավ) և Տարնոպոլի (կենտ. Տարնոպոլ)։

Տնտեսությունը.—Բնական հարուստ ռեսուրսներ ունենալով՝ Ուկրաինան վերջին ժամանակներս մեծ հաջողությունների յե հասել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման բնագավառում։ Իր նշանակությամբ վոչ միայն Ուկրաինայի, այլև ամբողջ Միության տնտեսության մեջ ներկայումս առաջին տեղն է գրավում արդյունաբերությունը, իսկ արդյունաբերության մեջ՝ լեռնագործարանայինը, այն է՝ քարածուխի հանույթը, չուգունաձուլումը, պողպատաձուլումը, ծանր մեքենաշինությունը։

Դոնբասը ԽՍՀՄ ածխային ավազաններից ամենակարևորն է։ Քարածուխի պաշարի մեծությամբ, ածխաշերտերի դասավորությամբ, այդ շերտերի կարողությամբ և հենց ածխի վորակով Դոնբասը զիջում է միայն Կուզնեցկի ավազանին։

Սակայն նա ունի այն առավելությունը, վոր գտնվում է խիտ բնակչություն ունեցող վայրում և համեմատաբար հեռու չէ յերկրի կարևորագույն կենտրոններից ու արդյունաբերական շրջաններից։ Դոնբասը քարածուխ է մատակարարում վոչ միայն Ուկրաինայի բոլոր արդյունաբերական ձեռնարկություններին, այլև ԽՍՀՄ Յեվրոպական մասի հարավային գոտու բոլոր յերկաթուղիներին, Մոսկվային ու Լենինգրադին։ Մեր Միության մեջ ամբողջ քարածխի հանույթի $^3/_5$ մասը Դոնբասումն է արդյունահանվում, ընդվորում Դոնեցի քարածխի կեսը կոքսվում է և պետքական է մետաղաձուլությանը։ Դոնբասի այդ նշանակությունը լավ է արտահայտված նրան տրված «համամիութենական հնոցապան» անունով։

Յերբ յերկաթուղին կտրում անցնում է Դոնեցի լեռնաշարքը, մեր առաջ բացվում է շատ յուրահատուկ լանդշաֆտ։ Միանգամայն հարթ սևահողային տափաստանում այս ու այն կողմում բարձրանում են հանքահորերի ու գործարանների բարձր ծխնելույզները, յերևում են դոմենյան հնոցները, ճախարակները, վորոնց ոգնությամբ հանքահորերից քարածուխ են բարձրացնում, քարածխի ամբողջ լեռներ, «փուչ» (հանք չպարունակող) ապառների բլուրներ։ Յերկաթուղագծի մոտ գոյացած փոսորակներից յերևում է, վոր կրաքարի, ավազաքարի ու թերթաքարի խավերը, վորոնցից կազմված է այդ վայրը, դասավորված են թեք, առաջացել են ծալքեր և միայն վերևից ծածկված են հորիզոնական դիրք ունեցող լյոսով։ Դոնեցի լեռնաշարքի ծայրերում, մանավանդ գետերի ափերին ավազաքարի և թերթաքարի թեք, նույնիսկ ուղղահայաց շերտերը դուրս են գալիս յերկրի յերեսը՝ առաջացնելով լեռնային գեղեցիկ տեսարաններ. ուղղորդ ու քարքարոտ լանջերին կառչել են տներ, ամենուրեք ցցված են ժայռեր, վորոնք պատած են խոտով ու թփուտներով. ամենուրեք քար է, վորի սալերից կառուցված են տները, ամբարները, ցանկապատերը, ծածկված են տանիքները և սալահատակված են բակերը։

Դոնբասի նշանակությունը մեծանում է նաև նրանով, վոր նրան մոտիկ՝ Կրիվոյ Ռոգում ու Կերչի թերակղզում կան յերկաթի հարուստ հանքեր։ Այդ պատճառով էլ և՛ Դոնբասում, և՛ Կրիվոյ Ռոգում Դոնեցի քարածխի ոգտագործմամբ զարգացել է մետա-

դամշակությունը, որը նույնպես Միության մեջ առաջին տեղն է բռնում։ Ամբողջ սև մետաղի $^3/_5$ մասը Հարավն է տալիս։ Կրիվոյ Ռոգի հանքավայրն արդյունահանած հանքաքարի քանակով Միության մեջ առաջին տեղն է գրավում։ Այդտեղի երկաթահանքը բարձրորակ է և մինչև 60% երկաթ է պարունակում։ Ոչ այնքան հեռու, Պրիդնեպրովյեյում, Նիկոպոլ քաղաքի մոտ արդյունահանվում է մանգան։ Հանքաքար ձուլող մետալուրգիական գործարանները գտնվում են Կրիվոյ Ռոգում և Դոնբասում։ Դրանցից ամենախոշորներն են՝ Մակեևկան Դոնբասում, Կրիվոյ Ռոգը, Դնեպրոձերժինսկին, Զապորոժյեն Պրիդնեպրովյեյում, Ազովինը Մարիուպոլում, Ազովի ծովի ափին։ Բացի այդ, շատ մեծ գործարաններ կան Ստալինոյում, Դնեպրոպետրովսկում և այլ վայրերում։ Վերը թվարկած նորակառույց հսկա գործարանները կահավորված են տեխնիկայի վերջին խոսքի համաձայն։ Միության ծանր արդյունաբերության մեջ ունեցած իր նշանակությամբ Հարավը կարող է կոչվել «համամիութենական դարբնոց»։

Մետալուրգիայի հետ զարգացել են նաև ծանր մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը։ Մեքենաշինական գործարաններից ամենախոշորը Կրամատորսկի գործարանն է Դոնբասում, այդ ԽՍՀՄ ամենամեծ գործարանն է, որ սարքավորում է պատրաստում մետալուրգիական գործարանների ու քարածխի հանքահորերի համար։ Մեքենաշինական խոշոր գործարաններ կան նաև Դնեպրոպետրովսկում, Ստալինոյում, Խարկովում (շոգեքարշի ու տրակտորի գործարաններ), Վորոշիլովգրադում՝ շոգեքարշի խոշորագույն գործարան, Նիկոլայեվում՝ նավաշինական, որտեղ ծովային նավեր են կառուցվում։

Քիմիական արդյունաբերությունը վերամշակում է գլխավորապես քարածխի կոքսացման ժամանակ ստացվող կողմնակի նյութերը. արտադրվում են զանազան տեսակի թթվուտներ (ծծմբաթթու, ազոտաթթու և այլն), սոդա, պարարտանյութեր, ներկեր։ Այդ պատճառով էլ, սովորաբար, քիմիական գործարանները հիմնվում են այնտեղ, որտեղ մետալուրգիական գործարաններ կան։ Քիմիական արդյունաբերության համար

հում նյութ է հանդիսանում նաև աղը, որ արդյունահանվում է Դոնբասում, Արտեմովսկում։

Դոնբասում քարածուխով աշխատում են մի քանի հզոր էլեկտրոկայաններ, (Ստերովկայինը և այլն)։ Սակայն ամենախոշոր էլեկտրոկայանն օգտագործում է Դնեպրի ջրային էներգիան (Դնեպրոգես)։ Այդ կայանի տված հսկայական էլեկտրոէներգիան օգտագործում է Դնեպրի արդյունաբերական կոմբինատը, որի մեջ մի շարք խոշորագույն ձեռնարկությունների հետ միասին մտնում է նաև Զապորոժյեյի գործարանը։ Այդտեղ էլեկտրական էներգիայով ձուլվում է բարձրորակ պողպատ։ Նույն այդ կոմբինատի մեջ է մտնում նաև ալյումինի գործարանը, որ ալյումին է արտադրում այդտեղ բերվող Տիխվինի բոքսիտից։

Դնեպրի հիդրոէլեկտրոկայանն աշխարհիս խոշորագույն կայաններից մեկն է։ Այդ սքանչելի կառուցվածքն ակնառու ցույց է տալիս, թե ինչեր կարող է անել սոցիալիստական շինարարությունը։ Կայանը կառուցվել է 5 տարվա ընթացքում այնտեղ, որտեղ Դնեպրը, հոսելով Կամեննյա բլրաշարքի միջով, սահանքներ է առաջացնում։ Այդ սահանքներից ցած կառուցվել է 62 մ բարձրությամբ ամբարտակ։ Ամբարտակից վերև առաջացել է մի խոշոր լիճ, որը ծածկել է ոչ միայն սահանքները, այլև գետի ափերի զգալի մասը։ Էլեկտրոկայանի շենքը գտնվում է աջ ափի մոտ։ Այդտեղ ջրի անկման ուժով գործում են 9 հատ ահագին տուրբիններ, որոնք միացած են էլեկտրոէներգիա արտադրող վիթխարի դինամոմեքենաների հետ։ Ամբողջ կայանի կարողությունը հավասար է 810 հազար ձիու ուժի։ Ձախ ափի մոտ կառուցված են շլյուզներ, որոնց միջոցով հնարավոր է դարձել Դնեպրի միջին ու ստորին հոսանքում անընդհատ նավարկությունը, մինչդեռ առաջ սահանքներն արգելք էին հարուցում դրան։ Զապորոժյեյում, որ գտնվում է Դնեպրի ստորին հոսանքում, կառուցվում է նոր սոցիալիստական քաղաք, հիանալի բանվորական տներով, դպրոցներով ու շատրվաններով։

Գյուղատնտեսությունն Ուկրաինայում իր արտադրանքի արժեքով զիջում է արդյունաբերությանը, բայց և այնպես ահագին նշանակություն ունի։ Ցանքի տարածությամբ Ուկրաինան գերազանցում է Միության մյուս բոլոր մարզերին. այդտեղ վարելահողերը կազմում են ամբողջ տարածության 60%-ից ավելին։ Տրակտորների, մեքենատրակտորային կայանների ու զանազան գյուղատնտեսական մեքենաների քանակով առաջնակարգ տեղերից մեկը պատկանում է Ուկրաինային։ Հացաբույ-

ների ամենից շատ ցանվում է ցորեն (արևմուտքում՝ աշնանացանը, արևելքում՝ գարնանացանը) և գարի։ Տեխնիկական մշակույթներից առանձին նշանակություն ունի շաքարի ճակընդեղը, որ բռնում է ամբողջ ցանքի 1/20 մասը, ավելի քիչ՝ արևածաղիկը, որից ձեթ է պատրաստվում։

Ուկրաինայի հարավում ներկայումս նույնիսկ բամբակ է ցանվում։ Շատ է մշակվում ծխախոտ, գլխավորապես մախորկա։

Հողագործությունից բացի, զարգացած են նաև այգեգործությունն ու բանջարաբուծությունը. ձմերուկն ու սեխն ընդարձակ դաշտեր են բռնում, այգիներում կան բալ, սալոր, խնձոր, տանձ, իսկ հարավում՝ ծիրան ու խաղող։ Ավելի պակաս նշանակություն ունի անասնապահությունը, թեև ձիերի, յեղջերավոր անասունների (այստեղ բանող անասունը յեզն է) ու խոզերի քանակով Ուկրաինան նույնպես առաջին տեղն է բռնում։

Գյուղատնտեսական արդյունաբերության մեջ գլխավոր տեղն է բռնում շաքարի արդյունաբերությունը։ Շաքար պատրաստող գործարանները գտնվում են գլխավորապես Աջափնյա մասում և Խարկովից դեպի հյուսիս։ Ամբողջ Միությանը գլխավորապես շաքար մատակարարողը Ուկրաինան է։ Շատ կան նաև ալյուրի, ձեթի և գինու գործարաններ։

ԽՍՀՄ ընդհանուր տնտեսության մեջ Ուկրաինան խոշոր նշանակություն ունի։ Դրա պատճառը նախ և առաջ յերկրի ընդերքի հարստություններն են՝ քարածուխն ու յերկաթը, և դրա վրա հիմնված մետալուրգիական արդյունաբերությունը, որ առաջնակարգն է Միության մեջ, ապա նաև բերքատու սևահողը, մեղմ կլիման, շաքարի ճակնդեղ մշակելու հնարավորությունը և վերջապես նրա աշխարհագրական դիրքը Սև ծովի ափերին։

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.—Չնայած արդյունաբերության բարձր զարգացմանը, Ուկրաինայում քաղաքային բնակչության տոկոսն այնքան էլ բարձր չէ, ընդամենը 23%։ Այդ բացատրվում է գյուղական բնակչության շատությամբ։ Հազարավոր բնակիչ ունեցող ընդարձակ գյուղերն այստեղ տեղավորվել են գետերի ու գետակների ափերին, կամ հեղեղատների մոտ, որտեղ ստորերկրյա ջրերը գետնի յերեսից մոտիկ են գտնվում, այնտեղ ավելի հեշտ է ջրհորներ ու լճակ-

ներ փորել, որոնց մեջ կարելի յե հավաքել գարնանային անձրևաջրերը։

Այնուամենայնիվ, Ուկրաինայում խոշոր քաղաքներ շատ կան։ Նրանցից յերեքը կեսական միլիոնից ավելի բնակչություն ունեն։ Կիևը՝ Ուկրաինայի մայրաքաղաքը (800 հազարից ավելի բնակչություն ունի), Խարկովը, որ մինչև 1934 թիվը Ուկրաինայի կենտրոնն էր, իր արդյունաբերական նշանակությամբ առաջին քաղաքն է (800 հազարից ավել), Օդեսսան խոշորագույն նավահանգիստ է Սև ծովի ափին (600 հազարից ավելի բնակիչ ունի), Դնեպրոպետրովսկն ունի մոտ 400 հազար բնակիչ, Ստալինոն՝ մոտ 300 հազար բնակիչ։ Բացի այդ, կան նաև մի շարք քաղաքներ, որոնք հարյուրից ավելի կամ հարյուր հազարի չափ բնակիչ ունեն։ Դրանց մի մասն արդյունաբերական խոշոր կենտրոններ են (Նիկոլայեվը, Մակեևկան, Վորոշիլովգրադը, Մարիուպոլը. մյուս մասը վարչական կամ առևտրական կենտրոններ են (Վիննիցա, Կրեմենչուգ, Խերսոն, Պոլտավա)։ Ուկրաինիայի քաղաքների զգալի մասը կազմվել և զարգացել են աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ, խոշորագույն առևտրական ճանապարհների վրա։ Դրանց մեջ առաջին տեղը բռնում են Կիևն ու Խարկովը։ Կիևը գտնվում է այնտեղ, ուր Դնեպրը հատվում է մի քանի յերկաթուղային խոշոր մագիստրալների հետ. դրանցից մեկը Մոսկվայից Կիևի վրայով անցնում է դեպի Օդեսսա, մյուսը Ստալինգրադից մինչև Կիև, ապա դեպի արևմուտք՝ Շեպետովկա և դեպի գերմանական սահմանը։

Կիևը մեր յերկրի հնագույն քաղաքներից մեկն է։ Դեռ հազար տարի առաջ նա այն ժամանակվա համար կարևոր առևտրական կենտրոն է յեղել. նրա միջով հոսող Դնեպր գետով էր անցնում այն առևտրական ճանապարհը, որ «վարյագներից տանում էր հույների յերկիրը»։ Ներկայումս Կիևը հանդիսանում է ուկրաինական կուլտուրայի խոշորագույն կենտրոնը (այստեղ են գտնվում գիտությունների Համաուկրաինական Ակադեմիան, բարձրագույն դպրոցական հիմնարկներ)։ Միաժամանակ Կիևը Միության ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է, ունի հարուստ բուսականություն (շագանակենի, բարտենի, սպիտակ ակացիայի ծառեր)։ Կիևում շատ հին հուշարձաններ կան։ Դնեպրի աջ ափի բարձր բլուրից հիանալի տեսարան է բացվում դեպի ցածում ընկած քաղաքամասը, որը կոչվում է Պոդոլ և դեպի Զադնեպրովյեն ու նրա մարգագետինները, անտառներն ու ավազի սպիտակ զոլերը։

Ավելի կարևոր յերկաթուղային հանգույց է Խարկովը։ Նրա միջով է անցնում հյուսիսից հարավ՝ Մոսկվայից Ղրիմ ընթացող յերկաթուղային գլխավոր մագիստրալը։ Խարկովից են յերկաթուղագծերը բաժանվում դեպի արևմուտք՝ Կիև, դեպի հարավ-արևմուտք՝ Դնեպրոպետրովսկ, Խերսոն, դեպի հարավ-արևելք՝ Ռոստով և դեպի արևելք՝ Ստալինգրադ։ Ներկայումս կառուցվում է մի գերմագիստրալ, վորը Դոնբասն ուղիղ գծով միացնելու յե Մոսկվայի հետ։ Յերկաթուղային ցանցի խտությամբ Ուկրաինան ԽՍՀՄ-ում առաջին տեղն է բռնում։ Յերկաթուղային ցանցն առանձնապես խիտ է Հարավում, վորտեղ Դոնբասը յերկաթուղիներով միանում է Կրիվոյ Ռոգի շրջանի հետ։

Գետային տրանսպորտը, յերկաթուղիների համեմատ Ուկրաինայում յերկրորդական նշանակություն ունի։ Գետերից միայն Դնեպրն է, վոր իր ամբողջ յերկարությամբ նավարկելի յե։ Յեվ թեպետ Դնեպրը հոսում է ամբողջ Ուկրաինայով, այնուամենայնիվ նա այն նշանակությունը չունի, ինչ վոր Վոլգան՝ Պովոլժյեյի համար։ Ծովային տրանսպորտը գլխավորապես արտահանության է ծառայում։ Կարևորագույն նավահանգիստներն են՝ Սև ծովի ափին—Օդեսսան, Նիկոլայեվը, Խերսոնը, Ազովի ծովի ափին՝ Բերդյանսկը, Մարիուպոլը։ Օդեսսան յելակետ է հանդիսանում այն նավերի յերթևեկության համար, վորոնք սպասարկում են Ղրիմ-Կովկասյան ծովեզերքը։

Ղ Ր Ի Մ

Դիրքն ու ընդհանուր բնութագիրը.— ԽՍՀՄ ֆիզիկո-աշխարհագրական բոլոր մարզերից Ղրիմը միակն է, վոր համարյա բացառապես ծովային սահմաններ ունի։ Մայր ցամաքի հետ նա միացած է միայն Պերեկոպի նեղ (7 կմ) պարանոցով։ Ղրիմում բնական աշխարհագրական սահմանները համապատասխանում են վարչա-քաղաքական սահմաններին. ամբողջ թերակղզին կազմում է մեկ ավտոնոմ հանրապետություն՝ Ղրիմի հանրապետությունը, վորը մտնում է ՌՍՖՍՀ կազմի մեջ։

Ղրիմի թերակղզին, վոր համարյա կտրված է մայր ցամաքից և դուրս է ընկած Սև ծովի մեջ, մեծ տարածություն չի բռնում (26 հազար քառ. կմ)։ Չնայած դրան, Ղրիմը Միության

այն մարզերից մեկն է, վոր ամենամեծ հռչակ է վայելում բնակչության լայն մասսաների մեջ։ Ղրիմն այդ հռչակը ձեռք է բերել վոչ թե իր բնական հարստություններով, թեև դրանք էլ նշանակալից են, այլ իր հարավային ափի յուրատեսակ գեղեցկությամբ, տաք ու կապուտակ ծովով, գեղեցիկ լեռներով, հարավային բուսականությամբ, ջինջ յերկնքով, արևի պայծառությամբ ու շքեղ գույներով։ «Ղրիմ» ասելով մենք պատկերում ենք հարավ, ջերմություն ու պայծառ արև։

Ղրիմը ծովով շրջապատված է բոլոր կողմերից։ Արևմուտքում ու հարավում խորունկ ու չսառչող Սև ծովն է, իսկ արևելքում՝ Ազովի ծանծաղ ծովը, վոր 3 ամսով ծածկվում է սառույցով։ Նրանց միացնում է Կերչի վոչ լայն նեղուցը։ Ղրիմի հյուսիս-արևելյան ամբողջ ափը և մայր ցամաքի դիմացի մասը կտրտված են ծոցերի, ցածր թմբերի, լիմանների և նեղուցների խիտ ցանցով, վոր ընդհանուր անունով կոչվում է Սիվաշ (Նեխված ծով)։ Սիվաշն Ազովի ծովից բաժանվում է Արաբատի ավազային նեղ ու յերկար սլաքով, վորը հյուսիսում քիչ է մնում հասնի մայր ցամաքին։ Սիվաշի խորությունը հազիվ 3 մ է։ Ղրիմի թերակղզու հիմնական զանգվածից արևելքում ձգվում է մի ավելի փոքրիկ թերակղզի, այն է՝ Կերչի թերակղզին։

Ըստ իր ռելյեֆի ու բնական պայմանների, Ղրիմը բաժանվում է 3 մասի. 1) հյուսիսային՝ տափաստանային մաս, վորը բռնում է ամբողջ թերակղզու համարյա $3/4$ մասը. այդ մասին է պատկանում նաև Կերչի թերակղզին, 2) միջին՝ լեռնային մաս, վորտեղ ձգված են Ղրիմի լեռները և 3) հարավային ափ, վոր մի նեղ շերտ է լեռների ու ծովի միջև։

Տափաստանային Ղրիմ.— Տափաստանային Ղրիմը հանդիսանում է հարավային Ուկրաինայի շարունակությունը և համարյա չի տարբերվում նրանից։ Սա մի հարթ տարածություն է, վոր թեթևակի բարձրանում է դեպի հարավ և համարյա ջրազուրկ է։ Նույնիսկ լեռներում սկիզբ առնող Սալգիր գետը ամռանը չի հասնում մինչև Սիվաշ։ Ջուրն այստեղ ստացվում է կամ արտեզյան ջրհորներից, կամ ձյան հալչելու ժամանակ լճակներից հավաքված ջրերից։ Ցածրադիր ծովափի յերկարությամբ շատ կան աղի լճեր։ Կերչի թերակղզին լի յե-

վոչ բարձրադիր ծալքավոր բլուրներով, վորոնք բաղկացած են թերթաքարային կավերից։ Այդ բլուրների շուրջում կան ցեխաբուխ բլուրներ (սոպկաներ), վորտեղից դուրս մղվող նավթային գազերի ազդեցության տակ, յերբեմն հեղուկ ցեխի ժայթքումներ են լինում։ Կերչի թերակղզու արևելքում կան յերկաթահանքի ահագին պաշարներ։

Լեռնային Ղրիմ.—Լեռնային Ղրիմը մի փոքրիկ լեռնա յերկիր է, վոր ձգվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք, 130 կմ յերկարությամբ և 50 կմ լայնությամբ։ Արևմտյան մասում Ղրիմի լեռները բաղկացած են յերեք շղթայից. հյուսիսայինը բարձր չէ (250 մ), կազմված է փխրուն, դեղին կրաքարից. յերկրորդն ավելի բարձր է (575 մ) և բաղկացած է փափուկ, սպիտակ կրաքարից. յերրորդն ամենագլխավորն ու ամենաբարձրն է, բաղկացած է ամուր, մոխրագույն կրաքարից, վոր դասավորված է թերթաքարի ու ավազաքարի վրա։ Յերկրորդ շղթան խիստ վողողված է ջրով և տեղ-տեղ կտրտվելով, կազմել է առանձին սեղանաձև լեռներ։ Բոլոր շղթաներն էլ դեպի հյուսիս թեթև զառիվեր են, իսկ դեպի հարավ ունեն ուղղորդ լանջեր։ Հարավային շղթան համարյա ուղղահայաց դիրքով իջնում է դեպի ծովը, այնպես վոր ծովից թվում է, թե այդ մի բարձր պատ է։ Այդ շղթայի գագաթն ալիքաձև, խոտով ծածկված մի տափարակ է, վորը մի քանի տասնյակ մետրից մինչև 7 կմ լայնություն ունի և թաթարերեն կոչվում է «յայլա»—արոտ. դրանից էլ ամբողջ շղթան կոչվել է Յայլա։ Յայլայի ամենաբարձր կետերը 1500 մ մի քիչ ավելի յեն (Ռոման-Կոշը 1543 մ)։ Յայլան տեղ-տեղ կիրճեր ունի՝ «բողազներ», վորտեղով անցնում են խճուղիները։ Ամենախորունկ «բողազները» գտնվում են Ալուշտա քաղաքի մոտ և շղթայից բաժանում են Չաթիր-Դաղ բարձր լեռը (1523 մ), վորը Ղրիմի լեռներին մոտենալիս դեռևս յերևում է հեռվից։ Արևելյան մասում Յայլան բաժանվում է առանձին լեռների։ Շղթաների միջև տարածվում են բերրի հովիտներ (ամենամեծը Բայդարի հովիտն է, վոր գտնվում է լեռների արևմտյան մասում)։

Ղրիմի լեռներում, մանավանդ Յայլայում, ինչպես և ամենուրեք, ուր կրաքարային ապառներ կան, նկատվում են կարստային յերևույթներ՝ ձագարաձև խոռոչներ, ստալակտիտային անձավներ, խորունկ ճեղքվածքներ, նեղ ու աստիճանաբար լայնացող փոսեր, վորոնց մեջ ձմեռվա ընթացքում հավաքված ձյունը չի հալչում ամբողջ տարին և այլն։

Յայլայի բուն մակերևույթը յուրատեսակ լանդշաֆտ է ներկայացնում։ Շուրջը տարածվում է ճաքճքված գորշ ժայռերի քարքարոտ մի ծով։ Այդ ժայռերն այնպես են իրար վրա կուտակված, վոր յերբեմն հիշեցնում են հնադարյան շենքերի ավերակներ։ Ժայռերը մերթ բարձրանում են տերրասներով ու աստիճաններով, մերթ ուղղորդ ընդհատվում են սքանչելի քարափներով։ Փոսերն ու ավելի ընդարձակ գոգավորությունները ծածկված են խոտ ու ցածր կանաչով։ Տեղ-տեղ ձգվում են քարի բեկորներ ու խճի շերտեր։



Նկ. 24. Յայլայի զառիվերը Սև ծովի ափին։

Ղրիմի լեռները գտնվում են մի խոշոր իջվածքային գոգավորության յեզրին, վորը բռնել է Սև ծովը։ Յերբեմն ու յերբեմն այդտեղ շարունակվում է յերկրի կեղևի տեղաշարժը, թեև աննշան չափով, վորի հետևանքով Ղրիմում յերկրաշարժեր են լինում։ Վերջին ուժեղ յերկրաշարժը տեղի յե ունեցել 1927

թվի սեպտեմբերին, յերբ փլվել են շատ շենքեր, մանավանդ Յալթայում:

Ղրիմի լեռների գլխավոր շղթայի լանջերը ծածկված են խիտ անտառներով. հյուսիսում՝ հաճարի անտառներ են, վոր հասնում են մինչև Յայլա, հարավում՝ խառն անտառներ, կաղնու գերակշռությամբ, հոնի ծառերի հետ միասին: Ավելի բարձր՝ սոճի անտառները, իսկ Յայլայի լեռնագագաթի տափարակը ծածկված է կանաչ խոտե գորգով, վորտեղ տափաստանային



Նկ. 25. Ղրիմի լեռներից մի տեսարան Հարավային ափից:

բուսականությունը, որինակ փետրախոտը խառնված է ալպիական բարձրալեռ բուսականության հետ, որինակ՝ այսպես կոչված՝ «Ղրիմի եդելվայս»-ի հետ:

Հարավային ափը.—Ղրիմի հարավային ափը մի նեղ (2-ից 8 կմ) տարածություն է լեռների ու ծովի միջև: Նա կազմված է կավային թերթաքարերից և տեղ-տեղ ընդհատվում է կրաքարային զանգվածներով, վորոնք Յայլայից իջնում են դեպի

ծովը: Վորտեղ կրաքարերը շերտավորված են դյուրությամբ վողողվող թերթաքարերի վրա, հաճախ տեղի յեն ունենում փլուզումներ: Տեղ-տեղ հանդիպում են հրաբխային ապառներ՝ գմբեթաձև լեռներ (Այու-Դաղը Գուրզուֆի մոտ), իսկ արևելքում գտնվում է նույնիսկ հնագարյան խիստ քայքայված հանգած հրաբուխ Կարա-Դաղը:

Հարավային ափը ևս քիչ հոսող ջրեր ունի: Լեռնային գետակներն ու առվակները անձրևներից հետո և գարնանը հորդանում, դառնում են ավերող գետեր, իսկ հետո արագ ցամաքում ու դառնում են փոքրիկ գետակներ:



Նկ. 26, Այու-Դաղ լեռը (լակկոլիտ) Գուրզուֆի մոտ:

Հարավային ափը, հյուսիսից պաշտպանված լինելով լեռների պարիսպով, իր բնությամբ պատկանում է միջերկրականի տաք շրջանին: Այդ մեր «Ռիվյերան» է: Այստեղ ձմեռը մեղմ է (հունվարին $+4^0$), անձրևային ձյուն սակավ է գալիս, յեկածն էլ արագ հալչում է: Ամառը չոր է և շոգ, տեղումները համեմատաբար շատ են լինում (500 մմ ավելի), բուսականությունը մերձարևադարձային է, նույնիսկ կան վորոշ տեսակի մշտադալար ծառեր ու թփուտներ՝ լավրեններ, ծառանման գիհե-

պտղի, մրգերի, բաղեր: Այգիներում ու պուրակներում աճում են այստեղ փոխադրված կիպարիսներ, դափնիներ, մագնոլիաներ, ճոճիններ, լիբանանական յեղևիններ և նույնիսկ հովհարաձև արմավենիներ: Կենդանիները ևս միջերկրականի շրջանի կենդանիներից են:

Ղրիմի հարավային ափը Յեվրոպայի ամենագեղեցիկ անկյուններից մեկն է, վորտեղ պայծառ և այրող հարավային արեվ է, ամառը համարյա միշտ ջինջ ու կապուտակ յերկինք, կապույտ ու տաք ծով, հարավային ծաղիկների բուրմունքով հագեցած օդ: Բարձր ու քարքարոտ ափը ծածկված է ծառերի ու խաղողի այգիներով, վորոնց կանաչի միջից սևին են տալիս սրածայր կիպարիսները, իսկ ավելի բարձր, Ղրիմի սոճու անտառներով ծածկված լեռնալանջերից էլ բարձր ցցված են Յայլայի վարդա-մոխրագույն մերկ ժայռերը՝ թեթևակի ծածկված գորշ մշուշով: Դեռևս անմշակ վայրերում լեռների չոր լանջերին և հենց ծովի ափերին բուսել են կաղնին ու մասամբ փշատ թփուտները:

Բնակչությունը.—Ղրիմում բնակչությունը հաստատվել է դեռևս շատ հին ժամանակներից: Միջին լեռնաշղթայի առանձին սեղանանման լեռներում (Մանգուպ-Կալա) հանդիպում են բազմաթիվ քարանձավներ, ամբողջ «քարանձավային քաղաքներ», վորտեղ ապրել է Ղրիմի հնագույն բնակչությունը: Ծովափերին յեղել են հույների, հռոմեյացիների, ավելի ուշ իտալացիների գաղութներ: Նրանք բոլորն էլ Ղրիմ են յեկել հարավից՝ ծովով: Իսկ հյուսիսից յեկել են քոչվորները՝ սկյութներ, խազարները, թաթարները: Թաթարները Ղրիմին տիրել են XIV դարից, սկզբում ինքնուրույն կերպով, իսկ հետո՝ կախման մեջ լինելով Թուրքերից: XVIII դարի վերջին Ղրիմին տիրում է Ռուսաստանը: Ղրիմի պատմական անցյալի հետևանքով էլ նրա բնակչության կազմը շատ խայտաբղետ է. մեծամասնություն են կազմում ռուսներն ու ուկրաինացիները, ապա թաթարները (մոտ 28%), կան հրեաներ, բուլղարներ, գերմանացիներ, վորոնք ցարական կառավարության հրավերով այստեղ են տեղափոխվել վորպես գաղթականներ: Քաղաքներում շատ կան հայեր ու հույներ:

Տնտեսությունը.—Ղրիմում, ինչպես և Ուկրաինայում, կլիմայական ու հողային պայմանները բարենպաստ են գյուղատնտեսության համար: Հյուսիսային մասում զարգացած է հա-

ցագործությունը (բարձրորակ ցորենը, բամբակի ցանքերը), ծխախոտագործությունն ու այգեգործությունը: Լեռնային մասում զարգացած է վոչխարաբուծությունը. Հարավային ափերին՝ այգեգործությունն ու խաղողագործությունը: Այստեղ աճեցվում են խաղողի, խնձորի, տանձի, կեռասի, ծիրանի, դեղձի, նուշի, հունական ու սովորական ընկույզի (ֆնդուկի) լավագույն տեսակները: Խաղողի ու այգեպտուղների ամենախոշոր այգիները, ինչպես և ծխախոտի պլանտացիաները պատկանում են խոշոր խորհտնտեսություններին, վորոնք մրգերն ու նրանցից պատրաստած պահածոներն արտահանում են դեպի ԽՍՀՄ ներքին մարզերը և արտասահման: Գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց զարգանում է և արդյունաբերությունը: Կերչում տեղական հանքով աշխատում է մի խոշոր մետալուրգիական գործարան: Կերչի յերկաթահանքն իր քանակով շատ է գերազանցում Կրիվոյ Ռոգի հանքին, բայց վերջինից յետ է մնում հանքի վորակով, վորի մեջ մինչև 40% յերկաթ է պարունակում:

Զարգանում է սնունդարդյունաբերությունը, վոր վերամշակում է գյուղատնտեսական հումքը, կառուցվել են բազմաթիվ նոր գործարաններ, վորոնք պատրաստում են մրգի, բանջարեղենի ու ձկան կոնսերվաններ:

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.—Ղրիմը համեմատաբար նոսր բնակչություն ունի (1 ք կմ—30 մարդ), սակայն քաղաքային բնակչության տոկոսն այստեղ շատ բարձր է (48%): Ամենախոշոր քաղաքներն են՝ Սիմֆերոպոլը (100 հազար բնակիչ), վորը Ղրիմի ԱԽՍՀ-ի գլխավոր քաղաքն է, և Սևաստոպոլը (մոտ 100 հազար բնակիչ), վորը ռազմական նավահանգիստ է: Ավելի փոքր քաղաքներ են Թեոդոսիան, Կերչը և Յեվպատորիան, վորոնք առևտրական նավահանգիստներ են: Թեոդոսիայից արտահանվում է հացամթերք, Կերչից՝ հանքանյութ, Յեվպատորիայից՝ աղ: Ավելի ևս փոքր է Բախչիսարայը, վորը թաթարական խաների նախկին մայրաքաղաքն է յեղել:

Ղրիմում հնության շատ հուշարձաններ կան, վորոնք պահպանվել են զանազան դարաշրջաններից ու ժողովուրդներից: Կերչում և Խերսոնեսում (Սևաստոպոլի մոտ) կատարած պե-

ղումների հետևանքով հայտաբերվել են հունական քաղաքների մնացորդներ, իրենց կատակոմբներով, վորմնանկարներով ու կահկարասիներով։ Սուդակում, Բալակլավայում և Թեոդոսիայում պահպանվել են ջենովական ամրոցների ավերակներ՝ իրենց աշտարակներով ու պարիսպներով։ Բախչիսարայում է գտնվում թաթարական խաների հնադարյան պալատը, Կերչի թերակղզում՝ կուրգանները, սկյութական թագավորների դամբարանները։ Սեվաստոպոլում և նրա շրջակայքում կան բազմաթիվ պատմական հուշարձաններ, վորոնք վերաբերում են Սեվաստոպոլի 1855—56 թվականների պաշտպանությանը։

Ղրիմը Միության Յեվրոպական մնացած մասի հետ միանում է մի յերկաթուղով, վորն ընթանում է Մոսկվայից Խարկովի վրայով, մի յերկար պատնեշի վրայով կտրում է Սիվաշը և թերակղզու վրա ճյուղավորվում․ մի ճյուղը Սիմֆերոպոլի միջով գնում է դեպի Սեվաստոպոլ, մյուսը դեպի Թեոդոսիա և Կերչ։ Բացի այդ, յերկաթուղային ճյուղեր են գնում նաև դեպի Յեվպատորիա ու Արմյանսկ։ Ղրիմում, մանավանդ Հարավային ափին շատ կան լավ խճուղիներ։ Այդ խճուղիներով աշխատում են ավտոմոբիլներ։ Հարավային ափի փոքրիկ քաղաքներն ու ավաններն իրար հետ կապված են շոգենավային հաղորդակցությամբ։ Նույն ձևով նրանք կապված են նաև Օդեսայի ու Կովկասյան ափերի հետ։

Ղրիմը, բացի իր գյուղատնտեսությունից ու արդյունաբերությունից, ամբողջ Միության համար մեծ նշանակություն ունի նաև իր հարավային ափի կլիմայով։ Ղրիմի հարավային ափն իր տաք ու մեղմ կլիմայով, վորը հյուսիսի ձմեռների պես ձմեռ չի տեսնում, իր մերձարևադարձային բուսականությամբ, իր ծովով ու արևով հանգստավայր ու բուժավայր է հանդիսանում աշխատավորության համար։ Ամբողջ ծովափը, վորը Ղրիմի միայն մեկ հարյուրերորդական մասն է կազմում, հարուստ է կուրորտներով, առողջարաններով ու հանգստի տներով։ Անցյալում ցարական ընտանիքի, արիստոկրատիայի և բուրժուազիայի կողմից գրավված լավագույն հողերն իրենց պալատներով ու պուրակներով դարձել են պետության սեփականություն և վերածվել են առողջարանների ու

հանգստի տների։ Լիվադիայում, ցարական նախկին այդ պալատում, այժմ կազմակերպված է հանգստի տուն կոլտնտեսականների համար։ Յուրաքանչյուր տարի մի քանի հարյուր հազար մարդիկ են գալիս այստեղ վերականգնելու իրենց ուժն ու առողջությունը։ Կուրորտներից կարևորներն են՝ Յալտան, Ալուպկան, Գուրզուֆը՝ արևմտյան մասում, իսկ Սուդակը, Թեոդոսիան՝ արևելյան մասում և Յեվպատորիան՝ իր բուժիչ ցեխերով՝ տափաստանային մասում։

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶ

Ռոստովի մարզը կազմված է նախկին Ազով-Սևծովյան յերկրի հյուսիսային մասից։ Այստեղ բնակչության գերակշռող մասը ռուսներն են, և մարզը մտնում է ՌՍՖՍՀ մեջ։

Հյուսիսում նա տեղավորված է Ուկրաինական ԽՍՀ և Պովոլժյեյի միջև մինչև Խարկովի լայնությունը, հարավում սահմանակից է Կրասնոդարի յերկրամասին։

Ըստ ռելյեֆի Ռոստովի մարզը բաժանվում է 3 մասի․ 1) Դոնեցի լեռնաշարքը—հարավ-արևմուտքում, Դոնի միջին հոսանքի և նրա աջ վտակ Դոնեցի միջև, 2) Միջին Ռուսական բարձրության վերջին ճյուղավորությունները—հյուսիս-արևելքում և 3) այսպես կոչված Զադոնի տափաստանը—դաշտավայր, վորը բռնում է Դոնի ամբողջ ցածրադիր ափը։

Դոնեցի լեռնաշարքը, Ռոստովի մարզի սահմաններում նույնպես, ինչպես և Ուկրաինայի սահմաններում, բարձրավանդակ է, վոր կազմված է կրաքարերից ու ավազաքարերից և կտրտված է գետային խոր հովիտներով ու ձորերով։ Տափաստանի համեմատաբար բարձր կետերում հաճախ են պատահում վաղեմի կուրգաններ, վորոնք ցրված են առանձին-առանձին կամ խմբերով։ Իսկ գյուղերն իրենց այգիներով թաքնվում են ջրառատ գետերի հովիտներում կամ ձորերում։ Այդպիսի ռելյեֆ ունեն նաև Միջին-Ռուսական բարձրության ճյուղավորությունները։

Ընդհակառակը, Զադոնյան տափաստանն աչքի յե ընկնում իր հարթությամբ։ Գետերը դանդաղ են հոսում։ Դրանց

հովիտներում աղի լճեր են հանդիպում, իսկ սևահողերն ու շագանակագույն հողերը հաճախ ընդհատվում են աղային հողերով։ Ընդհանրապես այս մասն ըստ իր բնական պայմանների՝ անցումային է դեպի Մերձկասպյան դաշտավայրը։

Մարզի համարյա բոլոր գետերը Դոնի ավազանին են պատկանում։ Ինքը Դոնն այնքան էլ ջրառատ չէ, բայց նրա գարնանային հորդացումը, սովորաբար, շատ ուժեղ է լինում։ Տագանրոգի ծոցը թափվելիս Դոնը բաժանվում է մի շարք ճյուղերի և դելտա չի առաջացնում։ Դոնի և մյուս գետերի հովիտներում շատ կան լճեր և այսպես կոչված պայմիշչաներ (պոյմաներ—ջրով ծածկված տեղեր)։ Տագանրոգի ծոցը շատ ծանծաղ է և ընդարձակ լիման է հանդիսանում։ Դոնի ստորին հոսանքը և ծանծաղ ծոցը շատ հարուստ են ձկով։ Ներկայումս այնտեղ ձկան արդելարան է կառուցված։

Կլիման յեվ բուսականությունը.—Ռոստովի մարզը գտնվում է տափաստանի գոտում։ Գլխավորապես գետերի հովիտներում գտնվող անտառները գրավում են մարզի ամբողջ տարածության $2^{0}/_{0}$-ից վոչ ավելին։ Կլիման այստեղ ավելի կոնտինենտալ է, քան Ուկրաինայում։ Հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -6^{0} մինչև -9^{0} հյուսիսում, հուլիսինը՝ 22^{0} հյուսիսում և 24^{0} հարավում։ Արևմուտքի տարեկան 400 մմ տեղումների քանակը արևելքում նվազում է մինչև 300 մմ։ Տեղումները գլխավորաբար ամռանն են լինում, սովորական են տարափները։ Գերակշռում են արևելյան քամիները, վորոնք գարնանն ու ամռանը յերաշտ են առաջացնում, ձմեռը՝ բուք ու բորան։

Բնակչությունը։ Տնտեսությունը։ Քաղաքները յեվ հաղորդակցության ուղիները.—Ռոստովի մարզն անհամաչափ բնակչություն ունի։ Բնակչությունը խիտ է արևմտյան մասերում, առանձնապես Տագանրոգի շրջակայքում (1 քառ. կմ վրա 50 մարդուց ավել), և զգալի կերպով նոսր է արևելքում (մինչև 20 մարդ)։

Մարզի առավել խոնավ արևմտյան մասում գերակշռող զբաղմունքը յերկրագործությունն է, ավելի քիչ խոնավ արևելքում—անասնաբուծությունը։ Մշակում են հացահատիկներ,

գլխավորապես ցորեն, գարի, ինչպես նաև արևածաղիկ։ Բերքի զգալի մասն արտահանվում է։ Անասնաբուծության մեջ գերակշռող մասը խոշոր յեղջերավոր անասունների բուծումն է, իսկ Զադոնի տափաստանում—վոչխարաբուծությունը և ձիաբուծությունը։ Շատ կան չափազանց խոշոր խորհտնտեսություններ, վորոնք իսկական «հատիկի գործարաններ են» («Գիգանտ» խորհտնտեսությունը Սալսկ քաղաքի մոտ)։

Արդյունաբերությունը վերամշակում է գերազանցապես գյուղատնտեսության արտադրանքը (աղացներ, ձիթագործարաններ, ծխախոտի ֆաբրիկաներ)։ Մարզի խոշորագույն արդյունաբերական կենտրոններն են՝ Ռոստովը և Տագանրոգը։ Զգալի կերպով զարգացած է նաև ծանր և մեքենաշինական արդյունաբերությունը։ Ռոստովում է գտնվում ԽՍՀՄ գյուղատնտեսական մեքենաների խոշորագույն գործարանը, Տագանրոգում՝ մետաղամշակման գործարանները։ Եներգետիկ ռեսուրս է հանդիսանում քարածուխը, վոր արդյունահանվում է Դոնեցի լեռնաշարքում։ Քարածխի շրջանի կենտրոնը Շախտի քաղաքն է։

Ամենախիտ բնակչություն ունեցող քաղաքը Ռոստովն է—մարզի կենտրոնը և ըստ բնակչության թվի Միության խոշորագույն քաղաքներից մեկը (մոտ 500 հազ.)։ Նրա արագ աճն ու զարգացումը պայմանավորված են նրա աշխարհագրական կենտրոն (մարզի) լինելու և ծովային ու գետային ճանապարհների և յերկաթուղիների հանգույցում գտնվելու հանգամանքով։ Ռոստովը 40 կմ հեռու յե գտնվում Դոնը Տագանրոգի ծոցը թափվելու տեղից։ Խորացման ասպարեզում կատարված աշխատանքների շնորհիվ (Ազով-Դոնի ջրանցք) նավերն Ազովի ծովից կարողանում են հասնել մինչև Ռոստովի նավահանգիստները։ Ռոստովի միջով է անցնում նաև յերկաթուղային խոշորագույն այն մագիստրալը, վորը կենտրոնը միացնում է Կովկասի հետ։ Ավելի պակաս նշանակություն ունի Դոնի նավարկությունը, վորն այստեղ դժվարությունների յե հանդիպում ծանծաղուտների և ավազակույտերի պատճառով։ Ռոստովի առևտրի զարգացման գործում խոշոր նշանակություն կունենա Մանիչի ջրանցքը, վորը ներկայումս անց է կացվում, և էլ ավելի մեծ նշանակություն՝ նախագծվող Վոլգա-Դոն ջրանցքը։

5. ԿՈՎԿԱՍ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—Կովկասը գտնվում է արևմուտքից Սև ու Ազովի ծովերի և արևելքից Կասպից ծովի միջև։ Նա կարծես մի պարանոց լինի, վորով Յեվրոպան հարավ-արևելքում միանում է Ասիային։ Կովկասի հարավային սահմանն է հանդիսանում ԽՍՀՄ պետական սահմանը Թուրքիայի և Իրանի հետ, իսկ հյուսիսային աշխարհագրական սահմանն անցնում է Կումա-Մանիչի գոգավորությամբ, Կումայի գետաբերանից մինչև այնտեղ, ուր Մանիչը թափվում է Դոնի մեջ։

Կովկասը, Միջին Ասիայից հետո, մեր Միության մեջ ամենից շատ դեպի հարավ ընկած մարզն է։ Նրա հյուսիսային մասերը գտնվում են հարավային Ուկրաինայի և Ղրիմի լայնության վրա, իսկ հարավային մասերը՝ Միջին Ասիայի լայնության վրա։ Այդպիսով, մեր յերկրում, ուր բնության և լանդշաֆտի մեջ գերակշռում է չափավոր ցուրտ կամ ցուրտ հյուսիսը, Կովկասը հանդիսանում է ամենահարավային, ամենատաք և ամենահարուստ մարզերից մեկը։ Միևնույն ժամանակ դժվար է գտնել բնության այնպիսի մի հարուստ բազմազանություն, ինչպիսին Կովկասինն է, վորտեղ իրար կողքի հաջորդում են իրար զարմանալի կոնտրաստներ՝ սկսած փարթամ անտառներից մինչև չոր կիսանապատները, ջերմ ու կապուտակ ծովից մինչև ձյունապատ լեռնագագաթները, վորոնցից շատերը հանգած հրաբուխի վիթխարի գագաթներ են։ Կովկասում կան վայրեր, ուր այնքան քիչ տեղումներ են լինում, վոր բույսեր մշակելու համար արհեստական վոռոգում է պահանջվում։ Կան նաև վայրեր, ուր տեղումներն այնքան շատ են լինում, վորքան մերձարևադարձային խոնավ յերկրներում և վորտեղ տարին շուրջ բացօդյա աճում են արմավենիները, հասունանում է նարինջը և մշակվում է թեյի թուփը։

Բնության այդ փարթամ գեղեցկություններին ավելանում են յերկրի ընդերքի հարստությունները՝ նավթը, մանգանը, գունավոր մետաղները, քարածուխը, լեռնային փոթորկահույզ գետերի էներգիայի հարուստ պաշարները, հանքային բուժիչ աղբյուրները։

Կովկասն իր բնությամբ ու բնակչությամբ բաժանվում է 3 մասի. 1) Նախակովկաս, 2) Կովկասյան Գլխավոր լեռնաշղթա և 3) Անդրկովկաս։

Նախակովկաս.—Նախակովկասը կազմում է ամբողջ յերկրամասի համարյա կեսը։ Այդ մեծ մասամբ մի հարթություն է, վոր աստիճանաբար իջնում է դեպի Սև և Կասպից ծովերը և Կումա-Մանիչի գոգավորությունը, վորտեղ նա միանում է Արևելա-Յեվրոպական հարթությանը։ Նրա միջին մասում բարձրանում է Ստավրոպոլի բարձրավանդակը (մինչև 750 մ), վորը բաժանում է Նախակովկասը յերկու մասի՝ արևմտյան և արևելյան։ Արևմտյան մասը կազմում է մերձսևծովյան տափաստանների շարունակությունը, իսկ արևելյանը՝ կասպիական տափաստանների ու կիսանապատների շարունակությունը։ Հարավում յերկրի ռելյեֆն ավելի բազմազան է։ Այստեղ գետերի ու գետակների բազմաթիվ խորունկ հովիտները, ձորերն ու հեղեղատները Ստավրոպոլի բարձրավանդակը կտրել, բաժանել են առանձին-առանձին տափարակ բարձրությունների։ Պյատիգորսկի շրջակայքում, տափաստանի մեջ, բարձրանում է լեռների մի խումբ, վորոնցից շատերն ունեն գմբեթի ձև (Բեշտաու, Ժելեզնայա, Մաշուկ և այլն)։ Այդ լեռներն առաջացել են հրաբխային հալած ապառներից, վորոնք սակայն, յերկրի յերեսը չեն դուրս յեկել, այլ միայն բարձրացել են նստվածքային ապառները և նրանց տակ են սառել։ Հետագայում շատ տեղերում ջրի ներգործությամբ նստվածքային ապառների տակից բացվել են հրաբխային ապառները։ Այդ լեռների ստորոտներում, նրանց հրաբխային ծագման կապակցությամբ, կան բազմաթիվ սառն ու տաք հանքային աղբյուրներ։

Նախակովկասի մեծ մասը վոռոգվում է Գլխավոր լեռնաշղթայից սկիզբ առնող գետերով. արևմուտքում՝ Կուբանը, արևելքում՝ Թերեքը, իրենց վտակներով։ Դրանք իսկական լեռնային գետեր են, վորոնք իրենց ջրերն ստանում են լեռնադա-

դաթների ձյունից ու սառցադաշտերից, այդ պատճառով էլ ջրառատ են, մանավանդ ամռանը, երբ լեռներում հալչում է ձյունը: Այդ գետերն իրենց ստորին հոսանքներում ճյուղավորվում են, առաջացնում են լճակների ու վարարունների մի ամբողջ լաբիրինթոս, որ ծածկված է եղեգնով ու ճահճային այլ խոտ բուսականությամբ: Թերեքն իր դելտան շատ արագ է խորացնում դեպի ծովը:



Նկ. 27. Կովկաս:

Նախակովկասի կլիման ցամաքային է (կոնտինենտալ): Դեպի արևելք այդ ավելի ևս է ուժեղանում: Ձմեռն այստեղ թեև կարճատև է լինում, սակայն բավականին խիստ է. հունվարի միջին ջերմաստիճանն ամենուրեք 0°-ից ցածր է, իսկ հյուսիսում՝—6°: Սառնամանիքները հաճախ հասնում են 20—25 աստիճանի: Սակայն գարունն սկսվում է փետրվարի վերջերից և արագորեն վրա է հասնում շոգ ամառը, երբ ջերմաստիճանը բարձրանում է 30°-ից վեր: Արևելքից դեպի արևմուտք և հյու-

սիսից դեպի հարավ, որքան մոտենում ենք առաջավոր լեռնաշղթաներին ու Ստավրոպոլի բարձրավանդակին, այնքան տեղումների քանակն ավելանում է, որովհետև այդ լեռներն օդը վեր են բարձրացնում և գոլորշիները խտացնում: Ընդհանուր առմամբ տեղումների քանակը տատանվում է 300—600 մմ-ի սահմաններում: Ամենից շատ տեղումներ լինում են հարավում:

Նախակովկասի մեծ մասը տափաստան է: Ծառաբույսեր պատահում են միայն գետերի ափերին, որտեղ աճում են թփուտներ ու սաղարթավոր ծառեր: Արևմուտքում տափաստանը սևահողային է, փետրախոտերով ծածկված և ներկայումս ամբողջապես հերկված է: Արևելքում տափաստանն աղուտային է, որտեղ հանդիպում ենք նաև ավազուտների: Տեղումներ այստեղ քիչ են լինում. շատ կան դառն աղի լճեր և հիշեցնում են հարևան մերձկասպյան կիսանապատները: Հարավի ավելի բարձր նախալեռնային շրջանը ծածկված է սաղարթավոր խառն անտառներով: Նախակովկասի տափաստանի կենդանական աշխարհը նման է սևծովյան ու մերձկասպյան տափաստանների կենդանական աշխարհին: Կուբանի ու Թերեքի գետաբերաններում և վարարուններում կան եղջերուներ, վարազներ, շնագայլեր, փասիաններ, շատ կան ջրասեր թռչուններ, նաև մորեխ:

Արևմտյան Նախակովկասի գլխավոր լանդշաֆտը լայն հարթություններ են. միապաղաղ ու հարթ տափարակը ծածկված է ցորենի կամ եգիպտացորենի անսահման արտերով: Եգիպտացորենն այստեղ բերրի հողերում միթխարի բարձրության է հասնում և հիշեցնում է եղեգնուտը: Գյուղեր քիչ են պատահում:

Հարավում, մշուշապատ հեռուներում թաղնված են լեռները: Երբեմն գարնան ու աշնան ջինջ օրերին լեռներն ազատվում են ամպերի ծածկույթից և այն ժամանակ դիտողի առաջ բացվում է արեգակի շողերով լուսավորված Գլխավոր լեռնաշղթայի ձյունածածկ գագաթների հիասքանչ տեսարանը: Բոլոր լեռնագագաթներից զգալիորեն բարձր երևում է Էլբրուսը, որ առավոտները դյութիչ վարդագույն է լինում, իսկ օրվա մյուս ժամերին՝ սպիտակափառ: Առաջավոր լեռները ծածկված են անտառներով և նրանց մթին զանգվածները մի գեղեցիկ հակապատկեր է ներկայացնում փոշիածածկ տափաստանի դեղին հարթության համեմատ: Լեռների մոտ տափաստանն ընդհատվում է խորունկ ու չոր ձորակներով, որոնց միջով երբեմն հոսում են լեռնային մանր գետակները:

Կովկասյան Գլխավոր լեռնաշղթան. — Կովկասյան Գլխավոր լեռնաշղթան կտրում է ամբողջ պարանոցը՝ սկսած հյուսիս-

արևմուտքում՝ Թամանի թերակղզուց մինչև Ապշերոնի թերակղզին՝ հարավ-արևելքում: Իր երկու ծայրերում Գլխավոր լեռնաշղթան խիստ իջնում է և կազմում բլրաշարքեր: Իսկ կենտրոնական մասում այդ լեռնաշղթան իր բարձրությամբ գերակշռում է Ալպերին: Նրա գագաթներից տասը գերազանցում են Մոնբլանին:

Լեռնաշղթայի հյուսիսային լանջն ավելի քիչ է թեք, քան հարավայինը: Գլխավոր լեռնաշղթայից դեպի հյուսիս և դեպի



Նկ. 28. Կովկասի և Անդրկովկասի լեռնաշղթաների սխեման:

հարավ ձգվում են այլ շղթաներ՝ կամ զուգահեռ ուղղությամբ, կամ անկյուն կազմելով: Շատ լեռնագագաթներ, վորոնց թվում և ամենաբարձրերը գտնվում են վոչ թե Գլխավոր Ջրաբաշխ լեռնաշղթայում, այլ նրա հյուսիսային ճյուղավորություններում:

Լեռնաշղթայի ծալքերն առաջացել են հրաբխային ուժեղ ժայթքումների հետ միաժամանակ: Կովկասի ամենաբարձր ու ամենահայտնի գագաթներն են՝ Ելբրուսն ու Կազբեկը, վորոնք

հանգած հրաբուխներ են: Լեռնակազմ ուժերը գործում են և ներկայումս, ինչպես այդ վկայում են երկրաշարժերը, վոր առանձնապես ուժեղ են հարավային ուղղորդ լանջերի երկարությամբ:

Բարձրության ու կառուցվածքի տեսակետից Կովկասյան լեռնաշղթան կարելի յե բաժանել 3 մասի. արևմտյան՝ մինչև Ելբրուս, կենտրոնական՝ Ելբրուսի ու Կազբեկի միջև և արևելյան՝ Կազբեկից դեպի արևելք:

Լեռնաշղթայի արևմտյան մասը կազմված է առավելապես կրաքարային ապարներից. բարձրությունը 600 մ-ից աստիճանաբար հասնում է մինչև 3500 մ: Այստեղ, հյուսիսային լանջից սկիզբ է առնում Կուբան գետն իր վտակներով, իսկ հարավային լանջերում՝ բազմաթիվ կարճ, բայց շատ ջրառատ գետեր, վորոնցից ամենանշանավորն է Կոդորը:

Լեռնաշղթայի կենտրոնական մասը կազմված է հնագույն բյուրեղային և հրաբխային ապարներից և ամբողջ երկարությամբ չնչին ընդհատումներով ծածկված է հավերժական ձյունով, սառցադաշտերով: Այդ մասի սկզբում Գլխավոր լեռնաշղթային զուգահեռ հյուսիսային ճյուղավորություններում են գտնվում Կովկասի ամենաբարձր գագաթները՝ Ելբրուսը (5630 մ), վորից իջնում են 20 սառցադաշտեր, և Կազբեկը (5.043 մ): Ամենախոշոր սառցադաշտերը գտնվում են լեռնաշղթայի այդ մասում: Ընդհանուր սառցակալման տարածությամբ Կովկասն զգալի չափով հետ է մնում Ալպերից, վոր բացատրվում է կլիմայի ավելի շատ ցամաքային լինելով: Կովկասի այդ մասում սկիզբ են առնում հետևյալ գետերը՝ հյուսիսային լանջերից Թերեքն իր բազմաթիվ վտակներով, հարավային լանջերում՝ Ռիոնը:

Հարավային լանջերում, Գլխավոր ու զուգահեռ լեռնաշղթաների միջև գտնվում են մի շարք խոր ու փակ հովիտներ ու գոգավորություններ, վորոնք ձգված են Գլխավոր լեռնաշղթային համարյա զուգահեռ:

Կազբեկից դեպի արևելք լեռնաշղթան կազմված է սև կավաթերթաքարերից, այստեղ լեռնաշղթան վոչ մի տեղ 4500 մ ավելի չի բարձրանում: Ձյունաշերտերն ու սառցադաշտերն այստեղ ավելի պակաս են, քան կենտրոնական մասում, իսկ

վորքան մոտենում ենք Կասպից ծովին, այնքան ավելի պակասում ու բոլորովին չքանում են։ Բուն լեռնաշղթան էլ այդտեղ իջնում է մինչև 327 մ: Գլխավոր լեռնաշղթայի հյուսիսային ճյուղավորությունններն այդտեղ գոյացնում են մի լեռնաշխարհ՝ Դաղստանը: Արևելյան մասի ամենանշանավոր գետերն են՝ Սուլակը—հյուսիսում և Կուր գետի ձախ վտակները՝ Արագվան ու Ալազանը՝ հարավում։



Նկ. 29. Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի կենտրոնական մասի քարտեզը:

Կովկասը վոչ միայն ավելի բարձր է, այլ և ավելի քիչ է մատչելի, քան Ալպերը։ Գլխավոր շղթայի լեռնանցքները բավականին բարձր են։ Կենտրոնական մասում միայն յերեք լեռնանցք կա, վոր 3000 մ ցածր է. մյուսները հավերժական ձյունի սահմաններից բարձր են և միայն ամառն են անցանելի, այն էլ մեծ դժվարությամբ։ Կարևորագույն լեռնանցքները, վորոնց միջոցով Նախակովկասի և Անդրկովկասի միջև հաղորդակցություն է պահպանվում, հետևյալներն են՝ Կրեստովի լեռնանցքը (2382 մ), վոր Թերեքի հովտից տանում է դեպի Արագվայի հովիտը (Ռազմա-վիրական խճուղին Օրջոնիկիձեյից՝ Թբիլիսի), Մամիսոնի լեռնանցքը (2911 մ)՝ Արդոնի հովտից դեպի Ռիոնի հովիտը (Ռազմա-Օսեթական ճանապարհը Ալագիրի ու Քութայիսի միջև)։ Ընդհանրապես Կովկասում չկան յերկարությամբ ու լայնությամբ ձգվող այնպիսի հովիտներ, ինչպիսիք կան Ալպերում։ Այդ պատճառով էլ Կովկասյան լեռների լանդշաֆտն Ալպերի համեմատ աչքի չի ընկնում իր միապաղաղությամբ։ Բացի այդ, Կովկասում լճեր շատ քիչ կան։



Նկ. 30. Էլբրուսի տեսարաններից։

Կովկասյան լեռնաշղթան շատ ավելի հոյակապ տպավորություն է թողնում կամ հեռվից, յերբ հեռու հորիզոնում գծագրվում է նրա ձյունափառ յերկարաձիգ շղթան և կամ հավերժական ձյունի սահմաններում, վորտեղ ճնշում է նրա գագաթների վիթխարի բարձրությունը, լանջերի ուղղորդությունը, ձյունադաշտերի, սառցադաշտերի փայլը, վորոնք հսկայական հորձանքների նման իջնում են դեպի հովիտները։ Առաջավոր լեռնաշղթաներից մինչև հավերժական ձյան սահմանները ճանապարհորդի առաջ փռվում է բավական միապաղաղ մի պատկեր։ Ճանապարհն անցնում է նեղ կիրճով, ուր առևը հազիվ է թափանցում և աղմկահույզ գետակն է հոսում, գլորելով վիթխարի քարեր։ Ուղղորդ և մեծ մասամբ մերկ ժայռերը պատի նման բարձրանում են կիրճի յերկու կողմերում և մարդու աչքից թաքցնում ձյունածածկ վայրերը։

Առանձնապես յուրատեսակ տեսք ունի Դաղստանը։ Մերթ նեղ, սրագագաթ, մերթ լայն, կամարաձև գագաթով յերկար լեռնաշղթաների մի ամբողջ շարք է փռված այդտեղ, վորոնք մեկը մյուսի հետևից ձգվում են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Այդ լեռնաշղթաներից մի քանիսը (մոտ 4000 մ) պսակված են հավերժական ձյունով։ Սև կավաթերթաքարերից բաղկացած լեռնաշղթաների կողքին, վորոնք սանրի տեսք ունեն, այդտեղ կան նաև կրաքարային հարթագագաթ սեղանանման լեռնազանգվածներ։ Լեռնաշղթաների միջև կան խոր կլոր գոգավորություններ, նեղ ու խորը հովիտներ, վորոնց հատակը մերձակա լեռնաշղթաներից 1000—1200 մ ցածր են։ Վայրիության տեսարանների տպավորությունն ուժեղանում է նաև բուսականության աղքատությամբ. լեռնաշղթաների լանջերը մեծ մասամբ մերկ են, տեղ-տեղ ծածկված ապառների փշրանքներով։



Նկ. 31. Կազբեկը։

Թամանի և Ապշերոն թերակղզիներում կան բազմաթիվ ցեխային գագաթներ, վորտեղից մերթ ընդ մերթ ժայթքում է կավախառն ցեխ և գազ, վոր յերբեմն ինքն իրեն բոցավառվում է։ Այդ ցեխաբուխների ժայթքումները հանդիսանում են նավթային շերտերից արտավիժող գազերի հետևանք։

Լեռնաշղթաների բարձրության և նրանց ուղղության բազմազանության հետևանքով Կովկասի լեռնային մասի կլիմայական պայմաններն էլ շատ բազմազան են։ Ընդհանուր առմամբ

տեղումները նվազում են արևմուտքից դեպի արևելք։ Այդ իսկ պատճառով արևմուտքում հավիտենական ձյան սահմանն ավելի ցածր է, քան արևելքում։

Սկսած 700 մ բարձրությունից, մինչև ծառաբույսերի տարածման ամենավերին սահմանները (1800—2500 մ) Գլխավոր լեռնաշղթայի ու նրա նախալեռների յերկու լանջերն էլ ծածկված են խիտ անտառներով։ Ցածում գերակշռում են սաղարթավոր խառն անտառներ, վորոնք ավելի բարձր փոխվում են հաճարի անտառների, իսկ էլ ավելի բարձր՝ փշատերև անտառների։ Շատ ավելի փարթամ անտառներ կան արևմտյան Կովկասում, մանավանդ հարավային լանջերում։ Դեպի արևելք լեռներն ավելի քիչ անտառներ ունեն։ Ներքին Դաղստանում, վորտեղ տեղումներ քիչ են լինում, անտառները պատահում են միայն մանր կղզիների ձևով, գերակշռում են գետնատարած հաճախ փշոտ թփուտները։



Նկ. 32. Բեզինգիայի սառցադաշտը. առջևի մասում ճեղքվածքը։

Լեռների բարձր մասերում, անտառների սահմանագծից վերև սկսվում են մշտադալար ռոդոդենդրոնների թփուտները և ալպիական մարգագետինները, որոնք ծածկված են փարթամ, հյութալի խոտով, որ հասնում է մարդու գոտկատեղը, ալպիական շրջանից բարձր խոտն ավելի ցածր է, բայց գույները չափազանց պայծառ են ու գեղեցիկ (պրիմուլներ, գենցիաններ, զարմանալի մեծության զանգակիկներ և այլն)։



Նկ. 33. Մամիսոնի լեռնանցքը՝ ծածկված նոր յեկած ձյունով։

Անտառային գոտում կենդանիներից բնորոշ են կովկասյան յեղջերուն, այծյամը, վարազը։ Գիշատիչներից՝ բազմաթիվ արջերը, գայլերն ու աղվեսները. պատահում են նաև ընձառյուծ (որը այստեղ բարս է կոչվում,) վայրի կատու, լուսան։ Ալպիական գոտու համար բնորոշ են քարայծի մի քանի տեսակները, մորուքավոր այծը, այծյամը։ Թռչուններից Կովկասի լեռներում կան լեռնային հնդկահավեր, ցախաքլորներ։

Անդրկովկաս.—Անդրկովկասի մեծ մասը բռնում է Հայկական լեռնաշխարհը, որը Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հետ

միանում է Սուրամի լեռնաշղթայով։ Սուրամի լեռնաշղթայից դեպի արևելք ընկած է Կուր գետի տափարակ հարթությունը, դեպի արևմուտք՝ Ռիոնի դաշտավայրը, որը դեպի արևմուտք շարունակվում է Սև ծովի ափերով։ Ծայր հարավ-արևելքում առանձին բարձրանում են Թալիշի լեռները (2000 մ), որ հանդիսանում են Իրանի Էլբուրս լեռների շարունակությունը։



Նկ. 34. Հովիտ ու լեռնային ճանապարհ Գլխավոր լեռնաշղթայում։

Հայկական լեռնաշխարհը բաղկացած է մի քանի անջատ սարահարթերից՝ 1500—2000 մ բարձրությամբ։ Լեռնաշխարհի ամենաբարձր մասն է Ղարաբաղի սարահարթը (մինչև 2500 մ), որ գտնվում է Սևան (Գյոկչա) մեծ լճից դեպի հարավ-արևելք։ Սարահարթերը յեզրավորված են ծալքավոր լեռնաշղթաներով, որոնք մասամբ կազմում են Փոքր Ասիայի լեռների շարունակությունը (Աջարական լեռներն արևմուտքում)։ Սուրամի լեռնաշղթայից դեպի հարավ-արևելք ձգվում են մի շարք լեռնաշղթաներ, որոնք միասին վերցրած կոչվում են Փոքր Կովկաս՝

ե տարբերություն Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայից, վոր կոչվում ե Մեծ Կովկաս: Այդ բոլոր ծայրամասային լեռնաշղթաները վոչ մի տեղ հավերժական ձյան բարձրության չեն հասնում և միայն հարավային մասում նրանց գագաթները 3000 մ ավելի բարձր են։ Ծալքավոր լեռներից բացի, Անդրկովկասում շատ կան նաև հանգած հրաբուխներ. դրանցից ամենաբարձրն Արագածն ե (4095 մ): Այդ լեռնաշխարհի մեծ մասը ծածկված ե հրաբխային ապարների ժայթքումներով, շատ կան հանքային ջրերի աղբյուրներ (Բորժոմի), այստեղ հաճախ են տեղի ունենում ավերիչ յերկրաշարժներ (Լենինականի յերկրաշարժը 1926 թվին)։

Այդ լեռնաշխարհի ամենաբարձր մասն ե Ղարաբաղի սարահարթը (մինչև 2500 մ), վորը գտնվում ե Սևանա (Գյոկչա) խոշոր լճից դեպի հարավ-արևելք։

Հայկական լեռնաշխարհում ցրված են բազմաթիվ լճեր. դրանց մեծ մասը կազմվել ե գոգավորություններում, վորտեղ լավայի հոսանքը փակել ե գետերի ճանապարհը։ Այն գետերը, վորոնք սկիզբ են առնում լեռնաշխարհում, իրենց վերին հոսանքներում դանդաղահոս են։ Բայց այնտեղ, ուր նրանք լեռնաշղթաների միջով ցած են հոսում լեռնաշխարհից, իսկական լեռնային գետերի տեսք են ընդունում։ Նրանցից ամենախոշորը Կուր գետն ե, վորի մեջ, աջ կողմից, արդեն Հայկական լեռնաշխարհից դուրս, թափվում ե նրանից մի քիչ փոքր Արաքսը: Այդ յերկու գետերն ել սկիզբ են առնում Թյուրքիայի սահմաններում և արևմուտքից-արևելք կտրում են ամբողջ լեռնաշխարհն ու Կուրի հարթավայրը։ Արաքսն իր հոսանքի մեծ մասով սահմանագիծ ե հանդիսանում ԽՍՀՄ և Թյուրքիայի ու Իրանի միջև։

Անդրկովկասում, ինչպես և Գլխավոր լեռնաշղթայի հարավային լանջերին, բնական լանդշաֆտները չափազանց բազմազան են։ Նրանց բնույթն ու դասավորությունը պայմանավորված ե առաջին հերթին ռելյեֆով և ծովի մակերևույթից ունեցած բարձրությունով, վոր զգալի չափով ստեղծում ե կլիմայական պայմանների տարբերություններ, վորոնք գլխավորապես ազդում են տեղումների քանակի վրա։

Այդ տեսակետից Անդրկովկասը կարելի յե բաժանել չորս շրջանի, վորոնք խիստ տարբեր են իրարից. 1) Սև ծովի ափերը

և Ռիոնի դաշտավայրը, 2) Արևելյան Անդրկովկասի դաշտավայրը Կուր և Արաքս գետերի հովտում, 3) Լենքորանի դաշտավայրը՝ Թալիշի լեռների ու Կասպից ծովի միջև և 4) Հայկական լեռնաշխարհը։

1) Սև ծովի ափերը՝ Տուապսեյից դեպի հարավ-արևելք և Ռիոնի դաշտավայրը (վոր կոչվում ե Կոլխիդա) մերձարևադարձային խոնավ կլիմա ունեն, ձմեռը տաք ե լինում (հունվարի միջին ջերմաստիճանը Բաթումիում $+6^\circ$), ամառը շոգ ու խոնավ ($+24^\circ$), լինում են մեծ քանակությամբ տեղումներ, համարյա ամբողջ տարվա ընթացքում (Բաթումիում մինչև 2500 մմ): Ամառային առատ տեղումները, յերբ Սև ծովից խոնավ քամիներ են փչում, տարբերում են այդ վայրի կլիման միջերկրականի յերկրների կլիմայից և դարձնում են նման՝ արևելյան Ասիայի մուսսոնային յերկրների (Ճապոնիայի և հար. Չինաստանի) կլիմային։ Սև ծովի ափերի հարավային մասում ձմեռը խիստ մեղմ ե լինում, հունվարին տաք ե լինում։ Սառնամանիքները, յեթե լինում են ել, կարճատև են ու մեղմ։

Բարձր ջերմաստիճանը և խիստ խոնավությունն ամառն այստեղ ստեղծում են ջերմային պայմաններ, վորով և պայմանավորված ե բուսականության ամենաուժեղ զարգացումը։

Այգիներում աճեցվում են մերձարևադարձային և նույնիսկ արևադարձային բազմաթիվ բույսեր՝ կրիպտոմերի, մագնոլիա, ագավի, կակտուս, եվկալիպտ, մանդարին, նարինջ, կիտրոն, սալորներ, զանազան արմավենիներ, թեյի թուփ (Բաթումի), բամբուկ և այլն։

Գլխավոր լեռնաշղթայից հոսող գետերը՝ Ռիոնը, Ինգուրը, Կոդորը և այլն հարթավայրն են բերում շատ ջուր, վորը հարթության քիչ թեքության և գետերի հոսանքի դանդաղության հետևանքով առաջացնում ե ճահճացում։ Ներկայումս Կոլխիդայի ճահիճներն արագ թափով ցամաքեցվում են։

Տուապսեյից դեպի հյուսիս ձմեռն ավելի ցուրտ ե լինում (համենայն դեպս հունվարի միջին ջերմաստիճանը նույնիսկ Նովոռոսիյսկում 0°-ից բարձր ե լինում), այդտեղ տեղումների քանակն ավելի քիչ ե։ Այնուամենայնիվ, Նովոռոսիյսկում տեղումները լինում են 700 մմ-ից վոչ պակաս։

Արևելյան Անդրկովկասը, վոր գտնվում ե Կուր գետի հո-

սանքում, ունի ավելի ցամաքային կլիմա, որովհետև Սուրամի լեռնաշղթան չի թողնում, որ խոնավ քամիները Սև ծովի կողմից այստեղ անցնեն։ Ձմեռն այստեղ բավականին տաք է լինում (հունվարի միջին ջերմաստիճանը Թբիլիսիում +2°, Բաքվում +3,4°), սակայն սառնամանիքներ հաճախ են լինում և ջերմաստիճանը շատ ավելի ցած է լինում, քան արևմուտքում։ Ամառը շատ շոգ է լինում (հուլիսի միջին ջերմաստիճանը +25°-ից մինչև +28°), յերբեմն շոգը հասնում է 35 և նույնիսկ 40°-ի, տեղումները շատ քիչ են լինում, վեց անգամ պակաս քան Սև ծովի ափերին, այդ պատճառով էլ Արևելյան Անդրկովկասի մեծ մասը տափաստաններ են տեղ-տեղ ավազներով և աղքատ բուսականությամբ, որ կազմված է բարձմենակից, աղուտաբույսերից, փշաթփերից։ Սակայն նույնիսկ այդ բուսականությունն ամբողջ տարածությունը չի ծածկում, տեղ-տեղ մնում են մերկ վայրեր։ Ամռանը բուսականությունն այստեղ արևից խանձվում է և կրկին կենդանանում է միայն աշնանը, յերբ անձրևներ են տեղում։ Առանձնապես ջրազուրկ է յեղել Մուղանի տափաստանը՝ Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքում։

Ներկայումս այդ տափաստանների մեծ մասն արդեն արհեստական ձևով ոռոգվում է։

Լենքորանի դաշտավայրը (որ կոչվում է Թալիշ) իր կլիմայով և բուսականությամբ նմանվում է Սև ծովի ափերին։ Թալիշի լեռները, որոնք մի քանի զուգահեռ շղթաներով ձգված են Կասպից ծովի յերկարությամբ, պահում և խտացնում են այնտեղից յեկած գոլորշիները։ Ուստի այստեղ շատ են լինում տեղումներ (մինչև 1400 մմ), թեև ավելի պակաս, քան Սև ծովի ափերին։ Ձմեռը տաք ու խոնավ է լինում (հունվարի միջին ջերմաստիճանը +3,3°)։ Անտառներն իրենց ընդհանուր տեսքով նման են Սև ծովի ափերի անտառներին։ Նրանք ծածկում են լեռների արևելյան լանջերը և ցածրադիր ու նեղ ծովափը։ Մինչդեռ լեռների արևմտյան լանջերը չոր են և անտառազուրկ։ Ծառատեսակներից առանձնապես արժեքավոր է չափազանց ամուր յերկաթածառը, այնքան ծանր կարմիր փայտով, որ սուզվում է ջրի մեջ։

Հայկական լեռնաշխարհը խիստ ցամաքային կլիմա ունի։ Ավելի բարձրադիր մասերում (1500-ից մինչև 2000 մ) ձմեռը

նույնքան խիստ է, որքան ԽՍՀՄ Եվրոպական մասի հյուսիսային մասում։ Երևանում՝ մոտ 1000 մ բարձրության վրա, հունվարի միջին ջերմաստիճանը —9° է, և լինում են մինչև —25° սառնամանիքներ։ Սակայն ամառը շոգ է Երևանում, ուր հուլիսի միջին ջերմաստիճանը +25° է, շոգերը հասնում են մինչև 40°-ի։ Տեղումների քանակը լեռնաշխարհի զանազան մասերում տարբեր է, բայց ընդհանուր առմամբ 300—350 մմ-ից չի անցնում, այնպես, որ լեռնաշխարհի ամենացածրադիր

Նկ. 35. Արմավենիները Բաթումիի ծովափին։

մասերում՝ Արաքսի հովտում ամենուրեք արհեստական ոռոգում է կիրառվում։ Լեռնաշղթաների լանջերն ու կիրճերը ծածկված են սաղարթավոր անտառներով, իսկ սարահարթերը՝ բավականին հարուստ տափաստանային խոտաբույսերով։

Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայում յեղած կենդանիներից բացի, Անդրկովկասում հանդիպում են նաև միջերկրականի և իրանական կենդանիներ, օրինակ՝ խոզուկ (դիկոբրազ), քարայծ, ջեյրան։ Տափաստաններում կան բազմաթիվ կրծողներ։ Թալիշի լեռներում կան ընձառյուծներ, յերբեմն հանդիպում են նաև բորենիներ ու վագրեր։ Թռչուններից Անդրկովկասում

ԽՍՀՄ ֆիզ. աշխ. 7-րդ դ.—4

առանձնապես տարածված են հավատեսակները։ Լենքորանի ծովափնյա շրջանում կան ջրասեր վայրի շատ թռչուններ (կարապ, սագ, բադ, պելիկան, կարմրաթևիկ)։ Բազմաթիվ են նաև գեռուններ, ինչպես և ճպուռները, թունավոր մորմերը, իծաստղրը, փաղիժը։

Բնակչությունը։ Վարչական-քաղաքական բաժանումը.— Կովկասն ամբողջությամբ առած աչքի յե ընկնում իր բնակչության բազմազանությամբ և այդ տեսակետից ԽՍՀՄ-ում առաջին տեղն ե բռնում։ Այստեղ ապրում են 40-ից ավելի ժողովուրդներ։ Այդ բացատրվում ե նրանով, վոր Կովկասը գտնվում ե Աֆրիկայից դեպի Յեվրոպա տանող ճանապարհի վրա և շատ ու շատ դարերի ընթացքում ապաստարան ե հանդիսացել զանազան ցեղերի համար, վորոնք հարավից ու հյուսիսից այստեղ են քշվել յեկվորների կողմից։ Բարձր, անմատչելի լեռներով ու խորունկ կիրճերով իրարից անջատված լինելով՝ այդ ցեղերն ապրել են առանձնացած, առանց իրար հետ խառնվելու և մինչև վերջին ժամանակներս պահպանել են իրենց յուրահատուկ գծերը։

Հիմնական բնակչությունն այստեղ ե գաղթել հարավ-արևելքից և բաժանվում ե 4 խմբի. 1) վրացական, 2) հայկական, 3) իրանական և 4) կովկասյան կամ լեռնական։ Վրացական խմբի մեջ են մտնում վրացիները և ավելի մանր ցեղեր՝ սվանները՝ իմերելները և այլն։ Իրանական խմբին են պատկանում ոսերը, քրդերը, թալիշցիները։ Հայկական խմբին՝ հայերը։ Լեռնականների խմբին են պատկանում ադըղեները, աբխազները, կաբարդինները, չեչենները, Դաղստանի ժողովուրդները։ Այդ բոլոր ժողովուրդներից ամենաբազմամարդն են վրացիները և հայերը։ Վրացիների թիվը մոտ 1,8 միլիոն ե, հայերինը՝ 1,6 միլիոն։

Ռուսները և ուկրաինացիները XVIII — XIX դարերում այստեղ են յեկել հյուսիսից։ Նրանք բնակվում են հյուսիս-արևմտյան Նախակովկասում և Սև ծովի հյուսիս-արևելյան ափերին։ Մյուս վայրերում հանդիպում են գլխավորապես քաղաքներում։ Նախակովկասում նրանք կազմում են ամբողջ բնակչության $^{9}/_{10}$ մասից ավելին։ Ռուսներն ապրում են գլխավորապես Նախակովկասի արևելյան մասում և Դոնի ափերին, ուկրաինացիք՝ Կուբանում։

Բացի այդ ժողովուրդներից Կովկասում ապրում են թուրքական ու մոնղոլական խմբերի ժողովուրդներ։ Այդ խմբերի ժողովուրդներն այստեղ են յեկել հյուսիս-արևելքից, Կասպից ծովի մյուս կողմից։ Թուրքական խմբին են պատկանում ադրբեջանցիները, վորոնց թիվն անցնում ե 1,3 միլիոնից, քաքար-նողայները՝ Թերեքի ստորին հոսանքներում և քաքար-կարաչայցիները՝ Գլխավոր լեռնաշղթայի վրա։ Մոնղոլական խմբին են պատկանում կալմիկները, վորոնք ապրում են մերձկասպյան տափաստաններում։

Կովկասի վարչական բաժանումը ևս, ազգային կազմի բազմազանության շնորհիվ, նույնպես աչքի յե ընկնում իր բարդությամբ։

Նախակովկասում ամենամեծ միավորներն են Կրասնոդարի յերկրամասը (կենտրոնը՝ Կրասնոդար) և Օրջոնիկիձեի յերկրամասը (կենտրոնը՝ Վորոշիլովսկ)։ Սակայն այդ յերկրամասերի սահմանները լրիվ չեն համընկնում Նախակովկասի աշխարհագրական հասկացողության հետ։ Կրասնոդարի յերկրամասը հյուսիսում չի հասնում Նախակովկասի սահմաններին, իսկ հարավում անցնում ե Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ՝ բռնելով Սև ծովի ափերի հյուսիսային մասը։ Միաժամանակ Նախակովկասի մի մասը Մանիչ գետի ուղղությամբ, վորտեղ կալմիկներ են ապրում, մտնում ե Կալմիկական ԱԽՍՀ-ի մեջ, վորը ֆիզիկո-աշխարհագրական տեսակետից կազմում ե Պովոլժյեյի մի մասը։

Առանձին ազգություններն ունեն իրենց ավտոնոմ հանրապետություններն ու մարզերը։ Կրասնոդարի յերկրամասի մեջ մտնում են Ադըղեական ավտ. մարզը (կենտրոնը՝ Մայկոպ)։ Օրջոնիկիձեի յերկրամասի մեջ են մտնում Չերքեզական ավտ. մարզը (կենտրոնը՝ Չերկեսկ) և Կարաչայական ավտ. մարզը (կենտրոնը՝ Միկոյան-Շախար)։ Կովկասյան լեռների հյուսիսային լանջերին կան չորս ավտոնոմ հանրապետություն. Դաղստանի (կենտրոնը՝ Մախաչ-Կալա), Չեչեն-Ինգուշական (կենտրոնը՝ Գրոզնի), Հյուսիսային Օսեթական (կենտրոնը՝ Օրջոնիկիձե) և Կաբարդինո-Բալկարական (կենտրոնը՝ Նալչիկ)։

Անդրկովկասի սահմաններում գտնվում են յերեք միութենական հանրապետություններ՝ Վրացականը (կենտրոնը՝ Թբիլիսի),

Հայկականը (կենտրոնը՝ Երևան) և Ադրբեջանականը (կենտրոնը՝ Բագու): Վրացական ԽՍՀ-ի մեջ են մտնում Աջարական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Բաթումի), Ափխազական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Սուխումի), և Հարավ-Օսեթական ավտ. մարզը (կենտրոնը՝ Ստալինիրի): Ադրբեջանական ԽՍՀ-ի մեջ են մտնում Նախիջևանի ԱԽՍՀ (կենտրոնը՝ Նախիջևան) և Լեռնային Ղարաբաղի ավտ. մարզը (կենտրոնը՝ Ստեփանակերտ):

Ռելյեֆի և կլիմայական պայմանների կապակցությամբ Կովկասի բնակչության տեղաբաշխումն էլ միահավասար չէ: Ամենից նոսր բնակչություն ունեն լեռնային Կովկասը, արևելյան չոր տափաստանները և Գլխավոր լեռնաշղթայի արևելյան ստորոտները: Ամենախիտ բնակչություն ունեն Վրաստանի մի քանի շրջանները: Սև ծովի ափերի հարավային մասում ու Ռիոնի հովտում, ինչպես և արևմտյան Նախակովկասի մի քանի շրջանները:

Տնտեսությունը.— Կովկասը մի շրջան է, որտեղ ներկայումս գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը համարյա հավասար նշանակություն ունեն: Թե գյուղատնտեսությունը և թե արդյունաբերությունը խիստ արագ զարգանում են և առաջադիմում:

Գյուղատնտեսությունը Կովկասի տարբեր մասերում տարբեր է, նայած կլիմայական ու այլ բնական պայմաններին: Նախակովկասի արևմտյան մասում, Կուբանում, որտեղ հարթ տափաստանները ծածկված են սևահողի հաստ շերտով և բավականաչափ տեղումներ են լինում, ցանում են առավելապես հացաբույսեր՝ ցորեն, գարի և յեգիպտացորեն, իսկ տեխնիկական մշակույթներից՝ արևածաղիկ, բամբակ, կենաֆ, սոյա, տղկանեփ: Դա հացահատիկային ընդարձակ խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների ու ՄՏ կայանների խոշոր ելևատորներ ունեցող (հացաբարձման կայաններ) և գյուղատնտեսական առաջավոր տեխնիկայի մարզն է:

Անդրկովկասում հացահատիկային հողագործությունը հետին պլանն է քաշվում համեմատած այգեգործության հետ (մշակում են խնձորի, տանձի, ծիրանի, դեղձի, սալորի, շագանակի, տխլի, նշի, թթի ծառեր), նաև խաղողագործության հետ (Վրաստանում և Սև ծովի ափերին) և համեմատած մերձարևադարձային այն-

պիսի մշակույթների հետ, ինչպիսիք են թեյի թուփը և ցիտրուսները (նարինջ, կիտրոն, մանդարին), Սև ծովի առափնյա շրջանի հարավում: Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքների հովիտների չոր մոխրահողերում արհեստական ոռոգմամբ մշակում են բամբակ (ԽՍՀՄ-ում իր նշանակությամբ յերկրորդ բամբակացան շրջանը):

Աբխազիայում զարգացած է նաև ծխախոտի մշակությունը, իսկ արևելյան ու հարավային Անդրկովկասի ոռոգվող դաշտավայրերում նաև բրնձի մշակությունը: Բրինձ մշակվում է նաև հյուսիսում, Կուբանի հեղեղատներում (Կրասնոդարից մինչև դելտան):

Գլխավոր լեռնաշղթայի լեռներում, Նախակովկասի արևելյան չոր տափաստաններում և Հայաստանի լեռնային արոտներում զարգացած է անասնապահությունը, գլխավորապես ոչխարաբուծությունը:

Կովկասի արդյունաբերության զարգացումը հենվում է նախ և առաջ տեղական նավթի շատ մեծ պաշարների վրա, որի հանությամբ Կովկասը ԽՍՀՄ-ում առաջին տեղն է գրավում: Նավթի հանույթի ամենագլխավոր շրջաններն են Ապշերոնի թերակղզին Բագվի մոտ և մեծ Կովկասի հյուսիսային նախալեռներում՝ Գրոզնու և Մայկոպի շրջանում:

Նավթն իր կնիքն է դնում Կովկասի ամբողջ տնտեսության վրա: Բանվորների ամենամեծ մասն զբաղված է նավթի հանույթով ու վերամշակումով: Նավթը գլխավոր նյութն է, որ արտահանվում է ԽՍՀՄ մյուս մարզերը և արտասահման: Հանույթի արդյունահանության կենտրոններից նավթն ու նրանից վերամշակված հեղուկները (կերոսին, բենզին,) նավթամուղ խողովակներով մղվում են հարյուրավոր կիլոմետրերով հեռու դեպի Բաթումի և Տուապսե Սև ծովի ափին և Մախաչ-Կալա՝ Կասպից ծովի ափին: Այնտեղ լցվում են ցիստերն—շոգենավերի մեջ և արտահանվում: Նավթարդյունաբերության սպասարկելու համար աշխատում են ամբողջ շարք մեքենաշինական գործարաններ:

Նավթից հետո գալիս է քարածուխը, որի հանքավայրերը գտնվում են Անդրկովկասում, Վրաստանում (Տղվիբուլի, Տղվարչելի):

Կովկասի ջրառատ ու արագահոս գետերն ունեն էներգիայի շատ խոշոր պաշարներ։ Կովկասը հիդրոէներգիայի նույնքան պաշար ունի, ինչպես ԽՍՀՄ ամբողջ Եվրոպական մասը։

Մետաղահանքերից ամենից մեծ նշանակություն ունեն մանգանի հանքը (Ճիաթուրի), գունավոր մետաղները՝ կապար, ցինկ, արծաթ՝ հյուսիսային Կովկասում և պղինձ՝ Անդրկովկասում։

Վերամշակող արդյունաբերությունն զբաղված է տեղական հումույթի, առաջին հերթին գյուղատնտեսական հումույթի մշակությամբ. Նախակովկասում կան ձեթի, օղու, շաքարի, ոսլայի գործարաններ. Անդրկովկասում մրգի պահածոների, ապա՝ գինու գործարաններ (ԽՍՀՄ-ում առաջին գինեգործական շրջանը Վրաստանն է), թղթի ու տեքստիլ գործարաններ։ Կովկասին կից ծովերը, մանավանդ Կասպից ու Ազովի ծովերը հարուստ են ձկներով, այդ կապակցությամբ էլ զարգանում է ձկան պահածոների արդյունաբերությունը։ Մետաղամշակման, մեքենաշինական արդյունաբերությունը ևս առաջին հերթին սպասարկում է տեղական կարիքներին։

Միության ընդհանուր տնտեսության մեջ Կովկասն առաջին նշանակություն ունի։ Նրա այդ նշանակությունը պայմանավորված է ոչ միայն իր արգավանդ հողով, մեղմ, տեղ-տեղ մերձարևադարձային կլիմայով, բնական ու կուլտուրական խիստ հարուստ բուսականությամբ, նավթի, քարածխի պաշարներով, այլև նրա աշխարհագրական դիրքով, որովհետև տիրապետում է տաք, չսառչող ծովի ափերին, որտեղից ճանապարհ է բացվում դեպի Արևմտյան Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի երկրները։ Այդ տեսակետից Կովկասի նշանակությունը ոչ միայն տեղային է, այլ և տարածվում է ԽՍՀՄ Եվրոպական մասի ամբողջ հարավ-արևելքի ու Միջին Ասիայի վրա։

Կովկասի, մանավանդ նրա հյուսիսային մասի տնտեսության համար մեծ նշանակություն են ունենալու Վոլգա-Դոնի (Ստալինգրադի մարզի սահմաններում) և Մանիչի (Նախակովկասում) նախագծված ջրանցքները։

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.— Կովկասի բոլոր մասերից ամենախիտ բնակչություն ունի Անդրկովկասը, որտեղ 1 քառ. կմ բնակվում է 38 մարդ, իսկ ամենից նոսր՝ Օրջոնիկիձեյի երկրամասը, որտեղ միջին խտությունն է 1 քառ. կմ 23 մարդ։ Քաղաքային բնակչության տոկոսը բարձր է Անդրկովկասում և Կրասնոդարի երկրամասում, որտեղ հասնում է 29-ի։

Այստեղ էլ գտնվում են Կովկասի ամենախոշոր քաղաքները, Անդրկովկասում՝ Բաքուն (մոտ 700 հազար բնակչով), որը խոշորագույն նավահանգիստ է Կասպից ծովի ափին և նավթարդյունաբերության կենտրոն է։ Բաքուն, բացի նավթից, խոշորացել է առևտրի համար աշխարհագրական նպաստավոր դիրք ունենալու շնորհիվ։

Բնակչության թվի տեսակետից երկրորդ տեղն է բռնում Թբիլիսին (400 հազ. ավելի բնակչություն)՝ Վրաստանի մայրաքաղաքը, խոշոր կուլտուրական կենտրոն։

Նաև 9 քաղաք 100—300 հազար բնակիչ ունեն. դրանք են՝ Կրասնոդարը, Արմավիրը, Նովոռոսիյսկը՝ Կրասնոդարի երկրամասում՝ Օրջոնիկիձեն՝ Հյուսիս-Օսեթական ԱԽՍՀ, Պյատիգորսկը՝ Օրջոնիկիձեյի երկրամասում, Գրոզնին՝ Չեչեն-Ինգուշական ԱԽՍՀ, Քութայիսին, Բաթումին, Երևանը՝ Անդրկովկասում։

Կան էլի մի շարք ավելի մանր բնակավայրեր, որոնք, սակայն, միութենական կուրորտային կամ բուժիչ նշանակություն ունեն։ Դրանք են Նախակովկասում Կիսլովոդսկը, Սև ծովի ափին Մացեստան (Սոչիի մոտ)։ Այս բուժավայրերից ավելի պակաս հռչակ չունեն Սև ծովի ափերի կուրորտային քաղաքներն ու ավանները, որոնք Ղրիմի ափերի հետ միասին հանդիսանում են Միության «առողջարանը». դրանք են՝ Սոչին, Գագրին, Բաթումին իրենց շրջակայքով։

Սև ծովի ափերը, ինչպես և Ղրիմի Հարավային ափը խորհրդային Ռիվիերան է, բայց ավելի խոնավ կլիմայով ու փարթամ բուսականությամբ։

Ցածում ծովն է իր տաք ջրերով, որ մերթ մեղմ է, ալեծուփ, մերթ փոթորկահույզ զարնվում է առափնյա ժայռերին։ Ծովափին շարված են սանատորիաների ու հանգստյան տների գեղեցիկ շենքերը, այգիները, որոնց մեջ մարդու աչք են շոյում մերձարևադարձային բուսականությունը՝ արմավենիները, բամբուկը, էվկալիպտները, մշտադալար նոճիները։ Ավելի բարձր անտառապատ լեռներ են՝ ծածկված սաղարթավոր անտառներով, որոնք խճողված են լիաններով, վազերով, գալարուկներով։ Այդ անտառներն անցանելի են միայն այնտեղով, ուր մարդը ճամփա է բացել իր համար, կամ կիրճերի ներկայությամբ, որոնց միջով փրփրադեզ աղմուկով գահավիժում են լեռ-

նային գետակները՝ տեղ-տեղ առաջացնելով չքնաղ ջրվեժներ։ Էլ ավելի բարձր կանգնած են Գլխավոր լեռնաշղթայի անեղ ու դաժան ժայռերը, վորոնք նույնիսկ ամառվա կեսին ծածկված են լինում ձյան ճերմակ բծերով։

Հաղորդակցության ճանապարհների տեսակետից Կովկասը շատ հարմար դիրք ունի, վորովհետև արևմուտքից ու արևելքից վողողվում է ծովերով, վորոնցից Կասպից ծովը նրան միացնում է Միջին Ասիայի հետ, իսկ Վոլգայի միջոցով նաև ԽՍՀՄ ամբողջ Յեվրոպական մասի հետ, Սև ու Ազովի ծովերը նրան միացնում են Ուկրաինայի և Ղրիմի հետ։ Սակայն ներքին յերկաթուղային հաղորդակցության համար Կովկասն զգալի դժվարություններ ունի։ Գլխավոր լեռնաշղթայի բարձր պարիսպը մինչև այժմ էլ դեռ չի կտրվել յերկաթուղով։ Հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից մտնում են յերկու յերկաթուղիներ՝ Ռոստովից և Ստալինգրադից։ Ռոստովի մագիստրալ յերկաթուղին Գլխավոր լեռնաշղթայի յերկարությամբ անցնելով՝ հասնում է Կասպից ծովին և արևելքում՝ լեռնաշղթան անցնելով՝ ծովի ափով հասնում է մինչև Բաքու։ Ստալինգրադի գիծը Կրասնոդարի վրայով անցնելով հասնում է մինչև Նովոռոսիյսկ և այնտեղ էլ վերջանում։ Արմավիրում մագիստրալ գծից մի ճյուղ գնում է դեպի Տուապսե կտրում այդ վայրում համեմատաբար ցածր լեռնաշղթան և այնուհետև Սև ծովի ափով անցնում Սոչիի այն կողմը մինչև Ադլեր։ Անդրկովկասում մի մագիստրալ ուղի է գալիս Թբիլիսիից դեպի Լենինական, ապա ուղղվում դեպի հարավ-արևելք, Թյուրքիայի ու Իրանի սահմանի յերկարությամբ հասնում մինչև Ջուլֆա։ Այդ մագիստրալին Լենինականում միանում է դեպի Թյուրքիա՝ մինչև Երզրում տանող գիծը, իսկ Ջուլֆայում՝ դեպի Իրան՝ մինչև Թավրիզ տանող գիծը։

Գլխավոր լեռնաշղթան կտրված է միայն մի քանի լեռնանցքային ուղիներով, վորոնցից Որջոնիկիձեն ու Թբիլիսին իրար կապող Ռազմավիրական խճուղով ավտոմոբիլային հաղորդակցություն գոյություն ունի։

Որջոնիկիձեյից Թբիլիսի տանող լեռնանցքային խճուղով անցնելը հնարավորություն է տալիս ծանոթանալու Գլխավոր լեռնաշղթայի բնությանը։ Սկզբում ճանապարհը Թերեքի հովտով վեր է բարձրանում։ Յերկու կողմերում լեռների լանջերը մերթ ուղղորդ են, մերթ՝ զառիվայր։ Վիթխարի քարաժայռերը տեղ-տեղ կախված են ուղղակի ճանապարհի վրա։ Այնտեղ, ուր խճուղին անցնում է Թերեքի ափով, յերևում են ահագին գլաքարեր, վորոնք գետն է բերել։ Դարիալի կիրճում վիթխարի քարաժայռերն այնպես են խտանում, վոր թվում է, թե նրանց միջից դուրս գալ չի լինի։ Յերկնքի մի նեղ շերտ է միայն յերևում վերևը։ Ցածր ահագին քարեր գլորելով դղրդում է պղտոր Թերեքը։ Ճանապարհը շարունակում է վեր բարձրանալ և բացվում է ձյունազգած Կազբեկի հոյակապ տեսարանը։ Այնուհետև Թերեքը մնում է մի կողմ։ Ցուրտն ավելի յե զգալի դառնում. կիրճերում ու լեռների լանջերին ձյուն է նստած։ Այդ Խաչի (Կրեստովի) լեռնանցքն է։ Ճանապարհը ձյունի փլվածքներից պահպանելու համար տեղ-տեղ նրա վերևը քարե այունաշարքեր են կառուցված։ Լեռնանցքից հետո սկսվում է վարէջքը։ Մինչև այդտեղ շրջապատող հոյակապ ու վայրի տեսարանը հետ է քաշվում և հեռու ցածունքներում բացվում է բոլորովին ուրիշ պատկեր։ Հետևն ամեն ինչ մերկ ու վայրի, մթնշաղ ու հոյակապ։ Այստեղ մառախուղ և ցած կախված ամպերը, ձյուն ձմռան սառն շունչը։ Այնտեղ՝ առջևը ամեն ինչ մեղմ է, հրապուրիչ, այնտեղ ամեն ինչ կանաչին է տալիս, ժպտում արևի ջերմ ճառագայթների տակ։ Այնտեղ թագավորում է ամառը, հարավային տաք ամառը։ Ճանապարհը խորանում է զիգզագաձև ողակներով, լեռնալանջերին ալպիական մարգագետիններ են, ռոդոդենդրոնի թփերը՝ դեղնագույն բուրումնավետ ծաղիկներով։ Իսկ ավելի հեռուն Արագվայի պայծառ կանաչավուն հովիտն է։ Ամենուրեք մշակված դաշտեր են, այգիներ՝ թթենուտներով, թզենուտներով, չինարի և ընկուզի ծառերով, փարթամ վարդենիներով։

6. ՊՈՎՈԼԺՅԵ

Դիրքն ու ընդհանուր բնութագրությունը. — Պովոլժյեն ԽՍՀՄ Յեվրոպական մասի աշխարհագրական խոշոր մարզերից մեկն է։ Նրա մեջ են մտնում Վոլգայի միջին ու ստորին հոսանքներում յեղած բոլոր տարածությունները։ Բացի Վոլգայից իրենց ներքին հոսանքներով այդ տեղով է հոսում նաև նրա խոշորագույն վտակ՝ Կաման, իսկ հարավ-արևմուտքում՝ Դոնն իր մի քանի ձախ վտակներով։ Պովոլժյեն ձգված է հյուսիսից հարավ (համարյա 1500 կմ յերկարությամբ). այդ պատճառով էլ ընդգրկում է խիստ բազմազան բնությամբ լանդշաֆտներ՝ սկսած տայգայատիպ անտառներից հյուսիսում, մինչև կիսաանապատներն ու շարժուն ավազուտները՝ հարավում։

Ըստ իր բնության Պովոլժյեն բաժանվում է 3 մասի. 1) հյուսիսային՝ անտառային, 2) միջին՝ անտառատափաստանային և 3) հարավային՝ տափաստանային։

Պովոլժյեյի անտառային մասը. — Պովոլժյեյի անտառային մասը գրավում է Վոլգայի ամբողջ ձախ ափը (Զավոլժյե),



Նկ. 36. Պովոլժյե։

Ծուրա և Սվիյագա գետերի միջև անցնելով նաև աջ ափը։ Զավոլժյեյի ռելյեֆը ցածրադիր է և հարթ։ Շատ կան ճահիճներ ու տորֆավայրեր։ Այդ տեղով իր վերին ու ստորին հոսանքներով անցնում է Կաման և Վոլգայի մեջ է թափվում Կազանից ցած։

Պովոլժյեյի անտառատափաստանային մասը.— Վոլգայի աջ ափն ավելի բարձր է։ Նրա մեծ մասը բռնում է Մերձվոլգյան բարձրությունը, որն սկսվում է Գորկու մոտ, Վոլգայի աջ ափի ամբողջ երկարությամբ ձգվում է մինչև Ստալինգրադ և անցնում է անտառատափաստանային գոտուց դուրս։



Նկ. 37. Մի տեսարան Մերձվոլգյան բարձրությունից։

Մերձվոլգյան բարձրությունը, ինչպես և Միջին-Ռուսական բարձրությունը, հանդիսանում է ավելի հին, մինչսառցադաշտային ռելյեֆ, որի կազմության գործում մեծ դեր են խաղացել բազմաթիվ իջվածքները (сбросы)։ Դրանցից ամենանշանավորն անցնում է Սամարայի գետապտույտի երկարությամբ, առաջացնելով Ժիգուլևյան լեռները։ Սամարայի գետապտույտը մի խոշոր թեքվածք է, որ կատարում է Վոլգան, արևելքից շուրջանցելով նստվածքի հետևանքով բարձրացած Մերձվոլգյան բարձրունքները։ Ժիգուլիի լեռներն իրենց խորունկ ու նեղ հովիտներով, կրաքարային գեղատեսիլ ժայռերով, ուղղորդ լանջերով ու խիտ անտառներով, վայրի ու գեղեցիկ տեսք ունեն և հիշեցնում են իսկական միջին բարձրության

լեռներ։ Նրանց ամենաբարձր կետերը 371 մ բարձրության են հասնում։ Դրանից մի քիչ ցածր է նրանց բարձրությունը Վոլգայի մակերևույթի նկատմամբ։ Ընդհանրապես Մերձվոլգյան բարձրությունը դեպի Վոլգան իջնում է բարձր և ուղղորդ լանջերով, մանավանդ այնտեղ, ուր մակերևույթի յերևան են գալիս ամուր ապառաժները — կրաքարը, կրակավը և ավազաքարը։ Այնտեղ, ուր զառիթափերը կազմված են ավազախառն կավից, նկատվում են փլուզումներ, որոնք հաճախ տեղի յեն ունենում աջափնյա Պովոլժյեյում (Ուլյանովսկի, Սարատովի մոտերքը և այլն)։

Պովոլժյեյի անտառատափաստանային մասում ձախ ափը նույնպես տափարակ դաշտավայր է, ինչպես և հյուսիսում։ Միայն հարավ-արևելքում, որտեղ հասնում են Ոբշչի Սըրտի ճյուղավորությունները, դաշտավայրը փոխվում է ալեծուփ վայրի՝ լայն գետահովիտներով ու տափարակ ջրաբաշխերով։ Մակերևույթն այստեղ ծածկված է այսպես կոչված Սըրտային կավերով. այդպես «սըրտ» են կոչված բոլոր ջրաբաշխ տարածության զառիկող լանջերը։

Աջ և ձախ ափերի ռելյեֆի միջև յեղած տարբերությունն ազդում է նաև բնության վրա։ Բարձր և խոր հովիտներով կտրտված Մերձվոլգյան բարձրությունն ունի ավելի խոնավ կլիմա, ավելի բազմազան հողեր և լայնատերև անտառներ։ Ցածրադիր ձախ ափին անտառներ կան միայն հյուսիսում։ Կլիման այստեղ զգալիորեն ավելի չոր է, գետակներն ամռանը խիստ նվազում են, սևահողի գոտին հասնում է մինչև հյուսիս և ձախ ափին մեծ մասը տափաստան է։

Այդ մասում Վոլգան իր մեջ մի քանի վտակ է առնում, աջից՝ Սուրան և Սվիյագան, ձախից՝ Սամարան։ Սուրայի և Սվիյագայի հոսանքը հետաքրքրական է նրանով, որ այդ գետերը հոսում են Վոլգային զուգահեռ, բայց հակառակ ուղղությամբ՝ հարավից դեպի հյուսիս։

Պովոլժյեյի տափաստանային մասը. — Այն դաշտավայրը, որով հոսում է Վոլգան, Ոբշչի Սըրտի վերջին ճյուղավորություններից դենը փոխվում է Մերձկասպյան դաշտավայրի, որն աստիճանաբար իջնում է դեպի Կասպից ծովը։ Վերջինիս մակարդակը 26 մ ցածր է օվկիանոսի մակարդակից։ Արևմուտքում ձգված են Յերգենները յերկու շարք, ոչ շատ մեծ (մինչև 190 մ) բարձրություններ, որոնք հյուսիսից հարավ ձգվում են 350 կմ յերկարությամբ։ Նրանց արևմտյան լանջերը զառիկող են, իսկ արևելյանը՝ ուղղորդ։

Մերձկասպյան դաշտավայրը մի միապաղաղ տափարակ հարթություն է, որ ոչ հեռու անցյալում ծովի հատակ է յեղել. ծածկված է ծովային նստվածքներով, որ բաղկացած է մուգ ու գորշ ավազից, խեցիներից, որոնք ներկայումս էլ Կասպից ծովում գոյություն ունեն։

Մերձկասպյան դաշտավայրի լանդշաֆտը շատ յուրօրինակ է։ Կարմրա-գորշավուն հողը տեղ-տեղ ծածկված է ցածրիկ օշինդրակամախրային աղուտային բուսականությամբ, որոնք տերևների փոխարեն փշեր ու մազմզուկներ ունեն, տեղ-տեղ էլ բոլորովին մերկ են։ Միայն ավազաթմբերը՝ բարխանները և աղուտ լճերն են, որ փոքր ինչ բազմազան են դարձնում այդ անապատը։ Ամռանը պտտվում են հողմերն ու վեր բարձրացնում մանր ավազափոշին։ Փոշին շարունակ շարժվում է օդում և մտնում ամենամանր ճեղքերը։ Կարելի յե ամբողջ օրերով ճանապարհորդել այդ միապաղաղ կիսանապատով և շուրջը ոչինչ չտեսնել, բացի չոր աղուտներից ու հողաթմբերից, որ գտնվում են արջամկների խորունկ բների առաջ։ Ցեխ ամենուրեք կա։ Աղն այստեղ ոչ միայն լճերումն է գտնվում, այլ և ծծված է հողի մեջ. իսկ անձրևների բացակայությունն ու օդի չորությունը չեն նպաստում նրա չքանալուն։ Քամին քշում է աղի փոշին. նույնիսկ օդում զգացվում է աղի գոյությունը, էլ չխոսենք ջրհորների ջրի մասին։ Նույնիսկ ցորենի տափաստանում նստող ցողն այնքան աղի յե լինում, որ թվում է, թե խոտը յեղյամով է ծածկված։

Ամբողջ տափաստանային Պովոլժյեյում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք հոսում է Վոլգան իր ստորին մասով։ Սակայն Վոլգայի վտակներն այստեղ աննշան են։ Վոլգայից դեպի արևելք կան շատ աղի լճեր, որոնցից ամենախոշորներն են Ելտոնն ու Բասկունչակը։ Տափաստանային գոտու արևմուտքով հոսում են Դոնի ձախ վտակները՝ Խոպյորը և Մեդվեդիցան։

Վոլգան. — Վոլգան Պովոլժյեյով անցնում է իր միջին ու ստորին հոսանքով։ Սկսած Գորկուց Վոլգան լայն ու վեհապանծ գետ է։ Նրա լայնությունն իր միջին հոսանքում 1—2 կմ է, իսկ հովտի լայնությունը յերբեմն 20 կմ յե հասնում։ Իր ամենախոշոր վտակը՝ Կաման իր մեջ առնելուց հետո նրա լայնությունը 2-ից 4 կմ յե հասնում (կղզիներով), իսկ գարնանային հորդացման ժամանակ իր ստորին հոսանքում հեղեղում է մինչև

20—40 կմ լայնությամբ։ Նրա հովիտն էլ նույնպիսի լայնություն ունի և այդ հովտում յերբեմն Վոլգան փոխում է իր ուղղությունը. մի ափից հեռանում է, մյուսը փորում։ Այդպիսով Վոլգան հեռացել է Կազանից, Սարատովից, բայց փոխարենը մի քանի քաղաք, օրինակ Վասիլսուրսկը, վոր գտնվում է այնտեղ ուր Սուրան թափվում է Վոլգայի մեջ, մի քանի անգամ ստիպված են յեղել փոխել իրենց տեղը, վորովհետև Վոլգան հեղեղել է ափերը։



Նկ. 38. Մերձկասպյան դաշտավայրում։

Գետի գլխավոր հունը փոփոխվելու հետևանքով առաջանում են կղզիներ, ծոցեր, խորշեր (վորոնք մեծ նշանակություն ունեն վորպես նավերի ձմեռվա կայան), ծանծաղուտներ, ավազուտներ, ավազաթմբեր, իսկ հենց գետի մեջ լճեր, վորոնք այդտեղ կոչվում են «իլմեն»։ Միջին, ինչպես և վերին հոսանքներում Վոլգան շատ ջուր է ստանում իր վտակներից, մանավանդ ձախ վտակներից, վորոնք հոսում են անտառային գոտում։ Ընդհակառակն, հարավում, Ստալինգրադից այն կողմը, նա մտնում է հարավ-արևելյան տափաստանների սակավաջուր շրջանը, վորտեղ համարյա վոչ մի վտակ չի ընդունում իր մեջ և վորտեղ

գոլորշիացման հետևանքով նույնիսկ ջրի նվազում է նկատվում։ Այդտեղ, չհասած Ստալինգրադին, գետաբերանից մոտավորապես 500 կմ հեռու՝ Վոլգայից բաժանվում է նրա մի ճյուղը, Ախտուբան, վորը Կասպից ծովն է թափվում առանձին։ Այդտեղ, արդեն Վոլգան հոսում է իր ուղղորդ ու միապաղաղ կավային ափերի միջով։ Նա ծովի մեջ է թափվում մի քանի հարյուր ճյուղերով, առաջացնելով մոտ 6500 քառ. կմ դելտա։ Գետաբերանը ներկայացնում է ճյուղավորությունների, լճերի, ծոցերի բազմաթիվ կղզիների ու կղզյակների մի չափազանց խճճված ցանց։ Կղզիներն այնտեղ մերթ ջրի յերեսն են դուրս գալիս, մերթ ծածկվում ջրով. Վոլգայի ահագին քանակության ջրի շնորհիվ, այնտեղ, ուր նա ծովն է թափվում, ծովի ջրի աղիությունը նվազում է։ Նրա բերած տիղմի նստվածքն առաջացնում է ծանծաղուտ, վոր կազմում է գետի դելտայի ստորջրյա շարունակությունը. դրա հետևանքով խորանիստ նավերը ծովից Վոլգայի մեջ մտնել չեն կարող։

Վոլգայի գետաբերանն ու նրան մերձակա Կասպից ծովի ափերը աշխարհիս ամենահարուստ ձկնորսավայրերն են։ Դրա պատճառը Կասպից ծովի ջրի քիչ աղիությունն է, ծանծաղությունը, ինչպես և գետի ջրի դանդաղ հոսանքը և այն մեծ քանակությամբ օրգանական նստվածքները, վոր բերում է Վոլգան։ Վոլգայի դելտան կազմող անհամար կղզիները, ծոցերը, խորշերը, լճերը, ճյուղավորությունները շարունակվում են նաև Կասպից ծովի յեզերքով և շատ հարմար վայր են հանդիսանում ձկների կյանքի ու բազմացման համար։ Գետերի հորդացման հետևանքով ջրի մակարդակի հաճախակի փոփոխման շնորհիվ (Վոլգայի հորդացման ժամանակ Կասպից ծովի մերձակա մասերը բարձրանում են ավելի քան կես մետր), ինչպես և քամիների հետևանքով ջրի առատացումների շնորհիվ այդ «ձկան արոտները» մերթ ջրի յերեսն են դուրս գալիս և մերթ յենթարկվում օդի ու արևի ճառագայթների ազդեցությանը, մերթ կրկին ծածկվում են ջրի տակ։ Դրա հետևանքով օրգանական մնացորդներն ավելի արագ են փտում, այդ վայրերի բուսականությունն ու ստորին կենդանական օրգանիզմները խիստ արագ են զարգանում և իրենց հերթին չափազանց բազմացնում են զանազան տեսակի թրթուրներ, միջատներ և այլ մանր կենդանիներ, վորոնք և ձկների գլխավոր սնունդն են հանդիսանում։

Միության բոլոր գետերի մեջ Վոլգան ամենից մեծ նշանակությունն ունի։ Իր յերկարության շնորհիվ նա իրար հետ կապում է զանազան բնություն ունեցող վայրերը. վորպես ջրային ուղի անցնում է ԽՍՀՄ Յեվրոպական մասի ամբողջ տերիտորիայի վրա հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։

Բացի այդ, Վոլգան ջրանցքներով միանում է հյուսիս-արևմուտքի և հյուսիսի գետային ավազանների հետ, իսկ Կասպից ծովի միջոցով՝ Կովկասի ու Միջին Ասիայի հետ։ Դրա հետևանքով էլ մեր յերկրի գետային ճանապարհներով փոխադրվող բեռների կեսից ավելին բաժին է ընկնում Վոլգային։ Մոտիկ ապագայում Վոլգայի տնտեսական նշանակությունը չափազանց կմեծանա։ Մի կողմից դրան նպաստում է Մոսկվա—Վոլգա ջրանցքը, մյուս կողմից կառուցվող Վոլգա-Դոն ջրանցքը (վերջինս կառուցվում է Ստալինգրադի և Դոնի Կալաչի միջև) և «Մեծ Վոլգայի» վիթխարի պլանի իրականացումը։ Ըստ այդ նախագծի՝ Վոլգայի և նրա ամենաջրառատ վտակ Կամայի վրա կառուցվելու յեն մի շարք հսկայական ամբարտակներ։ Ջրի բարձրացումը կխորացնի Վոլգայի ջրային ճանապարհի առանձին մասերը, հնարավորություն կտա օգտագործելու ստացվող հիդրոէներգիան, վորը նվազագույն չափով տասն անգամ կգերազանցի Դնեպրոգեսին։ Բացի այդ, արհեստական լճերի ջրի մի մասը կօգտագործվի արհեստականորեն վոռոգելու այն դաշտերը, վորոնք այժմ հաճախ տուժում են յերաշտներից։

Կլիման և բուսականությունը.— Պովոլժյեն հյուսիսից հարավ ձգվում է ավելի քան հազար կիլոմետր յերկարությամբ, այդ պատճառով էլ ընդգրկում է շատ բազմազան բնությամբ վայրեր։ Սակայն ամբողջ յերկարությամբ այդ յերկրամասի կլիման պահպանում է իր հիմնական յուրահատկությունը. այն է՝ խիստ ցամաքային է։ Սարատովում ձմեռն ավելի ցուրտ է, քան Լենինգրադում։ Հունվարին Աստրախանում այնքան ցուրտ է, վորքան Պսկովում, Կասպից ծովն ափերի մոտ ծածկվում է սառույցով տասնյակ, նույնիսկ հարյուրավոր կիլոմետր տարածությամբ։ Տարեկան միջին ջերմաստիճանը Կիրովում $+1{,}3^0$ է, իսկ Աստրախանում՝ $+9{,}3^0$։ Ձմեռը տևում է 5 ամիս, հարավում՝ 3 ամիս։ Ամառը մեծ մասամբ շոգ է, նույնիսկ Կազանում հուլիսին ջերմաստիճանը $+20^0$ է։ Տեղումների քանակը հյուսիսից դեպի հարավ աստիճանաբար նվազում է. հյուսիսում՝ 500 մմ, Աստրախանում՝ մինչև 150 մմ։ Ամենից շատ տեղումներ լինում են ամռան ամիսներին։ Ձմեռը ձյան շերտը հաստ չի լինում, իսկ հարավում հաճախ ձյուն չի նստում։ Արևոտ, չոր օրեր շատ են լինում։ Միջին Պովոլժյեյում դեռ գերակշռում են արևմուտքից ու հյուսիս-արևմուտքից փչող քամիները, իսկ ստորին Պովոլժյեյում՝ հարավ-արևելյան քամիները։ Ամառը յերբեմն այդ քամիները տափաստանում բարձր ջերմաստիճան են ունենում և կործանարար ազդեցություն են գործում բուսականության վրա չորացնելով այն («չորակեզ» և նրա հետ կապված «մառախուղ»)։

Մառախուղն առաջացնում են Միջին Ասիայի անապատներից փչող քամիները։ Այդ քամիները չոր են ու տաք, գլխավորապես այն պատճառով, վոր նրանց բերած ոդի մասսան իր մեջ յեղած ահագին քանակությամբ փոշու հատիկներից տաքացած է լինում։ Մառախուղն ամենից հաճախ լինում է հուլիսին։ Ոդը կորցնում է իր թափանցիկությունը, դառնում է մշուշային, բոլոր առարկաները ծխով պատած են թվում, արևի դեղին կամ ծիրանագույն սկավառակը փայլում է յերկնքում, ջերմաստիճանը բարձրանում է։ Մարդիկ ծանր են զգում իրենց, վատ են քնում, կենդանիներն էլ են տառապում տոթից, իսկ բույսերը կախում են իրենց թոշնած տերևները։ Յերբեմն նրանք մի քանի ժամում այնքան են չորանում, վոր դյուրությամբ փոշի յեն դառնում։ Հացահատիկը թեթևանում ու մուգ գույն է ստանում, մրգի բերքը հաճախ բոլորովին փչանում է։

Մարզի հյուսիսի մի փոքր մասը գտնվում է տայգայի նախագոտու մեջ, վորի հարավային սահմանն անցնում է մոտավորապես Գորկի-Սվերդլովսկ գծով։ Այստեղ միապաղաղ փշատերև անտառներ են, վորոնց մեջ գերակշռում է յեղևնին։ Արևելքում յեղևնուն միանում է սպիտակ յեղևնին՝ ավելի քիչ լայնատերևներ։ Առանձնապես գեղեցիկ են սև յեղևնիները, վորոնք շղթայաձև իջնում են Կամայի բարձր, մուգ վարդագույն ափերի մոտ գոյացած ձորակների ու փոսերի յեզրերով։ Սոճին հանդիպում է միայն վորպես խառնուրդ, իսկ յեթե առանձին անտառ էլ է կազմում, այդ էլ միայն ավազահողերում։ Հարավում տայգայի նախագոտին յեզերվում է յեղևնու և կաղնու խառն անտառների յենթագոտիով։ Այստեղ հանդիպում են անտառազուրկ տարածություններ, տորֆային ճահիճներ, վորոնց վրա փռված են լորամրգու բարակ ու յերկար ցողունները, կամ աճում են ցածրիկ ու ծռմռված սոճիներ։ Խառն անտառների գոտին հարավում հասնում է մինչև Վոլգա և Կամա և միայն Ջաոուրյեյում անցնում է Վոլգայի աջ ափը։ Միջին Պովոլժյեն գտնվում է անտառատափաստանի անցումային գոտում. այստեղ լայնատերև անտառները, վոր բաղկացած են

գլխավորապես կաղնու և լորու խառնուրդից, փոխնիփոխ հաջորդում են տափաստանային հողամասերին, վորոնք այժմ արդեն վաղուց հերկված են։ Անտառատափաստանը հասնում է մինչև Պենզա-Կույբիշև գիծը և յերկու լեզվակով Վոլգայի ու Սամարայի հոսանքների ուղղությամբ յերկարում դեպի հարավ։

Ստորին Պովոլժյեն ընկած է զուտ տափաստանային գոտում։ Այստեղ հյուսիսից դեպի հարավ հանդիպում են տափաստանի բոլոր ձևերը՝ ամենաբազմատեսակ հողերով՝ նախ սևահողային փետրախոտածածկ տափաստան՝ հարուստ խոտաբույսերով, ապա ավելի աղքատ բարձմենակածածկ տափաստան՝ շագանակագույն հողերով, վերջապես աղուտային տափաստաններ՝ նոսր բուսականությամբ, կավա-ավազային հողերով, աղի լճերով ու սորուն ավազով, վոր քշում է քամին ու բարխաններ կազմում։ Այդ կիսանապատային տափաստանում Վոլգայի վարարուտն իսկական կանաչ ոազիս է հանդիսանում։ Նրա կղզիներում բուսնում է խիտ յեղեգնուտ, վորի բարձրությունը 4—6 մ է հասնում։ Ավելի խուլ գետախորշերում հանդիպում են նաև հնդկական լոտոսի վարդագույն ծաղիկներ։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.— Պովոլժյեն իր բնակչության թվով (23 մլն) ԽՍՀՄ-ում յերրորդ տեղն է բռնում, հետ մնալով միայն Ուկրաինայից ու Կենտրոնից։ Սակայն բնակչության խտությունը համեմատաբար մեծ չէ։ Միջին խտությամբ (1 ք կմ-ում 28 մարդ), Պովոլժյեն առաջ է միայն Հյուսիսից և Ուրալից։ Ամենից խիտ բնակչություն ունեն կենտրոնական մասերը, հյուսիսը՝ նոսր, իսկ հարավն էլ ավելի նոսր, վորովհետև այստեղ հողերի մեծ մասը մշակության համար պիտանի չէ և տեղ-տեղ 1 ք կմ 1 մարդ է ընկնում։

Բացի Միջին Պովոլժյեյի և Զավոլժյեյի բնիկներից, այստեղ անհիշելի ժամանակներից հաստատվել են թուրքական խմբի շատ ժողովուրդներ, վորոնք խառնվել են բնիկ ժողովուրդների հետ։ Պովոլժյեն ընկած է յեղել հենց այն մեծ ճանապարհի վրա, վորով մեկը մյուսի հետևից քոչվոր ժողովուրդներն Ասիայից շարժվել են դեպի Յեվրոպա, անցնելով Ուրալյան լեռների ու Կասպից ծովի միջով, իսկ Վոլգան հնուց ի վեր առևտրական կարևոր ճանապարհ է յեղել և նրա ափերին ստեղծվել են շատ պետություններ, վորոնք հաջորդաբար փոխարինել են իրար։

Այդպիսով Պովոլժյեյում ստեղծվել է շատ խայտաբղետ կազմով բնակչություն։ Ներկայումս այստեղ ապրում են մարիներ՝ Վոլգայի ձախ ափին, Վետլուգա, և Վյատկա գետերի միջև, թաթարներ՝ ստորին Կամայի ափերին և ցրված ամբողջ մարզում, չուվաշներ՝ Սուրա գետից դեպի արևելք, բաշկիրներ՝ հարավ-արևելքում։

Գերմանացիները, վորոնց արտասահմանից այստեղ է տեղափոխել ցարական կառավարությունը, ապրում են Վոլգայի ափերին, Սարատովի մոտ, գլխավորապես ձախափնյա մասում։ Կալմիկները ապրում են Վոլգայի ստորին հոսանքում, աջ ափին։ Պատահում են նաև քիչ թվով ղազախներ։ Այդ բոլոր ժողովուրդները միասին կազմում են ամբողջ բնակչության 1/4-ից վոչ ավելին։ Մնացած 3/4-ը կազմում են ռուսներ և շատ ավելի քիչ թվով ուկրաինացիները։

Բնակչության կազմի խայտաբղետության շնորհիվ Պովոլժյեն վարչական տեսակետից բաժանվում է յերեք մարզի և հինգ ավտոնոմ հանրապետության։ Միջին Պովոլժյեյում կա 1 մարզ. Կույբիշևի մարզը (կենտրոնը՝ Կույբիշև) յերեք ավտոնոմ հանրապետություն — Չուվաշական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Չեբոկսարի), Մարիական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Յոշկար-Օլա) և Թաթարական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Կազան)։

Ստորին Պովոլժյեն բաղկացած է յերկու մարզից. հյուսիսում Սարատովի մարզը (կենտրոնը՝ Սարատով), հարավում Ստալինգրադի մարզը (կենտրոնը՝ Ստալինգրադ) և յերկու ավտոնոմ հանրապետություններից՝ Մերձվոլգյան Գերմանացիների ԱԽՍՀ (կենտրոնը՝ Ենգելս). Կալմիկական ԱԽՍՀ (կենտրոնը՝ Ելիստա)։ Տարածությամբ ամենամեծը Ստալինգրադի մարզն է, բնակչության թվով՝ Կույբիշևի մարզը։

Տնտեսությունը.— Պովոլժյեյում դեռևս այնքան էլ շատ օգտակար հանքեր չեն հայտնաբերված։ Յերկաթահանք կա Ստալինգրադի մարզում, սակայն վոչ խոշոր պաշարներով։ Եներգետիկ տեղական միջոցներն են՝ հյուսիսում տորֆն ու անտառը, իսկ Կույբիշևի ու Սարատովի մարզերում՝ այրվող թերթաքարը։ Այստեղ նավթահանքի հետախուզումներ են կատարվում և արդեն այդ գործը հաջողությամբ է պսակվել։ Շատ արժեքավոր հանք է ֆոսֆորիտը, ապա՝ աղը Ստալինգրադի

մարզում, վորտեղ Բասկունչակ լճից ստացվում է ինքնանստած աղ (ԱՍՀՄ աղի հանույթի 1/4 մասը)։

Գյուղատնտեսության զարգացման համար պայմանները բարենպաստ են։ Հողը մեծ մասամբ սևահող է կամ շագանակագույն, վոր շատ արգավանդ են։ Այդտեղ հողագործության չարիքը բավական հաճախ կրկնվող յերաշտներն են, վորոնք նվազեցնում են բերքը, իսկ անցյալներում սովի եյին մատնում բնակչությանը։ Անբերրիության պատճառը վոչ միայն տեղումների նվազությունն է, այլ և հարավում փչող տաք քամիները, «չորակեզը», վորը Միջին Ասիայից փչելով՝ մեծ քանակությամբ տաքացած փոշի յե բերում։ Ներկայումս կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները յեռանդուն պայքար են մղում յերաշտի դեմ։ Մի կողմից ստեղծվում են հացաբույսերի յերաշտադիմացկուն տեսակներ և մշակվում են յերաշտից չվախեցող կուլտուրաներ (յեգիպտացորեն, արևածաղիկ), մյուս կողմից միջոցներ են ձեռք առնում՝ խոնավությունն ողում պահելու ուղղությամբ. դաշտերում ձյուն են հավաքում, ջրամբարներ ու խոշոր ջրանցքներ են կառուցում։ Նախագծվում է Վոլգայի վտակներից ու հենց Վոլգայից ջուր հանելով՝ հարյուր հազարավոր հեկտար տարածություններ վոռոգել։

Ցանվում են գլխավորապես հացաբույսեր. Զավոլժյեյում՝ հաճար և վարսակ, անտառատափաստանային և տափաստանային գոտում՝ ցորեն։ Բացի այդ ավելացվում են տեխնիկական մշակույթների ցանքերը. կենտրոնում և հարավում՝ արևածաղիկ, կանեփ, իսկ Մերձվոլգյան Գերմանացիների ԱՍԽՀ-ի տերիտորիայում՝ մախորկա-ծխախոտ և մանանեխ։ Բացի հողագործությունից, խիստ զարգացած են բանջարաբուծությունն ու այգեգործությունը։ Վոլգայի վարարուններում մշակվում են խաղող և բամբակ։ Ամբողջ Պովոլժյեյում զարգացած է նաև կենդանաբուծությունը։ Կույբիշևի մարզում աճեցնում են խոզեր ու թռչուններ, հարավում, Ստալինգրադի մարզի ձախափնյա մասում՝ վոչխարներ։ Հարավում փոխադրական միջոց է ծառայում ուղտը։

Գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց խոշոր զարգացում է նկատվում արդյունաբերության մեջ.

Թեև Պովոլժյեն բավարար քանակությամբ հանքային հա-

րստություններ ու եներգետիկ միջոցներ չունի, սակայն արդյունաբերության զարգացման համար ուրիշ տվյալներ ունի. այդ նրա աշխարհագրական բարենպաստ դիրքն է։ Վոլգայի ջրային ահագին ուղին անցնում է ամբողջ Պովոլժյեյի միջով։ Վերևից, Վոլգայի վրայով փայտանյութ է գալիս, ներքևից՝ նավթ է փոխադրվում։ Այդպիսով Ստալինգրադը, վոր գտնվում է տափաստանային գոտում, վաղուց արդեն դարձել է փայտամշակման արդյունաբերության կենտրոն։ Սոցիալիստական շինարարության ժամանակ հնարավոր դարձավ լիովին ոգտագործել աշխարհագրական դիրքի այդ առավելությունները։ Մերձվոլգյան խոշոր քաղաքներում զարգացել է արդյունաբերությունը. Ստալինգրադում կառուցվել է համամիութենական նշանակություն ունեցող տրակտորային գործարան, Կազանում զարգացած է տրանսպորտային արդյունաբերությունը, Կույբիշևում՝ մետաղամշակման արդյունաբերությունը, Սարատովում մեքենաշինական ու տեքստիլ արդյունաբերությունը։ Վոլգայի ափերին գտնվող նույն քաղաքներում են գտնվում սննդարդյունաբերության համեմատաբար խոշոր ձեռնարկությունները։

Պովոլժյեյում հատուկ տեղ է գրավում ձկնարդյունաբերությունը. Վոլգայի ստորին հոսանքում է գտնվում Խորհրդային Միության ամենախոշոր ձկնարդյունաբերական շրջանը, վորն առանձնապես ավելի յե ընդարձակվում, շնորհիվ այն բանի, վոր ձկնորս բնակչությունը կոլտնտեսություններում է միավորվել և վորսի ավելի կատարելագործված միջոցներ է գործադրում։ Ձկնարդյունաբերության կենտրոն՝ Աստրախանում կառուցված է նավաշինարան՝ ձկնորսական նավերի համար։ Կառուցված են կոնսերվի գործարաններ ու սառցարաններ։ Ձկան պահպանության և բազմացման համար Վոլգայի դելտայում ստեղծված են արգելավայրեր։ Պովոլժյեյի եներգետիկ բազան բերովի նավթն է, իսկ ապագայում լինելու յե Վոլգան, վոր կարող է ավելի եներգիա տալ, քան Դնեպրը։

Միության ընդհանուր տնտեսության մեջ Պովոլժյեն հատուկ տեղ է գրավում։ Նրա գյուղատնտեսությունը տալիս է հացի, մսի և այլ մթերքների ավելցուկ, արագորեն զարգացող արդյունաբերությունը հենց այժմ էլ բազմապիսի մեքենաներ է մատակարարում։

Սակայն Պովոլժյեի գլխավոր նշանակությունը նրա տրանզիտն է՝ առևտրական փոխանակությունը մեր յերկրի արևելքի ու արևմուտքի, հյուսիսի ու հարավի միջև։ Պովոլժյեի տնտեսության վերակառուցման բոլոր վիթխարի պլանները սերտորեն կապված են Վոլգայի հետ։ Դրանցից ամենամեծը «Մեծ Վոլգա» ստեղծելու պլանն է։ Վիթխարի նշանակություն են ունենալու Վոլգա-Դոն և Վոլգա-Կասպի նախագծվող ջրանցքները։ Վերջիններս շնորհիվ նավերն անմիջականորեն, առանց բեռնափոխելու Կասպից ծովից հասնելու յեն Աստրախան։

Քաղաքներն ու հաղորդակցության ճանապարհները.— Պովոլժյեում քաղաքային և գյուղական բնակչության համեմատությունն այնպես է, վոր քաղաքային բնակչության տոկոսն ամենից բարձր է այնտեղ, ուր բնակչությունն ավելի նոր է։ Ստալինգրադի մարզում միջին խտությունը 18 մարդ է, իսկ քաղաքային բնակչության տոկոսը՝ 29, ընդհակառակն, Թաթարական ԱԽՍՀ-ում և Կույբիշևի մարզում, ուր միջին խտությունը 38-ից բարձր է, քաղաքային բնակչության տոկոսը միայն 12—13 է։ Ամենաշատ բնակչություն ունեն խոշոր արդյունաբերական կենտրոնները՝ Ստալինգրադը (մոտ 400 հազ.)։ Այնուհետև Սարատովը (մոտ 350 հազ.), Կույբիշևը (260 հազ.), Կազանը (260 հազ.), Աստրախանը (250 հազ.)։ Մի շարք քաղաքներ էլ ունեն 50 — 100 հազ. բնակիչ, օրինակ Ուլյանովսկը (Վ. Ի. Լենինի ծննդավայրը)։

Քաղաքների մեծ մասը, այդ թվում և ամենախոշորները, գտնվում են Վոլգայի ափին, վորին և պարտական են նրանց աճումն ու զարգացումը։ Վոլգան Պովոլժյեի տրանսպորտի մեջ առաջնակարգ դեր է խաղում։ Արևմուտքից նրան մոտենում են ութ յերկաթուղագիծ, վորոնցից չորսն անցնում են Վոլգայի վրայով և գնում են ավելի հեռու, դեպի Ուրալ, Սիբիր և Միջին Ասիա։ Այդ ահագին գետը կտրում են 4 հսկա կամուրջներ, վորոնցից յերեքը կառուցվել են խորհրդային իշխանության օրով։ Հենց այդտեղ ուր յերկաթուղիները կտրում են Վոլգան, գտնվում են ամենակարևոր քաղաքները, վորոնք միաժամանակ Վոլգայի խոշորագույն նավահանգիստներն են. դրանք են՝ Կազանը՝ Մոսկվա-Սվերդլովսկ գծի վրա, Կույբիշևը՝ Մոսկվա-Պենզա-Կույբիշև գծի վրա, Կույբիշևից դենն այդ գիծը բաժանվում է

յերկու մասի, մի ճյուղը գնում է Ուֆա-Չելյաբինսկ-Սիբիր, մյուսը՝ Չկալովով դեպի Միջին Ասիա։ Այդ բոլոր յերկաթուղիները միութենական նշանակություն ունեցող խոշոր մագիստրալներ են։

Դեպի ստորին Պովոլժյե գալիս են 5 գիծ։ Նրանցից մեկը (Մոսկվա-Միչուրինսկ-Սարատով) Վոլգայից արևելք բաժանվում է յերկու մասի. մի ճյուղը գնում է Ուրալսկ, մյուսը՝ Աստրախան։ Ստորին Պովոլժյեի կարևորագույն յերկաթուղային հանգույցն է Ստալինգրադը, վորտեղ միանում է յերեք գիծ. մեկը Սմոլենսկից, մյուսը Խարկովից և յերրորդը՝ Նովոռոսիյսկից. վերջինը կապում է Վոլգան Սև ծովի հետ։

Վերոհիշյալ բոլոր յերկաթուղիները հիմնականում ընթանում են արևմուտքից արևելք, այդ ուղղությամբ էլ ամենաշատ յերթևեկությունն է լինում յերկու կողմից։ Սակայն Պովոլժյեի հյուսիսն ու հարավը էլ միացած են յերկաթուղագծով, վորը Կիրովից ընթանում է դեպի Գորկի-Պենզա-Կամիշին։

7. ՈՒՐԱԼ

Դիրքն ու ընդհանուր բնութագիրը.— Ուրալը միջանկյալ դիրք է գրավում. նրա արևմտյան կեսը գտնվում է Յեվրոպայում, իսկ արևելյան կեսը՝ Ասիայում։ Ուրալի միջին, առանցքային մասն են կազմում Ուրալյան լեռները. նրանց ջրբաժան լեռնաշղթայով էլ սահմանագծվում են այդ յերկու աշխարհամասերը։ Սակայն Ուրալը միջանկյալ մարզ է հանդիսանում վոչ միայն իր դիրքով, այլ և իր բնությամբ։ Նրա ընդարձակ տերիտորիայի վրա իրար մերձենում են հյուսիսի ու հարավի, արևելքի ու արևմուտքի լանդշաֆտները։ Հյուսիսն այդտեղ հանդես է գալիս յերկարատև ու դաժան ձմեռներով, Արևմտյան Սիբիրի նման սառնամանիքներով ու խոր ձյունով, տայգայի փշատերև ընդարձակ անտառներով։ Հարավն զգացվում է հարևան Ղազախստանի կիսանապատների տաք շնչով, ամառվա շոգով, փոշիով, չորացնող քամիներով և սառցապատող ձմեռային բուքերով, սակայն և արգավանդ սևահող տափաստաններով ու ազատ տարածություններով՝ արևելքում։

Ուրալը նախ միջին բարձրության հնագույն լեռների

երկիր է, ապա այդ լեռնային երկրին կից ալիքաձև բարձրությունների շրջան, որոնք իջնում են դեպի Արևելա-Եվրոպական հարթավայրը ու Արևմտա-Սիբիրական դաշտավայրը։ Ուրալը հանքային վիթխարի հարստությունների շրջան է, գլխավորապես երկաթի, գունավոր ու հազվագյուտ մետաղների, պղնձի, ոսկու, պլատինի, հազվագյուտ գունավոր ու թանկարժեք



Նկ. 39. Ուրալը

քարերի, կալիական և կերակրի աղի, ազբեստի, քարածխի, նավթի ու տորֆի շրջան։ Օգտակար հանածոների բազմազանությամբ ու հարստությամբ Ուրալն առաջին տեղերից մեկն է բռնում ամբողջ երկրագնդում։

Հանքային այդ հարստությունների բազայի վրա այնտեղ վաղուց իվեր ծավալված է լայն լեռնային և մետալուրգիական

արդյունաբերությունը, որը մինչև հեղափոխությունը հետամնաց էր, իսկ այժմ առաջադիմում է բուռն թափով։ Այժմ Ուրալը մետալուրգիական, մեքենաշինական և քիմիական նոր վիթխարի գործարանների շրջան է, մի շրջան, որտեղ ձուլվում է միլիոնավոր տոններով չուգուն, կառուցվում են տասնյակ հազարավոր վագոններ ու տրակտորներ։



Նկ. 40. Միջին և հարավային Ուրալի լեռնաշղթաների սխեման։

Այս երկրամասի մեծ մասը բռնում են Ուրալի լեռնաշղթաները։ Արևմուտքից Ուրալին միացնող բլրաշատ ու բարձրադիր հարթությունը կոչվում է Պրիուրալյե (Մերձուրալ)։ Արևելքում երկրամասը մտնում է Արևմտա-Սիբիրական դաշտավայրի սահմանները։ Այդ մասը կոչվում է Զաուրալյե (Անդրուրալ)։

Ուրալյան լեռներ կամ Ուրալ. — Ուրալը հնագարյան լեռնային երկիր է, որ ձգվում է հյուսիսից հարավ 2500 կմ

յերկարությամբ, սակայն բարձր չէ։ Նրա ամենաբարձր գագաթները 2000 մ էլ չեն հասնում, իսկ միջին բարձրությունը 500 մ չի անցնում։ Ուրալն իր ամբողջ յերկարությամբ բաղկացած է մի շարք լեռնաշղթաներից, վորոնցից մի քանիսը բարձր են, մյուսները ցածր, մի քանիսը կարճ, մյուսները յերկար։ Այս լեռնաշղթաները ձգված են իրար զուգահեռ և իրարից բաժանված են յերկարությամբ կամ լայնությամբ ընկած հովիտներով, վորոնք առաջացել են գետերի հոսանքներում։



Նկ. 41. Մի տեսարան Միջին Ուրալում։

Ուրալյան լեռները ծալքավոր ծագում ունեն։ Ծալքերը փշրվել են հաճախակի ու բազմաթիվ իջվածքների հետևանքով։ Առաջացած ճեղքվածքներից ժայթքել են հալած ապառները, վորոնք, գլխավորապես արևելքում ծածկել են անագին տարածություններ։ Այդ պատճառով էլ Ուրալի արևելյան լանջերը հանքերով ավելի հարուստ են, քան արևմտյանը։

Վորպես հնագարյան լեռնային յերկիր՝ Ուրալը խիստ քայքայման է յենթարկվել, վորով և բացատրվում է նրա չնչին բարձրությունը։ Բացի հոսող ջրերից, վորոնք այժմ էլ շարունակում են իրենց աշխատանքը, քայքայմանը մասնակցել է ծովը, վորը մի ժամանակ արևելքից հասնելիս է յեղել մինչև Ուրալ. նաև սառցադաշտը, վորը յեկել է հյուսիս-արևմուտքից, ինչպես նաև հողմահարումը։ Յենթադրում են, վոր անցյալում Ուրալն առնվազն 2000 մ ավելի բարձր է յեղել։

Ուրալի ամբողջ սիստեմը բաժանվում է 3 մասի. Հյուսիսային Ուրալ՝ մինչև հ. լ. 61°, Միջին Ուրալ՝ հ. լ. 61 աստիճանից մինչև 55° և Հարավային Ուրալ՝ մինչև հ. լ. 51°, կամ մինչև Ուրալ գետը։ Ուրալ գետից դեպի հարավ գտնվում են Մուգոջարի լեռները, վորոնք հանդիսանում են Ուրալի շարունակությունը, սակայն ավելի ցածր են (650 մ)։

Հյուսիսային Ուրալի միայն մի փոքրիկ մասն է մտնում այս շրջանի մեջ, իսկ Միջինն ու Հարավայինը ամբողջությամբ։

Հյուսիսային Ուրալն այս շրջանների սահմանում բարձր չի և կազմված է չորս զուգահեռ լեռնաշղթաներից։

Միջին Ուրալը բաղկացած է վոչ թե չորս, այլ հինգ լեռնաշղթաներից, վորոնք ավելի շատ են քայքայված ու կտրտված, քան Հյուսիսայինը։ Միջին Ուրալն իր սկզբնական մասում էլ բարձր չէ, բայց նրա առանձին գագաթները հասնում են զգալի բարձրության (Դենեժկին կամենը՝ 1535 մ, Կոնժակովի կամենը, վոր Միջին Ուրալի ամենաբարձր կետն է՝ 1556 մ)։

Յեվ Հյուսիսային և Միջին Ուրալները համեմատաբար լայն չեն՝ 50-ից մինչև 80 կմ։ Բոլորովին այլ բնույթ ունի Հարավային Ուրալը. այդ մի ամբողջ շարք լեռնաշղթաներ են, վորոնք ձգվում են գլխավորապես դեպի հարավ ու դեպի հարավ-արևմուտք և իրարից բաժանվում են խորունկ գետահովիտներով։ Հարավային Ուրալի լայնությունը հասնում է 150 կմ։ Այստեղ առանձին լեռնաշղթաներ շատ ավելի յերկար են և բարձր, քան Միջին Ուրալում, իսկ գագաթներ՝ ամբողջ Ուրալի բարձրագագաթներից են՝ Յաման-Տաու (1639 մ), Իրեմել (1600 մ)։

Հարավային Ուրալում շատ կան կրաքարային տեսակներ կարստային գոյացումներով՝ կորչող գետերով, քարանձավներով, խոռոչներով ու ճեղքերով։

Արևմուտքում Ուրալի լեռնաշղթաներն աստիճանաբար փոխվում են բլուրների ու կազմում Պրեուրալյեն, արևելքում ուղղորդ իջնում են դեպի Զաուրալյե։

Ուրալյան լեռները բարձր չեն, նրանց գծագրությունը մեծ մասամբ մեղմ է։ Վերևից դիտելիս յերևում է գետերի լայն հովիտը, անտառապատ բլուրները, իսկ դրանից դենը կապուտակ լեռները՝ հազիվ նկատելի առանձին տատամնավոր գագաթներով։ Մոտ 800 մ բարձրության վրա ծառաբույսերը վերջանում են՝ շնորհիվ կլիմայի խստության և քարքարոտ, անբերրի հողերի։ Գագաթները պատած են գունավոր կամ գորշագույն քարաքոսով։ Բուսականությունը հիշեցնում է Հյուսիսի քարքարոտ տունդրաները։ Գագաթներից բացվում են հեռավոր տեսարաններ, անտառապատ շղթաներ, վորոնք մերթ սև են, մերթ կանաչ և ալիքաձև տարածվում են դեպի բոլոր կողմերը։ Ուրալի գլխավոր գեղեցկությունը նրա բնության վայրիությունն է և նախնադարյան վիճակը, վորին տեղ-տեղ դեռ քիչ է կպել մարդու ձեռքը, նրա խոշոր անտառներն են, լեռնային մարգագետինները, վորտեղ խոտը մինչև մարդու գոտին է հասնում, բազմաթիվ հոսող ջրերն են, վորոնք գեղատեսիլ գետեր ու գետակներ են կազմում։

Օգտակար հանածոները.— Միության մյուս մարզերի մեջ Ուրալն աչքի է ընկնում իր հանքային հարստությամբ և այդ հանքերի բազմազանությամբ։ Դրանցից ամենագլխավորը յերկաթահանքն է։ Ամենահարուստ հանքավայրերը գտնվում են Հարավային և Միջին Ուրալում, գլխավորապես արևելյան մասում։ Այստեղ ամբողջ լեռներ կան՝ Բլագոդատը և Վիսոկայան Հյուս. Ուրալում, Մագնիտնայան Հար. Ուրալում, բաղկացած մագնիտային յերկաթահանքից, վորի մեջ 60%-ից ավելի յերկաթ կա։ Յերկաթահանքի հետ հանդիպում են ուրիշ մետաղներ ևս՝ մանգան, նիկել, վոլֆրամ և այլն, վորոնք յերկաթին խառնվելով նրան առանձին հատկություններ են տալիս։ Ապա պետք է նշել պղնձահանքերը, վոր հանդիպում են Ուրալի և՛ արևմտյան, և՛ արևելյան լանջերում։ Այստեղ, վորպես պղնձահանքի խառնուրդ, կա ցինկ, կապար, արծաթ և նույնիսկ վոսկի։ Պղնձահանքերի տեսակների մեջ այստեղ կա նաև մալախիտ, վոր հիանալի նյութ է իրեր արտադրելու համար։ Վոսկին ու պլատինն արդյունահանվում են գլխավորապես ավազուտներում, ավելի քիչ չափով նաև պինդ ապառների մեջ։ Պետք է հիշատակել նաև բոքսիտը, ազբեստը և քարաղի ու կալիական աղի հսկայական հանքավայրեր Սոլիկամսկի մոտ, վորոնք քիմիական արդյունաբերության հիմքն են հանդիսանում։ Հարավում, Իլեցկայա Զաշչիտայի մոտ գտնվում են քարաղի խոշոր հանքավայրեր։ Ուրալն առանձնապես հարուստ է գունավոր քարերով,

վորոնց մեջ կան թանգարժեքները (զմրուխտ, վոսկեբյուրեղ) և կիսաթանգարժեք (տոպազ, ամեթիստ և այլն)։

Քարածուխ հանդիպում է ինչպես արևմտյան լանջերում (Կիզել), այնպես էլ արևելյան լանջերում (Յեգորշինո, Չելյաբինսկ)։ Արևելյան լանջերի հանքավայրերը կազմված են գորշ ածուխից, վոր մետալուրգիայի համար պիտանի չէ։ Վերջերս նավթ է հայտնաբերվել և՛ հյուսիսում (Չուսովսկիյե գորոդկի), և՛ հարավում (Իշիմբայեվո)։ Մետաղի հանածոները գտնվում են հենց Ուրալի լեռնաշղթաներում, գլխավորապես Միջին Ուրալում, վորը դրա հիման վրա էլ կոչվում է նաև Հանքային։ Նավթն ու աղը նախալեռնային գոտումն են։

Զաուրալյե յեվ Պրիուրալյե.— Զաուրալյեն (Անդրուրալ) հանդիսանում է մի ցածրադիր հարթավայր, Արևմտա-Սիբիրական դաշտավայրի մի մասը։ Այդ մի հարթ ու տափարակ դաշտավայր է, վոր մի ժամանակ յեղել է ծովի հատակ, ծովը վողողելիս է յեղել Ուրալի արևելյան լանջերը, դրանով էլ բացատրվում է այստեղ թեք լանջերից կտրուկ կերպով հարթավայրին անցնելը։

Պրիուրալյեն մի բլրաշատ հարթավայր է, վորի արևմտյան մասն ավելի ցածր է, իսկ դեպի Ուրալի լեռները գնալով ավելի ու ավելի բարձրանում է։ Կամա և Բելայա գետերից արևելք արդեն իսկական սարահարթ է դառնում, կոչվում է Ուրալի բարձրավանդակ, վորը տեղ-տեղ 300-400 մ բարձրության է հասնում։ Նրա մակերևույթը կտրված է լայն գետահովիտներով ու ձորերով։ Պրիուրալյեյի հարավային մասը կոչվում է Օբշչի Սըրտ։ Նա ամբողջապես բաղկացած է հնադարյան ծալքերից՝ Ուրալի ճյուղավորություններից, վորոնք այնքան են քայքայվել, վոր ծալքավորությունը նկատվում է միայն այնտեղ, ուր գետերը խոր կերպով կտրտել են յերկիրը։

Ուրալյան յերկրում շատ խոշոր գետեր կան։ Նրանցից միայն Պրիուրալյեյի գլխավոր գետ Կաման է, վոր Ուրալյան լեռներում չի սկիզբ առնում։ Մյուս գետերը՝ Կամայի ձախ վտակներ Չուսովայան, Բելայան և Ուֆան, Ուրալը՝ հարավում, Պեչորան հյուսիսում, Տոբոլի բազմաթիվ վտակներն արևելքում— բոլորն էլ սկիզբ են առնում Ուրալից։ Նրանք արագընթաց գետեր են, ուստի իրենց վերին հոսանքներում նավարկելի չեն

միայն հորդացման ժամանակ։ Արևմտյան լանջերի գետերն ավելի ջրառատ են։ Դրանք իրենց միջին հոսանքում հոսում են պինդ ապառների միջով, այդ պատճառով էլ նրանց ափերը բարձր, համարյա ուղղորդ են։

Զաուրալյեն հարուստ է լճերով։ Նրանցից մի քանիսը, վորոնք գտնվում են Ուրալյան լեռների ստորոտներում, մաքուր են, խոր ու անուշ ջրով, հաճախ հոսող, վոչ սակավ դեպքերում ուղղորդ ափերով, շատ հարուստ են ձկներով։ Մյուսները, վորոնք ավելի հեռու տափաստանում են գտնվում, ծանծաղ են, տափակ ափերով, չհոսող և յերբեմն աղահամ ջուր ունեն։



Նկ. 42. Մի տեսարան Ոբշչի Սըրտից

Կամա.—Շրջանի խոշորագույն գետ Կաման ակիզբ է առնում նրա սահմաններից դուրս՝ հարևան Կիրովի մարզում և վերջանում է նույնպես հարևան Թաթարական ԱՍՍՀ, վորտեղ թափվում է Վոլգայի մեջ։ Նրա ձախ վտակներ՝ Չուսովայան ու Բելայան և աջ վտակ Վյատկան մեծ քանակությամբ ջուր են բերում, ուստի Կամայի լայնությունը հասնում է մինչև 1 կմ, ունենալով 6—20 մ խորություն։ Ծանծաղուտներ համարյա չունի։ Արագահոս է, վորովհետև միջին անկումը յերկու անգամ ավելի յե, քան Վոլգայինը։ Իր ջրառատությամբ Կաման Միության Յեվրոպական մասի նավարկելի լավագույն գետն է։ Մեծ նավերն այժմ Կամայով գնում են մինչև Պերմ։

Վոլգայի հետ համեմատած՝ Կաման ավելի մռայլ ու ավելի ամայի գետ է։ Նրա ափերին ավելի քիչ կենդանություն է

յերևում, վորովհետև առափնյա գյուղերը թաքնված են ձորակների ու գոգերի մեջ։

Կլիման յեվ բուսականությունը.—ԽՍՀՄ ամբողջ Յեվրոպական մասում Ուրալի կլիման ամենից շատ է ցամաքային։ Ձմեռը խիստ է ու յերկարատև (հյուսիսում 6 ամիս, հարավում՝ 5)։ Հունվարի միջին ջերմաստիճանը Պրիուրալյեյի մեծ մասում —15° և —16° է, իսկ Զաուրալյեյում նույնիսկ —18°, այսինքն այնքան, վորքան ստորին Պեչորայում և Նոր Յերկ-



Նկ. 43. Չուսովայա գետի մոտ

րում։ Ձգված Ուրալն ըստ աշխարհագրական լայնության յերկայնաձիգ է (1300 կմ), ձմեռները թե հյուսիսում, թե հարավում միատեսակ խիստ են լինում (միայն միջին մասում, վորտեղ արևմտյան քամիներ են հասնում, մի քիչ ավելի մեղմ ձմեռ է լինում)։ Ամբողջ շրջանում մինչև 40° սառնամանիքներ են լինում, իսկ հյուսիս-արևելքում՝ նույնիսկ 52°։ Սակայն այդտեղ, ինչպես և Սիբիրում, նման խիստ ձմեռները համեմատաբար հեշտ տանելի յեն, վորովհետև ուժեղ սառնամանիքների ժամանակ ամենևին քամի չի լինում։ Միայն հարավում՝ Օրենբուրգի տափաստաններում ձմռանը հաճախ փոթորիկներ են լինում, վորոնք ձյունախառն ուժեղ բուքեր են առաջացնում։

Ուրալում ամառն ամենուրեք շոգ է. նույնիսկ հյուսիսում՝ հուլիսի միջին ջերմաստիճանը +18° է, իսկ հարավում՝ +22° ավելի (այսինքն այնքան, վորքան Ուկրաինայի հարավումն է)։ Ամռանը շրջանի հարավային մասում հաճախ փչում է հարավ-արևելյան չոր քամին, վորը յերաշտ է առաջացնում և յերբեմն անուղղելի վնասներ պատճառում հացաբույսերին։ Տեղումների քանակն ավելի պակաս է, քան կենտրոնի մարզերում, բացի Միջին Ուրալից, ամենից քիչ տեղումները լինում են հարավ-արևելքում, վորտեղ զգացվում է Միջին Ասիայի չոր կլիմայի ազդեցությունը։



Նկ. 44. Չելյաբինսկի և Սվերդլովսկի միջև Անդրուրալյան լճերի քարտեզ։

Ուրալն ըստ բուսականության բաժանվում է յերկու մասի — հյուսիսային՝ անտառային, որն ունի վոչ սևահող պոդզոլային հող, և հարավային՝ տափաստանային, որը սևահող ունի և առաջին մասից բաժանված է անտառատափաստանի մի նեղ շերտով։ Այդտեղ անտառները շատ կան։ Համատարած անտառները, վորոնք ընդհատվում են միայն վառոգվող մարգագետիններով ու վարելահողերով, բռնում են յերկրի ամբողջ հյուսիսային մասը, իսկ Ուրալյան լեռներով ու նախալեռներով տարածվում են հեռու դեպի հարավ։ Միջին մասում փշատերև խիտ անտառներ են՝ բաղկացած յեղևնուց, սպիտակ յեղևնուց և խիժաճեփուց սոճու խառնուրդով, իսկ ծայր հյուսիսում՝ նաև յեղևնու խառնուրդով։

Միջին Ուրալում անտառները զգալի չափով կտրվում են, և փշատերև անտառներին փոխարինում են կեչու և բարդու անտառները։ Հարավ-արևմուտքում՝ Պրեուրալյեյում փշատերև ծառերին խառնվում են լայնատերևները՝ լորի, կաղնի, թխկի, կնձնենի, իսկ անտառատափաստանային մասում բոլոր անտառները բաղկացած են բացառապես սաղարթավոր ծառերից։ Ուրալյան անտառները դեռևս հարուստ են ամեն տեսակի գազաններով (իշայծյամ, հյուսիսային յեղջերու, զանազան աղվամազ գազաններ) և թռչուններով (ցախաքլոր, խլահավ, սալամբ)։

Ուրալի հարավային մասը դեռ մինչև վերջերս փետրախոտով ծածկված տափաստան էր, տեղ-տեղ ցրված աղուտներով ու լճերով, վորոնց մեջ բուն էյին դրել բազմաթիվ տափաստանային ու ջրային կենդանիները։ Դեռ այժմ էլ հարավում տեղ-տեղ մնացել են խոպան տափաստաններ։ Ուրալյան լեռներից դեպի արևելք յերկիրը նման է Սիբիրին. աղուտների ու աղի լճերի թիվը պակասում է և տափաստանում ամենուրեք հանդիպում են մանր անտառակներ։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը։ — Ուրալի բնակչությունը նոր է։ Բնակչության միջին խտությամբ նա Միության Յեվրոպական մասի մարզերի մեջ նախավերջին տեղն է բռնում և գերազանցում է միայն Հյուսիսին։ Ուրալի հյուսիսային մասն ավելի նոսր բնակչություն ունի, քան հարավայինը։ Բնակչության նոսրությունը բացատրվում է նրանով, վոր յերկրի մեծ մասը բռնում են լեռները և այնքան էլ պիտանի չեն հողագործության համար, իսկ հարավի տափաստաններում մարդիկ ավելի ուշ են սկսել բնակություն հաստատել։ Չնայած դրան, այժմ այդտեղ բնակչությունն ավելի խիտ է, քան հյուսիսում։

Ուրալի առաջին բնակիչներն այժմ կազմում են ամբողջ բնակչության մոտ $^1/_4$ մասը։ Դրանցից ամենաբազմամարդն են Բաշկիրները. նրանց թիվը հասնում է մոտ մեկ միլիոնի, թվով ավելի քիչ են թաթարները, ուդմուրդները, և պերմյակները, վոր ցեղակից են կոմիներին։ Պերմյակներն ապրում են յերկրամասի հյուսիս-արևմուտքում։ Մնացած բնակչությունը բաղկացած է ռուսներից՝ ուկրաինացիների աննշան խառնուրդով։ Ուրալի բնակչության ընդհանուր թիվն այժմ կազմում է մոտ 11,5 միլիոն։

Վարչական տեսակետից Ուրալը բաժանվում է չորս մարզի և երկու ավտոնոմ հանրապետությունների։ Մարզերն են՝ Սվերդլովսկի (հյուսիսում) Սվերդլովսկ կենտրոնով, Պերմի (արևմուտքում) Պերմ կենտրոնով, Չելյաբինսկի (արևելքում) Չելյաբինսկ կենտրոնով և Չկալովի (հարավում) Չկալով կենտրոնով։ Վերջին երեք մարզերը երեք կողմից շրջապատում են Բաշկիրական ավտոնոմ հանրապետությունը, որի կենտրոնն է Ուֆան։ Մյուս ավտոնոմ հանրապետությունն Ուդմուրդականն է (Իժևսկ կենտրոնով), որ գտնվում է արևմուտքում, Սվերդլովսկի մարզին սահմանակից։ Տերիտորիայի մեծությամբ և բնակչության թվով Սվերդլովսկի մարզն առաջին տեղն է բռնում։

Տնտեսությունը.—Ուրալը ՍՍՀՄ Եվրոպական մասի ամենահարուստ մարզերից մեկն է։ «Ուրալ» բառի հետ ամենից առաջ կապված է հանքի, գործարանների, չուգունի, երկաթի, զանազան հանքային հարստությունների հասկացողությունը։ Ներկայումս Ուրալի լեռնային և մետալուրգիական արդյունաբերությունն արմատական վերակառուցման է ենթարկվել։ Կառուցվել են մետալուրգիական և մեքենաշինական մի շարք վիթխարի գործարաններ՝ Մագնիտոգորսկի, Նիժնի-Տագիլի, Ուրալի (Սվերդլովսկում) գործարանները։ Վերակառուցվել և ընդարձակվել են Զլատոուստի, Բելորեցկի և այլ հին գործարանները։ Հենց միայն Մագնիտոգորսկի գործարանն այժմ մեկ ու կես անգամ ավելի շատ է չուգուն արտադրում, քան նախապատերազմյան շրջանում տալիս էին Ուրալի բոլոր գործարանները։ Ստեղծվել ու կառուցվում են մի շարք գործարաններ՝ գունավոր մետալուրգիայի, մեքենաշինական, վագոնաշինական (Նիժնի-Տագիլում), շոգեքարշի (Օրսկում), տրակտորի (Չելյաբինսկում), նավաշինական (Պերմում) և այլն։

Բացի մետալուրգիայից և նրա հետ կապված մետաղամշակման արդյունաբերությունից, այդ երկրամասում ստեղծվել են բոլորովին նոր արդյունաբերական ճյուղեր՝ Բերեզնիկի քիմիական կոմբինատը, որը վերամշակում է Սոլիկամսկի կալիական աղը, ցելյուլոզ-թղթի կոմբինատը Կրասնոկամսկում և այլն։ Արդյունաբերության համար էներգետիկ միջոց են հանդիսանում բացի տեղական քարածխահանքերից (Կիզելն արևմուտքում, Եգորշինոն արևելքում) և գորշ ածուխից (Չելյաբինսկ), նաև ներմուծվող քարածուխը։ Այդ քարածուխը բերվում է Կուզբասից՝ Արևմտյան Սիբիրում և Կարագանդայից՝ Ղազախստանում։

Նավթ արդյունահանվում է հյուսիսում՝ Չուսովսկիյե գորոդկիյում և հարավում՝ Իշիմբաևոյում։ Բացի այդ, հարավից՝ Գուրյեվից դեպի Օրսկ անց է կացված նավթամուղ, որով երկրամաս տանում է Եմբայի նավթը։

Արդյունաբերության հետ համեմատած՝ գյուղատնտեսությունը բռնում է երկրորդ պլանը։ Գյուղատնտեսությունը զարգացած է գլխավորապես Չելյաբինսկի մարզում և Բաշկիրական ԱՍՍՀ-ում։ Չելյաբինսկի մարզում գերակշռում է հացաբույսերի մշակույթը, Բաշկիրիայում, բացի դրանից, նաև վարող տեխնիկական մշակույթները (վուշ, կանեփ, արևածաղիկ)։ Չկալովի մարզում, որը խիստ ու սակավաձյուն ձմեռ է ունենում և շոգ ամառ, մշակում են գարնանացան ցորեն և բանջարեղեն։ Սվերդլովի մարզում, բացառությամբ նրա հարավ-արևմտյան մասի, կլիմայական պայմանները դժվարացնում են հողագործությունը։ Մեծ նշանակություն ունի անասնապահությունը, գլխավորապես Չկալովի չորային մարզում. պահում են գլխավորապես ոչխար և ձի։ Վերջապես ծաղիկներով հարուստ անտառներն ու մարգագետինները նպաստում են մեղվաբուծության զարգացմանը, որն այստեղ ավելի շատ է տարածված, քան Միության որևէ այլ մասում։

Միության ընդհանուր տնտեսության մեջ Ուրալը բռնելու յե ամենաառաջնակարգ տեղերից մեկը։ Նրա հանքային հսկայական ու բազմապիսի հարստությունները Կուզբասի և Կարագանդայի քարածխի հետ միացած, այդ մարզը դարձնելու յեն երկրի խոշորագույն մետալուրգիական կենտրոնը։

Քաղաքները ու հաղորդակցության ուղիները.—Քաղաքային ու գյուղական բնակչության տոկոսային հարաբերությունն Ուրալի զանազան մարզերում տարբեր է։ Քաղաքային բնակչության տոկոսն առանձնապես բարձր է այնտեղ, ուր շատ է զարգացած արդյունաբերությունը. այսպես, օրինակ՝ Սվերդլովի մարզն իր 43% քաղաքային բնակչությամբ տեղի յե տալիս միայն Մոսկվայի ու Լենինգրադի մարզերին։ Չելյաբին-

ըոկի մարզում քաղաքային բնակչության տոկոսը մի քիչ պակաս է (37)։ Իսկ Չկալովի մարզում և Բաշկիրիայում, որտեղ արդյունաբերությունը նոր է միայն սկսում զարգանալ, քաղաքային բնակչության տոկոսը 2 և 3 անգամ պակաս է։

Բացի քաղաքային բնակչության քանակից Ուրալի համար, որի արդյունաբերությունը զարգանում է բուռն թափով, բնորոշ է նաև նրա արդյունաբերական խոշոր կենտրոնների բնակչության աճման տեմպը։ Ուրալի ամենախոշոր քաղաք Սվերդլովսկը, հեղափոխությունից հետո իր բնակչության թիվը ավելացրել է ավելի քան 4 անգամ (այժմ 400 հազարից ավելի բնակիչ ունի)։ Արտակարգ չափով աճում է Մագնիտոգորսկի բնակչությունը, որն Ուրալի մետալուրգիայի ներկայիս խոշորագույն կենտրոնն է։ Ընդամենը մի քանի տարի առաջ, մինչև գործարանի կառուցումը, այստեղ տարածվում էր տափաստանը, իսկ այժմ դարձել է մի քաղաք՝ 250 հազար բնակչությամբ։ Արագ են աճում նաև մյուս արդյունաբերական կենտրոնները. Չելյաբինսկն ունի մոտ 300 հազ. բնակիչ, Պերմը և Ուֆան՝ մոտ 200 հազարական, Նիժնի Տագիլը, Զլատոուստը, Չկալովը և Իժևսկը՝ 150 հազարական։

Ուրալի շրջանն ինչպես արևմուտքում, այնպես էլ արևելքում կապված է բավականին խիտ գետերի ցանցով, սակայն լիովին նավարկելի գետեր քիչ կան։ Արևմուտքում նավարկելի են Կաման և ավելի քիչ չափով նրա Բելայա ու Չուսովայա վտակները։ Դրանք երկրամասը միացնում են Վոլգայի ու կենտրոնի հետ։ Արևելյան լանջերի գետերն ընթանում են դեպի Իրտիշ–Օբ և այդ նվազեցնում է նրանց նշանակությունը։ Երկրամասի համար ավելի մեծ նշանակություն ունեն երկաթուղիները։ Կենտրոնից հեռու լինելու պատճառով երկաթուղիներ ուշ են կառուցվել, այն էլ այդպիսի մի մեծ տերիտորիայի համար անբավարար չափով։ Ուրալը գտնվում է Միության Եվրոպական մասից դեպի Սիբիր տանող ճանապարհի վրա։ Այդ պատճառով էլ կարևորագույն երկաթուղիներն Ուրալը կտրում են արևմուտքից արևելք ուղղությամբ, իսկ երկրամասի առանձին շրջանների միջև ներքին հաղորդակցությանը ծառայում են տեղական երկաթուղիները, որոնք հանում են

հիմնական մագիստրալներին և մեծ մասամբ ձգված են հյուսիսից դեպի հարավ։

Հիմնական մագիստրալներն արևմուտքից գալիս են երեք գծով. մեկը Լենինգրադից տանում է Սվերդլովսկ, մյուսը Մոսկվայից՝ նույնպես Սվերդլովսկ և երրորդը՝ Մոսկվայից Չելյաբինսկ։ Հետո, դեպի Սիբիր գնում են արդեն երկու գիծ. մեկը Սվերդլովսկից, մյուսը Չելյաբինսկից։ Այդ երկուսն էլ Օմսկում միանում են որպես Սիբիրի մագիստրալ։

II· ԱՍԻԱԿԱՆ ՄԱՍ

8· ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—Արևմտյան Սիբիրը մի ընդարձակ տարածություն է բռնում Ուրալի և Ենիսեյ գետի միջև: Հյուսիսում, դեպի Կարայի ծովը նա դառնում է նեղ (մինչև 700 կմ), հարավում լայնանում է (մինչև 2000 կմ), հասնելով մինչև Ղազախական լեռնաշարքը և իր մեջ առնում է Ալտայի լեռնոտ յերկիրը: Այդ մեր Միության ամենախոշոր մասերից մեկն է. 7 անգամ մեծ է Ուկրաինայից:

Արևմտյան Սիբիրի ինը տասներորդ մասը դաշտավայր է, չափազանց հարթ ու միապաղաղ, բազմաթիվ խոշոր ու դանդաղահոս գետերով, վորոնք բոլորն էլ թափվում են Ոբ-Իրտիշ ահագին սիստեմի մեջ: Սա ֆիզիկո-աշխարհագրական մի մարզ է բազմապիսի բնությամբ. հյուսիսում ընդարձակ ճահճոտ տունդրաներ, միջին մասում ճահճացած, համարյա անանցանելի անտառներ և հարավում կիսատափաստանային ու տափաստանային չոր տարածություններ՝ արգավանդ հողով, վորտեղ ցրված են բազմաթիվ լճեր: Մի մարզ է, վորտեղ ձմեռը հյուսիսում ու հարավում շատ ավելի խիստ է ու յերկարատև, քան Ուրալից դեպի արևմուտք. գարունը ցուրտ է ու կարճատև և ամառը շոգ: Այդ մի մարզ է, վորտեղ հյուսիսում յեղջերուներով են ճանապարհորդում, հարավում՝ ուղտերով, վորտեղ կան խոշոր գետեր, վորոնք ամառն ուղիղ ճանապարհ են բացում դեպի օվկիանոս, վորտեղ կան բնական մեծ հարստություններ, անտառներ, ազվամազ կենդանիներ, յեղջերուներ, հարավում՝ արգավանդ սևահող:

Վորպես այդ ընդարձակ հարթադաշտավայրին ուղղակի հակադրություն՝ հարավ-արևելքում բարձրանում է Ալտայ

բարձր լեռնաշխարհն՝ իր Կուզնեցկի և Սալաիրյան լեռնաշղթաներով, վորոնք ունեն մինչև 4,5 կմ բարձրության գագաթներ, հավերժական ձյունով ու սառցադաշտերով, վորտեղից սկիզբ են առնում Արևմտյան Սիբիրի խոշորագույն գետերը,—տայգայով, վորոնք ծածկում են լեռների լանջերը,—տափաստաններով, վորոնք փռված են լայնարձակ հովիտներում ու նախալեռնային մասերում,—ալպիական փարթամ մարգագետիններով, ամայի կիրճերով, գեղեցիկ լճերով ու ջրվեժներով, լեռնային փոթորկահույզ գետերի ջրային ուժի մեծ պաշարներով և յերկրի ընդերքում թաքնված վիթխարի հարստություններով, ինչպիսիք են քարածուխը, յերկաթահանքը, վոսկին, պղինձը, արծաթը, ցինկը, թանկարժեք գունավոր քարերը:

Այդ յերկու մասերն էլ վորպես մի ամբողջություն կապվում են իրար հետ Ոբ-Իրտիշ գետերի ու նրանց բազմաթիվ վտակների ահագին գետային սիստեմով:

Արեվմտյան Սիբիրի դաշտավայրը.—Արևմտյան Սիբիրի դաշտավայրի բնորոշ գիծը նրա անսահման հարթությունն է, վորը հետևանք է նրա յերկրաբանական անցյալի: Այդ դաշտավայրը թեթևակի ընդհանուր թեքություն ունի դեպի հյուսիս և ավելի աննկատ թեքություն՝ դեպի Իրտիշ և Ոբ գետերի հովիտները: Այդ հովիտները տափարակ հարթություններ են, վոր հյուսիսում խիստ ճահճացած են: Հարավում, նույնպես տափարակ գոգերում կան բազմաթիվ մանր ու խոշոր լճեր (Չանի, Կուլունդինի և այլն): Գետերի ափերը տեղ-տեղ ջրի մակերևույթից բարձրանում են բավականին ուղղորդ. այդ ափերը յերբեմն, Իրտիշի ու Ոբի մոտ 40 մ բարձրության են հասնում: Տեղական բնակչությունը, վոր վարժվել է իր յերկրի հարթ մակերևույթին, այդպիսի ուղղորդ ափերը «սարեր» է անվանում:

Արևմտյան Սիբիրի հարավային մասում ռելյեֆի բնորոշ գիծն են հանդիսանում «գրիվները» («բաշերը» 5—6 մ), վոչ այնքան մեծ բարձրությունները, վորոնք ձգվում են հյուսիս-արևելյան ուղղությամբ և յերբեմն մի քանի կիլոմետր յերկարություն են ունենում: Նույնպես, բայց ավելի քիչ նկատելի և աննկատ ցրված բարձրություններ կան դաշտավայրի մյուս մասերում ևս: Ճահճացած վայրերում դրանք նման են փոքրիկ

կղզիների, վորոնք հյուսիսում տունդրային բլրային տեսք են տալիս։

Ընդհանուր առմամբ Արևմտյան Սիբիրի դաշտավայրի լանդշաֆտներն ըստ ռելյեֆի շատ միակերպ են։ Սակայն, վո-



Նկ. 45. Արևմտյան Սիբիր

րովհետև նա ձգվում է հ. լ. 50°-ից մինչև 73 աստիճանը, կամ հյուսիսից հարավ 2500 կմ, այդ պատճառով էլ նրա տարբեր մասերում բնական պայմանները բավականին տարբեր են իրարից։ Հյուսիսը, մինչև 65°-ը բռնված է տունդրայով, վորը մասամբ բլրաշատ է, բայց Կարայի ծովին մոտենալով բոլորովին հարթ է դառնում։ Այդտեղ ձմեռը 7 ամսից ավելի յե տևում, տարեկան միջին ջերմաստիճանը —12° և միայն հ. լ. 65° մոտ, վորտեղ տունդրան փոխվում է անտառատունդրայի, միջին ջերմաստիճանը բարձրանում է —7,6°-ի։

Տխուր ու միապաղաղ է այդ ցուրտ, անտառազուրկ հարթավայրը, վորը Օբի խորշի ափերի յերկարությամբ ձգված է հարյուրավոր կիլոմետրերով։ Յամալ թերակղզու հարավային մասում դեռ վերջերս էլ կային ծուռտիկ խեժափու անտառակներ։ Գուցե թերակղզու խորքերում դեռ մնացած լինեն այդ անտառակներից, սակայն առափնյա վայրերում այժմ վոչ մի ծառ չի յերևում։ Մինչև Նախոդկա խորշը կամ մի քիչ ավելի հյուսիս դեռ հանդիպում են արծաթավուն ուռենու, լաստենու, բևեռային կեչու թփուտներ, վորոնք լավագույն դեպքում բարձրանում են մարդու հասակի չափ։ Դեպի հյուսիս թփուտներն ավելի յեն մանրանում, փռվում գետնին, իսկ ավելի հեռու բոլորովին չքանում։

Տունդրայի մակերևույթն առաջացնում է մի շարք ալիքաձև բլուրներ, վորոնք իրար հաջորդում են ճահճոտ ցածրավայրերի հետ։ Բարձրանում ես ալիքի բաշը, առջևդ ընկած ցածրավայրի այն կողմը յերևում է նույնպիսի մի բաշ։ Նոր բան տեսնելու հույսով բարձրանում ես այդ յերկրորդ բաշը, բայց այնտեղ, ցածրավայրից հետո մի նոր բաշ է յերևում և այդպես անվերջ, մինչև հորիզոնի ծայրը։ Լավագույն դեպքում առջևդ ցածրավայրում կտեսնես մի փոքրիկ լիճ, վորի ափին աղիողորմ սուլում է կտցարը։ Իսկ բարձրությունների վրա յերբեմն կտեսնես աղվես վորսալու փայտե թակարդ, կամ ավելի բարձր թմբերին նեննական գերեզման, վոր նման է հագշեն փոքրիկ կուրգանի, վրան տնկած յեղջերույի յեղջյուրներ։

Լուռ է տունդրան։ Սագերը, բադերը, ճղճղան ճայերը չեն հեռանում խորշի ափերին յեղած ճահիճներից ու լճերից։ Միայն ձնահավերն են կչկչալով դուրս թռչում առափնյա թփուտներից։ Բայց բավական է դուք մտնեք իսկական տունդրայի մեջ, վոր լսեն այդ ձայները, բացի մոծակների անտանելի տզզոցից։ Այդ մոծակները հեռավոր հյուսիս են քշում յեղջերուներին ու նրանց տերերին. նրանք կարկուտի պես հարվածում են ձեր դեմքը ծածկող ցանցին։ Նրանք իրենց բազմությամբ կարծես ուզում են փոխարինել տունդրայի աղքատիկ կենդանական աշխարհին։

64°-ից դեպի հարավ տունդրային փոխարինում է անտառային գոտին կամ տայգան, վորը տարածվում է հարավից մինչև հյուսիսային լայնության 56°-ը։ Ձմեռն այնտեղ 6 ամսից

ավելի յե տևում, սակայն տարեկան միջին ջերմաստիճանը —4°-ից բարձրանում է մինչև +0,2°։ Արևմտյան Սիբիրի տայգայի համար բնորոշ է, որ խոշոր բուն ունեցող ծառերն աճում են գլխավորապես գետերի մոտ, իսկ ջրբաժանների տարածությունները մեծ մասամբ ճահճացած են և այդտեղի անտառներում ծառերը ցածրիկ են։ Բազմաթիվ գետակների ափերը որքան ակունքներին մոտիկ, այնքան ցածրադիր են և վերջապես այնքան են ցածրանում, որ դժվար է լինում գետը տարբերել շրջակայքի ճահճից. միայն մի կողմի վրա թեքված խոտերից կարելի յե գուշակել, որ այդտեղ գետ կա։ Այդ տեսակետից առանձնապես նշանավոր է Վասյուգանյեն՝ մի ընդարձակ ճահճոտ տարածություն, որ գտնվում է Օբի և Իրտիշի միջին հոսանքի ջրբաժանում։ Այդտեղ սկիզբ են առնում մի կողմից Օբի վտակները (Վասյուգան) մյուս կողմից՝ Իրտիշի վտակները (Օմ, Տարա)։

Ամբողջ հարթավայրն այդտեղ ծածկված է խուլ ու համարյա անանցանելի փշատերև անտառներով, կտրտված է մեծ ու փոքր գետակներով ու լճերով, որոնց մեջ կան տնուն ունեցողներ և չունեցողներ. իսկ հարավում համարյա ամբողջապես ծածկված է ճահիճներով, որոնք գարնանը, ջրերի հորդացման ժամանակ խառնվում են իրար և տեղական բնակչությունը դրան կոչում է «Վասյուգանի ծով»։ Նույնն է նաև ավելի հյուսիս գտնվող Նարիմի շրջանը։ Նարիմի շրջանում գետերի գարնանային հորդացումից, յեթե հորդացումն ուժեղ է, առաջանում է մի ընդարձակ ծով. շուրջն, ամենուրեք անծայրածիր ջուր է, որի միջից տեղ-տեղ դուրս են ցցվում թփուտներն ու անտառները և տեղ-տեղ յերևում են բաշերը (մանր բլուրներ)։ Ջրերի այդ խիստ հորդացումն առաջացնում է բազմաթիվ լճեր, հոսուն ջրեր, ժամանակավոր ու մշտական ճահիճներ, որոնցից մի քանիսի մեջ անտառներ են լինում, մյուսների մեջ՝ չեն լինում։ Նույնպիսի ճահճոտ տարածություններ են փռված նաև ավելի հեռու հյուսիսում, որոնք փոխվում են անտառատունդրայի։

56°-ից հարավ սկսվում է անտառատափաստանային գոտին, որը մոտ 54—53° վրա փոխվում է իսկական տափաստանի։ Գյուղատնտեսության տեսակետից այդ Արևմտյան Սիբիրի դաշտավայրի ամենակարևոր մասն է իր սևահողով։ Տարեկան միջին ջերմաստիճանն այդտեղ 0°-ից մի քիչ բարձր է. ձմեռը տևում է 5 ամսից ավելի. տեղումների քանակն ընդամենը 320 մմ է։ Պոդզոլային հողերում գտնվող բարաեններով խառն կեչու

մանր անտառակներին հաջորդում են սևահողային բաց տարածություններ, որոնք ծածկված են լեզվախոտով ու փետրախոտով, բարձմենակի և այլ խոտերի խառնուրդով։ Այդտեղ շատ կան աղուտներ։ Անտառից տափաստանին անցնելը Արևմտյան Սիբիրի դաշտավայրում ավելի խիստ է, քան Ուրալից դեպի արևմուտք։ Բացի այդ, Արևմտյան Սիբիրի անտառատափաստանում չկան լայնատերև ծառի տեսակներ (կաղնի, թեղկի)։ Ընդհանրապես, այդտեղ անտառատափաստանն ավելի աղքատ է ու խիստ, քան արևելա-յեվրոպականում։



Նկ. 46. Գետակ Արևմտյան Սիբիրի տայգայում։

Ավելի հարավ ընկած մաքուր տափաստանային գոտում տեղումների տարեկան քանակը նվազում է մինչև 190 մմ, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը բարձրանում է մինչև +1,9°-ի։ Ձմեռն այդտեղ 4 ամսից ավելի յե տևում։ Բուսականության մեջ գերակշռում են փետրախոտը, տափաստանային վարսակն ու բարձմենակը։ Տափարակ ցածրավայրերում ցրված են ծանծաղ և աղի լճեր, որոնց մի մասն ամառը չորանում է։

Թե՛ անտառատափաստանը, և՛ տափաստանն Արևմտյան Սիբիրում միանման կոչվում են տափաստաններ։ Իրտիշից դեպի արևմուտք ձգվում է Իշիմի տափաստանը, դեպի արևելք՝ Իրտիշի և Օբի միջև Բարաբինի տափաստանը, իսկ դեպի հարավ՝ Կուլունդինի տափաստանը։ Անտառատափաստանային շրջաններ հանդիպում են գլխավորապես Բարաբինի տափաստանում։

Դժվար է ասել Բարաբինում ինչն է ավելի շատ՝ անտառնե՞րը, թե անտառազուրկ հողամասերը։ Այդ երկրում ինչ ուղղությամբ էլ գնալու լինենք, մեզ կթվա, թե մտնում ենք կեչու համատարած անտառ, վորովհետև հորիզոնն ամենուրեք ծածկված է անտառներով։ Բայց հենց վոր անտառի ծայրին ես մոտենում, բաժանվում է առանձին-առանձին մանր անտառակների, վորոնք կղզիների նման ցրված են անտառազուրկ վայրերում և միայն հեռվից են միապաղաղ անտառ երևում։

Այդտեղ վայրը համարյա բոլորովին հորիզոնական է և ունի ափսեանման հազիվ նկատելի ցածրավայրեր, վորոնք ծածկված են կեչիներով, կամ աչքի ընկնող աղուտային բուսականությամբ։ Ջրեր, լանջեր վոչ մի տեղ չեն երևում, շարունակ սովորված ենք քայլել զարմանալի միապաղաղ մի երկրով, վորտեղ 10-20-30 կմ հեռավորության վրա երևում է շարունակ միևնույն լանդշաֆտը՝ կեչու ցածրիկ անտառակներ, աղուտ ցածրավայրեր ու տափաստանային դաշտեր։ Միայն կտրված կեչին, այրված կոճղը, երբեմն խոտատեղի վրա բուսած մալախոտի կամ դեղին ակացիայի թփերն են, վոր բազմազանություն են մտցնում։ Մեկ էլ տարբեր մեծության լճերն իրենց ցածրադիր ափերով, վոր աստիճանաբար անցնում են շրջապատի հարթավայրերը։ Այդ ամենի շուրջը տիրում է մոծակների, մժեղների ու բոռերի անընդհատ զզզոցը։

Շնորհիվ այն բանի, վոր Արևմտյան Սիբիրը հյուսիսից հարավ տարածվում է ընդարձակ տարածության վրա, նրա կլիման զանազան տեղերում տարբեր է։ Սակայն նա ունի շատ ընդհանուր գծեր. խիստ ցամաքային կլիմա, դաժան ձմեռն առանց ջերմ օրերի և ուժեղ սառնամանիքներ, վոր նույնիսկ հարավում 40°-ի յեն հասնում, կարճատև բայց հարավում շոգ ամառը, ցուրտ գարունը և տաք, թեև վոչ երկարատև աշունը։ Պարզ օրեր շատ են լինում։ Տափաստանային գոտում ուժեղ քամիներ են լինում, վորոնք յերբեմն փոխվում են փոշեխառն փոթորիկների։ Տարվա տաք ժամանակներին լինում են ցերեկվա ու գիշերվա ջերմության խիստ տատանումներ։

Լեռնային մաս.—Ալտայ, Կուզնեցկի Ալա-Տաու, Սալաիր, Կուզնեցկի գոգավորություն։ Արևմտյան Սիբիրի հարավարևելքում ընկած է Ալտայան լեռնաշխարհը կամ Ալտայը։ Հյուսիս-արևելքից նրան են միանում Կուզնեցկի Ալա-Տաու և Սալաիրյան լեռնաշղթաները, վորոնց միջև ընկած է Կուզնեցկի գոգավորությունը։

Արևմտյան Սիբիրի ամենակարևոր մասն է այդ։ Այդտեղ՝ Ալտայումն են սկիզբ առնում նրա ամենախոշոր գետերը, այդտեղ կան օգտակար հանածոների կարևորագույն հանքավայրեր։ Ալտայի նախալեռնային մասերը ծածկված են արգավանդ սևահողով։ Իր գագաթների բարձրությամբ և ձյունածածկ ու սառցապատ տարածություններով Ալտայը հետ է մնում Միջին Ասիայի և Կովկասի լեռնաշղթաներից, սակայն ավելի դժվարամատչելի յե՝ գլխավորապես իր ռելյեֆի առանձնահատկության պատճառով։ Դեպի Արևմտյան Սիբիրի դաշտավայրը Ալտայն իջնում է բարձր (մինչև 500 մ) և ուղղորդ իջվածքով։

Նկ. 47. Ալտայի լեռնաշղթաների սխեման։

Ալտայի ամենաբարձր լեռնաշղթաներն են՝ Կատունյանը և Չույսկին՝ վորտեղ մի շարք լեռնագագաթներ մինչև 3500—4600 մ բարձրության են հասնում (Բելուխան Կատունյան բելկերում*) 4620 մ)։ Նախկին սառցապատման հետքեր են հանդիպում բազմա-

*) Բելկի այստեղ կոչվում են ձյունածածկ լեռները։

թիվ գեղեցիկ լեռնային լճեր, վորոնք ցրված են առանձին-առանձին կամ խմբերով և ունեն մաքուր ջրեր:

Ալտայի համար բնորոշ են ընդարձակ, հարթ, բարձրադիր սարահարթեր («սըրտեր»), վորոնց վրա բարձրանում են կամ տափակ գագաթներ, կամ սուր ժայռոտ կատարներ, վորոնք արդի սառցակալման կենտրոնն են հանդիսանում: Հաճախ այդպիսի լեռնաշխարհները ճահճակալած են լինում: Լեռներից հոսող գետակները նրանց լանջերում փորել են նեղ ու խորունկ կիրճեր: Յերկայնակի հովիտները, վորոնք առաջացել են ճկվածքներով, ընդհակառակն, յերբեմն մի քանի կիլոմետր լայնություն են հասնում: Այդտեղ այդ հովիտները տափաստան են կոչվում:



Նկ. 48. Բելուխա լեռնագագաթը Կատունյան բելկերում: Աջ կողմը՝ սառցադաշտ:

Յերբեմն վտակների հուները գլխավոր հովիտն իջնելիս առաջացնում են խիստ թեք իջվածք, վորոնցից ջուրը թափվում է գեղատեսիլ ջրվեժով: Ձյան սահմանագիծն Ալտայում՝ արևմուտքում անցնում է 2500 մ բարձրությամբ, արևելքում և հարավ-արևելքում՝ Մոնղոլիայի անապատների մոտ՝ 3300 մ բարձրության վրա:

Կլիման յեվ բուսականությունը.—Ալտայի կլիման մի

քիչ տարբերվում է Արևմտյան Սիբիրի դաշտավայրի կլիմայից: Այդտեղ ձմեռն ավելի տաք է, իսկ ամառն՝ ավելի զով ու խոնավ: Տեղումներն ավելի շատ են լինում, գլխավորապես կենտրոնում և արևելքում (Կուզնեցկի Ալա-Տաույում մինչև 700 մմ): Լեռների լանջերը ծածկող անտառները բաղկացած են խեժաճեփից, սպիտակ յեղևնուց, յեղևնուց և բարտենու ու կեչու խառնուրդով: Կտրատելու և հրդեհների հետևանքով այդ անտառների սկզբնական տարածությունը զգալի չափով պակասել է: Այդ անտառներում փարթամ խոտ է բուսնում, վոր 3—4 մ բարձրության հասնելով՝ անտառը դժվար անցանելի յե դարձնում: Այդտեղ շատ կան նաև բազմապիսի թփուտներ:

Վիթխարի բարտիներն, այդտեղ իրենք իրենց թողնված, խաղաղ ապրում են իրենց կարճատև կյանքով, առաջին իսկ ուժեղ քամուց ծռվում, կոտրվում են, ընկնում գետնին, ծածկվում քարաքոսով ու մամուռով, աղտ խոտով, վոր առատորեն բուսնում է խոնավ հողում: Աշնանն այդ խոտը չորանում է և չհնձված պառկում, ծածկում է ծառերի կիսափտած բներն ու ճյուղերը: Այդ ամենի վրա աճում է ավելի փարթամ ու ավելի բարձր բուսականություն, վորը բաղկացած է լինում մարդու ուսին հասնող նեղատերև, բայց կանաչավուն ձարխոտից, խոշոր ծաղիկներով վիթխարի հովանոցածաղիկներից, վորոնք մարդու հասակից մեկ ու կես անգամ բարձր են լինում, վայրի մորենու, սև ու կարմիր հաղարջի թփերից և մեկ ու կես մետր բարձրությամբ յեղինջից: Այդպիսի բարձր խոտի միջով անցնելը շատ դժվար է: Թռչունների յերգը շատ քիչ է լսվում. միայն մենավոր կկվի ձայնն է լսվում հեռու տեղից:

Կավային հողերի անտառը բաղկացած է կեչի ծառերից, սպիտակ յեղևնու զգալի խառնուրդով: Յեղևնու սլացիկ ու մուգ ուրվագիծը շատ գեղեցիկ յերևում է կեչիների բաց կանաչավուն ֆոնի մեջ և հեռվից մշտադալար կիպարիսներ է հիշեցնում: Տեղ-տեղ պատահում են «յեղևնուտներ», այսինքն՝ միմիայն յեղևնիներից բաղկացած անտառներ և կամ յեղևնու և բարտենու խառնուրդից բաղկացած անտառներ:

Այս անտառներում հանդիպում է նաև լորի (Կուզնեցկի Ալա-Տաույում) և մի շարք ծառեր, վորոնք հատուկ են ավելի տաք յերկրների լայնատերև անտառներին: Այդ անտառները բարձրանում են լեռների գլուխը, վորտեղ իրենց տեղը զիջում են միայն խեժաճեփուն և յեղևնուն: Խեժաճեփին հասնում է մինչև անտառային բուսականության սահմանները, սակայն այդտեղ խիտ անտառներ չի կազմում, այլ նոսր անտառներ (ճեփենուտներ), վորոնք ընդհատվում են բացատներով և հյութալի մարգագետիններով:

Անտառների վերին սահմանն անցնում է 2000—2400 մ բարձրությունով. մինչև այդտեղ հասնում են միայն յեղևնին ու

խիժաձևերին, այն է, ամենավերջին սահմաններում խեժաձևերի կատարը չորանում է, իսկ ճյուղերին միակողմ կամ փռված ձև է ընդունում։ Անտառների սահմանից բարձր սկսվում են ալպիական լեռնային մարգագետինները, իսկ էլ ավելի բարձր՝ լեռնային տունդրան։

Ալտայը հարուստ է օգտակար հանածոներով, գլխավորապես բազմամետաղ հանքերով (արծաթ, կապար, ցինկ, յերբեմն՝ պղինձ)։ Հանքերի մեջ լինում են նաև ոսկի։ Կան նաև շատ գունավոր քարեր (հասպիս և այլն)։ Սալաիրի և Կուզնեցկի Ալա-Տաուի միջև գտնվում է Կուզնեցկի ավազանն իր քարածխի հսկայական հանքավայրերով, որոնք 6 անգամ ավելի յեն Դոնբասից։ Բացի սովորական քարածխից, այստեղ կա և այնպիսի քարածուխ, որը կարելի յե վերամշակելով հեղուկ վառելանյութ դարձնել։ Կուզնեցկի քարածուխը Արևմտյան Սիբիրի գլխավոր հարստությունն է։

Կուզնեցկի Ալա-Տաուում յերկաթահանքի զգալի պաշարներ կան՝ իսկ Սալաիրում՝ ցինկ։

Օբ-Իրտիշ. — Ալտայի ձյունն ու սառցադաշտերը շատ գետերի յեն ջուր տալիս։ Դրանցից ամենամեծն է Կատունը, որն սկիզբ է առնում Բելուխայի հարավային լանջից և հանդիսանում է Օբի գլխավոր ակունքը։ Օբն առաջանում է և իր այդ անունն ստանում է միայն այնտեղից հետո, որտեղ միանում են Կատունը և ավելի կարճ Բիյան, որը հոսում է Տելեցկոյե լճից։ Դրանք բոլորն էլ լեռնային գետեր են, արագահոս և ջրառատ։ Նրանց միջոցով Օբը ջուր է հավաքում ավելի շատ Ալտայի հյուսիս-արևելյան մասից։ Հարավ-Արևմտյան Ալտայի գետերը թափվում են Իրտիշի մեջ, դրանցից ամենախոշորը Բուխտարմանն է։

Օբը դուրս գալով հարթավայրը, դառնում է մի մեծ, նավարկելի գետ. Բառնաուլի մոտ նա 700 մ լայնություն ունի, Նովոսիբիրսկից ցած՝ 1 կմ ավելի, Նարիմի յերկրամասում մինչև 3 կմ։ Օբի հովիտը 30 կմ լայնության է հասնում, իսկ հունը կտրտվում է բազմաթիվ կղզիներով. ափերը բարձր չեն և տափարակ են։ Միջին հոսանքում Օբն անցնում է ճահճուտ հարթավայրով, աջ ու ձախ կողմերից ընդունելով բազմաթիվ վտակներ, դրանցից ամենանշանավորն են Տոմը և Չուլիմը՝ աջ կողմից։

Իրտիշի միանալուց հետո սկսվում է Օբի ստորին հոսանքը, որտեղ էլ նա մի շարք վտակներ է ընդունում իր մեջ։ Այստեղ Օբի խորությունը հասնում է 20—30 մ։ Ծովախորշը թափվելիս գետի խորությունը նվազում է, բայց լայնությունն ա-



Նկ. 49. Լիճ Ալտայում։

վելանում է և գլխավոր հունում հասնում է 5 կմ, իսկ կողմնակի հուներով ու հոսանքներով միասին մինչև 20 կմ։ Այստեղ գետի հոսանքը շատ դանդաղ է։ Ծովախորշի մուտքի մոտ, որտեղ գետը ծովն է թափվում, կան թմբեր (ծանծաղուտ), որոնք ծովային նավերի համար դժվարացնում են Օբ մտնելը։

Գետի ընթացքի դանդաղությամբ է բացատրվում նաև նրա ստորին հոսանքում, ձմեռվա ամիսներին նկատվող ջրի «սուժասպառման» յերևույթը. գետի ջուրն սկսում է կարմրել, տհաճ համ է ստանում և սկսում է պղպջակներ առաջացնել։ Այդպիսի ջրի մեջ ձուկն սկսում է մասսայորեն կոտորվել, կամ քաշվում է գետի վտակների վերին հոսանքը։ Այդ յերևույթի պատճառը ջրի մեջ թթվածնի պակասությունն է, որովհետև թթվածինը կլանում են քայքայվող օրգանական նյութերը։

Օբի խորշը Կարայի ծովի ծոցն է, վոր ունի 800 կմ յերկարություն, մոտ 60 կմ լայնություն, սառույցներից ազատ է լինում հուլիսի վերջերից մինչև հոկտեմբեր։ Արևելքից Օբի խորշին է միանում Տազի խորշը, վորը համարյա նույնքան լայնություն ունի և մի ժամանակ այդտեղ էր թափվում Յենիսեյը։

Իրտիշն Օբի չափ ջրառատ չէ։ Նա սկիզբ է առնում Մոնղոլական Ալտայի հարավ-արևմտյան լանջերից, Չինաստանի սահմաններում և Սև Իրտիշ (Կարա-Իրտիշ) անունով հոսում է 900 կմ յերկարությամբ մինչև Զայսան լիճը։ Վերին հոսանքում մինչև Սեմիպալատինսկ և այնուհետև միջին հոսանքում՝ մինչև Օմսկ նա ունի սահանքներ ու ավազակույտեր։ Ստորին հոսանքում ծանծաղուտներ ու ավազակույտեր չկան։ Ձախ ափը տափարակ է, իսկ աջը՝ բարձր, կազմված փխրուն ապարներից, այդ պատճառով էլ հաճախ փլվածքներ է տալիս։ Ստորին հոսանքում Իրտիշն իր մեջ է առնում իր ձախակողմյան ամենամեծ վտակ Իշիմը, վորը շատ յերկար է, և Տոբոլը վոր շատ ջրառատ է. Տոբոլի թափվելու տեղից Իրտիշի լայնությունը հասնում է 1 կմ, իսկ խորությունը՝ 9—20 մ։ Սա շատ լայն ու զորեղ գետ է, սակայն շատ դանդաղ հոսանքով, վորի ընթացքը մի ժամում 1 կմ քիչ ավելի յե։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.—Վարչական ու տնտեսական տեսակետից Արևմտյան Սիբիրը մի ամբողջականություն չի կազմում։

Արևմտյան Սիբիրի տերիտորիայում յերեք խոշոր վարչական միավոր կան. Օմսկի մարզը հյուսիս-արևմուտքում, Նովո-Սիբիրի մարզը և Ալտայի յերկրամասը հարավ-արևելքում։ Սակայն դրանք ամբողջ Արևմտյան Սիբիրը չեն ընդգրկում. արևելքում մի ընդարձակ շերտ Յենիսեյ գետի ամբողջ հոսանքի յերկարությամբ մտնում է Կրասնոյարսկի յերկրամասի մեջ, արևմուտքում Արևմտյան Սիբիրի սահմաններն են մտնում Սվերդլովսկի և Չելյաբինսկի մարզերը, հարավում՝ Ղազախական ԽՍՀ-ի հյուսիսային մասերը, վոր ընկած են Սեմիպալատինսկի ու Կուստանայի միջև, Իշիմ գետի հոսանքի ուղղությամբ։

Արևմտյան Սիբիրի ռայոնի ընդհանուր տարածության համարյա կեսը բռնում է Օմսկի մարզը, մեկ քառորդը՝ Նովո-

Սիբիրի մարզը և Ալտայի յերկրամասը, իսկ մնացածը բռնում են Կրասնոյարսկի յերկրամասը, Ղազախական ԽՍՀ-ն, Սվերդլովսկի ու Չելյաբինսկի մարզերը, վորոնք իրենց վարչական սահմաններով մտնում են Արևմտյան Սիբիրի ռայոնի մեջ։

Այդ լայնարձակ յերկրամասը ներկայումս էլ դեռ բավականին նոսր բնակչություն ունի։ Ամբողջ Արևմտյան Սիբիրում մոտ 10,5 միլիոն մարդ է ապրում։ Նովո-Սիբիրի մարզում և Ալտայի յերկրամասում բնակչությունը 3 անգամ ավելի յե, քան Օմսկի մարզում։ Միջին խտությունն է 1 □ կմ 3,2 մարդ, այսինքն՝ 2 և կես անգամ պակաս ԽՍՀՄ բնակչության միջին խտությունից։ Ամենից նոսր բնակչություն ունեն հյուսիսը և հյուսիս-արևելքը, ինչպես և Ալտայի ներքին մասերը։ Հյուսիսում կան տեղեր, ուր 5 □ կմ-ին 1 մարդ է ընկնում։ Ամենից խիտ բնակչություն ունեն միջին Ուրալին և Ալտային մոտիկ վայրերը, վորոնք հողագործության համար ավելի հարմար են։

Բնակչության գերակշռող մեծամասնությունը (92%-ից ավելին) ռուսներ են։

Արևմտյան Սիբիրի ամենահին բնակիչներն են խանտերը (օստյակները), մանսերը (վոգուլները), կոմի և նենեները։ Նրանք բոլորն էլ ապրում են հյուսիսում. նենները տունդրայում, խանտերը՝ ստորին Օբի ու նրա վտակների ափերին, մանսերը՝ Սոսվա գետի ափերին, կոմիները՝ առանձին խմբերով՝ Ուրալի մոտերքը։ Հարավում՝ Ալտայում ապրում են վոչ մեծ ցեղեր, վորոնք կրում են ալտայցի կամ օյրոթ ընդհանուր անունը։ Խորհրդային իշխանության օրոք այդ բոլոր ժողովուրդներն ստացան ազգային ավտոնոմիա և կուլտուրական զարգացման հնարավորություններ։ Մահացությունը նրանց մեջ պակասել է, ստեղծվել են դպրոցներ, բուժակայաններ, կուլտ-բազաներ։

Ամենաբազմամարդ ժողովուրդն է՝ թաթարական ժողովուրդ", վորը ցրված ապրում է Իրտիշի, Օբի ու նրանց վտակների միջին հոսանքներում և Ալտայում։ Նրանք ընդհանուր նմանություն ունեն Թաթարական ԱԽՍՀ-ում ապրող թաթարների հետ։ Հարավում, Ղազախստանին սահմանամերձ վայրերում ապրում են ղազախները։

Բացի այդ, այստեղ հանդիպում են նաև ուկրաինացիներ,

լեհեր, գերմանացիներ, էստոնացիներ և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ։

Տնտեսությունը.— *Դեռ մինչև վերջին ժամանակներս Արևմտյան Սիբիրը համարյա բացառապես հողագործական երկիր էր՝ զարգացած անասնապահությամբ։ Նրա գլխավոր արտադրանքը հացամթերքն էր (ցորեն) և յուղը, որն արտահանվում էր Ուրալից արևմուտք, ՍՍՀՄ Եվրոպական մասը, որտեղից ստացվում էին կտորեղեն և արդյունաբերական այլ ապրանքներ։ Վերջին տարիների ընթացքում Արևմտյան Սիբիրի տնտեսության մեջ շատ խոշոր առաջադիմություն է յեղել։ Տնտեսության ամենակարևոր ճյուղը դարձել է արդյունաբերությունը, գլխավորապես մետալուրգիական և քիմիական արդյունաբերությունը։ Արևմտյան Սիբիրի արդյունաբերության զարգացման հիմքն են հանդիսացել նրա էներգետիկ վիթխարի պաշարները, որոնց շատությամբ նա առաջին տեղն է գրավում ամբողջ Միության մեջ։ Այդ հարստությունների մեջ գլխավոր դերը պատկանում է Կուզբասի քարածխին, թեև ջրային էներգիայի պաշարներն էլ այստեղ շատ մեծ են։*

Կուզնեցկի ավազանը կամ Կուզբասը ՍՍՀՄ քարածխային ամենախոշոր ավազանն է։ Իր տարածությամբ նա հավասար է Դոնբասին, սակայն քարածխի պաշարի շատությամբ 6 անգամ գերազանցում է նրան։ Կուզբասի քարածխի որակն ավելի բարձր է, իսկ ածխաշերտերն ավելի հաստ են, որի շնորհիվ հանույթն ավելի դյուրին ու էժան է նստում։ Քարածխի այդ վիթխարի պաշարը ներկայումս օգտագործվում է գլխավորապես մետալուրգիական արդյունաբերության մեջ, որը բուռն թափով զարգանում է և՛ Արևմտյան Սիբիրում և՛ Ուրալում. վերջինը քիչ կոքսացող ածուխ ունի և այն ստանում է Կուզբասից։ Ստալինսկում *կառուցվել է մի նոր վիթխարի մետալուրգիական գործարան, որն աշխատում է մասամբ տեղական, մասամբ էլ Ուրալից (Մագնիտոգորսկից) բերված հանքով։ Այդ գործարանը տարեկան ավելի քան 1 միլիոն տոնն մետաղ է արտադրում։*

Բացի սև մետալուրգիայից, զարգանում է նաև գունավոր մետալուրգիան, որը վերամշակում է ցինկ ու կապար. դրա հանքն էլ մասամբ տեղական է, մասամբ ստացվում է Ղազախստանից։ Կոքսացող ածուխի տականքների բազայի վրա

զարգացել է քիմիական արդյունաբերությունը (Կեմերովո), *մանավանդ արհեստական պարարտանյութերի արտադրությունը։ Մետալուրգիայի հիման վրա զարգացել է մետաղամշակման արդյունաբերությունը. լեռնարդյունաբերական սարքավորման արտադրությունը* Նովոսիբիրսկում, *կառուցվող շոգեքարշային և վագոնաշինական գործարանները* Ստալինսկում։ *Արևմտյան Սիբիրի արդյունաբերության զարգացման թափը մինչև այժմ ՍՍՀՄ մյուս մարզերից ուժեղ է։*

Մեծ փոփոխությունների են ենթարկվել նաև գյուղատնտեսությունը։ Կոլեկտիվացման լայն ծավալումը, բազմաթիվ խոշոր խորհտնտեսություններ ստեղծելը հնարավոր դարձրին կատարելագործված գյուղատնտեսական մեքենաների և գործիքների գործադրությունը, որոնց արտադրության համար հատուկ գործարաններ են կառուցվել (Օմսկ)։ *Տարածվում են տեխնիկական մշակույթներ (վուշ, հարավում՝ շաքարի ճակնդեղ, արևածաղիկ), որ իր հերթին խթան է հանդիսանում սննդարդյունաբերության զարգացմանը (աղացներ, էլեվատորներ, ձեթի գործարաններ և այլն), ինչպես և տեքստիլ արդյունաբերության զարգացմանը։ Հողագործական գոտում ավելանում է ցանքի տարածությունը, մշակելի յեն դարձվում անտառատ հյուսիսի նորանոր տարածությունները, որտեղ դեռ վոչ հեռու անցյալում հողագործությունն ու բանջարաբուծությունն անհնարին էին համարվում։ Նույնիսկ բևեռային շրջագծի մոտ, ջերմոցներում, բանջարեղեն են մշակում։*

Այն միջոցին, երբ հարավում զարգանում են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, հյուսիսում ուժեղ թափով զարգանում է անտառային գործը։ Կառուցվել են փայտասղոցման ու փայտամշակման խոշոր գործարաններ (Տավդա)։ *Փայտեղենը փոխադրվում է դեպի Ուրալ և դեպի հարավ, Իրտիշով դեպի վեր՝ Օմսկ և Ղազախստան, որոնք փայտեղեն շատ չունեն։ Տնտեսության զարգացումը հասել է նույնիսկ բևեռային հյուսիսի հեռավոր անկյունները։ Ծավալվում են յեղջերվաբուծությունը, ձկնորսությունը, մորթեղենի հավաքումը, որոնց ընդունման համար հեռավոր հյուսիսում կետեր են հիմնված և տեղական բնակիչները հանձնած մորթեղենի դիմաց ստանում են իրենց անհրաժեշտ բոլոր ապրանքները։*

Այդ լայնածավալ տերիտորիայի վրա բնական պայմանների բազմազանությունն իր ազդեցությունն է թողել նաև տնտեսության վրա։ Այստեղ կա և նախնադարյան անասնապահություն և հողագործություն՝ բարձր մեքենայական տեխնիկայով, տրակտորներով ու կոմբայններով։ Հյուսիսում, հեռավոր տայգայում կորած վորսորդը կենդանիներ է վորսում իր ինքնաշեն թակարդներով, իսկ հարավում հարյուր հազարավոր բանվորներ յերկրի ընդերքից քարածուխ են արդյունահանում, կամ չուգուն ձուլում վիթխարի դոմնաներում՝ կիրառելով ամենակատարելագործված տեխնիկական սարքավորում ու միջոցներ։



Նկ. 50. Մարալ-յեղջերուների բուծարանն Ալտայում։

Խորհրդային Միության մարզերի մեջ Արևմտյան Սիբիրն ապագայում առաջնակարգ տեղերից մեկն է գրավելու։ Բնական հարստությունները՝ քարածխի, մետաղների, քիմիական հումքի և ջրային էներգիայի վիթխարի պաշարները, ինչպես և գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման հնարավորությունները հենց ներկայումս էլ նրան առաջին շարքերն են մղում։ Արևմտյան Սիբիրի նշանակությունն առանձ-

նապես բարձրանում է նրանով, վոր նա հարևան է Ուրալին։ Քարածխային Կուզբասը հանքաշատ Ուրալի հետ կազմում է մի միասնություն, այսպես կոչված՝ Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը, վորն իր արդյունաբերությամբ, մանավանդ ծանր ու մետաղամշակման արդյունաբերությամբ Միության մեջ գլխավոր տեղերից մեկն է գրավելու։

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.—Արդյունաբերության զարգացման շնորհիվ, Արևմտյան Սիբիրում վերջին տարիներս քաղաքային բնակչությունը խիստ աճել է։ Յուրաքանչյուր 100 բնակչից 20-ն ապրում է քաղաքներում։ Ստեղծվել են նոր արդյունաբերական կենտրոններ, գլխավորապես Կուզբասում։ Նովո-Սիբիրի մարզի կենտրոնը Նովոսիբիրսկն է, վորն ունի 350 հազարից ավելի բնակիչ. Ոմսկի մարզի կենտրոն Ոմսկն ունի 250 հազարից ավելի բնակիչ, Կուզբասում Ստալինսկն ունի 200 հազարից ավելի բնակիչ, Պրոկոպյևսկն ու Կեմերովոն՝ ածխարդյունաբերության այդ կենտրոնները՝ 100 հազարական բնակիչ։

Քաղաքներից մի քանիսն իրենց աճումով պարտական են նրան, վոր գտնվում են կարևորագույն ճանապարհների հատման կետում։ Այսպե՛ս Նովոսիբիրսկն ու Ոմսկը գտնվում են այն կետերում, ուր Սիբիրական յերկաթուղային մագիստրալը, վոր Միության արևմուտքն ու արևելքը կապում է իրար հետ, հատվում է տեղական խոշորագույն ջրային ճանապարհների հետ՝ Ոբ և Իրտիշ գետերի հետ։ Նովոսիբիրսկը միաժամանակ նշանակալից յերկաթուղային հանգույց է Արևմտյան Սիբիրում։ Այդ յերկրից է սկսվում Թուրքսիբ յերկաթուղին, վորը կառուցվել է խորհրդային իշխանության օրով և Սիբիրը կապում է Միջին Ասիայի հանրապետությունների հետ։ Նովոսիբիրսկից այդ յերկաթուղին գնում է Սեմիպալատինսկ, ապա Ալմա-Աթայով միանում է այն յերկաթուղու հետ, վորը Տաշքենդից գնում է մինչև Չկալով։ Բառնաուլ քաղաքը, վոր գտնվում է այդ յերկաթուղու և Ոբ գետի հատման կետում, Ալտայի յերկրի հնագույն քաղաքներից մեկն է և այժմ նույնպես դարձել է խոշոր արդյունաբերական կենտրոն (ունի 100 հազարից ավելի բնակիչ)։ Յերկրորդ յերկաթուղագիծը Նովոսիբիրսկը կապում է Կուզբասի հետ (Ստալինսկ)։ Ոմսկի մոտ Սիբիրի մագիստրալը

բաժանվում է չերկու ճյուղի. հարավային ճյուղը գնում է դեպի Չելյաբինսկ, հյուսիսայինը՝ դեպի Սվերդլովսկ։ Այնտեղ, ուր այս վերջին գիծը հատվում է Տուրա-Տոբոլ-Իրտիշ ջրային ճանապարհի հետ, վաղուց ի վեր հիմնվել է Տյումեն քաղաքը, որը նույնպես մեծացել է վերջին ժամանակներս։

Այս ռայոնի հարավային և հյուսիսային մասերի միջև հաղորդակցություն պահպանելու համար մեծ նշանակություն ունեն Օբի, Իրտիշի և Տոմի ջրային ճանապարհները։ Օբի ստորին հոսանքի ջրային ճանապարհը միանում է Հյուսիսային ծովային ճանապարհին։ Բացի այդ գոյություն ունի նաև օդային հաղորդակցություն։

Սիբիրի մագիստրալից հեռու ընկած և նրա հետ երկաթուղային ճյուղով միացած Տոմսկ քաղաքը պահպանում է իր նախկին նշանակությունը՝ որպես կուլտուրական կենտրոն։

9. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐ

Դիրքը և ընդհանուր բնութագիրը.—Արևելյան Սիբիրը Ենիսեյ գետի արևելյան կողմից ձգվում է մինչև այն լեռնաշղթաները, որոնք Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ու Խաղաղ օվկիանոսի ավազանները բաժանում են իրարից։ Հարավում նրա սահմանը միաժամանակ նաև պետական սահմանն է, իսկ հյուսիսում ողողվում է Սառուցյալ օվկիանոսի սառը և տարվա մեծ մասը սառույցով պատած ծովերով։ Արևելյան Սիբիրի մեջ են մտնում նաև Սառուցյալ օվկիանոսի հետևյալ կղզիները՝ Հյուսիսային Երկիր և Նովո-Սիբիրյան կղզիները։ Սա մի ընդարձակ երկիր է, որ իր տարածությամբ շատ ավելի մեծ է, քան Արևմտյան Եվրոպայի բոլոր պետությունները միասին վերցրած։ Նա ձգվում է արևմուտքից արևելք 3000 կմ երկարությամբ, հյուսիսից հարավ՝ մի քիչ դրանից պակաս։

Համարյա ամբողջ Արևելյան Սիբիրը մի բարձրադիր երկիր է։ Նրա հարավային ծայրի երկարությամբ հարավ-արևմուտքից դեպի հեռու հյուսիս-արևելք ձգվում են մի շարք լեռնաշղթաներ, որոնք բարձրանում են մինչև 2500—3500 մ։ Դրանցից դեպի հյուսիս տարածվում են ընդարձակ բարձրավանդակներ։ Միայն օվկիանոսի ափերն են ցածրադիր դաշտավայրի

շերտով, որը խոշոր գետերի հովիտներով ձգվում է դեպի երկրի խորքերը։

Արևելյան Սիբիրն իսկական ցրտի երկիր է։ Այդ ամենացուրտ ձմեռ ունեցող ֆիզիկո-աշխարհագրական շրջանն է ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլ ամբողջ հյուսիսային կիսագնդում. սառնամանիքներն այստեղ հասնում են մինչև 70°-ի, հողը երկրի



Նկ. 51. Արևելյան Սիբիր

մեծ մասում մեծ խորությամբ շարունակ սառած է մնում, հալչում է միայն գետնի մակերևույթի մոտ, իսկ օվկիանոսի ափերին տեղ-տեղ դեռ պահպանվել են սառցադաշտային ժամանակաշրջանի սառույցներ, հողի սառած շերտերում են երբեմն գտնվում են մի ժամանակ այստեղ ապրած մամոնտների դիակներ

վողջ մնացած գիտնները: Տայգան այստեղ ահագին տարածություններ է բռնում, ձգվում է դեպի լեռները և հասնում է հեռավոր հյուսիս, իսկ ջրառատ գետերն իրենց արագ ընթացքով անցնում են գեղատեսիլ կիրճերով, սահանքներով, իրենց մեջ կրում են էներգիայի հսկայական պաշարներ: Արևելյան Սիբիրն էլ Արևմտյանի նման բավական խոշոր հարստությունների յերկիր է. ունի անտառներ, աղվամազ կենդանիներ, յեղջերուներ: Դրանց ավելանում են նաև ամբողջ տարածության վրա ցրված հանքային հարստությունները—քարածուխը, գրաֆիտը, յերկաթը, զանազան գունավոր մետաղները, աղը, փայլարը և մանավանդ՝ վոսկին: Միայն թե այդ ընդարձակ հողերում դեռես քիչ



Նկ. 52. Արևելյան Սիբիրի և Հեռավոր արևելքի լեռնաշղթաների սխեման:

մարդ է ապրում. Արևելյան Սիբիրի բնակչության թիվը (4,25 միլիոն) 2 և կես անգամ պակաս է, քան Արևմտյան Սիբիրում:

Իր ռելյեֆով և ավելի քիչ իր բնական պայմաններով Արևելյան Սիբիրը բաժանվում է 3 մասի. 1) Միջին Սիբիրական սարահարթ, 2) լեռնային յերկրներ, վոր յեզերում են նրան

հարավ-արևելքից (Սայաններ, Անդրբայկալյան լեռներ, Ստանովոյ լեռնաշղթա), 3) լեռնոտ յերկրներ հյուսիս-արևելքում՝ Յանա, Ինդիգիրկա և Կոլըմա գետերի ավազաններում:

Միջին Սիբիրական սարահարթ.—Միջին Սիբիրական սարահարթը բռնում է Արևելյան Սիբիրի մեծ մասը: Նրա չափերի մասին կարելի յե գաղափար կազմել թեկուզ նրանից, վոր սարահարթի հարավային մասում սկիզբ առնող և բացառապես նրա միջով հոսող Լենա գետն ավելի քան 4500 կմ յերկարություն ունի, Յենիսեյի խոշորագույն վտակ Ստորին Տունգուսկան և Լենայի վտակ Վիլյույն ունեն 2700 և 2100 կմ յերկարություն: Բա-



Նկ. 53. Գետահովիտ Միջին Սիբիրի սարահարթում

ցի Յենիսեյից, Լենայից ու նրանց վտակներից, դեռ տեղ է մնում ելի մի շարք խոշոր գետերի, վորոնք թափվում են անմիջականորեն Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը. դրանք են Պյասինա, Խատանգա, Օլենյոկ—Լենայից դեպի արևմուտք և Յանա, Ինդիգիրկա, Կոլըմա դեպի արևելք:

Սարահարթի միջին բարձրությունը 300—500 մետր է, բայց կան ավելի բարձր տեղեր, վորոնք հասնում են մինչև 1000 մետրի։

Միջին-Սիբիրական սարահարթի առաջացման գործում մեծ դեր են խաղացել իջվածքները և յերկրի կեղևի փլվածքները։ Այն ժամանակ առաջացած ճեղքերի միջով յերկրի մակերեսն եյին դուրս գալիս հրաբխային տեսակների հսկայական մասսաներ, վորոնք ներկայումս տասնյակ և հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածություն են բռնում, հաճախ ունենալով մի քանի հարյուր մետր հաստություն։ Ժայթքվածքային այդ ապառները կոչվում են տրապպեր։ Այնտեղ, ուր գետերի հովիտները մտնում են դրանց մեջ, գոյանում են խոր կիրճեր, վորոնք համարյա զառիթափ պատեր են ունենում (բնիկները կոչում են «ղարպառ», կամ «թուշ»), իսկ գետերի հունը հաճախ ընդհատվում է սահանքներով։

Այդ սարահարթերը դեպի գետերի հովիտներն իջնում են



Նկ. 54. Անդրբայկալի լեռնաշղթաների սխեման։

մի քանի տերրասներով։ Ամենաընդարձակ ցածրավայրերը գտնվում են այնտեղ, ուր հատվում են Լենայի, Ալդանի և Վիլյույի հովիտները։ Այդտեղ կան բազմաթիվ լճեր։

Սայան-Բայկալյան լեռնաշխարհը։ Անդրբայկալը։ Ստանովոյ լեռնաշղթան.—Միջին Սիբիրական սարահարթը հարավից

յեզերված է մի շարք լեռնաշղթաներով և նրանց վրա գոյացած բարձրավանդակներով։ Դրանց արևմտյան մասը կազմում է Սայանի լեռնաշխարհը՝ 2500 մ միջին բարձրությամբ։ Ալտայից ու Կուզնեցկի Ալա-Տաուից Սայանները բաժանված են Մինուսինի հովիտով։ Սայանները բաժանվում են Արևմտյան և Արևելյան Սայանի։ Արևմտյանը ձգվում է դեպի հյուսիս-արևելք, Արևելյանը՝ հարավ-արևելք։ Նրանց սահմանն է կազմում 96-րդ միջօրեականը։ Արևելյան Սայանն ավելի բարձր է. ամենաբարձր գագաթը Մունկու-Սարդըկն է, վոր 3490 մ բարձրություն և վոչ այնքան մեծ սառցադաշտեր ունի։

Գետահովիտները վերին հոսանքներում լայն են, թեք իջվածքով։ Ցածում գետերը խոր կերպով հոսում են լեռների մեջ առաջացնելով մռայլ կիրճեր, սահանքներ ու ջրվեժներ։ Նախա-



Նկ. 55. Մի անտառ Արևմտյան Սայանում։

լեռնային մասն անցնելով, նրանց հոսանքը կրկին ավելի հանդարտ բնույթ է ստանում։ Այդպես է Յենիսեյը, վորը կտրում է Արևմտյան Սայանը։ Նրա վերին հոսանքում ամենանշանավոր վտակն է Աբականը։

Այդպես է նաև Խամար-Դաբան կոչվող ավելի ցածր լեռնաշղթան, որն անցնում է Բայկալ լճի հարավ-արևմտյան ափերով։ Այդ լեռնաշղթան ուղղորդ լանջերով իջնում է դեպի Բայկալ, մինչդեռ դեպի Սելենգա գետի հովիտն իջնում է ավելի քիչ թեքությամբ։

Սելենգայից արևելք ձգվում է Անդրբայկալը, որն իր տարածությամբ գերազանցում է արևմտա-յեվրոպական յուրաքանչյուր պետությանը։ Նրա մակերևույթը համարյա ամենուրեք ներկայացնում է իրար հաջորդող լեռնաշղթաներ ու զանազան բարձրության սարահարթեր, լայն ու խորունկ գետահովիտներով։ Լեռնաշղթաները ձգվում են հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք։ Յաբլոնովի լեռնաշղթան և հարավում նրա շարունակությունը կազմող Մալխանի լեռնաշղթան ջրբաժան են հանդիսանում Հյուսիսային Սառուցյալ և Խաղաղ օվկիանոսների միջև։ Նրանցից հյուսիս-արևմուտք և արևմուտքից դեպի Սառուցյալ օվկիանոս են հոսում Վիտիմ ու Սելենգայի վտակները, հարավ-արևելք դեպի Խաղաղ օվկիանոս են հոսում Շիլկան ու նրա վտակները։



Նկ. 56. Գոլցերը (մերկ գագաթները) Արևելյան Սիբիրում։

Յաբլոնովի լեռնաշղթայից դեպի հյուսիս գտնվում են Վիտիմի սարահարթը (1000 մ) և Պատոմի սարահարթը (1300 մ),

որոնք իրարից բաժանվում են Վիտիմ գետի հովտով։ Այդ երկու սարահարթերումն էլ ոսկու հարուստ բնավայրեր կան։

Ոլեկմա գետից դեպի արևելք, Ալդան գետի վերին հոսանքներում գտնվում է նույնպիսի բարձրությամբ Ալդանի սարահարթը, որն աստիճաններով իջնում է դեպի Միջին-Սիբիրական բարձրավանդակը։ Նա հարավից յեզերվում է Ստանովոյ լեռնաշղթայով։

Ստանովոյ լեռնաշղթան բաղկացած է սարահարթերով բաժանված զուգահեռ լեռնաշղթաներից։ Հյուսիսային լեռնաշղթան ավելի բարձր է մինչև 2,5 կմ, նա կտրված է գետերի խորունկ կիրճերով և ունի սուր տեղ-տեղ անմատչելի կատարներ։

Յանա-Կոլիմյան լեռնաշխարհ.—Սա մի ընդարձակ մարզ է, որ գտնվում է ցամաքի հեռավոր հյուսիս-արևելյան անկյունում և իր ռելյեֆի հիմնական գծերով կարծես Միջին Սի-



Նկ. 57. Մի տեսարան Վերխոյանսկի լեռնաշղթայից։

բիրի սարահարթի կրկնությունը լինի։ Այստեղ ամենանշանակալից լեռնաշղթաներն են՝ Վերխոյանսկի, Կոլիմի և Անադիրի լեռնաշղթաները, ինչպես և մի ընդարձակ լեռնաշխարհ, որը կոչվում է Չերսկու լեռնաշղթա։ Վերխոյանսկի ու Չերսկու լեռնաշղթաները բավականին խիստ արտահայտված ալպիական

բնույթ ունեն, ժայռոտ ու սրածայր լեռնակատարներ, ուղղորդ լանջեր, ամենուրեք սառցապատման հետքեր։ Գետերի վերին և միջին հոսանքներն էլ լեռնային բնույթ ունեն և միայն ստորին հոսանքներում նրանք դուրս են գալիս վոչ բարձր մի սարահարթ, վորտեղ ցրված են անհամար լճեր։

Կոլըմա գետի ստորին հոսանքներում, ովկիանոսի ափերին և Նովո-Սիբիրյան կղզիներում հանդիպում են սառցադաշտային շրջանից մնացած սառույցներ, վորոնց հաստությունը հասնում է 15 մ և ավելի։ Հետագայում առաջացած և նրանց ծածկող շերտերում հանդիպում են մամոնտների ժանիքներ, իսկ յերբեմն էլ այդ կենդանիների սառած դիակների մասեր կամ ամբողջ դիակներ, վոր շատ լավ պահպանվել են սառած հողի մեջ։

Յենիսեյ, Անգարա յեվ Բայկալ, Լենա.—Արևելյան Սիբիրում շատ կան խոշոր ու ջրառատ գետեր։ Նրանցից ամենամեծ նշանակություն ունեն Յենիսեյը, նրա վտակ Անգարան, վոր սկիզբ է առնում Բայկալ լճից, և Լենան։ Առաջին տեղը բռնում է Յենիսեյը, վորն ամբողջ Սիբիրի ամենակարևոր գետն է և հոսում է Արևելյան և Արևմտյան Սիբիրի սահմանով։ Յենիսեյի նշանակությունը բարձր է նրանով, վոր նա խիստ ջրառատ է և խոր, ծովային նավերին հնարավորություն է տալիս մի քանի հարյուր կիլոմետր վեր բարձրանալ նրա հոսանքի հակառակ ուղղությամբ, մինչդեռ Օբի գետաբերանի ավազաթմբերը և Լենայի գետաբերանի ծանծաղ դելտան խոչընդոտներ են հարուցում դրան։

Յենիսեյն սկիզբ է առնում ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս։ Նա առաջանում է յերկու ճյուղերի միացումից, վորոնցից մեկը գտնվում է Մունկու-Սարդըկի հարավային լանջերում։ Յենիսեյն իր վերին հոսանքում հզոր լեռնային գետ է, բազմաթիվ սահանքներով և հիդրոէներգիայի մեծ պաշարներով։ Միջին հոսանքում, մինչև Անգարայի նրա մեջ թափվելը, նա լիովին նավարկելի յե, իսկ ստորին հոսանքում մատչելի յե նույնիսկ ծովային նավերին։ Ջրի հորդացումը տարեկան յերկու անգամ է լինում՝ գարնանը և հուլիսին, լեռների ձյունը հալչելու ժամանակ։ Վտակներից խոշորներն են՝ Անգարան, վոր ավելի յերկար ու ջրառատ է, քան ինքը՝ Յենիսեյը մինչև միանալը, ապա

Միջին կամ Պոդկամեննայա Տունգուսկան և Ստորին Տունգուսկան։ Սրանք բոլորն էլ Յենիսեյի մեջ են թափվում աջ կողմից և սկիզբ են առնում Միջին Սիբիրական սարահարթից։ Ստորին հոսանքում, դարձյալ աջ կողմից, Յենիսեյի մեջ է թափվում Կուրեյկա բավականին խոշոր գետը։

Ստորին Տունգուսկայից հետո դեռևս Յենիսեյը հոսում է անտառների միջով, վորոնք հյուսիսում ավելի ու ավելի յեն նոսրանում։ Այստեղ այս վիթխարի գետը սակավ հանդարտ է և հաճախ փոթորկում է շարունակ փչող քամիներից։ Գետի լայնությունը հասնում է 5—10 կմ. կղզիներ համեմատաբար քիչ ունի։ Վերջին մի քանի հարյուր կիլոմետրը Յենիսեյը հոսում է տունդրաների միջով։ Համարյա գետաբերանի մոտ Յենիսեյի լայնությունը հասնում է 50—60 կմ։ Նրա ընթացքը, վոր ստորին հոսանքում ընդհանրապես դանդաղ է, ավելի յե թուլանում և գետի համեմատաբար տաք ջրերը հովհարաձև տարածվում են Յենիսեյի ծոցի մակերևույթի մեջ ու քաղցրացնում ովկիանոսի աղի ջուրը։ Գետը սառույցից ազատ է լինում տարեկան 125-ից 140 օր։

Յենիսեյի ստորին հոսանքում և ընդհանրապես արևելա-սիբիրական գետերում հոյակապ տեսարան է սառույցի շարժվելը։ Աշխարհագրական այդ լայնության վրա, վորտեղ արեգակը համեմատաբար քիչ է տաքացնում, իսկ



Նկ. 58. Մի տեսարան Յակուտիայի լեռներում՝ սաղարթավոր նոսր անտառ, աջ կողմը՝ մորենային լիճ։

գետերի սառույցը 1,5 մ և նույնիսկ ավելի հաստության է հասնում, սառույցը կոտրվում է միայն այն ժամանակ, յերբ ջուրը հասնում է առավելագույն բարձրության՝ 12 մ և դեռ ավելի։ Սառույցի հետ շարժվում է և հորդացած ջրի ալիքը։ Կուտակված սառույցի ահագին մասսան, ամբողջ սառցաբլուրները շարժվում են պղտոր ջրի մեջ, զարնվում իրար, փշրվում։ Ափերին ու լեզվակներում 10—15 մ բարձրությամբ սառցե պատնեշներ են առաջանում, ստորջրյա ծանծաղուտներում ամբողջ սառցասարեր են գոյանում։ Այդպիսի տեղերում սառույցը մնում է մինչև ամառվա յերկրորդ կեսը։ Չնայած գետի լայնությանն ու զորեղությանը՝ սառցափակներ են առաջանում։ Սառցաբեկորների դղրդոցը, ալիքների շառաչն ու իրար զարնվող մանր սառույցների զրնգոցը միախառնվելով մի սոսկալի աղմուկ են ստեղծում։ Գետն իր ափերին խոշոր ավերումներ է գործում, պոկում, տանում է ահագին կղզիներ։

Յենիսեյն իր հետ մեծ քանակությամբ ջուր է բերում և այդտեղ հասնող ջուրն ավելի տաք է լինում, քան այդտեղ նրա մեջ թափվող վտակների ջրերն են։ Յենիսեյի ու նրա վտակների ջրերի ջերմաստիճանի տարբերությունը հասնում է 4—6°-ի և այդ ազդում է առաջին հերթին կղզիների բուսականության աճման վրա. կղզիների վրա աճող թփերի բարձրությունը հասնում է 4 մ, մինչդեռ գետի ափերին և շրջակա տունդրաներում նույն թփերը չնչին բարձրություն ունեն։

Նկ. 59. Մորեն, վոր Յակուտիայի լեռներում պահպանվել է հնադարյան սառցապատման ժամանակաշրջանից։

Անգարան Յենիսեյի աջ վտակն է, իր ստորին հոսանքում կոչվում է նաև Վերին Տունգուսկա։ Սա խոշոր, ջրառատ և շատ արագահոս գետ է։ Նրա լայնությունը ստորին հոսանքներում 2—3 կմ է։ Ունի շատ սահանքներ ու ջրվեժներ, վորոնք հիդրոէներգիայի հսկայական աղբյուր են հանդիսանում։ Ջրառատությունը, գարնանային հորդացման բացակայությունը, ջրի թափանցիկությունն ու ցածր ջերմաստիճանը կախումն ունեն նրանից, վոր Անգարան սնվում է Բայկալի ջրերից։ Ինքը Բայկալը յերկրագնդի ամենայերևելի լճերից մեկն է, վոր մյուս բոլոր լճերին գերազանցում է իր չափազանց խորությամբ, ջրի վիթխարի քանակով, նրա արտակարգ թափանցիկությամբ։ Նրա բարձր, լեռնոտ ափերը կազմված են հնադարյան բյուրեղային



Նկ. 60. Բայկալ լճի ափը ձմեռվա սկզբին։

ապառներից և շատ գեղեցիկ ձևով շրջափակում են մուգ-կապտավուն լայնածավալ լիճը։ Բայկալի իջվածքային հունի առաջացումը դեռևս չի ավարտվել, այդ պատճառով էլ այստեղ հաճախ յերկրաշարժեր են լինում, իսկ ափերին կան բազմաթիվ տաք աղբյուրներ։ Ջրի ահագին մասսան մեղմացուցիչ ազդեցություն է ունենում առափնյա վայրերի կլիմայի վրա, ձմռանը ջերմաստիճանը բարձրացնելով համարյա 10°-ով իսկ ամռանը իջեցնելով 7°։ Լեռնաշղթաների դասավորության շնորհիվ

հաճախ հանկարծակի փչում են ուժեղ քամիներ, վորոնք ջուրը քշում են դեպի արևելյան ափերը։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Բայկալի բուսական և կենդանական աշխարհը։ Բայկալում ապրող մեծաքանակ օրգանիզմների մոտ 70%-ը հանդիպում է միմիայն այդ լճում։ Դրանցից են՝ զանազան ջրիմուռները. վորդերը, ճիճուները, ձկները, վորոնց թվում նաև շատ խոր ջրում ապրող կենդանի ծնող գոլոմյանկա ձուկը, փոկ-ներպան և այլն։ Թե այս կենդանիներն ու բույսերը վորտեղից են ընկել Բայկալի մեջ, դեռևս պարզված չէ։



Նկ. 61. «Շչոկի»-ները Լենա գետի ափերին։

Սիբիրի յերրորդ խոշոր գետը Լենան է, վորն սկիզբ է առնում Բայկալից վոչ հեռու՝ Պրիմորսկի (Մերձծովյան) լեռնաշղթայի հյուսիսային լանջերից։ Իր վերին հոսանքով Լենան անցնում է Միջին-Սիբիրական սարահարթով, խորունկ հովտի միջով։ Ափերը տեղ-տեղ գետի մակերևույթից 300 մ բարձրության են հասնում՝ առաջացնելով գեղատեսիլ ժայռեր, վոր տեղական լեզվով կոչվում են «շչյոկի» («այտեր»)։ Լենայի վերին հոսանքում կան շատ ավազաթմբեր, վորոնք խանգարում են նավագնացությանը։ Սակայն աջ կողմից հաջորդաբար իր մեջ

առնելով Վիտիմ, Օլեկմա խոշոր վտակները՝ Լենան խոշորանում է և նրա լայնությունը հասնում է 1,5 կմ, ջրի ընթացքը դառնում է ավելի հանդարտ, հունի մեջ յերևան են գալիս բազմաթիվ կղզիներ։ Այնուհետև իր մեջ առնելով իր ամենախոշոր վտակները՝ Ալդանն ու Վիլյույը, Լենան դառնում է մի վիթխարի գետ։ Այդ՝ շարժվող անուշ ջրի մի ամբողջ ծով է. Լենայի բոլոր մեծ ու փոքր վտակների թիվը հասնում է մոտ 1000-ի։ Դրանցից առանձնապես նշանակալից է Ալդանը, վորն իր ընթացքի արագությամբ Անգարայից հետո Արևելյան Սիբիրում յերկրորդ գետն է։ Ստորին հոսանքում Լենան վոչ մի վտակ չունի, ուստի նա նմանվում է մի ծառի, վորն ունի լայնորեն տարածված արմատներ, ուժեղ բուն (ստորին հոսանքում նրա հունի լայնությունը 4-ից 8 կմ է)։ Գետաբերանում ունի մի ընդարձակ դելտա՝ անթիվ-անհամար մեծ ու փոքր ճյուղավորություններով, վորոնք աննշան խորություն ունեն։

Հյուսիսային ծովային ճանապարհի նվաճումով Լենան խոշոր նշանակություն է ստանում, քանի վոր ջրային էժան ճանապարհով կապում է Արևելյան Սիբիրի ներքին մասերն օվկիանոսի հետ։ Նավարկությունը վերին հոսանքներում տևում է 160 օր, ստորին հոսանքում՝ 120 օր։

Կլիման և բուսականությունը.—Չնայած Արևելյան Սիբիրի հսկայական տարածությանը, նրա և՛ կլիման և՛ բուսականությունը միապաղաղ են։ Արևելյան Սիբիրը ձմեռվա ու տայգայի թագավորության աշխարհն է։ Նույնիսկ հարավում ձմեռը խիստ ցուրտ է ու յերկարատև, վորովհետև այդ վայրերը ծովի մակերևույթից շատ բարձր են գտնվում։

Այստեղ ձմեռը տարվա ամենախաղաղ, պարզ ու չոր յեղանակն է։ Ջերմաստիճանով ցերեկն ու գիշերը քիչ են տարբերվում իրարից։ Քամիներ համարյա չեն լինում, կամ այնքան թույլ են լինում, վոր ձյունածածկ ծառերը շարժել չեն կարող և ամբողջ ձմեռվա ընթացքում այդ ծառերը մնում են ձյունով ծածկված և անշարժ կարծես ծովի քարացած փրփուր լինեն։ Ամենուրեք տիրում է անսահման լռություն, խաղաղություն, անդորրություն։ Ամեն ինչ սառչում է, կաշկանդվում ու սառույց կտրում, վորն այդտեղ ապառների ամրություն է ստանում։ Նույնիսկ յերկնակամարը թվում է սառույցից հղկված մի գմբեթ։ Ցերեկներն այստեղ լինում է դըժգույն թափանցիկ և ամբողջ շաբաթներով այստեղ ամպի վոչ մի բիծ չի յերևում։ Այդ մաքուր յերկնակամարում աստղերն ու լուսինն առանձնապես

պայթառ են փայլում, իսկ արևը դուրս է գալիս միայն վորպես մի քանի րոպեյի հյուր, աղոտ ու կարմրավուն և շտապում է թագնվել մշուշի մեջ։ Ամեն ինչ անշարժ է, դժգույն ու մեռած։ Միակ շարժումը ցրտից ճաքճքող հողի ցնցումն է, քարացած տեսարանի մեջ միակ փոփոխությունը մացնող ցոլցոլույթներն են, վորոնք հարուստ են բազմապիսի գույներով ու նուրբ յերանգներով։ Հեռավոր հյուսիսում դրան ավելանում է հյուսիսափայլի սքանչելի փայլատակը։

Գարունը, նույնիսկ հարավում, ուշ է բացվում, բայց տաքությունը խիստ արագ է բարձրանում։ Սարահարթի հարավում մայիսի յերկրորդ կեսին ցերեկվա ջերմաստիճանը յերբեմն է միայն զերոյից ցածր լինում։ Կեսօրվա ժամերին ջերմությունը հաճախ բարձրանում է + 14° ստվերում, թեև գիշերները յերբեմն —15° էլ ցածր է լինում։ Սրանով էլ արտահայտվում է կլիմայի ցամաքային բնույթը։ Մայիսի վերջերին ձյունը մնում է անտառապատ խորունկ կիրճերում, իսկ լեռներում մնում է հաճախ մինչև հունիսի կեսերը։ Հյուսիսում գարունը յերկու-յերեք շաբաթով ուշ է բացվում։ Գարնան սկզբին այստեղ լինում են շատ ուժեղ քամիներ, բուքեր, վորոնք ձյունապատ գետնից սառցի բյուրեղիկների ամպեր են բարձրացնում։

Ամառը օդի ջերմությունը բարձրանում է մինչև 30°-ի, իսկ հուլիսին արևի տակ հասնում է 48°։ Հարթավայրերում ամառվա տեղումներն աննշան են։ Հյուսիսում տեղումներ լինում են ընդամենը 50—100 մմ, Ալդանի, Վիլյույի և Միջին Լենայի հովիտներում՝ մինչև 150 մմ և Լենայի վերին հոսանքներում, Ոլեկմայի և Վիտիմի հովիտներում՝ մինչև 200 մմ։ Յերբեմն մի ամբողջ ամիս անձրև չի գալիս և այդ պատճառով էլ յերաշտներն առանձնապես հարավային Անդրբայկալում շատ են վնասում բուսականությանը։ Անձրևներն սկսում են տեղալ միայն հուլիսին և մեծ մասամբ շատ հորդ անձրևներ են լինում։ Աշուն անվանել կարելի յե միայն սեպտեմբեր ամիսը։ Միջին ջերմաստիճանը դեռևս 0-ից բարձր է լինում, սակայն յերբեմն ձյուն է տեղում և գիշերները մինչև 12 աստիճան սառնամանիք է անում։

Այդ յերկրի զանազան մասերում կլիմայի վրա զգալի ազդեցություն է գործում նաև ռելյեֆի բարձրությունը։ Պարզ գիշերներին հովիտներում շատ ավելի ցուրտ է, քան շրջակա սա-

րալանջերում։ Գարնան ու աշնան սառնամանիքները ցածրադիր վայրերում ավելի ուժեղ և ավելի հաճախ են լինում, քան բարձր վայրերում։ Նույնիսկ 50—200 մ բարձրության տարբերությունն իր նշանակությունն ունի, լեռնալանջերի ծառերը մի քանի օրով ավելի շուտ են բացվում, քան հովիտներում։

Տարվա ցուրտ ժամանակի յերկարատևության, ձմեռվա ջերմաստիճանի ցածրության և ձյան վոչ հաստ ծածկույթի հետևանքով Արևելյան Սիբիրում նկատվում է հավերժական սառ-



Նկ. 62. Խեժաձևվու տայգա Արևելյան Սիբիրում։

ածության լայն տարածում։ Հողի հավերժական սառած շերտը հասնում է տարբեր խորության, նայած տեղի պայմանների առանձնահատկություններին։ Այսպես՝ անտառում, մամուռի տակ, դեպի հյուսիս դարձած թեքությունների վրա յերբեք չհալչող սառույցի շերտ կարելի յե գտնել միայն մի քանի սանտիմետր խորությամբ, մինչդեռ դրա մոտ՝ բաց տեղերում արևկող, չոր կավահողերում սառած շերտը գտնվում է 1,5 մ ավելի

խորության մեջ։ Սառածությունը մեծ ազդեցություն է գործում գետերի ջրառատության և նրանց մակերևույթի անհարթության վրա։ Սառածության հետևանքով հողի շերտը շատ բարակ է, վորովհետև բուսական փտահողը շատ դանդաղ է գոյանում։ Սառածությունը հողագործությանը չի խանգարում, բայց շինարարական աշխատանքների ու ճանապարհաշինարարության ժամանակ մեծ անհարմարություններ է ստեղծում։ Մարդու կողմից յուրացված շրջաններում սառածության շերտը շարունակ փոքրանում է։

Արևելյան Սիբիրի մեծ մասը, նրա հսկայական տարածության $^3/_4$-ը գտնվում է տայգայի գոտում։ Մնացած տարածությունը ծածկված է տունդրայով և շատ քիչ մասը միայն, հարավային ծայրերում՝ անտառատափաստանով ու տափաստանով։

Յեթե հնարավոր լիներ ամառվա կեսին վորոշ բարձրությունից մի հայացք գցել այդ ամբողջ յերկրի վրա, ապա նա կպատկերանար համատարած կանաչ անտառով ծածկված մի տարածություն։ Ամենուրեք գերակշռում է գլխավորապես խեժաճեփու անտառը։ Համեմատաբար նեղ, 200-ից 300 կմ լայնությամբ մոխրա-կանաչավուն տունդրայի շերտը յեզերում է անտառները Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի կողմից։ Լեռների կատարները, վորոնք տեղ-տեղ ծածկված են ժանգագույն քարաքոսով ու բաց դեղնավուն մամուռով, տեղ-տեղ էլ բոլորովին մերկ, սև, գորշագույն ու դեղին և կարմիր ժայռերը դուրս են ցցվում անտառների միջից ամենուրեք, ուր գտնվում են լեռնաշղթաների ամենաբարձր մասերը։ Հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան ծայրերում յերևում են ամռան չհալող ձյան սպիտակ բծերը Սայանի, Վերխոյանսկի և Չերսկու լեռնաշղթաների վրա։ Գետերի ճյուղավորությունները խիտ ցանցով պատում են ամբողջ յերկրամասը, իսկ սարահարթերում պսպղում են անհամար լճերը։ Յուրաքանչյուր այդպիսի ջրային կաթիլի շուրջը, կամ նույնիսկ ամենանեղ ջրային գծերի ափերին շրջանակի պես յերևում են մարգագետնի ու ճահճային բուսականության և մոխրականաչավուն ուռենիների շերտերը։ Վերջապես ամենահարավային ծայրում լեռների հարավային լանջերում նեղ շերտով ձգվում են տափաստանների դեղնականաչավուն ժապավենները։

Հարավային Անդրբայկալի տափաստանները կարծես թե միջին-ասիական տափաստանների ու անապատների ահագին տարածության փոքրիկ ծոցերը լինեն։ Այստեղ, Մոնղոլիային սահմանակից գոտում նրանք բռնում են նույնիսկ մի քանի վոչ բարձր լեռնաշղթաների գագաթները։ Սակայն ավելի հեռու դեպի հյուսիս և արևմուտք համատարած տափաստանը կտրա-

վում է առանձին կղզիների, փոխվելով անտառատափաստանի և տեղավորվելով միայն ցածրադիր վայրերում։ Հովիտների տափաստանային սևահողում հաճախ հանդիպում են աղի հողեր՝ աղատային բուսականությամբ, և նույնիսկ աղի լճեր։ Իսկ անտառատափաստանների համար այստեղ բնորոշ են վոչ թե կեչի անտառակները, այլ սոճու և խեժաճեփու մանր անտառները։



Նկ. 63. Տայգայի խորքերում։

Բայց արդեն հս. լ. 50°-ից հյուսիս սկսվում է լեռնային տայգայի շրջանը։

Այնուհետև անտառը ծածկում է ամբողջ սարահարթը և տարածվելով հյուսիս՝ ավելի ու ավելի յե ցածրանում։ Հարա-

վում տայգան բաղկացած է գլխավորապես խեժաճեփուց՝ սոճու խառնուրդով, հյուսիսում՝ միայն խեժաճեփուց։ Գերակշռում է դաուրյան խեժաճեփին՝ ավելի մանր պիտակներով։ Հարավում հանդիպում են նաև սաղարթավոր ծառեր՝ կեչի, կաղամախի, լաստենի, բարդի։ Ցածրադիր ու խոնավ վայրերը ծածկված են յեղևնու և սպիտակ յեղևնու ծառերով, այսպես կոչված՝ սև տայգայով։

Ամենից գեղեցիկն ու հրապուրիչը սոճու խիտ անտառներն են։ Բազում կիլոմետրերի վրա, օրինակ Մերձանգարայի շրջանում ձիգ շարքերով կանգնած են չորային խեժոտ, տեղ-տեղ կայմային սոճիները։ Այդ անտառները խեժաճեփու մռայլ տայգայից տարբերվում են վայր ընկած ու փտորկաթափ ծառերի բացակայությամբ իրենց չոր ու հաճելի տեսքով, թափանցիկ ստվերով և պայծառ, նույնիսկ գեղատեսիլ տեսարանով։ Սոճու անտառներում աճում են բազմապիսի հատապտուղներ, յերգում են թռչուններն ու վխտում փոքրիկ գազաններ։ Խեժաճեփին չոր ու լուսավոր տեղ է սիրում։ Դա մի հսկա ծառ է, վոր հարավում 30 մ բարձրության է հասնում։ Ավելի ցածրադիր վայրերը, օրինակ գետահովիտները բռնում է յեղևնու, յեղևնին ու սպիտակ յեղևնու սև տայգան։ Սև տայգան չափազանց միապաղաղ, տխուր պատկեր ունի։ Թանձր փշատերև անտառի տակ, հավիտենապես խոնավ հողի յերեսին տարածվում է մամուռի հաստ շերտը։ Ծառերի բները ծածկված են քարաքոսի բծերով, իսկ ճյուղերից կախված են ծառալոռի փնջեր։ Անդորրությունը, կիսախավարն ու միօրինակությունն են տիրում այստեղ բազմաթիվ կիլոմետրերի վրա։

Շատ տեղերում տայգան ընդհատվում է «այրուցքներով», վորոնք յերբեմն մի քանի հարյուր քառ. կիլոմետրի յեն հասնում։ Տայգայի ամբողջ տարածության վրա դժվար է գտնել այնպիսի մի վայր, վորտեղ չլինեն անտառի հինավուրց հրդեհի հետքեր։

Բևեռային շրջանագծից դեպի հյուսիս ծառերն սկսում են մանրանալ, խեժաճենու անտառները նոսրանում ու աղքատանում են։ Պաշտպանված վայրերում, գետերի հովիտներում նրանք յերկար շերտերով ձգվում են դեպի հյուսիս, հասնելով հ. լ. 72°-ին, վոր անտառային բուսականության ամենահյուսիսային սահմանն է ընդհանրապես յերկրագնդի վրա։ Այնուհետև դեպի հյուսիս տարածվում է գուղձավոր տունդրան։

Վորքան ավելի հյուսիս ենք գնում, այնքան նոսրանում է անտառը և ընդարձակվում են գուղձավոր ճահիճները, ավելի հաճախակի յեն հանդիպում

«բագտրանները»—հեղուկ ցեխով ծածկված տարածությունները։ Հարթավայրերում սկսում է գերակշռել յեղջերամամուռը, իսկ ծառեր, թեպետ և կան, բայց զգացվում է, վոր նրանք այստեղ իրենց հարազատ չեն զգում։ Անտառն այստեղ վողորմելի տեսք ունի։ Վաղաժամ ծերացած, սակավաթիվ ճյուղերը դեղնավուն կանաչով ծածկված, չորացած, հաճախ կոտրված կատարներով, նա լայն ու նոսր յերիզի նման ձգվում է անտառների հյուսիսային սահմանի յերկարությամբ։ Ծառերը հիվանդոտ են, այլակերպ, ծածկված բազմաթիվ մանրիկ ճյուղերով, չորացած միամյա բողբոջներով, վորոնք բնի յերկարությամբ ցցվում են բրերի նման։ Նրանց վրա շատ քիչ կանաչ կա, նրանք համարյա բոլորովին ստվեր չեն գցում ու հովանի չեն կարող լինել։ Այդպիսի անտառներում ազատորեն տեսնում ենք և՛ շուրջը, և՛ վերև՝ յերկինքը։ Հարյուրավոր կիլոմետրերով դեպի մայր ցամաքի խորքն է ձգվում այդ անտառը։ Ամենուրեք, 5—10—20 կմ վրա հանդիպում են մերթ ընդարձակ մամռապատ ճահիճներ, մերթ գետերի կամ լճերի հովիտներ, մերթ լեռնատունդրաներ, կամ ուղղակի ժայռոտ լեռնաշղթաներ կամ նրանց կատարների շերտեր, վորոնք կարծես յերկրի վողները լինեն, վոր յերևում են անտառի նոսրացող կանաչի միջից։ Անտառի սահմանի մոտ 30—60 մ բարձրությամբ թմբերն անտառազուրկ են, իսկ հետո անտառը չքանում է բոլորովին։

Արևելյան Սիբիրի տայգայի կենդանիներից արդյունաբերական տեսակետից ամենակարևորն է սկյուռը, վորն իր գույնով մի քիչ տարբերվում է յեվրոպական սկյուռից։ Տայգայի ամենախուլ վայրերում մանավանդ լեռնային անտառներում, դեռ պահպանվել է, այժմ արդեն հազվագյուտ դարձած սամույրը։ Ամենուրեք տարածված է սիբիրական ժանտաքիսը։ Շատ կան կզաքիսի ընտանիքի մանր ներկայացուցիչներ՝ աքիս, սպիտակ կզաքիս, սովորական ժանտաքիս, իսկ յերբեմն պատահում է նաև նույն ընտանիքի ավելի խոշոր ներկայացուցիչը՝ շատկերիկը։ Սմբակավորներից լեռնատայգայի գոտում կան շիկերե, հյուսիսային վայրի յեղջերու, քարայծ, մշկայծյամ։ Ամենաշատ յուրահատկությունն ունի Անդրբայկալի կենդանական աշխարհը. այստեղ ապրում է անդրբայկալյան խոշոր արջը, սամույրի հատուկ տեսակը՝ արջամուկը։ Անտառատափաստանային շերտում կան արջամուկ-տաբագաններ, վորոնք ժանտախտ տարածողներից ամենագլխավորներից մեկն են։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.—Արևելյան Սիբիրի տերիտորիայում են գտնվում Կրասնոյարսկի յերկրամասը, Իրկուտսկի մարզը, Չիտայի մարզը, Յակուտական ԱԽՍՀ և Բուրյաթ-Մոնղոլական ԱԽՍՀ։ Դրանք շատ խոշոր, բայց շատ

նսար բնակչությամբ տարածություններ են։ Նրանց վարչական սահմանները չեն համընկնում Արևելյան Սիբիրի ֆիզիկո-աշխարհագրական բնական սահմաններին։ Այսպես՝ Կրասնոյարսկի յերկրամասը բռնում է Արևմտյան Սիբիրի հարթավայրի մի մասը ևս, իսկ Արևելյան Սիբիրի այն մասը, վոր ընկնում է Կոլըմա ու Անադիր ծայրերկրային լեռնաշղթաների մոտ, մտնում է Հեռավոր Արևելյան յերկրամասի մեջ։

Ամենաընդարձակ տարածությունը բռնում է Յակուտական ԱՍՍՀ (3 միլիոն քառ. կմ), ապա Կրասնոյարսկի յերկրամասը (2,1 միլ. քառ. կմ), իսկ մեծությամբ ամենավերջին տեղն են գրավում Իրկուտսկի և Չիտայի մարզերը։ Բայց և սրանք էլ միասին վերցրած 4 անգամ մեծ են Ուկրաինայից։

Բնակչության շատությամբ այդ մարզերը ճիշտ հակառակ դասավորություն ունեն։ Միայն Իրկուտսկի մարզում բնակչության միջին խտությունն 1 ք. կմ տարածությանը մեկ մարդուց ավելի յե ընկնում։ Յակուտիայում 1 մարդուն ընկնում է 10 քառ. կմ, իսկ հյուսիսում նույնիսկ 100 քառ. կմ մի մարդու չի ընկնում։ Բնակչության միջին խտության այդպիսի ցածր թիվ ԽՍՀՄ-ի ուրիշ վոչ մի վայրերում չկա. թերևս միայն Հյուսիսային Ուրալում և Միջին Ասիայի անապատներում այդպես լինի։ Ահագին տարածություններ կան համարյա անմարդաբնակ և բնակչությունը կենտրոնացել է գլխավորապես խոշոր գետերի հովիտներում և մանավանդ յերկրի հարավային մասում, վորտեղ հողագործության ու անասնապահության համար ավելի հարմար հողեր կան և վորտեղով անցնում է յերկաթուղային մագիստրալը։ Այդտեղ խտությունը հասնում է 1 ք. կմ 5—10, նույնիսկ 20 մարդու։ Արևելյան Սիբիրում ապրում են ընդամենը 4,25 միլիոն մարդ։

Բնակչության գերակշռող մեծամասնությունը ռուսներ են։ Արևելյան Սիբիրում քանակապես համեմատաբար խոշոր յերկու ժողովուրդներ կան, վորոնցից յուրաքանչյուրի թիվը հասնում է 250 հազար մարդու. դրանք են՝ յակուտները հյուսիս-արևելքում և բուրյաթները՝ հարավ-արևելքում։ Բուրյաթները մոնղոլական խմբին են պատկանում, յակուտները՝ թուրքական։ Նույն թուրքական խմբին են պատկանում խակասները, վոր ապրում են Կրասնոյարսկի յերկրամասի ամենահարավ-արևմտյան ան-

կյունում։ Առանձին տունգուս-մանչուրական խումբ են կազմում էվենկներ (տունգուզներ), վորոնք ցրված են ամբողջ Արևելյան Սիբիրում, մինչև Խաղաղ ովկիանոսի ափերը, սակայն իրենց թվով 40 հազարից ավելի չեն։

Բացի թվով խոշոր այդ ժողովուրդներից, կան նաև մի շարք մանր ժողովուրդներ, վորոնցից մի քանիսի թիվը 1000 մարդուց էլ պակաս է։ Այսպես՝ Յենիսեյի միջին հոսանքում ապրում է կետո ժողովուրդը, վորը պատկանում է Սիբիրի հնագույն բնակիչների այսպես կոչված՝ պալեոազիատների խմբին։ Այդ նույն խմբին են պատկանում ոդուլները (յուկագիրները), շատ սակավաթիվ մի ցեղ, վորն ապրում է Կոլըմայի շրջանում։ Այդ սակավաթիվ ժողովուրդների լեզուն ու նրանց ցեղական ծագումը դեռևս քիչ է ուսումնասիրված։

Խորհրդային իշխանության օրով այդ ժողովուրդներն ազատվելով ցարական Ռուսաստանի լծից ու ճնշումից, վորին նրանք յենթարկվում եյին, սկսել են կուլտուրապես արագորեն զարգանալ։ Կազմակերպվել և արագորեն աճում է դպրոցների ցանցը։ Նույնիսկ հեռավոր հյուսիսային շրջաններում գրագիտությունն է տարածվում։ Բուրյաթական ու յակուտական լեզուներով թերթեր ու գրքեր են տպագրվում։ Կյանքի առողջապահական պայմանների բարելավման ու բժշկական օգնության շնորհիվ, նվազել է մահացությունը։ Խոշոր ժողովուրդների զբաղեցրած տերիտորիաներում կազմվել են ավտոնոմ հանրապետություններ—Յակուտական ԱՍՍՀ՝ Յակուտսկ կենտրոնով և Բուրյաթ-Մոնղոլական ԱՍՍՀ՝ Ուլան-Ուդե կենտրոնով։

Տնտեսությունը.—Արևելյան Սիբիրի հսկայական տարածությունը մինչև այժմ էլ դեռ քիչ է յուրացված։ Դրա գլխավոր պատճառը կլիմայական խիստ պայմաններն են և ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասից հեռու լինելը, վորն ավելի խիտ ազգաբնակություն ունի։ Միայն Խորհրդային իշխանության օրով է, վոր սկսվել է նրա տնտեսական կենդանացումն ու աճումը։ Արևելյան Սիբիրի տնտեսական զարգացմանը շատ ուժեղ խթան հանդիսացավ Հյուսիսային ծովային ճանապարհի յուրացումը։

Գյուղատնտեսության, մանավանդ հողագործության զարգացման համար Արևելյան Սիբիրում ավելի քիչ հնարավորություններ կան, քան Արևմտյան Սիբիրում։ Անտառատափա-

տաններն ու տափաստանները սևահողերով ու շագանակագույն հողերով մանր կղզիներ են կազմում հարավում։ Միայն Մինուսինսկի հովտում հողագործության համար հարմար ընդարձակ տարածություններ կան։ Իսկ սովորաբար լեռնոտ ռելյեֆը, խիստ կլիման, շատ տեղերում սակավ տեղումները, հավերժական սառածությունը և ճահճացած հողերն այստեղ խոշոր արգելք են հանդիսանում հողագործության համար։ Չնայած դրան, հացաբույսերի տարածման սահմանն Արևելյան Սիբիրում շատ հեռու հյուսիս է ձգվում։ Գարին, գարնանացան հաճարն ու ցորենը հասունանում են բևեռային շրջանագծի մոտերքը, իսկ կարտոֆիլն ու բանջարեղենը դրանից ավելի դեպի հյուսիս կարող են մշակվել։ Դրան նպաստում է տաք, նույնիսկ շոգ ամառը և մանավանդ ամառվա օրի և արևափայլի յերկարատևությունը։ Հացաբույսերի աճման ու հասունացման շրջանը Յակուտիայի հյուսիսում տևում է 80—90 օր, մոտավորապես 15 օրով պակաս, քան Իրկուտսկի մոտ։ Հացաբույսերի տեղական տեսակներն աստիճանաբար դառնում են դիմացկուն ամառվա ցրտերի, յեղյամի և յերաշտի նկատմամբ։

Արևմտյան Սիբիրի նման այստեղ ևս վերջին ժամանակները ցանքի տարածությունը խիստ ընդարձակվել է։ Բայց և այնպես հողագործությունը, մանավանդ դեպի հյուսիսում, տեղական բնակչությանը սեփական հացով լիովին չի ապահովում։ Յակուտները հյուսիսում և բուրյաթները հարավում զբաղվում են նաև անասնապահությամբ։ Եվենկները զբաղվում են յեղջերվաբուծությամբ, մասամբ անցնում են նաև նստակյաց կյանքի։

Միության ընդհանուր տնտեսության մեջ Արևելյան Սիբիրը նշանակություն ունի վորպես անտառանյութ, մորթեղեն և վոսկի մատակարարող, իսկ ապագայում նրա նշանակությունն ավելի կբարձրանա շնորհիվ նրա նոր միայն ուսումնասիրվող օգտակար հանածոների ու ջրային ուժի հսկայական պաշարների։ Տունգուսկայի քարածխի ավազանն իր պաշարով հավանորեն չի զիջում Դոնբասին։ Վոսկի հանդիպում է Արևելյան Սիբիրում ամենուրեք, բայց առանձնապես հարուստ են Վիտիմի ու Ալդանի բարձրավանդակի հանքավայրերը։ Հենց միայն Անգարա գետի ջրային էներգիայի պաշարները 10 անգամ ավելի

շատ էներգիա կարող են տալ, քան տալիս է Դնեպրոգեսը։ Այդ ամենը յերկաթահանքի, գրաֆիտի, փայլարի, աղի, զանազան գունավոր ու հազվագյուտ մետաղների հետ միասին ապագայում Արևելյան Սիբիրը կդարձնեն խոշորագույն ինդուստրիալ մի մարզ։

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.—Չնայած Արևելյան Սիբիրի բնակչության փոքր թվին և առայժմ նրա ինդուստրիայի ցածր զարգացմանը, քաղաքային բնակչությունն այստեղ ավելի բարձր տոկոս է կազմում, քան Արևմտյան Սիբիրում. իսկ Իրկուտսկի և Չիտայի մարզերում յուրաքանչյուր 100 բնակչից 33-ն ապրում է քաղաքներում։ Սակայն այստեղ չկան այնպիսի խոշոր ու արագ աճող քաղաքներ, ինչպիսիք կան Արևմտյան Սիբիրում։ Արևելյան Սիբիրի խոշորագույն քաղաքները գտնվում են յերկաթուղու վրա և իրենց զարգացումը հենց նրան են պարտական։ Դրանք են՝ Կրասնոյարսկը, վորը Կրասնոյարսկի յերկրամասի կենտրոնն է ու գտնվում է յերկաթուղու և Յենիսեյ գետի հատման տեղում։ Իրկուտսկը՝ Արևելա-սիբիրական մարզի կենտրոնը և ամբողջ Արևելյան Սիբիրի ամենախոշոր կուլտուրական կենտրոնն է։ Դրանցից յուրաքանչյուրը 150 հազարից ավելի բնակիչ ունի։ Այնուհետև՝ Չիտան՝ Չիտայի մարզի կենտրոնը (100 հազ. բնակիչ) և Սրետենսկը, վորից նավարկություն է սկսվում Ամուր գետով։ Մինուսինսկը Յենիսեյի ափին և Յակուտսկը Լենայի ափին, յուրաքանչյուրը 25 հազարից վոչ ավելի բնակչությամբ. դրանք տեղական առևտրական կենտրոններ են։ Մինուսինսկի մոտ աքսորում է յեղել Վ. Ի. Լենինը։ Բևեռային շրջանագծից հյուսիս գտնվող քաղաքները՝ Վերխոյանսկ, Սրեդնեկոլըմսկ և այլն աննշան բնակավայրեր են, յուրաքանչյուրը յերեք-չորս հարյուր բնակչով։

Այդ յերկրի աշխուժացման գործում ավելի մեծ նշանակություն ունեն բոլորովին նոր ծնունդ առած կենտրոնները. Իգարկան Յենիսեյի ափին, վորն արտասահման անտառանյութ առաքելու կենտրոն է. նաև վոսկու արդյունաբերության կենտրոնները՝ Բոդայբոն Վիտիմի ափին ու Նեզամետնի վոսկեհանքը Ալդանի ափին։ Իգարկան, վորը ներկայումս Սիբիրի ամենախոշոր նավահանգիստն է, ունի 12 հազար բնակիչ, փայտասղոց-

ման գործարան, էլեկտրակայան, խորհրդատնտեսություններ, հիմնվել և զարգացել է վերջին մի քանի տարվա ընթացքում։ Դեռ 1928 թվին այստեղ ընդամենը 43 մարդ կար։ Սա խորհրդային շինարարության մի պայծառ օրինակ է Հեռավոր Հյուսիսում։

Ամբողջ բևեռային հյուսիսում ներկայումս կառուցված են բազմաթիվ ֆակտորիաներ, կուլտբազաներ, որոնք տեղական բնակչության մեջ կուլտուրա տարածող փոքրիկ կենտրոններ են հանդիսանում։ Օվկիանոսի ափերի երկարությամբ, Հյուսիսային ծովային ճանապարհի գծով կառուցված են մի շարք օդերևութաբանական ու ռադիո կայաններ։ Այդ ծովափի կետերից ամենամեծ նշանակությունն ունի Տիկսի ծովախորշը, որը գտնվում է Լենայի գետաբերանից դեպի արևելք։ Այդպիսով, Սիբիրի կուլտուրական յուրացման աշխատանքը կատարվում է և՛ հյուսիսից, և՛ հարավից։

Արևելյան Սիբիրում հաղորդակցության գլխավոր, իսկ շատ տեղ էլ միակ ճանապարհները գետերն են։ Նրանց նշանակությունը խիստ մեծացել է Հյուս. ծովային ճանապարհի յուրացումից հետո։ Երկաթուղային մագիստրալն անցնում է երկրի ամենահարավային մասով, տալով միայն մեկ ճյուղ՝ դեպի Մինուսինսկ։ Կան մի քանի ցամաքային ճանապարհներ էլ, որոնք գլխավորապես Լենայի մերձակա շրջանները կապում են հարավի հետ. դրանցից մեկը Իրկուտսկից տանում է մինչև Ժիգալովո, որտեղից սկսվում է նավարկությունը Լենա գետով, մյուսը Յակուտսկից տանում է դեպի Ամուրյան երկաթուղին, երրորդը Ուլան-Ուդեյից տանում է դեպի Մոնղոլիա։ Կա նաև օդային հաղորդակցություն։ Գլխավոր գիծն անցնում է երկաթուղու երկարությամբ, ճյուղեր տալով Կրասնոյարսկից դեպի Իգարկա, Իրկուտսկից դեպի Յակուտսկ և Ուլան-Ուդեյից դեպի Մոնղոլիա։

10. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Դիրքն ու ընդհանուր բնութագիրը։—Խորհրդային Հեռավոր Արևելքը բռնում է ԽՍՀՄ-ի տերիտորիայի ամբողջ արևելյան ծայրամասը։ Միության կենտրոնից ամենահեռավոր մասն է այդ. Մոսկվայից մինչև Խաղաղ օվկիանոս 8500 կմ է։ Երբ Մոսկվայում դեռ կես գիշեր է, Հեռավոր Արևելքում արդեն առավոտ է։

Հեռավոր Արևելքի բնական սահմանները հյուսիս-արևմուտքում այն լեռնաշղթաներն են, որ նրան բաժանում են Արևելյան Սիբիրից, հարավ-արևմուտքում և հարավում նրա սահմանները համատեղվում են պետական սահմաններին և անցնում են Ամուր և Ուսուրի գետերի հոսանքով։

Վարչական տեսակետից մեր ամբողջ Հեռավոր Արևելքը կազմում է երկու երկրամաս՝ Խաբարովսկի և Պրիմորյեյի, որի սահմանների մեջ են մտնում Արևելյան Սիբիրի մի զգալի մասը, Չուկոտյան թերակղզին, Կոլըմայի երկրամասի մի մասը և Ստանովոյ լեռնաշղթայից դեպի արևմուտք ու հյուսիս ընկած շրջանները։ Իր տերիտորիայի չափով Հեռավոր Արևելքը ԽՍՀՄ-ի ամենախոշոր մարզերից մեկն է (3,07 մլ. քառ. կմ. Միության ընդհանուր տարածության մեկ յոթերորդ մասից քիչ ավելի), 7 անգամ մեծ է Ուկրաինայից և $5\frac{1}{2}$ անգամ մեծ՝ Ֆրանսիայից։ Միաժամանակ Հեռավոր Արևելքը բացառիկ բազմազան բնություն ունի։ Այստեղ հանդիպում են ամեն տեսակի լանդշաֆտներ. արևմուտքում հարավային Անդրբայկալի չոր տափաստաններից մինչև արևելքում Կամչատկայի ու Սախալինի մառախլապատ, խոնավ ափերը, հյուսիսում Վրանգելի սառցապատ կղզուց մինչև Հարավ-Ուսուրիական երկրի համարյա մերձարևադարձային լանդշաֆտը։ Այստեղ կան և՛ լեռնաշղթաներ գոլցերով (մերկ գագաթներով), և՛ արգավանդ դաշտավայ-

րեր, և՛ ահագին հրաբխաարեր, որոնք մշտական ձյունով են ծածկված։ Այդ ամբողջ բազմազանությունն ավելի է ուժեղանում պարբերաբար իրար հաջորդող մուսսոններով, որոնք ձըմ-



Նկ. 64. Հեռավոր Արևելք։

ռանը խիստ ցուրտ ու բացարձակ չոր օդ են բերում Արևելյան Սիբիրից, իսկ ամռանը՝ անձրևներ ու մառախուղ օվկիանոսից։ Տունդրան ու հավերժական սառածությունն այստեղ շատ ավելի հեռու հարավ են հասնում, քան ԽՍՀՄ-ի որևէ այլ մասում, իսկ Ուսսուրիի տայգայում բուսականությունը հիշեցնում է ճապո-

պոնիայի ու Չինաստանի մերձարևադարձային շրջանների տաք կլիման։ Հյուսիսում սահնակներին շներ ու յեղջերուներ են լծում, ծովացուլ ու փոկ են որսում, սնվում են դրսից բերված հացով, իսկ հարավում ձի յեն հեծնում, հերկն անում են յեզներով, վագր են որսում, բրինձ են մշակում։

Արևելյան Սիբիրին հատուկ բնական հարստություններին (անտառանյութ, մորթեղեն, յեղջերու) այստեղ ավելանում են նաև ովկիանոսի հարստությունները՝ ծովացուլը, փոկը, թանկարժեք մորթի ունեցող կամչատկական կուղբը (ջրշուն) և ծովարջը։

Հեռավոր Արևելքը խիստ հարուստ է նաև օգտակար հանածոներով։ Բացի ոսկուց, որ մեծ քանակությամբ հանդիպում է շատ վայրերում, այստեղ կան նաև յերկաթ ու գունավոր մետաղներ, քարածուխ ու նավթ, գրաֆիտ ու փայլար։

Բնությամբ բազմապիսի ու հարուստ այդ յերկրամասը մի ամբողջություն է կազմում իր մերձծովային դիրքով։ Նրա առանձին մասերի միջև հաղորդակցության գլխավոր ճանապարհը ծովն է։ Ծովափնյա գծի յերկարությունը հենց միայն արևելյան ծովերով կազմում է մոտ 16 հազ. կմ, իսկ հյուսիսային ծովերը մինչև Կոլըմայի գետաբերանը 4 հազ. կմ ավելի է։

Ըստ բնական պայմանների, Հեռավոր Արևելքը բաժանվում է 5 մասի, որոնք բավականին տարբերվում են իրարից. 1) Պրիամուրյե, 2) Պրիմորյե, 3) Սախալին և Ոխոտի ծովափ, 4) Կամչատկա, 5) Չուկոտյան-Անադիրյան շրջան։

Պրիամուրյե (*Մերձամուրյան շրջան*).—Հեռավոր Արևելքի այն մասը, որը Ստանովոյ լեռնաշղթայից ձգվում է մինչև Ամուր գետը, Պրիամուրյե ընդհանուր անունն է կրում։ Արևելքում նրա սահմանն է Բուրեյական լեռնաշղթան։

Սկսած Անդրբայկալից, Ստանովոյ լեռնաշղթային զուգահեռ, Պրիամուրյեյի վրայով ձգվում են մի շարք լեռնաշղթաներ, ուղղություն ունենալով արևմուտքից դեպի արևելք։ Ավելի դեպի արևելք նրանց փոխարինում են միջորեականի ուղղությամբ ձգված լեռնաշղթաները, որոնք կրում են Բուրեյական ընդհանուր անունը։ Բուրեյական լեռնաշղթան լեռնաշղթաների մի ամբողջ սիստեմ է, որ հյուսիսում 400-500 կմ լայնության է հասնում։ Այստեղ են գտնվում նաև նրա ամենաբարձր կետերը

(2200 մ)։ Դեպի հարավ լեռնաշղթան դառնում է նեղ և ցածրադիր, ապա Ամուրն անցնելով շարունակվում է Մանջուրիայում, Փոքր Խինգան անունով։ Այդ վերջին անունը երբեմն տրվում է նաև Բուրեյական լեռնաշղթային։



Նկ. 65. Պրիմորյեի ու Սախալին կղզու լեռնաշղթաների սխեման։

Ստանովոյ և Բուրեյական լեռնաշղթաների միջև ընկած է Զեյա-Բուրեյական բարձրավանդակը։ Ամուրի ձախ վտակների ստորին հոսանքներում հարթ տարածությունները կազմում են Միջին Ամուրյան դաշտավայրը։ Պրիամուրյեի գետերը հոսում են խորունկ հովիտներում, ունեն զգալի իջվածք և բավականին արագ ընթացք։

Պրիմորյե (Ծովամերձ շրջան).—Պրիմորյե կոչվում է այն տարածությունը, որն ընկած է արևմուտքից Բուրեյական լեռնաշղթայի, Ամուրի ու նրա վտակ Ուսսուրիի ստորին հոսանքի, իսկ արևելքից Ճապոնական ծովի ու Թաթարական նեղուցի միջև

Պրիմորյեի հարավային մասը կոչվում է նաև Ուսսուրիի երկրամաս. Պրիմորյեի մեջ է մտնում նաև Սախալին կղզու հյուսիսային մասը, որը մեզ է պատկանում։ Բուրեյական լեռնաշղթայից դեպի արևելք ընկած է Ստորին Ամուրի դաշտավայրը, որը մի լայն ու տափարակ հարթություն է, բազմաթիվ լճերով։ Պրիմորյեի մնացած մասը բռնում են Սիխոտե-Ալին սիստեմի լեռնաշղթաները, որ դեռևս քիչ են հետազոտված։ Փոքր Խինգանի նման Սիխոտե-Ալինը ևս միջօրեականի ուղղությամբ է ձգվում։ Նրա արևմտյան լանջերը շեղ են, արևելյանն՝ ուղղորդ, որ բաղկացած են հրաբխային ապառներից և ընդհատվում են ծովի մոտ դիք ժայռերով, ուր շատ քիչ ծովախորշեր են պատահում։ Լեռնաշղթայի ամենաբարձր կետերը հասնում են մոտ 2000 մետրի։ Ըստ լանջերի բնույթի, դեպի արևելք հոսող գետերը շատ ավելի կարճ են, քան դեպի արևմուտք հոսողները։ Դրանք նեղ հովիտներով ու լեռնային արագընթաց գետակներ են և ձմեռը չեն սառչում։

Միջօրեականի ուղղությամբ են ընթանում նաև Սախալին կղզու երկարությամբ ձգված լեռնաշղթաները։ Այդ լեռնաշղթաները երկուսն են՝ արևելյան և արևմտյան, դրանցից արևելյանն ավելի բարձր է։

Ամուր.—Պրիամուրյեն և Պրիմորյեն մի ամբողջություն են կազմում Ամուր գետի միջոցով, որն այդ երկրի համար նույն նշանակությունն ունի, ինչ որ Վոլգան Պովոլժյեի համար։ Ամուրը կազմվում է Շիլկա և Արգուն գետերի միացումից։ Ամուրի երկարությունը բացատրվում է նրանով, որ նա ստիպված է շուրջանցել երկու լեռնային սիստեմներ՝ Մեծ Խինգանը և Սիխոտե-Ալինը։ Սիխոտե-Ալինն Ամուրին ուղղություն է տալիս դեպի հյուսիս-արևելք, որտեղ նա թափվում է այսպես կոչված՝ Ամուրի խորշը. այդ խորշը Թաթարական նեղուցի մի մասն է, լցված է Ամուրի բերած տիղմով, այդ պատճառով էլ շատ ծանծաղ է։ Ամուրի հենց գետաբերանին կա մի ավազաթումբ, որն օվկիանոսային նավերին չի թույլ տալիս մտնել գետը։ Ամուրի մյուս առանձնահատկությունը նրա նավարկելիության կարճ տևողությունն է։ Ամուրն իր ստորին հոսանքում սառույցով է պատում այնքան ժամանակ, ինչքան Հյուս. Դվինան Արխանգելսկի մոտ, այնպես որ նավարկությունը տարվա մեջ 160

ուրից ավելի չի տևում։ Վերին հոսանքներում նավարկությանը խանգարում են բազմաթիվ ավազակույտերն ու հաճախակի գոյացող ծանծաղուտները։ Այնուամենայնիվ, Ամուրն իր վտակներով մեծ նշանակություն ունի այդ յերկրի համար, վորպես գետային ճանապարհ մոտ 10 հազար կմ յերկարությամբ։

Ինքը՝ Ամուրը խոշոր ու ջրառատ գետ է, մանավանդ ստորին հոսանքում, Խաբարովսկից մինչև գետաբերանը, վորտեղ նրա լայնությունը 2—15 կմ է։ Այնտեղ, ուր ամուրն իր համար ճանապարհ է բանում լեռների միջով, նա դառնում է նեղ, յերբեմն մոտ 0,5 կմ, իսկ ափերը գեղատեսիլ պատկեր են ներկայացնում։ Ջուրը շատ քիչ է թափանցիկ, վորի պատճառով էլ կոչվել է Ամուր («սև ջուր»)։ Ամուրի վտակներից ամենախոշորն է Զեյան, վորը նավարկելի յե 1000 կմ, Բուրեյան Ամգունը, վորոնք նրա մեջ են թափվում ձախից և Ուսսուրին՝ աջից։

Պրիամուրյեյի ու Պրիմորյեյի կլիման յեվ բուսականությունը.—Պրիամուրյեն և Պրիմորյեյի հյուսիսային մասը գտնըվում են Ուկրաինայի լայնության վրա, Պրիմորյեյի հարավային մասը՝ Ուսսուրի շրջանը՝ Ղրիմի ու Անդրկովկասի լայնության վրա։ Սակայն այդ մարզերի կլիման իրենց աշխարհագրական դիրքին չի համապատասխանում։ Հարևան Արևելյան Սիբիրն իր ցրտերով դարձնում է այդտեղի ձմեռը լայնությանը հակառակ անհամեմատ ավելի խիստ, իսկ մուսոնների պարբերական հաջորդումը կլիմային տալիս է այլ բնույթ, քան ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասումն է։ Ձմեռն այստեղ չոր է, համարյա անձյուն, պարզկա և շատ ցուրտ։ Նույնիսկ Վլադիվոստոկում, ծովի ափին, չնայած վոր ծովը կլիման մեղմացնում է, հունվարի ջերմաստիճանն այնքան է, վորքան Նոր Յերկրի հարավում, թեև Վլադիվոստոկը գտնվում է Սուխումիի լայնության վրա։ Ամառը շոգ է, տոթ, օդը խոնավությամբ հագեցած։ Հուլիսին և օգոստոսին ուժեղ, հաճախ հորդ անձրևներ են տեղում։ Տարվա տեղումների կեսից ավելին լինում են այդ յերկու ամիսների ընթացքում, գետերը հորդանում են և հաճախ առաջացնում ավերիչ հեղեղումներ։ Աշունը պարզ է, բավականին չոր ու տաք, գարունը ցուրտ է ու քամոտ։ Ուսսուրիի շրջանի հարավային մասում օգոստոս ու սեպտեմբեր ամիսներին յերբեմն տայֆուններ են լինում։

Տայֆունները սոսկալի ուժի քամիներ են, վորոնք սկզբում փոշու ամպեր են բերում, իսկ հետո հեղեղներ, վորոնցից մեկ յերկու օրվա ընթացքում գետերը դուրս են գալիս իրենց ափերից, լեռնային գետակները փոթորկալից գետեր են դառնում ու հեղեղում դաշտերը, յերբեմն տներ են քանդում, ճանապարհներ ու կամուրջներ ավերում և յերկար ժամանակով հաղորդակցությունը կտրում։ Պատահել են դեպքեր, յերբ 5 ժամվա ընթացքում ջուրը բարձրացել է 4 մ։

Կլիմայի այս հիմնական տիպը փոփոխվում է ըստ լեռների դասավորության, հովիտների ուղղության և ծովի մոտիկության։ Ուսսուրիի շրջանում ձմեռը թեև ավելի տաք է լինում, քան



Նկ. 66. Մի տեսարան Պրիամուրյեյից, Բիրոբիջանի մոտերքը։

Ամուրի շրջանում, սակայն մարդն ավելի դժվար է դիմանում, վորովհետև այստեղ ավելի հաճախ են լինում քամիներ, վորոնք շատ ավելի անդուրեկան են այնտեղ, ուր ձյուն քիչ է գալիս և ձյունախառն բուքերի փոխարեն փոշու ամպեր են գոյանում։

Սառնամանիքների յերկարատևության և ձյան ծածկույ-

թի բացակայության հետևանքով, հողի վերին շերտը ձմռանը սառչում է մեծ խորությամբ, մինչև 2-4 մ, իսկ ամռանը շատ դանդաղ է հալչում, հուլիսում տեղ-տեղ միայն օգոստոսի կեսերին։ Դրանից ավելի խորը մեծ մասամբ հավերժական սառածություն է։ Սառածության շնորհիվ մթնոլորտային տեղումների մեծ մասն անմիջապես հոսում են գետերը, առաջացնելով կարճատև հորդացումներ։ Ստորերկրյա ջրեր քիչ կան և ձմեռը հաճախ գետերը բոլորովին ցամաքում են, իսկ այն ստորերկրյա ջրերը, վորոնք մինչև սառած շերտը չեն խորացել, առաջացնում են սառցակատող աղբյուրներ, կամ թե հողը ուռցնում են։ Հյուսիսային շրջաններում սառած շերտը համատարած է, հարավում՝ միայն գետահովիտներում։

Պրիամուրյեյի ու Պրիմորյեյի մեծ մասը պատած է խառն անտառներով։ Հյուսիսի անտառներում գերակշռում են փշատերև ծառերը, խեժափիճն հարավում և յեղևնին արևելքում։ Այս ամենատարածված տեսակներին միանում են սպիտակ յեղևնին և սոճին։ Ավելի հարավ փշատերև ծառերը խառնվում են մթին անտառներին։ Ոխոտյան տիպի անտառների սահմանն անցնում է Ամուրով մինչև հ. լ. 49°, ապա այդ զուգահեռականով գնում է մինչև Սիխոտե-Ալին, Սիխոտե-Ալինը կտրելով ծովի ափով ընթանում է մինչև հ. լ. 47°-ը։ Դրանից հարավ տարածվում են մանջուրական տիպի խառն անտառները, վորոնք մարդու կողմից զգալիորեն ձևափոխվել են։ Փշատերև ծառերն այդտեղ հանդիպում են միայն վորպես խառնուրդ։ Անտառները բաղկացած են մանջուրական յեղևնուց, վոր կապտավուն գեղեցիկ փշատերևներ ունի, սպիտակակեղև յեղևնուց, լորենուց, զանազան թղկիներից, կաղնուց, կեչուց, հացենուց, կնձենուց վորոնց փաթաթված են զանազան լիաններ, ծառերի տակ բուսնում են մանուշակագույն ծաղիկներով լոբաբույսեր, բարձր աճող խոտ և ծառանման ձարխոտ։ Ջրբաշխներում անտառները բաղկացած են մոնղոլական կաղնուց սև ու սպիտակ կեչու խառնուրդով, նաև ծառերի տակ նույնպես փարթամորեն խոտեր են բուսնում։ Իսկ գետահովիտներում բռնում են բարձրաբուն անտառներ, վորոնք բաղկացած են սպիտակակեղև կնձենուց, ծփենուց, ամուրական թավշածառից, խցանածառից ամուրական ընկուզենուց, ամուրական յասամանից, վորն այնտեղ ծառի

բարձրություն է հասնում, ապա խնձորի և տանձի ծառերից։ Այդտեղ այլևս փշատերև ծառեր չեն հանդիպում։

Հարավային Ուսսուրիի շրջանում անտառներն ամենից շատ են բազմազան. այդտեղ մինչև 150 տեսակ ծառեր ու թփեր կան, սակայն մշտադալար ծառեր նույնիսկ Հարավ-Ուսսուրիական շրջանում չկան, վորովհետև ձմեռը խիստ է լինում։

Բացի սաղարթավոր անտառներից այդտեղ զգալի տարածություն են բռնում նաև այսպես կոչված՝ ամուրական տափաստանները, վոր գտնվում են Զեյա-Բուրեյական սարահարթում, Ամուրի միջին հոսանքում և Խանկա լճի շուրջը։ Սակայն տափաստան անունն այստեղ ամենևին ճիշտ չէ։ Դրանք խոնավ, յերբեմն նույնիսկ թաց ու ընդարձակ դաշտավայրեր են, ծածկված մարդու հասակի փարթամ խոտով։ Բուսականությունը բաղկացած է հացահատիկներից, բարդածաղիկներից, շուշաններից, ոչինդրից, դաշտաբադեղից, վիկայից ու մասրենու թփերից, թե հատ ու կենտ ծառեր և թե նույնիսկ անտառակներ՝ բաղկացած կաղնի, կեչի, բարտի ծառերից։ Հողը կիսաճահճային է, արգավանդ։ Այդ մարգագետիններն առաջացել են անտառների վոչընչացման հետևանքով։ Սակայն այդտեղ պատահում են նաև չոր տափաստանային բույսեր ու կենդանիներ (փետրախոտ, դետնասկյուռ, արոս), վորոնք այդտեղ են փոխադրվել Անդրբայկալից։

Այդտեղ բավականին բազմազան է նաև կենդանական աշխարհը։ Շոգ հարավի և ցուրտ հյուսիսի ներկայացուցիչներն այդտեղ ապրում են ամենամոտիկ հարևանությամբ։ Արդյունագործական նշանակություն ունեցող կենդանիներից այդտեղ ապրում են՝ սամույրը, սկյուռը, յեղջերուի յերեք տեսակը (մարալ, բծավոր և հյուսիսային յեղջերուն), իշայծյամը, վայրի այծը, վարազը. այդտեղ վորսում են նաև վագր, ջրարջանման շուն, մշկայծյամ։ Թռչուններից արդյունագործական նշանակություն ունեն սագը, բադը, կարապը, փասիանը, ցախաքլորը, սալամբը։ Զնայած կենդանիներին ավելի ու ավելի շատ են կոտորում, բայց և այնպես Պրիամուրյեն մինչև այժմ էլ հանդիսանում է յերկրիս այն սակավաթիվ անկյուններից մեկը, վորտեղ մարդու կողմից հալածված գազաններից դեռևս այնքան մեծ քանակությամբ կան, վոր մի շարք ցեղերի հնարավորու-

թյուն է տալիս վորոշրդությամբ պահպանել իրենց գոյությունը։ Ներկայումս այդտեղ մի քանի արժեքավոր տեսակների վորսի արգելարաններ են սահմանված, իսկ մի քանի արժեքավոր տեսակներ, ինչպես որինակ, բծավոր յեղջերուն, բազմացվում են բուծարաններում։

Սախալին։ Օխոտի ծովափ.—Սախալին կղզին թեպետ և Ղրիմորյեյին մոտիկ է գտնվում, սակայն նրանից տարբերվում է ավելի ցուրտ ու խիստ կլիմայով։ Ձմեռն այդտեղ նույնքան ցուրտ է, վորքան մայր ցամաքում, և Թաթարական նեղուցը, վորի ամենանեղ տեղը 7 կմ է, ծածկվում է սառույցով։ Ամռանն Օխոտի ծովը, վորի վրայով դեռևս հունիս ամսին սառույցներ են ողում, ցրտեցնում է կղզու արևելյան մասը։ Այդ պատճառով էլ թեպետ Սախալինի հյուսիսային մասը, վոր պատկանում է ԽՍՀՄ-ին, գտնվում է նույն լայնության վրա, ինչ Յեվրոպական մասում Տուլայի ու Խարկովի միջև ընկած տարածությունն է, այնուամենայնիվ այդտեղ կլիման նույնն է, ինչ վոր Սառուցյալ օվկիանոսի յեվրոպական ափին։ Այդտեղ ժայռերի վրա կան նույնիսկ «թռչունների շուկաներ»։ Ձմռանը հաճախ ջերմաչափի մեջ սնդիկն էլ է սառչում։ Վերջին սառնամանիքները լինում են մայիսին, իսկ առաջին յեղյամն արդեն՝ սեպտեմբերին։ Կղզու հյուսիսային մասի ցածրադիր ափերը ներկայացնում են տունդրա, իսկ մնացած ամբողջ տարածությունը ծածկված է տայգայով։ Սաղարթավոր ծառեր հանդիպում են միայն հովիտներում. Չնայած բնական դաժան պայմաններին Սախալինի կենտրոնում հողագործությունը լրիվին հնարավոր է։

Նկ. 67. Օխոտի ծովափին։

Բուն կղզին հարավից հյուսիս ձգված ձև ունի։ Միջօրեականի ուղղությամբ նրա յերկարությունը մոտ 1000 կմ, վորի կեսը կազմում է Խորհրդային Սախալինը։ Ճապոնիայի սահմանն անցնում է 50-րդ զուգահեռագծով։ Միջօրեականի ուղղությամբ են ձգված նաև յերկու լեռնաշղթաները, վորոնցից արևելյանը մինչև 2000 մ բարձրության է հասնում։ Ափերն արևելյան կողմում ցածր են, իսկ արևմտյան կողմում՝ ուղղորդ։ Հարմար ծովախորշեր քիչ կան։

Սախալինը հարուստ է հանածոներով, վորոնցից ներկայումս մշակվում են քարածուխն ու նավթը։

Օխոտի ծովափը, սկսած Ամուրի գետաբերանից մինչև Պենժինայի ծովախորշը հյուսիս-արևելքում, ներկայացնում է մի նեղ շերտ, վորն ընկած է Օխոտի ծովի և Ջուգջուրի ու Կոլըմյան լեռնաշղթաների միջև։ Ծովն այդտեղ փոթորկահույզ է՝ բարձր մակընթացություններով և ուժեղ հոսանքով, ձմեռը մերձափնյա սառույցներով, վորոնց քշում ու փշրում են քամիները։

Կլիման խիստ է։ Տարեկան միջին ջերմաստիճանը Գիժիգայում —6,5° է։ Ամռանն Օխոտի ծովը զովացնում է իր առափնյա շրջանները, բայց և այնպես ափի մոտ սառնամանիքներով որերի թիվն ավելի քիչ է, իսկ տաք յեղանակներն ավելի շատ, քան ափից հեռու վայրերում։ Ամառը զով է ու խոնավ, լինում են թանձր մառախուղներ և ուժեղ ցուրտ քամիներ։ Ձյունը գալիս է հոկտեմբերին և նստած է մնում մինչև հունիս, յերբեմն ավելի ուշ։ Ձյան շերտի հաստությունը հասնում է 1 մ, իսկ ձյան հյուսերն այնքան խոշոր են լինում, վոր տեղի բնակչությունը՝ նըմիլանները (կորյակները) ծխնելույզներից են խրճիթ մտնում։

Օխոտի ծովի առափնյա լեռներում կան վոսկու և քարածխի հանքեր։

Կամչատկա.—Կամչատկա թերակղզին հյուսիսից դեպի հարավ ձգված է 1200 կմ յերկարությամբ։ Աշխարհագրական տեսակետից նա Հեռավոր Արևելյան յերկրամասի ամենաառանձնացած մասն է, վոր շրջապատված է ծովով և միայն հյուսիսում մի փոքր պարանոցով միացած է մայր ցամաքին։ Հնագույն ժամանակներում Կամչատկան հենց կղզի էլ յեղել է։ Կամչատկային են կցված նաև թերակղզուց դեպի արևելք գտնվող Կոմանդորի կղզիները։

Թերակղզու յերկարությամբ անցնում են յերկու լեռնա-

շղթաներ, որոնց միջև գտնվում է մի ընդարձակ գոգավորություն: Նրա միջով հոսում է Կամչատկա գետը: Ափերն արևելյան և մանավանդ արևմտյան կողմում ցածրադիր են և հարմար ծոցեր քիչ ունեն:

ԽՍՀՄ-ի բազմազան բնության մեջ Կամչատկան միակ տեղն է, ուր մեր օրերին էլ շարունակվում է հրաբխային գործ-



Նկ. 68. Կրոնոցկայա սոպկան Կամչատկայում:

ծունեությունը, այն էլ շատ մեծ չափերով: Երկու լեռնաշղթաներն էլ, գլխավորապես արևելյանը, կազմված է հրաբուխներից ժայթքած ապառներից: Լավայի ու հրաբխային մոխրի առատ հաստ շերտերն ահագին տարածություն են ծածկում: Կամչատկայում կա 100-ից ավելի հրաբխային լեռ, որոնք այստեղ կոչվում են «սոպկա»: Նրանցից 17-ը գործող են: Հանգած հրաբուխներ կան և՛ արևմուտքում, և՛ արևելքում, իսկ գործողները արևելյան լեռնաշղթայում են և միայն մեկն արևմտյանում: Նրանք դասավորված են օղակաձև խմբերով, ժայթքումների հնագույն կենտրոնների շուրջը, որտեղ այժմ մասամբ լճեր են գոյացել (Կրոնոցկի լիճը): Ամենից նշանավորն են հետևյալ հրաբուխների խմբերը (հարավից դեպի հյուսիս), Ավաչինի, Կրոնոցկի և Կլյուչևսկի: Այստեղ է գտնվում Կամչատկայի ամենա-

բարձր հրաբուխը՝ Կլյուչևսկայա սոպկան (4778 մ): Մեզ հայտնի ժամանակից (XVIII դարի առաջին կեսից) մինչև հիմա Կլյուչևսկայա սոպկան 30 անգամ ժայթքում է ունեցել:

Ձյան գիծը Կամչատկայում անցնում է 1500-1700 մ բարձրության վրա և հրաբուխների գագաթը ամբողջ տարին ծածկված է լինում ձյունով: Ժայթքումների ժամանակ ձյունը հալչելուց հեղեղներ է առաջանում: Սակայն ժայթքումները, չնայած իրենց ուժին, մեծ ավերումներ չեն կատարում, որովհետև Կամչատկայում բնակչությունը խիստ նոսր է: Բացի հրաբուխներից, Կամչատկայում կան նաև բազմաթիվ տաք աղբյուրներ:

Կամչատկայի հյուսիսային մասը գտնվում է Լենինգրադի լայնության վրա, հարավային մասը՝ Կիևի: Այստեղ կլիման մեղմ է, քան Օխոտի ծովի ափերին, բայց ավելի խիստ է, քան նույն լայնության վրա՝ ԽՍՀՄ Եվրոպական մասում: Տարեկան միջին ջերմաստիճանն է հյուսիսում՝ —4°, հարավում՝ 0°: Գարունն ուշ է բացվում, ամառը կարճ է տևում: Արևմտյան մասը, որ Օխոտի ծովափին է, ավելի ցուրտ է արևելյանից: Կենտրոնական մասում կլիման ավելի ցամաքային է և ավելի տաք, ձմեռը սակավաձյուն է. մինչդեռ արևելյան ափին տեղումներ շատ են լինում, շատ խոր ձյուն է նստում և հաճախ բուքեր ու ամպամած օրեր են լինում: Հյուսիսային մասը ներկայացնում է տունդրա, որ այստեղ հս. լ. 60°-ից էլ ավելի հարավ է անցնում: Թերակղզու միջին մասում և մասամբ ափնյա շրջանում տայգաներ են: Ծովափերին տայգան փոխվում է խիտ ու անանցանելի մանր թփուտների, իսկ լեռնալանջերում փոխվում է յեղևնուտների: Մարգագետնային բուսականությունը, մանավանդ Կամչատկա գետի հովտում, զարմացնում է իր փարթամ զարգացումով, կան խոտեր, որոնք 2-3 մ բարձրության են հասնում: Հարավում՝ Կամչատկա գետի հովտում մշակում են բանջարեղեն և կազմակերպված է հացահատիկային տնտեսություն: Այստեղ չկան անտառային կենդանիներ՝ իշայծյամ, ջրարջանման շուն, լուսան. անտառազուրկ պարանոցը խոչընդոտ է հարուցում այս կենդանիներին մայր ցամաքից Կամչատկա անցնելու: Սկյուռը Կամչատկա յե անցել ընդամենը 15 տարի առաջ:

Կամչատկայի բնակչությունը շատ սակավաթիվ է: Այդ-

տեղ ապրում են ընդամենը 35.000 մարդուց վոչ ավելի: Այդտեղ բնակչությունն էլ կենտրոնացած է գլխավորապես գետերի հովիտներում ու ծովափերին: Խորքերում կան միայն բնիկների սակավաթիվ քոչավայրերը: Ռուսները կազմում են բնակչության կեսից մի քիչ ավելին. Մնացածը Նըմիլաններ (կորյակներ) են, Եվենկներ, Եվեններ (լամուտներ) և իտելմեններ (կամչադալներ): Նրանց գլխավոր զբաղմունքն է ձկնորսությունը, ծովային գազանների վորսը, յեղջերվաբուծությունը և մորթեղենի արդյունագործությունը:



Նկ. 69. Ձմեռը Կամչատկայում: Շան լծած սահնակներ:

Կամչատկայի ջրերը շատ հարուստ են ձկներով: Յերբեմն ձուկն այնքան շատ է լինում, վոր կարելի յե ուղղակի ձեռքով վորսալ: Վերջին տարիներս ձկնարդյունաբերությունը շատ է զարգացել. կառուցվել են կոնսերվի բազմաթիվ գործարաններ, գլխավորապես գետաբերաններում: Արդյունագործական ձկներից ամենաարժեքավորներն են՝ կետան (նապատակագլուխ ձուկ), կիժուչը, ավելի պակաս արժեքավոր է կուզաձուկը (գորբուշկա): Շատ կոնսերվ է պատրաստվում նաև ծովային խեցգետնից:

Ձուկը Կամչատկայի, ինչպես և ամբողջ հյուսիս-արևելքի համար մեծ նշանակություն ունի: Ձուկը սնունդ է հանդիսանում վոչ միայն մարդկանց, այլ և շների համար կեր է, վորոնք այստեղ լծկան են: Այդ պատճառով էլ Կամչատկայում գյուղերը սովորաբար գտնվում են գետերի ափին, և գետափը գլխավոր փողոցի դեր է կատարում: Սակավաթիվ կովերի ու ձիերի համար սովորաբար գոմեր չեն կառուցում և այդ կենդանիները, ինչպես և լծկան շները, ձմռան ուժեղ քամիներից պաշտպանվում են ձյունակույտերի հետևը: Տների մոտ գտնվում են «կախարաններ», վորոնց վրա ձուկ են կախում, բարձր ձողեր՝ շներին կապելու համար և բարձր ցցերի վրա շինած ամբարներ՝ մթերքներ պահելու համար: Գյուղերի մոտ գետերի վրա հատուկ արգելակներ են շինված, վորտեղ ձուկ են վորսում:

Չուկոտ-Անադիրյան յերկիր.—Չուկոտ-Անադիրյան յերկիրը դեռևս քիչ ուսումնասիրված մի շրջան է, բայց հավանորեն, ունի հանքային մեծ հարստություններ, մանավանդ վոսկի, ինչպես հարևան Ալյասկան է: Այստեղ արևմուտքից արևելք ձգվող Անադիրի լեռնաշղթան այդ յերկիրը բաժանում է յերկու մասի. հարավայինը Անադիր գետի ավազանն է, վոր թափվում է Բերինգի ծովի Անադիրի խոշոր ծոցը, հյուսիսային մասի գետերը թափվում են Սառուցյալ ովկիանոսը: Դրանցից ամենանշանավորներն են՝ Կոլըմայի աջ վտակները: Անադիրի լեռնաշղթան, հանդիսանալով ջրբաժան գիծ, ամենաբարձր կետերում հասնում է 2700 մ: Անադիրի յերկիրը մասամբ բլրաշատ է, մասամբ դաշտավայր, ծածկված տունդրայով, վորտեղ ամռանը մեծ թվով բազմապիսի թռչուններ են չվում:

Տեղական բնակիչները գլխավորապես լուօրավետլաններն (չուկչաներ) են և Նըմիլանները. կան և սակավաթիվ յուիտներ (էսկիմոսներ): Նրանցից վոմանք զբաղվում են յեղջերվաբուծությամբ (յեղջերաբույծ չուկչաները). Նրանք ձմեռն անց են կացնում յերկրի խորքում, իսկ ամռանը իրենց հոտերը քշում են դեպի ծովափ, վորտեղ միջատները յեղջերուներին շատ չեն անհանգստացնում: Հենց այդ ժամանակ էլ նրանք իրենց մթերքները փոխանակում են զանազան ապրանքների հետ, վոր այստեղ են բերվում շոգենավերով: ԽՍՀՄ-ում յեղած յեղջերուների կեսից ավելին գտնվում է Անադիրի յերկրում և Կամչատկայում: Նստակյաց չուկչաներն ապրում են վորսորդությամբ, ծովային կենդանիներ և ձուկ են վորսում: Նրանք օգտագործում են լծկան

չներ։ Ռուսներն այստեղ շատ սակավաթիվ են. յեղածները ֆակտորիաներ (ապրանքափոխանակության կետերի) և զանազան բազաների ծառայողներն են, գիտական կայանների աշխատողները, վորոնց թիվն այս հեռավոր ծովափերին շարունակ աճում է։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը.—Հեռավոր Արևելքը բաժանվում է 2 յերկրամասի. Պրիմորյեյի՝ Վլադիվոստոկ կենտրոնով՝ հարավ-արևելքում և Խաբարովսկի (Խաբարովսկ կենտրոնով) հյուսիս-արևմուտքում։ Հեռավոր-Արևելքի կազմի մեջ է մտնում Հրեական ավտոնոմ մարզը՝ Բիրոբիջան կենտրոնով։ Յակուտական ԱԽՍՀ-ից հետո, դրանք ԽՍՀՄ-ի ամենանոսր բնակչություն ունեցող մարզերն են։ Այստեղ, 3 միլիոն քառ. կմ ավելի տարածության վրա ապրում է ընդամենը մոտ 2 միլիոն մարդ։ Այն էլ, բնակչության ճնշող մեծամասնությունը գտնվում է Պրիմորյեյում և Ուսսուրիի շրջանում, վորտեղ վորոշ շրջաններում, բնակչության խտությունը հասնում է 1 քառ. կմ 5,10 և նույնիսկ 20 մարդու։ Մյուս մասերի բնակչությունը նույնքան նոսր է, վորքան Արևելյան Սիբիրում, այսինքն, 100 քառ. կմ-ին 1-ից՝ մինչև 10 մարդ։

Ներկայումս բնակչության չորս հինգերորդ մասից ավելին ռուսներ և ուկրաինացիներ են, մեկ տասներորդ մասից պակաս կազմում են չինացիք, վորոնք մեծ մասամբ ապրում են Պրիմորյեյում։ Ռուսներն ու չինացիք յեկվոր ժողովուրդներ են, իսկ մյուսները, պալեոազիատները՝ մայր ցամաքի այդ մասի առաջին բնակիչներն են։ Նրանց մի մասը մոտիկ է Ամերիկայի հնդիկներին։ Այդպես են յուիտները, վորոնք ապրում են հեռու հյուսիս-արևելքում, ունանգանները (ալեուտները)՝ Կոմանդորի կղզիներում, լուորավետլանները, վոր այդ ժողովուրդներից ամենաբազմամարդն են և ապրում են Չուկոտյան թերակղզում, նըմիլանները՝ Կամչատկայի հյուսիսում և իտելմենները՝ հարավում։ Պալեոազիատների մյուս խումբն են կազմում նիվխերը (գիլյակները), վորոնք ապրում են Ամուրի ստորին հոսանքում և Սախալին կղզու վրա։

Տունգուզ-մանջուրական խմբին են պատկանում, բացի բուն տունգուզներից կամ եվենկներից, նաև նանիները (որոչոնները), եվենները (լամուտները), նանայները (գոլդերը), ուդեհեյները։ Բացի այդ, Հեռավոր Արևելքի սահմաններում կան

սակավաթիվ յակուտներ, հրեաներ։ Հեռավոր Արևելքում ապրում են ընդամենը մինչև 36 տարբեր ժողովուրդներ։

Խորհրդային իշխանությունը բոլոր միջոցները ձեռք է առնում, վորպեսզի այդ ժողովուրդները կուլտուրական զարգացման ավելի բարձր մակարդակի հասնեն։ Կազմակերպված են ազգային խորհուրդներ, մեծանում է ազգային դպրոցների ցանցը, բարելավվում է նյութական դրությունը, ստեղծված են ազգային շրջաններ։ Վերացել են շահագործումն ու ճնշումը, վոր ցարական ռեժիմի ժամանակ բաժին եր ընկել բոլոր մանր ժողովուրդներին։

Տնտեսությունը.—Ինչպես ԽՍՀՄ-ի Ասիական մասի մյուս մասերը, այնպես էլ Հեռավոր Արևելքը ներկայումս իր արտադրողական ուժերի զարգացման բուռն վերելքի շրջան է ապրում և արդեն մեր յերկրի տնտեսության մեջ նշանակալից դեր է խաղում։ Սակայն Հեռավոր Արևելքը դեռևս ավելի մեծ չափով, քան Արևելյան Սիբիրը, իրենից ներկայացնում է ապագայի յերկիր։

Այդ յերկրամասում արագ կերպով սկսում է զարգանալ արդյունաբերությունը, վորն առաջ է անցնում գյուղատնտեսության զարգացումից։ Այդ է՝ անտառանյութի մշակությունը, ձկնարդյունաբերությունը, ձկնամթերքների վերամշակությունը (յերկրորդ տեղը ԽՍՀՄ-ում) և լեռնարդյունաբերությունը՝ վոսկու (Միության մեջ արդյունահանվող ամբողջ վոսկու 1/3 մասը), քարածուխ և նավթ (Սախալինում)։ Դրան ավելանում է նաև մորթեղենի մթերումը, վորի նկատմամբ այդ յերկրամասը ԽՍՀՄ-ում առաջնակարգ տեղերից մեկն է բռնում։

Հողագործության զարգացման գլխավոր շրջաններն են— Զեյա-Բուրեյական բարձրավանդակի հարթությունները և Միջին Ամուրի դաշտավայրը հյուսիսում և Ուսսուրիի ու Մերձխանկայի դաշտավայրերը հարավում։ Այդ, այսպես կոչված տափաստաններում՝ կլիաճահճային հողերը շատ բերքատու յեն (ամուրական սևահող)։ Սակայն գարնան յերաշտները և բերքահավաքի ժամանակ տեղացող հորդ անձրևները վոչ այնքան բարենպաստ պայմաններ են ստեղծում գյուղատնտեսության զարգացման համար։ Չնայած դրան, վերջին ժամանակներս ցանքերի տարածությունը կրկնապատկվել է և նախատեսվում է նրա հետագա աճը։ Հյուսիսում մշակվում են հացաբույսեր, համարյա բա-

ԽՍՀՄ ֆիզ. աշխ. 7-րդ. դ.—13

ցառապես գարնանացան: Հարավում ծավալվում են բրնձի, լոբաբույսերի (սոյա) և կորեկի տեղական տեսակները (չումիզ, գաոլյան): Չինացիք կիրառում են մարգային մշակությունը, վորը Չինաստանում սկիզբ է առել հազարավոր տարիներ առաջ:

Միության ընդհանուր տնտեսության մեջ Հեռավոր Արևելքը հատուկ նշանակություն ունի: Ներկայումս նա, Արևելյան Սիբիրի նման, հանդիսանում է ոսկի, մորթեղեն, ձկնամթերք ու փայտանյութ մատակարարող: Ոսկու հանք հանդիպում է յերկրամասի բոլոր վայրերում: Շատ տեղերում, ձուկն ու փայտանյութն արտահանման առարկա յեն հանդիսանում: Մորթեղենի արդյունաբերությունն ուժեղանում է զանազան վայրերում խոշոր արգելարաններ սարքելով, վորտեղ բազմացվում են գազանների թանկարժեք տեսակները: Ձկնորսությունը ևս առաջադիմում է, մանավանդ՝ զանազան տեսակի կոնսերվների արտադրությունը: Աճում է նաև փայտանյութի արտահանությունը: Հետագայում, վորքան ավելի շատ կհետազոտվեն մինչև այժմ չուսումնասիրված վայրերը (կհայտաբերվեն նորանոր հանքային հարստություններ), յերկրամասում կզարգանան արդյունաբերության զանազան ճյուղեր սկսած մետալուրգիայից, վորի կառուցման համար այժմ իսկ արդեն կան իրար մոտիկ յերկաթահանքեր (Բուրեյական լեռնաշղթայում) և քարածխահանքեր (Բուրեյայում):

Հեռավոր Արևելքը՝ մեր դուռն է դեպի Խաղաղ ովկիանոս, մի դուռ, վորն առանձին նշանակություն ունի վոչ միայն Հեռավոր Արևելքի համար, այլև նրա թիկունքում գտնվող Սիբիրի համար: Հեռավոր Արևելքի ծովերը, մեր յերկրի արևելյան կեսի զարգացման կապակցությամբ, պետք է խաղան նույն դերը, ինչ վոր Բալթիկ ու Սև ծովերն արևմուտքում: Դրա համար էլ մեր տերիտորիայի այդ մասի պաշտպանությունը ճապոնական ռազմամոլներից առանձնապես կարևոր նշանակություն է ստանում:

Քաղաքները յեվ հաղորդակցության ուղիները.—Հեռավոր Արևելքում քաղաքային բնակչության տոկոսը հավասարվում է 36-ի: Սակայն այստեղ մեծ քաղաքներ քիչ կան: Նրանցից ամենախոշորն է Վլադիվոստոկը, վորը 200 հազար բնակիչ ունի: Յերկրային կենտրոն Խաբարովսկն ունի մոտ 100 հազար: Մյուս քաղաքները դրանից շատ ավելի փոքր են: Կամչատկայի մարզի

կենտրոն Պետրոպավլովսկը մի քանի հազար բնակիչ ունի միայն: Սակայն, այս ևս բազմամարդ քաղաք է, յեթե համեմատելու լինենք Հեռավոր հյուսիսի բնակավայրերի հետ, վորտեղ բնակչությունը հաշվվում է հարյուրներով, իսկ յերբեմն էլ տասնյակներով: Սակայն քաղաքների աճումը բավականին արագ է տեղի ունենում: Հին քաղաքներում այդ կապված է կամ աշխարհագրական դիրքի կամ արդյունաբերության զարգացման հետ: Բնակչության ավելի արագ աճումով աչքի յեն ընկնում այն բնակավայրերը, վորոնք ընդամենը մի քանի տարի առաջ են հիմնըվել: Այդպես է, օրինակ, ստորին Ամուրի ափին Կոմսոմոլսկը, վորտեղ նավաշինական խոշոր գործարան է կառուցվում, կամ Օխոտի ծովի ափին Մագադան քաղաքը, կամ թե Հրեական ավտոնոմ մարզում Բիրոբիջանը: Խոշոր քաղաքները գտնվում են կամ յերկաթուղային մագիստրալի վրա (Խաբարովսկ-Վորոշիլով-Վլադիվոստոկ), կամ ջրային մագիստրալի՝ Ամուրի ափին (Բլագովեշչենսկ-Կոմսոմոլսկ-Նիկոլայեվսկ) և կամ առաջինի ու յերկրորդի հատման կետում, ինչպես Խաբարովսկն է: Այդ յերկու գլխավոր ճանապարհները կտրում են Հեռավոր Արևելքը, սակայն անցնում են նրա ամենահարավային ծայրով: Ամուրը միաժամանակ մեր պետական սահմանագիծն է հանդիսանում: Խաբարովսկում այդ ճանապարհները բաժանվում են. յերկաթուղին Ուսսուրիի հովիտով ընթանում է դեպի հարավ, դեպի Ճապոնական ծովը, իսկ Ամուրը՝ հյուսիս-արևելք, դեպի Օխոտի ծովը:

Բացի գոյություն ունեցող Սիբիրի մագիստրալից, ներկայումս կառուցվում է Ամուր-Բայկալյան յերկաթուղին և նախագծվում է մի ուրիշ գիծ Խաբարովսկից Սովետսկայա գավան, վորը Վլադիվոստոկից հետո յերկրորդ նավահանգիստն է այդ յերկրամասում և վորտեղից մեծ մասամբ առաքվում է արտահանվող անտառանյութը:

Սակայն այդ ճանապարհներն սպասարկում են միայն Պրիամուրյեն և Ուսսուրիի յերկրամասը: Մնացած ամբողջ տարածությունը, վոր գտնվում է հս. լ. 54° հյուսիս՝ Օխոտի ծովափնյա մասը, հեռավոր Չուկոտյան թերակղզին, Կամչատկան, ինչպես և ավելի մոտիկ Սախալինն ու Պրիմորյեյի ափերը,—հարավի հետ կապվում է միայն ծովային ճանապարհով, իսկ վերջին ժամանակներս նաև օդային: Դեպի Պետրոպավլովսկ տանող,

ապա ավելի հյուսիս՝ դեպի Բերինգի նեղուցը տանող ծովային ճանապարհը մի մասն է հանդիսանում Հյուսիսային ծովային ճանապարհի, վորն սպասարկում է Չուկոտյան ծովափերը՝ մինչև Կոլըմայի գետաբերանը։ Ամբողջ հյուսիսային ծովափին այժմ կառուցված են մի շարք կայաններ՝ Ռեյլենը, Վանկարեմը և այլն։

Օխոտի ծովափնյա բնակավայրերից մի քանիսից Այանից, Օխոտսկից, Մագադանից սկսվում են ցամաքային ճանապարհներ, վորոնք տանում են դեպի յերկրի խորքերը։

Ծովափնյա գետերն իրարից բաժանող տարածությունները բավականին յերկար են։ Վլադիվոստոկից մինչև Պետրոպավլովսկ 2600 կմ է, Պետրոպավլովսկից Պրովիդենյա ծովախորշը՝ 2000 կմ, իսկ այդտեղից մինչև Կոլըմա՝ 1600 կմ։

Ներկայումս այստեղ արդեն օդային կապ է հաստատված։ Թռիչքի պայմանները շատ են ծանր, սակայն խորհրդային օդաչուներն այդտեղ ևս հաղթանակող են։ Այդ այնքան պարզ կերպով յերևաց չելյուսկինցիների փրկության եպոպեայի ժամանակ։

11. ՂԱԶԱԽՍՏԱՆ

Դիրքն ու ընդհանուր բնութագիրը.—Ղազախստանն իր մեծությամբ յերկրորդ միութենական հանրապետությունն է։ Նա ավելի քան 6 անգամ մեծ է Ուկրաինայից։

Ղազախստանը մի ամբողջականություն է կազմում նախ իր բնության առանձնահատկություններով, վորի բնորոշ գծերը քիչ են տարբերվում այդ ահագին տարածության զանազան մասերում, չնայած վոր նա արևմուտքից-արևելք ձգվում է 3000 կմ յերկարությամբ և յերկրորդ՝ ըստ ազգային նշանակության (բնակչության գերակշռող մասը ղազախներ են)։ Սակայն հյուսիսում և մանավանդ հարավում Ղազախստանի վարչա-քաղաքական սահմանները դուրս են գալիս միասնական ֆիզիկո-աշխարհագրական մարզի սահմաններից։ Հյուսիսում Ղազախստանը մտնում է Արևմտա-Սիբիրական դաշտավայրի մեջ. Նրա տափաստանային գոտին արևելքում մտնում է Ալտայ, հարավ-արևելքում հասնում է Տյան-Շան լեռնաշխարհին՝ ընդգրկելով նրա հյուսիսային առաջավոր լեռնաշղթաները, իսկ հարավում



Նկ. 70. Ղազախստան

Սիր-Դարիա գետի հոսանքով խորանալով՝ հասնում է Միջին Ասիա։ Ղազախստանի սահմաններումն է գտնվում նաև Արալյան ծովի հյուսիս-արևելյան մասը։

Ղազախստանը գերազանցապես կիսաանապատային մարզ է, որ ծածկված է հյուսիսում տափաստաններով, հարավում՝ անապատներով ու լեռնաշղթաներով։ Անապատները, որ կավային են ու ավազային, գտնվում են նաև հենց Ղազախստանի սահմաններում։ Սա խիստ ցամաքային կլիմա ունեցող մարզ է, որտեղ սառեցնող քամիներով և ուժեղ մրրիկներով ձմռանը փոխարինում է շոգ ամառը՝ արևի կիզիչ ճառագայթներով ու սակավ տեղումներով։ Սա մի մարզ է, որն ունի ներքին չհոսող ջրերի ավազաններ, աղի ու աղահամ, խոշոր ու մանր լճեր, ցամաքող գետակներ, որոնք չքանում են ավազուտ կամ կավոտ դաշտերում և կամ թափվում են փակ լճերի մեջ։ Միապաղաղ, կավային բարձրավանդակի, աղուտների ու ավազաբլուրների մի մարզ, որտեղ իբրև հեռավոր անցյալի հուշարձաններ, ցցված են հնադարյան քայքայված լեռնաշղթաների մնացորդները։ Այդ լեռնաշղթաները մի ժամանակ Ուրալը միացնելիս են եղել Տյան-Շանի ու Ալտայի հետ։ Սա մի մարզ է, որի տարածության մեծ մասում հողագործության համար ջուրը չի բավականացնում և բնակչության գոյության գլխավոր աղբյուրն անասնապահությունն է։ Միաժամանակ և Ղազախստանը հանքային անսպառ հարստությունների մի մարզ է, ունի քարածուխ, նավթ, պղինձ, կապար, ցինկի հազվագյուտ մետաղների, աղի խոշոր հանքեր, որոնց իսկական ուսումնասիրությունն ու մշակությունը նոր է միայն սկսվել։

Ըստ իր բնական պայմանների Ղազախստանը կարելի յե բաժանել 3 մասի՝ 1) ավելի ցածրադիր և հարթ մասն արևմուտքում, որը բռնում է Մերձկասպյան դաշտավայրն ու Թուրանի դաշտավայրի հյուսիսային մասը, 2) ավելի բարձրադիր միջին մասը Ղազախական ծալքավոր յերկրի շրջանը և Բետ-Պակ-Դալա սարահարթը, 3) լեռնային գոտին հարավ-արևելքում և արևելքում։

Մերձկասպյան յեվ Թուրանի դաշտավայրերը.—Ղազախստանի արևմտյան մասը ներկայացնում է մի ընդարձակ դաշտավայր, որը Ուստ-Ուրտից դեպի արևմուտք կոչվում է Մերձկասպյան, իսկ դեպի արևելք՝ Թուրան։ Այդ դաշտավայրի մեծ մասը ծովի մակարդակից 100 մ ցածր բարձրություն ունի, իսկ Կասպից ծովի ափերն օվկիանոսի մակերևույթից էլ ցածր են (—26 մ)։ Հյուսիսից հարավ դաշտավայրը կտրում են ոչ բարձր Մուհոջարի լեռները, որոնք կազմում են Ուրալի հարավային մասի շարունակությունը։ Բացի Մուհոջարից, կան նաև բարձրություններ՝ Ուստ-Ուրտ ընդարձակ բարձրավանդակը 200 մ միջին բարձրությամբ։ Մուհոջարից դեպի արևելք գտնվում է այսպես կոչված՝ Թուրգայան սեղանաձև յերկիրը, որը բաղկացած է մի շարք ոչ շատ բարձր բարձրավանդակներից ու սեղանման առանձին բարձրություններից, որոնք կղզիների նման բարձրանում են հարթավայրի վրա։

Ղազախստանի այդ մասը կամ ներկայացնում է կավածածկ կիսաանապատ, աղքատիկ բուսականությամբ, որի մեջ գերակշռում է օշինդրը, կամ ավազուտ է։ Վերջիններս առանձնապես ընդարձակ տարածություններ են բռնում Արալյան ծովի մոտերքը՝ Հյուսիսում Փոքր և Մեծ Բարսուկներն են և Մերձարալյան Կարա-Կումը, հարավ-արևելքում՝ Կզըլ-Կումը։ Գետերից արևմուտքում միայն Ուրալն է, որ բավական ջրառատ է ու հասնում է Կասպից ծովին, Եմբան միայն հորդացման ժամանակ է ծովին հասնում, իսկ մյուս գետերը կամ կորչում են ավազների ու ճահճուտների մեջ, կամ թափվում են լճերը։ Կասպից և Արալի ծովերի միջև բոլորովին գետեր չկան։ Լճեր առանձնապես շատ կան արևելքում և համարյա բոլորն էլ աղի յեն։ Գետերի ջուրը ևս ամառվա վերջին աղիանում է։

Առանձնապես ջրազուրկ և անապատ է Ուստ-Ուրտ բարձրավանդակը, որի բոլոր կողմերն իջնում են զառիթափերով, այսպես կոչված՝ «չինկերով»։ Այդ զառիթափերը 70-100 մ բարձրություն են հասնում և այնքան ուղղորդ են, որ շատ վայրերից բարձրավանդակ բարձրանալ անհնարին է։

Բարձրավանդակը հարթ, կավային տափաստան է։ Ամառվա վերջին, յերբ «խակերը» կամ տափաստանի լճակները ցամաքում են, կարելի յե մի քանի օր ճանապարհորդել և ոչ մի կաթիլ ջրի չհանդիպել։ Այդտեղ չկան ոչ մարդիկ, ոչ կենդանիներ, ոչ խոտ, ոչ ջուր։ Յերևում է միայն յերկինքը և մերկ, արևի տակ ճաքճքված կավահողը։ Նույնչափ ամայի մնացած ու խաղաղ են նաև այնտեղ, ուր Ուստ-Ուրտը մտնում է Արալի ծովին։ Դարա-

տուլը նույնպես զուրկ է ու մասյը: Ոչ մի տեղ չի յերևում վոչ մի թուփ, վոչ կանաչ խոտ, վոչ էլ գետակ. չի լսվում թռչունների ճռվողյունը, վոչ էլ մորեխների ծղրտոցը: Կանաչ հայելու պես փայլում է Արալի ծովի հարթ մակերևույթը: Սակայն ծովի վրա էլ չեն յերևում վոչ ձայերը, վոչ էլ ուրիշ թռչուններ:

Ղազախական ծալքավոր յերկիրը: Բետ-Պակ-Դալան.—Հյուսիսում Ղազախստանի արևելյան մասն արևմտյան մասից բաժանվում է այսպես կոչված Թուրգայան նեղուցով (կամ Թուրգայան դռնով), մի ցածրավայր, վոր Թուրանի դաշտավայրը կապում է Արևմտյան Սիբիրի դաշտավայրի հետ: Ղազախստանի այս մասն արդեն այլ տեսք ունի: Նախ և առաջ նա ավելի բարձր է: Նրա հյուսիսային մասում, հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք անցնում է Ղազախական ծալքավոր յերկիրը—մեծ տարածության վրա ցրված կարճ ու ցածր մի շարք լեռնաշղթաներ ու առանձին բլուրներ, վորոնք վոչ մի տեղ 1500 մ ավելի բարձրություն չունեն: Հարավ-արևմուտքում Ղազախական բլրաշարքը միանում է Թարբաղաթայի լեռնաշղթաներին, վորոնք իրենց կառուցվածքով նման են Ալտային, բայց շատ ավելի ցածր են (մինչև 1800 մ):

Արևելյան Ղազախստանում գետեր ավելի շատ կան, սակայն դրանցից միայն Իշիմն ու Տոբոլը, վորոնք Իրտիշի մեջ են թափվում և ինքը՝ Իրտիշն է, վոր իրենց ջրերը մինչև ծով են հասցնում՝ հոսելով արևելյան Ղազախստանի ծայրամասով: Մյուս գետերը, ինչպես Սարը-Սուն արևմուտքում, վերջանում են լճերում կամ ճահիճներում: Նույնիսկ Ղազախական ծալքավոր յերկրի արևելյան լանջերից բղխող գետերը, վորոնք դեպի Իրտիշ են հոսում, չեն հասնում նրան: Ղազախական ծալքավոր յերկրում լճեր էլ շատ կան. դրանցից Դենգիզը մոտ 1500 ք կմ է, սակայն շատ ծանծաղ է: Սովորաբար այդ լճերի ջուրն աղի յե:

Ղազախական ծալքավոր յերկրից դեպի հարավ ընկած է Բետ-Պակ-Դալա (Սոված տափաստան) ընդարձակ սարահարթը: Սա մի բավական բարձր սարահարթ է, վորը դեպի հարավ իջնում է (500 մ մինչև 150 մ): Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում նա վերջանում է նույնպիսի ուղղորդ զառափուլերով, ինչպես Ուստ-Ուրտը: Արևելյան մասում գետնի յերես են դուրս գալիս բյուրեղային ապառներ, վորոնք հողմահարվելով ավա-

զախճի յեն վերածվել: Հարավում շատ ավազուտներ կան, հյուսիսում՝ աղուտներ: Արևմուտքում Բետ-Պակ-Դալան մոտենում է



Նկ. 71. Ղազախստանի և Միջին Ասիայի լեռնաշղթաների սխեման:



Նկ. 72. Բետ-Պակ-Դալա սարահարթի զառափուլը

Սարը-Սու գետին, հարավում՝ Չու գետին, արևելքում՝ Բալխաշ լճին: Բայց ինքը՝ Բետ-Պակ-Դալան ջրազուրկ է: Ծայրամասերի գե-

տերը քիչ ջուր են բերում, այն էլ պղտոր ու դառն աղի ջուր: Սարը-Սու գետը մի ժամանակ Չուի վտակն է յեղել, իսկ Չուն էլ իր հերթին թափվելիս է յեղել Սիր-Դարիայի մեջ: Այժմ Սարը-Սուն և Չուն կորչում են ավազուտներում ու ճահճուտներում:

Ուստ-Ուրտի նման Բետ-Պակ-Դալայի լանդշաֆտը ևս անկենդան է: Միայն թե այստեղ մակերևույթը հարթ չէ. կտրտված է բազմաթիվ ձորակներով. այստեղ շատ կան ցածրիկ բլուրներ: Ձորերի հատակը ծածկված է խճով ու ավազով, տեղ-տեղ նրանց հատակին աղուտային կավ է նստած: Յեթե այդ ամենին ավելացնենք բուսահողի բացակայությունը, աղքատիկ բուսականությունը, վոր բաղկացած է վողորմելի ուշինդրից, սաքսաուլի այլանդակ թփերից, վորոնք այստեղ անտառներին են փոխարինում, ապա մեր առաջ կլինի սոված տափաստանի իսկական պատկերը, մռայլ ու անկենդան մի պատկեր: Իզուր չէ, վոր ղազախները նրա անունը դրել են սոված և նզովյալ: Մերկ ժայռերն ու լեռները, մեռյալ հովիտները, ավազուտներն ու աղի լճերը և սաքսաուլի կենսազուրկ թփուտները միշտ էլ ճնշող տպավորություն են թողել նույնիսկ քոչվորների վրա, վորոնց կարիքն է ստիպում տարեկան յերկու անգամ անցնել այստեղով: Սակայն այն վայրերում, ուր Խորհրդային իշխանությունը վոռոգման աշխատանքներ է տարել, այնտեղ այդ անապատն անգամ ծաղկող տեսք է ընդունում:

Հանքային Ալտայ: Հյուսիսային Տյան-Շան.—Արևելքում Ղազախստանի սահմաններն է մտնում Ալտայի մի մասը, վորը գտնվում է Իրտիշի ու նրա վտակ Բուխտարմի հոսանքներում, ինչպես նաև Զայսանի ամբողջ հովիտը: Ալտայի այդ մասը Հանքային Ալտայ անունն է ստացել իր բազմամետաղային հանքերի հարստության շնորհիվ. այստեղ կա արծաթ, կապար, ցինկ, պղինձ, ինչպես և վոսկի: Ալտայի սիստեմի մեջ է մտնում նաև Կալբինյան լեռնաշղթան, Իրտիշի ձախ ափին, վորն ունի անագի ու հազվագյուտ մետաղների՝ վոլֆրամի, վանադիի հանքեր: Ալտայի այս մասի բնությունն արդեն տարբերվում է Կենտրոնական կամ Լեռնային Ալտայի բնությունից: Այստեղ կլիման ավելի չոր է ու տաք. դրա համար էլ Իրտիշի հովտում և Զայսանի հովտում գերակշռում են տափաստանները, վորոնց տեղ-տեղ փոխարինում են նույնիսկ աղուտներն ու ավազուտները:

Դեպի Բուխտարմայի հովիտն իջնելիս զգացվում է ջերմաստիճանի ուժեղ փոփոխություն: Տաք օդը, ինչպես շիկացած վառարանից, բարձրանում է հովտից ու խփում ճանապարհորդի յերեսին: Անտառն աստիճանաբար չքանում է և վորքան ավելի յենք մոտենում Իրտիշին, այնքան ավելի յե հովիտը տափաստանի տեսք ընդունում: Իրտիշն այստեղ հոսում է դանդաղ, յերկու կողմից պատած յեղեգնուտներով, ջրախոտերի բուսականության մեջ: Այդ դանդաղընթաց ու գալարուն գետին է խառնվում փրփրալից ու ճերմակաջուր Բուխտարման: Իրտիշի և Բուխտարմայի ափերը յերկու սուր հակադրություններ են: Այնտեղ յերաշտ է, ավազ ու աղուտների վողորմելի խոտ. այստեղ ալպյան փարթամ բուսականություն, կյանք, ծաղիկներ: Այստեղ, ինչպես ալպերում, կան վարելահողեր, ձմերուկի ու սեխի ցանքեր, արևածաղկի ու ծխախոտի դաշտեր:



Նկ. 73. Մի տեսարան Ջունգարական Ալա-Տաուից:

Հարավ-արևելքում Ղազախստանն իր վերջական սահմաններով մտնում է Միջին Ասիայի մարզի մեջ: Այստեղ նա բռնում է Տյան-Շանի ամենահյուսիսային լեռնաշղթաներն ու ավազուտների մի լայն շերտ, վորը գտնվում է Տյան-Շանի, Բալխաշ լճի և Բետ-Պակ-Դալայի միջև: Տյան-Շան և Թարբաղաթայ լեռնաշղթաների միջև գտնվում է մի հարթություն, վոր կոչվում է Ջունգարական դուռ: Շարունակ այստեղով են անցել կենտրոնական Ասիայից դեպի Թուրանի դաշտավայրը, ապա արևմտյան Ասիա ու Արևելյան Յեվրոպա փոխադրվող քոչվորները:

Ջունգարական գոգից դեպի արևմուտք բարձրանում են մի շարք լեռնաշղթաներ, որոնցից Անդրիլիյան Ալա-Տաուն 4600 մետր բարձրություն է հասնում և ծածկված է ձյունով ու սառցադաշտերով: Նույն բարձրությունն ունի նաև Իլի գետի հովտից դեպի հյուսիս-արևելք ընկած Ջունգարական Ալա-Տաու լեռնաշղթան:

Անդրիլիյան Ալա-Տաույի հյուսիսային ստորոտում է գտնվում Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթան:

Անդրիլիյան Ալա-Տաուն, որն ուղղորդ բարձրանում է տափաստանից վեր և որի ստորոտում գտնվում է Ալմա-Աթա քաղաքը, մի հոյակապ պատկեր է ներկայացնում: Ճանապարհորդը կարող է մի հայացքով տեսնել բոլոր գոտիները, շոգ հարթությունից մինչև հավերժական ձյունը և դիտել այդ գոտիների աստիճանական փոփոխությունը: Արևակեզ, ոշինդրածածկ տափաստանից հետո, լեռնային գետակներով ոռոգվող լյոսային արգավանդ հողաշերտերի վրա փռված են բազմաթիվ գյուղեր, որոնք թաղված են կանաչ այգիների մեջ ու շրջապատված պարտեզներով: Ավելի բարձր ձգվում է սաղարթավոր ծառերի գոտին, նրանից էլ վեր, յեղևնուտների գոտին և վերջապես ալպիական արոտների գոտին, որոնց գլխին կուրացուցիչ փայլով շողշողում է հավերժական ձյունը:

Կլիման յեվ բուսականությունը.—Ղազախստանը հեռու է օվկիանոսներից, բաց է հյուսիսային ու հյուսիս-արևելյան ցուրտ քամիների առաջ, ուստի ունի չոր, խիստ ցամաքային կլիմա, քան նույն լայնության վրա գտնվող այլ վայրերը: Չնայած դրան, նույնիսկ հյուսիսում տարեկան միջին ջերմաստիճանը 0°-ից բարձր է: Դեպի հարավ ջերմությունը բարձրանում է յուրաքանչյուր աշխարհագրական լայնության աստիճանին մոտավորապես մեկ ջերմաստիճան և այնտեղ, ուր Ղազախստանի տերիտորիան Սիր-Դարյա գետի հոսանքով հեռու հարավ է անցնում, տարեկան միջին ջերմաստիճանը հավասարվում է +14°-ի: Կարճատև ու հախուռն գարունը Ղազախստանում հաջորդում է յերկարատև ու շոգ ամառը, յերբ ցերեկը մինչև 40° շոգ է լինում, իսկ գիշերը ցուրտ (յերբեմն զրոյից մի քանի աստիճան միայն բարձր): Ուշ սկսվող և կարճատև աշնանը հաջորդում է յերկարատև ու խիստ ձմեռը. սառնամանիքները հյուսիսում հասնում են 40-ից—45°-ի, հարավում՝ 25°: Անապատի ջերմ օրերին հաջորդում են սառույցները, հաճախ ձյունախառն ուժեղ

բուքեր ու փոթորիկներ են լինում: Այդ յերկրի հարավային մասում ձմեռն ավելի կարճատև է: Միայն ամառվա յերեք ամիսներին՝ հունիսին, հուլիսին և օգոստոսին է, որ ցրտեր չեն լինում: Տարեկան տեղումների քանակը հյուսիսում մեծ մասամբ 300 մմ-ից չի անցնում, իսկ կենտրոնական մասերում և հարավում 200 մմ-ից էլ պակաս է: Ձյան ծածկույթն այնքան աննշան է, որ անասունները տարին շուրջ արածում են դաշտում: Առանձնապես ամռանը քիչ տեղումներ են լինում: Որոշ վայրերում ամառը բոլորովին անձրևներ չեն գալիս, ամպամածությունը համարյա չի լինում և արեգակի ճառագայթներից ջերմությունը խիստ շատ է բարձրանում:

Տեղումների սակավության հետևանքով, Ղազախստանում անտառային բուսականությունը հազվադեպ յերևույթ է: Անտառներ հանդիպում են միայն արևելքում՝ Ալտայի ու Թարբաղաթայի լեռներում (փշատերև անտառներ) և տեղ-տեղ կղզիների նման Ղազախական ծալքավոր յերկրի լեռնաշղթաների գագաթներում ու յերկրամասի հյուսիսային ծայրամասում, որտեղ տափաստանին հաջորդում է անտառատափաստանը: Սակայն ամբողջ ահագին տարածությունը տափաստան է, որ հյուսիս-արևելքում միանում է արևմտա-սիբիրական, իսկ արևմուտքում՝ հարավ-ռուսական տափաստաններին: Հյուսիսում և Իրտիշի աջ ափի յերկարությամբ մինչև Սեմիպալատինսկ դա սևահողային, խոտածածկ տափաստան է, ավելի հարավ՝ ծածկված է փետրախոտով: Ղազախական տափաստանը հարավ-ռուսական տափաստանից տարբերվում է բավականին շատ աղուտներով և կեչու ցրված անտառակներով: Այդ յերկրի միջին մասը շագանակագույն և գորշագույն հողեր ունի: Փետրախոտի տափաստանն այստեղ քիչ-քիչ փոխվում է թիփչակի խոտով և ոշինդրով ծածկված տափաստանի: Վերջապես ամբողջ հարավային մասը տիպիկ կիսաանապատ է կավ-ավազային անպտուղ հողերով, ամենուրեք ցրված մեծ քանակությամբ աղուտներով ու աղի ցեխուտներով, որոնք տեղ-տեղ բոլորովին մերկ են լինում («չոր աղուտներ»), տեղ-տեղ ծածկված են լինում աղուտային խիտ բուսականությամբ: Բացի աղաբույսերից ու ոշինդրից հանդիպում են նաև կարագանի թփուտներ: Բուսականությունն առատ է միայն տափաստանի գետերի ափերին, որտեղ ստորերկրյա ջրերը մոտիկ են մակերևույթին: Այդտեղ յեվրոպական ու սիբիրյան բուսականությունը հաջորդում են

միջին-ասիական բույսերը: Այդ լճերի ափերին կան յեղեգնի («ղամիշ») անթիվ ցողուններ ու թուղայի բուսականություն: Առանձին վայրերում հանդիպում են նաև աղիական ավազուտ անտառներ՝ բարխաններով, ավազաթմբերով և անապատի տիպիկ բուսականությամբ (սաքսաուլ, մոշավայրի և այլն): Հաճախ հանդիպում են կավախառն հողամասեր՝ տակըրներ, վորոնք բուսականությունից համարյա զուրկ են:

Տակըրը բոլորովին հարթ, բաց-մոխրագույն կավահողով ծածկված տարածություն է, վոր ճաքճքված ու հազիվ նկատելի ակոսիկներով բաժանված է բազմանկյուններերի. Հողն այստեղ այնքան ամուր է, վոր կարծես բետոնապատած տարածություն լինի, վոչ բահը, վոչ բրիչը փորել չեն կարող. իսկ ձիերի սմբակն այնպես է շրխկում, կարծես ասֆալտապատած տեղով լինեն գնալիս և ամենաաննշան հետք անգամ չի թողում: Տակըրի յերեսին վոչ մի բուսականություն չի հանդիպում, վորովհետև վոչ սերմեր, վոչ էլ ավազ կամ փոքևև տեսակի հող, վորն անհրաժեշտ է սերմերի աճման համար, քամին չի թողնում այնտեղ: Այնտեղ գոյություն ունի միայն մի յուրահատուկ բույս—փայտի պես պինդ ու կոշտ սունկ, վորը քարի պես պինդ տակըրի մակերևույթը պատռելով՝ իր շուրջը տարածում է նարնջա-շագանակագույն սպորներ և հեռվից յերևում է վորպես մի խոշոր, պայծառ բիծ:

Տակըրի միապաղաղ հարթությունը ծածկված է ավազի դեղնավուն նախշով, իսկ առանձին մերկ տարածությունները կարծես վիթխարի լճերի հայելիներ լինեն յեզերված նեղ ավազաշերտերով, վորոնց վրա բույսերի կյանքի համար հնարավորություններ են ստեղծվում:

Բայց ինչպես կարելի յե նկարագրել այդ անապատների իսկական լայնարձակությունը, ջրազրկությունն ու մեռյալ վիճակը: Ջրի կատարյալ բացակայությունը, բուսականության աղքատությունն այդտեղ ընդարձակ տարածություններին այնքան են կենսազուրկ դարձնում, վոր նրա կենտրոնական մասերում վոչ միայն թռչուն, այլև մի հատիկ մոծակ կամ բոռ չի լինում: Վոչ մի շունչ չի ձմեռում այդ անապատներում և քոչվոր ղազախները գիշերով ու արագ են անցնում այդտեղից, վորպեսզի ծարավից չկոտորեն իրենց անասուններին: Ցերեկը ավազից շիկացած, այրող քամի յե փչում, հեռվում խաբուսիկ կերպով պսպղում են ընդարձակ լճերի միրաժները՝ յեզերված խիտ բուսականությամբ: Սակայն իրականում վողորմելի մոշավայրերով ծածկված յուրաքանչյուր ավազաթմբի հետևը մի նոր կավային լերկ տափարակ է, վոր նորից վերջանում է նոր ավազաթմբերով և այդպես շարունակ:

Տեղ-տեղ հանդիպում են ափսեանման մանր գոգեր, վորոնց մեջ գարնանը մի քիչ աղի ջուր է հավաքվում, հետո ջուրը ցամաքում է և գոգի մակերևույթի վրա մնում է աղը:

Ղազախստանի կենդանական աշխարհը տիպիկ տափաստանային և Բնակչության նոսրության հետևանքով, այդտեղ դեռ պահպանվել են շատ կենդանիներ, վորոնք մասամբ հատուկ են Կենտրոնական Ասիային, որինակ՝ վայրի էշերը, քարայծերը, թռչուններից՝ արծիվները, բազեները, ճախարակները, գետերի ու լճերի ափերին շատ կան ջրային ու ճահճային թռչուններ՝ բացի սագերից, բադերից, կտցարներից նաև կան կարապներ, արագիլներ, հավալուսներ, բակլաններ: Հարավային կիսաանապատներում նույն կենդանիներն են, ինչ վոր հարևան Միջին Ասիայում:

Բնակչությունը: Վարչական բաժանումը.—Ղազախստանը վորպես միութենական հանրապետություն մտնում է ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Նրա ընդարձակ տերիտորիան բաժանվում է 8 մարզի, վորոնք արևմուտքից արևելք դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. 1) Արևմտյան Ղազախստան, կենտրոնն է Ուրալսկ. 2) Ակտյուբինսկի մարզ, կենտրոնը՝ Ակտյուբինսկ, 3) Կուստանայի մարզ, կենտրոնը՝ Կուստանայ, 4) Հյուսիսային Ղազախստան, կենտրոնը՝ Պետրոպավլովսկ, 5) Արևելյան Ղազախստան, կենտրոնը՝ Սեմիպալատինսկ, 6) Կարականդայի մարզ, կենտրոնը՝ Կարագանդա, 7) Հարավային Ղազախստան, կենտրոնը՝ Չիմքենդ, և 8) Ալմա-Աթայի մարզ, կենտրոնը՝ Ալմա-Աթա: Ալմա-Աթան միաժամանակ ամբողջ հանրապետության վարչական կենտրոնն է: Այս մարզերից Ակտյուբինսկի, Կարագանդայի և Արևելյան Ղազախստանի մարզերն իրենց հյուսիսային մասերով մտնում են Արևմտյան Սիբիրի դաշտավայրը, իսկ հարավային Ղազախստանի և Ալմա-Աթայի մարզերն իրենց հարավային մասերով մտնում են Միջին Ասիա:

Ղազախստանի գրեթե 3 միլիոն ք կմ տարածության վրա ապրում է մոտ 7 միլիոն մարդ. այսինքն՝ յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրին միջին հաշվով ընկնում է 2,4 մարդ: Սակայն այդտեղ բնակչությունը խիստ անհամաչափ է տեղավորված. խիտ բնակչություն կա Ուրալ գետից դեպի արևմուտք ու արևելք, ամբողջ հյուսիսային տափաստանային գոտում, Իրտիշի ափերին, Սեմիրեչյեյում և Սիր-Դարիայի հովտի վորոշ շրջաններում. արհեստականորեն վոռոգվող շրջաններում բնակչության խտությունը հասնում է նույնիսկ 20-40 մարդու 1 ք կմ վրա: Փոխարենը կան ընդարձակ տարածություններ—Բալխաշ

ղեի և Արալի ծովի միջև ընկած կիսաանապատը, Ուստ-Ուրտի բարձրավանդակը և այլն, որտեղ 10 ք կմ մեկ մարդ էլ չի ընկնում:

Բնակչության հիմնական մասը՝ յերեք հինգերորդը կազմում են ղազախները՝ թուրքական խմբի ժողովուրդ, որ առաջացել է զանազան ցեղերի խառնուրդից: Ղազախներից հետո թվով շատ են ռուսները և ուկրաինացիները:

Տնտեսությունը — Ղազախստանը ՍՍՀՄ-ի այն մարզերից մեկն է, վորտեղ սոցիալիստական շինարարությունը տնտեսական կյանքի մեջ խիստ մեծ փոփոխություններ է մտցրել: Մինչև հեղափոխությունը բնակչության մեծ մասն այստեղ ապրում էր անասնապահությամբ, պահում էր ոչխարներ, ձիեր, ուղտեր և քոչվորական կյանք էր վարում: Ղազախների մի վորոշ մասն էր միայն հողագործությամբ զբաղվում, դրանք էլ մեծ մասամբ չքավորներ էին, վորոնք բատրակ էին վարձվում ռուսների մոտ: Յեվրոպական մասից այստեղ գաղթած ռուսները տեղավորվելով չափազանց և հողագործության համար պիտանի հողերի վրա՝ հացաբույսեր էին ցանում, միաժամանակ զբաղվում անասնապահությամբ: Թե մեկի և թե մյուսի մթերքները՝ հաց, յուղ, կաշի, հանդիսանում էին արտահանության գլխավոր առարկան: Արդյունաբերությունը քիչ էր զարգացած և սահմանափակվում էր գյուղատնտեսական հումքի վերամշակումով:

Ներկայումս Ղազախստանի տնտեսության մեջ գլխավոր տեղն է գրավում լեռնային և մետալուրգիական արդյունաբերությունը (գունավոր մետաղներ): Ղազախստանի հարուստ հանածոների օգտագործումը զարգանում է արագ տեմպով: Այստեղ կան քարածուխ, նավթ, գունավոր ու հազվագյուտ մետաղների, պղնձի, աղի խոշոր հանքավայրեր: Կարականդայի քարածխային ավազանն իր հանույթով ՍՍՀՄ-ում յերրորդ տեղն է գրավում: Նա քարածուխ է մատակարարում Հարավային Ուրալին (Մագնիտոգորսկ):

Բալխաշի հյուսիսային ափին, Կոունրադում, կիսաանապատային այդ շրջանում, կառուցվում է պղնձաձուլական մի խոշոր կոմբինատ: Պղինձ արդյունահանվում է և Ղազախստանի կենտրոնական մասում՝ Ջեզ-Կազգանում (Կարսակպայի գործարան): Կապար և ցինկ Ռիդդերում, Ալթայում և Կարատաուի

լեռներում (Չիմքենդի գործարան): Եմբա գետի ափին արդյունահանվում է նավթ: Եմբայի նավթահանքերն իրենց պաշարով ՍՍՀՄ-ում յերրորդ տեղն են գրավում:

Արդյունաբերության զարգացումը և նստակյաց դառնալը ղազախ ժողովրդի կուլտուրայի բուռն վերելք առաջացրին: Ղազախները վոչ միայն աշխատում են գործարաններում և արհեստագործարաններում, այլև նրանց մեջ կան կրթված մասնագետներ, ինժեներներ, տեխնիկներ, բժիշկներ, ուսուցիչներ: Խոշոր նվաճումներ ձեռք բերեց ղազախ ժողովուրդը գրականության և արվեստի բնագավառներում: Քոչվորական տնտեսությունը պահպանվել է միայն յերկրի ներքին, համեմատաբար ավելի չոր ու կիսաանապատային մասերում: Այստեղ մինչև այժմ էլ դեռ ղազախներն իրենց անասունների հոտերը ձմեռային արոտներից քշում են ամառային արոտները և նորից յետ: Սակայն քոչվորների թիվը տարեցտարի պակասում է: Դրա հետ միասին քոչվոր ղազախներն սկսում են ձմեռվա խոտի պաշար պատրաստել, վորի շնորհիվ ձմեռն ավելի քիչ անասուն է կոտորվում սառցապատումից:

Հողագործությունը զարգանում է առավելապես հյուսիսում, Արևմտյան Սիբիրի դաշտավայրին հարակից սևահողային շրջաններում, վորտեղ ցանում են գլխավորապես ցորեն, և հարավում, դարշագույն հողերի ու արհեստականորեն վոռոգվող շրջաններում: Ջրովի հողերը գտնվում են Սիր-Դարիա, Չու գետերի ափերին և Սեմիրյեչյեյի շրջանում: Այստեղ մշակում են ավելի թանգարժեք բույսեր՝ պտղատու ծառեր, խաղող, վերջին ժամանակներս՝ բրինձ, բամբակ և տեխնիկական բույսեր, վորոնց թվում նաև կաուչուկատու:

Միության ընդհանուր տնտեսության մեջ Ղազախստանը նշանակալից տեղ է գրավում, մանավանդ գունավոր մետաղների, քարածխի ու նավթի կողմից:

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները. — Արդյունաբերության բուռն թափով աճման շնորհիվ, Ղազախստանի քաղաքային բնակչությունն ավելացել է ավելի քան յերկու անգամ: Այժմ յուրաքանչյուր 100 բնակչից քաղաքներում ապրում է 17 հոգի: Բնակչությունն աճել է և հին քաղաքներում, ինչպիսին է Ալմա-Աթան, վորն ամբողջ հանրապետության կենտրոնն է (200 հազարից ավելի բնակիչ), կամ Սեմիպալատինսկը (150 հա-

դար), որը գտնվում է աշխարհագրական շատ նպաստավոր դիրքում, այնտեղ, ուր Իրտիշը հատվում է երկաթուղային մագիստրալով. աճում են և ավելի նոր, վերջերս հիմնված արդյունաբերական կենտրոնները, ինչպիսին է Կարագանդան (150 հազ. բնակիչ):

Թե մեր երկրում ինչպես են առաջանում և աճում նոր քաղաքները և թե ինչպես մարդը փոխում է բնության դեմքը, դա ամենապայծառ օրինակներից մեկն է Բալխաշի հյուսիսային ափին ներկայումս բարձրացող քաղաքը, այսպես կոչված՝ Բալխաշստրոյը: Այստեղ մի վիթխարի պղնձաձուլական գործարան է կառուցվում: Այն հանքավայրերը, որի հանքից այստեղ պղինձ է ձուլվում, գտնվում են Կոունրադում: Հանքն այստեղից 20 կմ վրա փոխադրվում է Բալխաշի ափը, որովհետև վերամշակության պրոցեսի համար շատ մեծ քանակությամբ ջուր է պահանջվում: Այդ հանքավայրերը գտնվել են 1928 թվին, իսկ մինչև 1935 թիվը արդեն քաղաքն ավելի քան 20 հազար բնակիչ ուներ և մոտ ժամանակներս հասնելու յե 50 հազարի: Բացի զանազան գործարանային շենքերից, այստեղ պլանավորվում է մի նոր, սոցիալիստական քաղաք: Դա նշանակալից է մանավանդ նրանով, որ կառուցվում է անապատի մեջ, մի անկենդան վայրում, որը համարյա զուրկ է ջրից ու բուսականությունից: Այդ անապատում քաղաքն իր բնակիչներին տալու յե կուլտուրական կյանքի բոլոր հարմարությունները: Այստեղ կառուցվում է ջրմուղ, անց է կացվում էլեկտրականություն, գազ, տնկվում է բուսականություն, որի համար հեռու տեղերից բերվում է արգավանդ հող և կառուցվում է արհեստական ոռոգման ցանց: Միաժամանակ հարյուրավոր կիլոմետր հեռու կազմակերպվում են խորհրդային տնտեսություններ, որոնք քաղաքի բնակչությանը պետք է մատակարարեն բանջարեղեն, կաթ և այլ մթերքներ:

Քաղաքների աճման գործում, բացի արդյունաբերության զարգացումից, մեծ դեր են խաղացել նաև երկաթուղիները: Խորհրդային իշխանության օրով կառուցվել է երկաթուղային մի մեծ մագիստրալ, որը Արևմտյան Սիբիրը կապում է Միջին Ասիայի հետ. այդ, այսպես կոչված՝ Թուրքսիբն է (Թուրքեստան-Սիբիր երկաթուղին): Այդ գիծը Նովո-Սիմբիրսկից գնում է դեպի Սեմիպալատինսկ, ապա Ալմա-Աթա, այնուհետև դեպի Տաշքենդի երկաթուղին: Սիբիրի մագիստրալի և Չկալովը Տաշքենդին միացնող գծի հետ ստացվում է մի օղակ, որը շրջափակում է ամբողջ Ղազախստանը: Այդ օղակի մեջ ընկած տարածությունը կտրում է մի ուրիշ երկաթուղի, որը Սիբիրի մագիստրալի վրա գտնվող Պետրոպավլովսկից գնում է դեպի Կարագանդա, ապա դեպի Կոունրադ՝ Բալխաշ լճի ափին:

կառուցվում է Կարագանդա-Մագնիտոգորսկ (Ակմոլինսկի վրայով) երկաթուղին: Ավելի կարճ երկաթուղիներ կան Ղազախստանի հյուսիս-արևելյան մասում, որոնք Ռիդդեր և Պավլոդար արդյունաբերական կենտրոնները միացնում են գլխավոր մագիստրալների հետ: Ջրային ճանապարհներն այս չոր երկրում ավելի քիչ դեր են խաղում: Դրանցից ամենակարևորն է Իրտիշը: Գոյություն ունի նաև օդային հաղորդակցություն:

Մնացածը ցամաքային հասարակ ճանապարհներ են, որոնցով տեղ-տեղ ավտոմոբիլային հաղորդակցություն կա, կամ թե ուղտի ճանապարհներ են, որոնք անցնում են կավապատ տակըրներով, փոշոտ աղուտներով ու ավազաթմբերով:

12. ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

Դիրքը յեվ ընդհանուր բնութագիրը.—Խորհրդային Միջին Ասիան մեր Միության ամենայուրահատուկ մարզերից մեկն է: Նա գտնվում է Ղազախստանից դեպի հարավ և իր տարածությամբ թեև $2^1/_2$ անգամ փոքր է Ղազախստանից, սակայն և այնպես նրա տերիտորիան 1 միլիոն ք կմ ավելի յե և համարյա հավասարվում է Եվրոպական մասի Հյուսիսին:

ԽՍՀՄ-ի բոլոր մասերի մեջ Միջին Ասիան ամենից շատ է ընկած դեպի հարավ և ամենից շատ է հեռու օվկիանոսներից: Այդ պատճառով էլ այստեղ ավելի ուժեղ են աչքի ընկնում բնության այն գծերը, որոնք կան Ղազախստանում ու նրա հարավային մասերում, այն է՝ կլիմայի ցամաքային լինելը, տեղումների աննշան չափը և դրա հետևանքով լայնատարած անապատները, որոնք հարյուր հազարավոր քառ. կիլոմետր տեղ են բռնում:

Դրա հետ միասին Միջին Ասիայի բնությունը պայծառ է, բազմազան և իր մեջ պարփակում է շատ ծայրահեղություններ: Այստեղ են գտնվում Միության ամենաբարձր լեռնաշխարհներն ու լեռնաշղթաները, որոնց վրա ահագին սառցադաշտեր կան: Յեվ հենց այստեղ էլ, այդ լեռնաշղթաների ստորոտներում են գտնվում լայնարձակ ավազուտ անապատներ: Լեռնագագաթները մինչև 7,5 կմ բարձրության են հասնում, բայց կան և գոգեր, որոնք նույնիսկ Կասպից ծովի մակերևույթից էլ ցածր են: Դա

փակ, անհոսանք ավազանների մարզ է, մի մարզ, վորտեղ միայն յերկու խոշոր գետեր են անցնում անջուր անապատների միջով և հասնում Արալի ծովի փակ ջրամբարին։ Մյուս գետերը, մանավանդ փոքրերը, կորչում են լեռներին մոտիկ անապատներում, ըստ վորում նրանց ջրի նշանակալից մասը վերցվում է արհեստական վոռոգման համար։ Դա հարավային անամպ յերկնքի մարզ է, ամառային կիզիչ արևի մարզ, մի մարզ, վորտեղ ռելյեֆի մակերևույթի առաջացման գործում գլխավոր դերը խաղում է քամին. սա անապատների ու ոազիսների, ավազուտային բարխանների և ուղտերի քարավանների յերկիր է։ Սա շատ հնադարյան մի յերկիր է, վորտեղ հազարամյակների ընթացքում զանազան ժողովուրդներ ու զանազան կուլտուրաներ հաջորդել են իրար։

Միևնույն ժամանակ դա բնական խոշոր հարստությունների մարզ է. այստեղ կան զանազան ոգտակար հանքեր, կա բերքատու հող, վորը տաք կլիմայի պայմաններում արհեստական վոռոգման դեպքում մեծ բերք է տալիս այնպիսի հարավային կուլտուրաների, ինչպիսիք են բամբակը, բրինձը, խաղողը և զանազան մրգերը։ Սա մի յերկիր է, վորտեղ առանձնապես ցայտուն կերպով յերևում են խորհրդային սոցիալիստական կուլտուրայի նվաճումները, վորտեղ անապատի ավազուտներով ու ամենաբարձր լեռնաշխարհով ավտոմոբիլներ են անցնում, իսկ լեռնային փոթորկահույզ գետերն ոգտագործվում են եժան էլեկտրոէներգիա ստանալու համար։

Ըստ իր մակերևույթի ու բնության, Միջին Ասիան բաժանվում է 2 մասի՝ հյուսիս արևմտյան դաշտավայրը և հարավ արևելյան լեռնաշխարհը։ Հարթ մասը բռնում է ամբողջ տարածության յերկու յերրորդը, իսկ լեռնայինը՝ 1/3-ը։ Բացի այդ, ըստ իր բնության ու ֆիզիկո-աշխարհագրական պայմանների, Միջին Ասիային է միանում նաև հարավային Ղազախստանի մի զգալի մասը։

Դաշտավայր մասը։ Կարա-Կում յեվ Կզըլ-Կում.—Միջին Ասիայի դաշտավայրը կազմում է Թուրանի դաշտավայրի մի մասը։ Նա ձգվում է Կասպից ծովի ափերից մինչև Սիր-Դարիա գետը և արևելքում՝ Կարա-Տաու լեռնաշղթան։ Այդ սահմաններում նրա մեջ են մտնում Ուստ-Ուրտ բարձրության հարավային



Նկ. 74. Միջին Ասիա

մասը և Միջին Ասիայի յերկու հատ ամենաընդարձակ անապատները՝ Կարա-Կումը և Կզըլ-Կումը, վորոնք իրարից բաժանվում են Ամու-Դարիա գետով։ Միջին Ասիական ավազուտ անապատների գոտին շարունակվում է Սիր-Դարիայից դեպի արեվելք էլ, Ղազախստանի սահմաններում։

Անապատներից ամենաընդարձակն է Կարա-Կումը (մոտ 250 հազ. քառ. կմ), վորի տարածության իննը տասներորդ մասը ավազով է ծածկված։ Դրանք դեղնակարմրավուն կամ գորշ գույնի ավազուտների ծովանման տարածություններ են։ Ավազը կամ կազմում է անշարժ բլուրներ ու բլրաշարքեր, վորոնց վրա սակավ բուսականություն է լինում, և կամ բաղկացած է մերկ, սորուն ավազից, վորից քամին մինչև տասը մետր և ավելի բարձրության բարխաններ—մանգաղաձև թմբեր է կուտակում։ Բարխանային ավազներ առավելապես հանդիպում են Կարա-Կումի արևելյան մասում, Ամու-Դարիայի ձախ ափի յերկարությամբ։



Նկ. 75. Բարխանները Կարա-Կումում։

Բարխանային ավազուտները նման են քարացած ծովի, վորտեղ սորուն ավազը կարծես ջուր լինի, իսկ բարխանները՝ ալիքներ։ Հյուսիսային ուժեղ քամիների ազդեցության տակ բարխաններն ու նրանց շղթաները դանդաղորեն շարժվում են դեպի հարավ և հարավ-արևելք, հաճախ ծածկելով ծաղկուն ոազիսներ ու ավազի տակ թողնելով դաշտերը, այգիներն ու գյուղերը։ Աղքատիկ բուսականությունը համարյա աննկատելի յե ավազի դեղնավուն ֆոնի

վրա։ Այդպիսի ավազուտներով ճանապարհ գնալը խիստ դժվար է, մանավանդ հաճախակի փոթորիկների ժամանակ։ Այդպիսի դեպքերում մթնոլորտը լցվում է ավազով ու բոլորովին անթափանց դառնում։ Որը ցերեկով, անամպ յերկնքում անկարելի յե լինում արեգակի դիրքը վորոշել։ Յերևում են միայն մոտակա բարխանների անորոշ գծագրությունները, իսկ ավելի հեռուն ամեն ինչ ձուլվում է ինչ վոր դեղին քաոսի մեջ, դառնում անդիմադրելիորեն առաջ շարժվող ավազի մի համատարած մասսա։ Սովորաբար յերեկոյան դեմ փոթորիկը դադարում է և անապատն իր նախկին տեսքն է ստանում. Նույն ալիքանման բարխանների լայնածավալ ծովը, նույն հովիտները նրանց միջև, միայն թե այնտեղ, ուր դոգեր եյին, այժմ բլուրներ են բարձրացել, իսկ վորտեղ բարխաններ եյին, հիմա դոգեր են առաջացել։

Ավազուտների մեջ ցրված են տակըրները՝ կավային տարածությունները, վորոնք գարնանը կպչուն ցեխով են պատած, ամառն ամուր են քարի պես, նաև ընդարձակ աղի լճակները, վորոնք ամռանը դառնում են աղի ճահճուտներ։ Տակըրներն ու աղուտներն ընդհանրապես բնորոշ են Միջին Ասիայի բոլոր անապատների ու կիսաանապատների համար։ Կարա-Կումում տեղ-տեղ հանդիպում են խորունկ ու չոր հովիտներ, վորոնք Սահարայի վադիներն են հիշեցնում։ Դրանցից ամենախոշորն է Ուզբոյը, վորը միքանի հարյուր կիլոմետր յերկարություն ունի։ Հավանորեն այդ յեղել է այն հովիտը, վորով մի ժամանակ Ամու-Դարիայի ջրի մի մասը հոսելիս է յեղել դեպի Կասպից ծովը, Սարիղամիշի հովտով, վոր գտնվում է Արալի ծովից դեպի հարավ-արևմուտք։ Այդ հովտի հատակը Կասպից ծովի մակերևույթից էլ ցածր է։

Կարա-Կումի հարավային ծայրամասում կան տափաստանային տարածություններ և կուլտուրական ոազիսներ. վերջիններս նեղ ժապավենի ձևով ձգված են Կոպետ-Դաղի ստորոտում և Թեջեն ու Մուրղաբ գետերի ափերին։ Նույնպիսի ոազիսներ կան նաև Ամու-Դարիայի ափերին, մանավանդ նրա ստորին հոսանքում (Խորեզմի ոազիսը)։

Կզըլ-Կումը մի քիչ ավելի բարձր է, քան Կարա-Կումը և նրա տարածությունն ամենուրեք ավազով չի ծածկված։ Կզըլ-Կումի կենտրոնական մասում կան նաև լեռնախմբեր, վորոնք հնադարյան ավերված լեռնաշղթաների մնացորդներ են։ Կզըլ-Կումում ավելի շատ են նաև տափաստանային տարածությունները։ Նրանք ծովածոցերի պես մտնում են յերկրամասի լեռնա

վայրերը։ Այդպիսի ծոցերից մեկն է Ֆերգանայի հայտնի հովիտը, վորը Միջին Ասիայի ամենախիտ բնակչություն ունեցող վայրերից մեկն է։ Այնուամենայնիվ տեսարանը մեծ մասամբ ներկայացնում է կարմրավուն, յերբեմն ուղղակի կարմիր ավազե բլուրներ, վորոնք ձգվում են մինչև հեռու հորիզոնը։ Հյուսիսից փչող քամին այդտեղ ևս ավազով ծածկում է ոազիսները, որինակ՝ Զերավշան գետի ափերին գտնվող ոազիսները։

Կզըլ-Կումում ավելի շատ ջուր կա, քան Կարա-Կումում։ Հյուսիս-արևմտյան մասում կան նաև Սիր-Դարիայի հին ցամաքած հուները։

Լեռնային մասը։ Տյան-Շան. Պամիրո-Ալայ. Կոպետ-Դաղ.— Միջին Ասիայի լեռնոտ մասը ՍՍՀՄ-ում առաջին տեղն է գրավում իր լեռնաշղթաների յերկարությամբ ու բարձրությամբ,



Նկ. 76. Տյան-Շան և Պամիրո-Ալայ լեռնաշղթաների սխեման։

լեռնագագաթների բարձրությամբ, սառցադաշտերի մեծությամբ, ձյունածածկ տարածության ընդարձակությամբ և լեռնանցքների դժվարամատչելիությամբ։

Միջին Ասիայի լեռներից ամենաընդարձակն է Տյան-Շանը։ Նա կազմված է մի շարք լեռնաշղթաներից, վորոնք գլխավորապես

ձգվում են արևելքից դեպի արևմուտք։ Այդ լեռնաշղթաների մեծ մասը ծածկված է հավերժական ձյան բծերով և կրում է Ալա-Տաու՝ «խայտաբղետ լեռներ» անունը։ Լեռնաշղթաների հյուսիս-արևելյան խումբը, վոր միացած Տյան-Շանից բաժանված է Իլի գետի լայն հովտով, կոչվում է Ջունգարական Ալա-Տաու։ Իլի գետից դեպի հարավ ձգվում է Անդրիլիյան Ալա-Տաուն։ Ավելի հարավ, Չինաստանի սահմանագլխին ընկած է Խան-Թենգրի վիթխարի մասսիվը (մոտ 7000 մ)։ Լեռներում փռված է Իսիկ-Կուլ անունով խոշոր ու խոր լիճը։

Նկ. 77. Պամիրի բարձրունքներում։

Տյան-Շանի լեռնաշղթաները շատ բարձր են (4000-5000 մ) և ծածկված են հավերժական ձյունով ու սառցադաշտերով, թեև կլիմայի չորության շնորհիվ ձյան սահմանը բարձր է գտնվում։

Ամբողջ Տյան-Շանի ամենամեծ մասսիվը Խան-Թենգրին է։ Բոլոր կողմերից դեպի նա յեն ձգվում ձյունածածկ լեռնաշղթաներ։ Ձյան և բյուրեղաձյան լայն դաշտերը ծածկում են բոլոր շատ թե քիչ աչքի ընկնող լեռնաշղթաների ու գագաթների լանջերն ու բաշերը, իսկ կիրճերն ու հովիտները ծածկված են անագին սառցադաշտերով, վորոնք հաճախ շատ են գերազանցում

Կովկասյան ու Ալպիական լեռների սառցադաշտերին։ Ինիլչեկ սառցադաշտը հասնում է 70 կմ յերկարության։

Խան-Թենգրիից դեպի արևմուտք ձգված լեռնաշղթաներից ամենաբարձրն է Կոկշաալ-Տաուն (6000 մ)։ Կլիմայի չորության հետևանքով ձյան գիծը բարձր է ընկած (3000-3700 մ)։

Պամիր-Ալայան սիստեմն իր յերկարությամբ հետ է մնում Տյան-Շանից (1200 կմ), բայց նրան գերազանցում է իր բարձրությամբ և լեռնաշղթաների խտությամբ, լեռնանցքների ու լեռնագագաթների բարձրությամբ։ Պամիր-Ալայան լեռների ամենաբարձր կետը Ստալինի գագաթն (7495 մ), վորը 300 մ բարձր է Խան-Թենգրիից։ Այդ ԽՍՀՄ-ի ամենաբարձր լեռնագագաթն է։

Հյուսիս-արևելքում Տյան-Շանին է միանում և նրա շարունակությունն է կազմում Ալայան լեռնաշղթան։ Ալայան լեռնաշղթայից դեպի հարավ, Ալայան լայն հովտով անջատված ձգված է Անդրալայան ել ավելի բարձր լեռնաշղթան, վորի ամենաբարձր կետը Լենինի գագաթն է (7127 մ)։ Արևմուտքում Անդրալայան լեռնաշղթան շարունակվում է Պետրոս I լեռնաշղթայով։ Նրա մոտ Գիտությունների Ակադեմիայի լեռնաշղթայում, գտնվում է Ստալինի գագաթը և Ֆեդչենկո սառցադաշտը, վորը յերկրագնդի ամենամեծ լեռնային սառցադաշտն է (80 կմ)։

Ավելի հարավ ընկած է Պամիր («աշխարհի կտուր») ընդարձակ լեռնաշխարհը։ Դա մի ընդարձակ լեռնաշխարհ է, վոր ծովի մակերևույթից միջին հաշվով 3500-4000 մ բարձրություն ունի և վորտեղ բարձրանում են 6000 մ հասնող լեռնաշղթաներ ու առանձին գագաթներ։ Այդտեղ լեռնաշղթաներն իրարից բաժանվում են լայն հովիտներով, վորոնք ծովի մակերևույթից 4000 մ և ավելի բարձրություն ունեն, այնպես վոր, իրենք՝ լեռնաշղթաները հովիտներից բարձր են ավելի քան 2000-2500 մ։ Զգալի տարածություններ ծածկված են հնադարյան սառցադաշտային նստվածքներով. տեղ-տեղ հանդիպում են նույնիսկ հանածո (գետնաթաղ) սառույցներ (Կարա-Կուլ լճի ափերին)։ Գետերի ընթացքը դանդաղ է։ Այսպես է արևելյան Պամիրի ռելյեֆը։ Այնտեղ արևմտյան Պամիրը խիստ կտրտված լեռնոտ յերկիր է ռելյեֆի ուժեղ կոնտրաստներով։ Այստեղ դրեթե հովիտները խոր են և ներկայացնում են դժվարանցանելի կիրճեր. լեռնաշղթաները շատ ավելի վեր են բարձրանում հովիտների մակերևույթից և գետերը ցած են հոսում փոթորկահույզ արընթացությամբ։

Պամիրը բարձրալեռ և միաժամանակ ամայի յերկիր է։ Այդտեղ կլիման չոր է ու դաժան, ջերմաստիճանի խիստ փոփոխություններով։ Շարունակ փչում են ուժեղ քամիներ, օդը խիստ նոսր է, բուսականությունը շատ աղքատիկ, վորի մեջ խառն են ալպիական ու տափաստանային բույսերը։ Լեռների լանջերը ծածկված են վիթխարի քարակույտերով, իսկ հովիտների հատակը՝ խիճով ու գլաքարով։ Զարմացնում է կյանքի համարյա կատարյալ բացակայությունը։ Փորձված աչք է հարկավոր, վորպեսզի կարողանա տեսնել այստեղ-այնտեղ կուչ յեկած խոտերը, պամիրական բնորոշ թփերը (տերեսկեն). լեռնային կաքավներին ու մանր կրծողներին։ Տեսարանն անկյանք է ու միապաղաղ, առավելապես գորշավուն գույնի։ Վորոշ բազմազանություն է մտցնում միայն հավերժական ձյունը, վորն սպիտակին է տալիս այստեղ-այնտեղ, լեռների կատարներին,—մեկ էլ անամպ յերկնքի մուգ կապույտն ու հեռավոր լճերի կապտորակ հայելին։

Կոպետ-Դաղ լեռնաշղթան, վորն անցնում է Միջին Ասիայի հարավ-արևմտյան սահմանով, շատ ավելի ցածր է և չունի ձյունապատ գագաթներ։ Կինիշ-Դաղի հյուսիս-արևմտյան վերջավորության և Կասպից ծովի ափի միջև ընկած են Փոքր և Մեծ Բալխան լեռները (վերջինս մինչև 1867 մ բարձրությամբ)։

Միջին Ասիայի լեռներն ու հարթավայրերն ունեն օգտակար հանածոների մեծ պաշարներ, վորոնք դեռ բավարար չափով ուսումնասիրված չեն։ Տյան-Շանում գտնվել են քարածխի, նավթի, գունավոր մետաղների, սնդիկի և ռադիումի հանքավայրեր, Պամիրում՝ ոսկի, Կարա-Կումում՝ ծծումբ։ Կասպից ծովի ափին (Նեբիթ-Դաղ և Չելեքեն կղզի) նավթ, իսկ Կարա-Բողազ-գյոլում միրաբիլիտի և ուրիշ աղերի հսկայական պաշարներ։

Ամու-Դարիա, Սիր-Դարիա.—Պամիրի ձյունն ու սառցադաշտերն իրենցից բխող լեռնային գետակներով ջուր են մատակարարում Միջին Ասիայի խոշորագույն գետին՝ Ամու-Դարիային։ Վերին հոսանքում Ամու-Դարիան խիստ արընթաց մի գետ է, վոր հոսում է բարձր լեռների կիրճերով և Ամու-Դարիայով անցնելը խիստ դժվար է։ Վերջին վտակներն Ամու-Դարիան ընդունում է Հիսարյան լեռնաշղթայից, վորից հետո հոսում է հարթավայրով դեպի հյուսիս-արևմուտք, իր մեջ չառ-

նելով և վոչ մի գետակ։ Նրա հունը տեղ-տեղ լայնանում է, տեղ-տեղ դառնում է նեղ, խորությունը վերին աստիճանի անկայուն է, հոսանքի արագությունն ու փոփոխման ուժը շատ մեծ։ Արալի ծովը թափվելիս նա առաջացնում է մի ընդարձակ դելտա։ Ջրառատությունը, արագահոսությունն ու քմահաճ ընթացքը չեն թույլ տալիս արհեստական ոռոգման նպատակներով լիովին օգտագործել նրա ջրերը։



Նկ. 78. Մի կիրճ արևմտյան Պամիրում։

Միջին Ասիայի մյուս խոշոր գետն է Սիր-Դարիան, վորն իր ակունքային ջրերն ստանում է Տյան-Շանի ձյուներից ու սառցադաշտերից։ Սիր-Դարիան ջրի քանակով, լայնությամբ ու խորությամբ Ամու-Դարիային զիջում է, բայց յերկարությամբ նրանից մի քիչ ավելի յե։ Սիր-Դարիան և նրա վտակներն օգտագործվում են արհեստական ոռոգման համար։ Սիր-Դարիան սկիզբ է առնում Կենտրոնական Տյան-Շանում, Իսըկ-Կուլ լճից դեպի հարավ։ Ֆերգանայի հովտից դուրս գալով՝ Սիր-Դարիան ընթանում է դեպի հյուսիս-արևմուտք և այդ ուղղությամբ էլ հոսում է մինչև Արալի ծովը թափվելը։ Նրա վտակներից ամենանշանավորն է Չիրչիկը, վորը հոսում է Տաշքենդի ոազիսով։

Ամու-Դարիայի նման Սիր-Դարիան եւ իր ստորին հոսանքում վոչ մի վտակ չի առնում իր մեջ։ Արալի ծովը թափվելիս նա եւ դելտա յե առաջացնում։

Կլիման յեվ բուսականությունը.— Միջին-Ասիան օվկիանոսից շատ հեռու յե գտնվում, իսկ ներքին ջրընկալները՝ Կասպից և Արալի ծովերն այնքան փոքր են, վոր չեն կարող նկատելի չափով մեղմացնել կլիման։ Այդ պատճառով էլ Միջին Ասիայի կլիման խիստ ցամաքային է. ամառը սովորական շոգ է լինում, ձմեռը շատ ավելի դաժան, քան այն լայնության վրա ուրիշ վայրերում, տեղումների քանակն աննշան է։ Կլիմայի ցամաքայնությունը սաստկանում է և նրանով, վոր տիրապետող քամիները փչում են մեծ մասամբ հյուսիսից։



Նկ. 79. Ամու-Դարիան Չարջույի մոտ։

Առավել խստությամբ աչքի յե ընկնում բարձր լեռնային շրջանների կլիման, ինչպիսին է Պամիրը։ Այն հովիտները, վորոնք հյուսիսից շրջափակված են լեռներով (Ֆերգանայի, Զերավշանի) ավելի մեղմ կլիմա ունեն։ Հարավում հունվարի միջին ջերմաստիճանը 0°-ից բարձր է, սակայն յերբեմն սառնամանիքները հասնում են —15° և —20°։ Ընդհանուր առմամբ այդտեղ ձմեռը փոփոխական է, ձյունը տեղում է դեկտեմբերին և մնում է մինչև փետրվար, թեև յերբեմն ավելի շուտ է հալչում։

Գարունը վաղ է բացվում և կարճ է տևում։ Փետրվարին ձյունը հալչում է, դաշտերն ու ծառերը ծածկվում են կանաչով, իսկ մայիսի վերջին արդեն հասնում են ցորենն ու ծիրանը

Այնուհետև սկսվում է յերկարատև շոգը անանձրև ամառը։ Փչում են տաք ու չոր քամիներ, վորոնք խանձում են և չորացնում բուսականությունը, իսկ անապատներում բարձրանում են ավազի ու մանր փոշու ամպեր, վորոնք ծածկում են արևի յերեսը։ Հուլիսի միջին ջերմաստիճանը հյուսիսում 26° է, հարավում՝ 32°. այդտեղի շոգը համարյա հավասարվում է Սահարայինի։ Լեռներում ու նախալեռնային վայրերում ամառը մեղմ է, անձրևներ են տեղում և բուսականություն է լինում։ Ոգոստոսի վերջին, իսկ հարավում սեպտեմբերի սկզբին, շոգը կտրվում է և սկսվում է տաք աշունը, վորը Միջին Ասիայում տարվա ամենալավ յեղանակն է։ Պամիրի և Տյան-Շանի բարձր լեռնաշղթաների կլիման հիշեցնում է հեռավոր հյուսիսը։ Այդտեղ յերբեմն սառնամանիքներ են լինում նույնիսկ հուլիսի առաջին կեսին, իսկ ձմեռը սառնամանիքները հասնում են 47°-ի։

Ամռանը ջերմությունը բարձրանում է +15° և արևի տակի ու ստվերի ջերմության տարբերությունը խիստ մեծ է լինում։ Տարեկան միջին ջերմաստիճանն այնքան է, վորքան Սպիտակ ծովի ափերին։

Չոր ու խիստ ցամաքային կլիման իր խորը կնիքն է դնում բուսական ու կենդանական աշխարհի վրա։ Անապատներից մինչև բարձր լեռնային շրջանները բուսականությունը բաղկացած է «չորակերներից», վորոնք դիմանալու համար հարմարվել են ուժեղ յերաշտներին։ Տափաստանային բուսականությունով է ծածկված վոչ միայն հարթավայրը, այլև լեռների լանջերը, հասնելով համարյա հավերժական ձյան սահմաններին։ Նույնիսկ Տյան-Շանի ու պամիրի բարձրադիր հովիտները ներկայացնում են տափաստաններ, հաճախ հանդիպող աղուտներով ու աղի լճերով։ Անտառներ հանդիպում են միայն լեռներում և մի քանի տեղ գետերի ափերին։

Չնայած անապատային ու տափաստանային բուսականության ընդարձակությանը, այստեղ բույսերի տեսակները զգալիորեն պակաս են, քան Միջին Ասիայի լեռնային մասերում։ Դրա համար էլ այստեղի տափաստանները զարմացնում են իրենց միապաղաղությամբ ու աղքատությամբ։ Բուսականությունը նոսր է և հարավային ռուսական տափաստանների նման խոտի համատարած գորգ չի ստեղ-

ծում։ Անապատներում գերակշռում են թփուտներն ու կիսաթփուտները. շատ կան կոշտ, փշոտ ու մազմզուկներով ծածկված բույսեր։ Ավելի ևս յուրահատուկ է ավազուտ տափաստանների բուսականությունը։ Դրանք մեծ մասամբ թփուտներ են, կամ ծուռտիկ բներով ցածրիկ ծառեր, մոխրագույն կամ կանաչ ճյուղերով, վորոնք տերևների փոխարեն հաճախ թփուտներ են ունենում։ Արմատները շատ խոր են մտնում գետնի մեջ, փայտը պինդ է և դյուրաբեկ. այդպես է սաքսաուլը, վորն ամբողջ անտառներ է կազմում։ Շատ կան հովհարաձև բույսեր, վորոնցից



Նկ. 80. Սաքսաուլի անտառ։

նշանակալից է սապֆեդիտը՝ խոշոր (յերկու մետրանոց) բնով, դեղին ծաղիկների հովանոցով, վորոնք ուժեղ և անախորժ բուրմունք ունեն։ Այդ բույսն ամբողջ կիլոմետրերով ծածկում է ավազուտները։ Ավազուտ անտառների համար բնորոշ է նաև խանծիլը՝ հաստ ու մսալի տերևների փնջերով։ Բույսերն այդտեղ իրենց յերկար արմատներով ամրացնում են ավազը, դրա համար էլ շարժուն ավազներ ու բարխաններ հանդիպում են միայն այնտեղ, ուր բուսականություն չկա, կամ յեղածը վոչնչացվել է մարդու կողմից։ Կավային անապատներում բուսնում են զանազան տեսակի ոշինդրներ և ուղտափշեր, իսկ աղուտներում՝ աղաբույսեր։ Գարնանը անապատներն ու տափաստանները ծածկվում են բազմաթիվ սոխաբույսերով, վորոնցից ամենատարածվածն են զանազան սոխուկները։ Աղուտներում և գլխա-

վերջապես գետերի ու լճերի ափերին աճում են չիի թփեր՝ մինչև 4 մ բարձրությամբ մի բանջարաբույս, վորոնք տեղի բնակչության կյանքում շատ մեծ դեր են խաղում (նրանցից խսիր են չինում, տանիքներն են ծածկում և այլն): Գետերի ափերի ծառուտները, վորոնք այստեղ կոչվում են «տուգայ», իսկական անանցանելի ջունգլիներ են, վորոնց մեջ աճում են զանազանատեսակ կաղամախի, ուռենի, մոշավայրի և չիչխաններ:



Նկ. 81. Չիի թփուտները Բալխաշի հարավային ափերին:

Լեռնային անտառները բաղկացած են սաղարթավոր ծառատեսակներից, վորոնց մեջ հանդիպում են վայրի աճող ընկուզենիներ, պիստակենիներ, ծիրանիներ, մինչդեռ սոճի, կաղնի, լորի՝ ամենևին չկան: Արևելյան Տյան-Շանում ամենատարածված ծառն է յեղևնին: Անտառների գոտուց բարձր աճում են ծառանման գիհիներ՝ «արչիններ», իսկ ավելի բարձր՝ բարձր լեռնային բուսականություն, վորը խոնավ վայրերում հիշեցնում ալպիական մարգագետինները, իսկ չոր վայրերում՝ մերձկասպյան տափաստանը: Այդտեղ բուսականությունը հասնում է այնպիսի բարձրունքների, վոր Մոնբլան լեռից էլ ավելի բարձր է, և տափաստանային բույսերը, ինչպես օրինակ՝ ոշինդրն ու փետրախոտն աճում են ձյան ու սառցադաշտերի կողքին: Պամիրի լեռնաշխարհը ծածկող մոխրագույն ցածրիկ խոտերը հարմարվել

են վոչ միայն խիստ, չոր կլիմային, այլև կարճատև ամռանը՝ այդպես է տերեսկենը, բարձի նման կենտրոնացած ցողունով, վորոնք փռված են գետնին:

Կենդանական աշխարհն էլ բուսականի նման մեծ տարածությունների վրա միօրինակ է: Անապատներն ու բարձր լեռնային շրջաններն այստեղ ունեն իրենց յուրահատուկ ներկայացուցիչները (1 մաս, էջ 99—100 և 106): Տափաստաններում և անապատներում ընտանի կենդանիներից բնորոշ է ուղտը, բարձր լեռնային շրջաններում՝ յակը:

Բնակչությունը: Վարչական բաժանումը.—Միջին Ասիայի բնակչության թիվը համեմատաբար շատ չէ: Այդտեղ ապրում է մոտ 9.5 միլ. մարդ, այսինքն՝ նույնքան, վորքան ԽՍՀՄ Յեվրոպական մասի հյուսիսում: մեկ քառ. կմ վրա միջին հաշվով 9 մարդ է ապրում: Սակայն մինչդեռ անապատներում յուրաքանչյուր 100 ք կմ մի քանի մարդուց ավելի չի ընկնում, շատ տեղեր էլ բոլորովին անմարդաբնակ են, իսկ բերրի ու լավ վոռոգված ոազիսներում յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա ապրում է մոտ 70 մարդ, տեղեր էլ կան, վորտեղ մեկ ք կմ մոտ 300—400 մարդ է ընկնում:

Բնակչության հիմնական մասսան բաժանվում է յերկու խմբի՝ թուրքական և իրանական: Իրանական խմբին են պատկանում տաջիկները, վոր Միջին Ասիայի հնագույն բնակիչների հաջորդներն են և խոսում են իրանականին մոտիկ լեզվով. Թուրքական խմբին են պատկանում ուզբեկները. թուրքմենները, կիրգիզները, կարա-կալպակները: Թվով առաջին տեղն են բռնում ուզբեկները (ամբողջ բնակչության կեսից ավելին), ապա տաջիկները (14%), կիրգիզները, թուրքմենները: Ռուսներն ընդամենը 6% են կազմում:

Այդտեղ ապրող մյուս ավելի մանր ազգերն են՝ բուխարական հրեաները, չին-դունգանները և շատ ուրիշները:

Վարչական տեսակետից Միջին Ասիան բաժանվում է 5 հանրապետության. այդ բաժանման հիմքն են կազմել ազգային հատկանիշները: Հանրապետություններից չորսը՝ Թուրքմենականը, Ուզբեկականը, Տաջիկականը և Կիրգիզականը ինքնուրույն հանրապետություններ են, վորոնք մտնում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ: Ամենից

շատ բնակչություն ունի Ուզբեկական ԽՍՀ-ն, կամ Ուզբեկստանը, վորը միջին դիրք ունի, գտնվելով գլխավորապես Տյան-Շանի և Պամիրո-Ալայի նախալեռնային գոտում: Նրա կենտրոնն է Տաշքենտը: Նա բաժանվում է հինգ մարզի. Ֆերգանայի (կենտրոնը Ֆերգանա), Տաշքենտի (կենտրոնը Տաշքենտ), Սամարկանդի (կենտրոնը Սամարկանդ), Բուխարայի (կենտրոնը Բուխարա), Խորեզմայի (կենտրոնը Ուրգենչ), բացի այդ նրա կազմի մեջ է մտնում Ամու-Դարիայի ստորին հոսանքում, Արալի ծովի հարավային մասի շուրջը գտնվող Կարակալպակական ԱԽՍՀ-ն Նուկուս կենտրոնով (ժամանակավոր՝ Տուրտուկուլ):

Արևմուտքում Ուզբեկստանին սահմանակից է Թուրքմենական ԽՍՀ-ն կամ Թուրքմենստանը, Աշխաբադ կենտրոնով: Իր տերիտորիայի մեծությամբ Թուրքմենստանը Միջին Ասիայի հանրապետություններից ամենախոշորն է: Նա համարյա ամբողջովին գտնվում է Թուրանի դաշտավայրում և նրա մեծ մասը բռնում է Կարա-Կում անապատը: Ուզբեկական հանրապետությունից դեպի արևելք գտնվում է Կիրգիզական ԽՍՀ-ն, Ֆրունզե կենտրոնով, իսկ դեպի հարավ՝ Տաջիկական ԽՍՀ-ն, կամ Տաջիկստանը, Ստալինաբադ կենտրոնով: Տաջիկական հանրապետության մեջ է գտնվում նաև Լեռնային Բադախշանական ավտոնոմ մարզը՝ Խորոգ կենտրոնով: Կիրգիզական ԽՍՀ-ն և Տաջիկական ԽՍՀ-ն գտնվում են լեռներում. առաջինը Տյան-Շանում, երկրորդը՝ Պամիր-Ալայում, իսկ Լեռնային Բադախշանական ավտ. մարզը բռնում է Պամիրը:

Տնտեսությունը.—Միջին Ասիան մի երկիր է, վորի տնտեսության մեջ առաջնակարգ դեր է խաղում գյուղատնտեսությունը, իսկ գյուղատնտեսության մեջ էլ՝ հողագործությունը: Անասնապահությունը թեև մի քանի շրջաններում բնակչության գոյության գլխավոր և նույնիսկ միակ աղբյուրն է, բայց ընդհանուր առմամբ շատ հետ է մնում հողագործությունից: Միջին Ասիայի ամբողջ հարավային մասը ծածկված է արգավանդ լյոսահողով, սակայն կլիմայական պայմանների շնորհիվ, այդտեղ հողագործությունը հնարավոր է միայն արհեստական վոռոգման պայմաններում: Մյուս կողմից տաք կլիման շատ բարենպաստ է հողագործության համար: Երբեմն ցանք են անում նաև անջրդի հողերում, այդպիսի հողերն ու ցանքերը կոչվում են բողար (անջրդի):

Արհեստական վոռոգման շնորհիվ, Միջին Ասիայի հողագործական շրջանները հանդիսանում են ոազիսներ, վորոնք իրարից բաժանված են անապատներով (Մերվի ոազիսը Կարա-Կումի հարավում, Խորեզմի ոազիսը Ամու-Դարիայի ստորին հոսանքում): Վոռոգվող հողերի ամենամեծ մասը գտնվում է Ուզբեկստանում, վերջինիս Ֆերգանայի հովտում և Զերավշան գետի հովտում: Իսկ ընդհանրապես վոռոգվող հողերի տարածությունը կազմում է ընդամենը 2—3%: Մշակության համար պիտանի հողերի տարածությունն զգալիորեն ավելի յե, սակայն ամեն տեղ չէ, վոր կարելի յե վոռոգում անցկացնել, Այնուամենայնիվ, վոռոգվող հողերի տարածությունն անընդհատ ավելանում է: Այդ ոազիսներում է ապրում Միջին Ասիայի ամբողջ նստակյաց բնակչությունը: Հողի մշակությունը շատ բարձր է: Հացաբույսերից ամենից շատ ցանվում է ցորեն, ապա՝ գարի, ջուհարա (կորեկի մի տեսակը) և բրինձ, լոբաբույսերից՝ առվույտ: Սակայն ամենից մեծ նշանակություն ունի բամբակի մշակությունը: Միջին Ասիան, գլխավորապես Ուզբեկստանը, իսկ Ուզբեկստանում Ֆերգանայի հովիտը, տալիս են Խորհրդային Միության գործարաններում վերամշակվող բամբակի մեծ մասը: Բամբակը մաքրվում է տեղական բամբակազտիչ գործարաններում, նրա սերմից ձեթ են արտադրում, իսկ քուսպը գործածվում է վորպես անասունների կեր: Գյուղատնտեսության մյուս ճյուղերից կարևոր նշանակություն ունեն այգեգործությունը, խաղողագործությունը և բանջարաբուծությունը. մշակում են ծիրան, դեղձ, սերկևիլ, թուզ, խնձոր, տանձ, խաղող, ձմերուկ, սեխ: Չորացած մրգի մի մասը—ուրյուկը (ծիրան), շեֆթալին (դեղձ) և մեծ քանակությամբ խաղողն արտահանվում է երկրի սահմաններից դուրս: Վերջապես Միջին Ասիան մեր շերամապահական գլխավոր շրջանն է:

Հարթավայրերն ու լեռների լանջերը ծածկող ընդարձակ անապատներն ու տափաստանները բոլորովին անպետք են հողագործության համար: Այդ վայրերում ցրված նոսր բնակչության գոյության աղբյուրն անասնապահությունն է: Անասուններն ամբողջ տարին արածում են արոտներում: Կիրգիզները ձմեռում են ցածրադիր լեռնահովիտներում, վորտեղ նստակեցության անցնելուց հետո զբաղվում են հողագործությամբ, իսկ ամառն անասունները քշում են բարձր լեռնային արոտները

(յայլա)։ Պահում են մեծ մասամբ դմակավոր և կարակուլի ոչխար, ապա ուղտեր, յեղջերավոր անասուններ ու ձիեր։ Բարձր լեռներում պահում են յակեր և եշեր։ Քոչվոր բնակչությունը նստակյաց կյանքի յե անցնում։

Վերջին տարիներս Միջին Ասիայում գյուղատնտեսությունը մեծ նվաճումներ է ունեցել՝ շնորհիվ կոլեկտիվացման, հողի մշակման ու բամբակի բերքահավաքի մեջ մեքենաների գործադրման, ջրանցքներն ու առուները մեքենաներով մաքրելուն և այլն։ Անընդհատ աճում է նաև ոռոգվող հողերի տարածությունը։

Հանքային հարստությունները, վորոնց ուսումնասիրությունն անընդհատ կատարում են խորհրդային էքսպեդիցիաները, շատ ու շատ են, սակայն նրանց մշակությունը նոր է միայն սկսվում։ Դրանցից, գլխավորն է, նավթը Կասպից ծովի ափերին (Նեբիթ-Դաղ) և Չելեքեն կղզում, ինչպես և Ֆերգանայում միրաբիլիտը, (գլաուբերյան աղը) Կարա Բողազ-Գյոլ ծոցում, վորտեղ մի վիթխարի քիմիական կոմբինատ է կառուցվում, գունավոր մետաղներն ու քարածուխը Ֆերգանայի հովտում և նրա շրջապատի լեռներում, կապարը Թուրքեստանի լեռնաշղթայում, ծծումբը՝ Կարա-Կումում։ Էներգետիկ ռեսուրսների կողմից Միջին Ասիան ունի նաև ջրային էներգիայի մեծ պաշարներ։ Այդ տեսակետից նա յերկրորդ տեղն է բռնում Արևելյան Սիբիրից հետո։

Արդյունաբերությունը գլխավորապես զբաղված է գյուղատնտեսական հումքի վերամշակումով. բամբակազտիչ, ձեթի, կաշվի, մրգի կոնսերվի գործարաններ։ Զարգանում են գյուղատնտեսական մեքենաշինությունը (Տաշքենտ), արհեստական պարարտանյութերի արտադրությունն ու տեքստիլ արդյունաբերությունը։

Քաղաքներն ու հաղորդակցության ուղիները.—Միջին Ասիայում բնակչությունը միահավասար չի տարածված. այդ կախում ունի գլխավորապես ջրի գոյությունից։ Քաղաքային բնակչության տոկոսը բավականին բարձր է, մանավանդ Ուզբեկստանում, վորտեղ նա հասնում է 25%-ի, այն միջոցին, յերբ Տաջիկստանում կազմում է հազիվ 5 տոկոսը։ Նստակյաց ուզբեկների ու տաջիկների գյուղերը կոչվում են կիշլաղ, քոչվոր թուրքմեններինն ու կիրգիզներինը՝ աուլ։

Միջին Ասիայում խոշոր քաղաքներ շատ կան։ Նրանցից ամենանշանավորն է Տաշքենտը, վորը 500 հազարից ավելի բնակիչ ունի։ Նա միաժամանակ ամբողջ յերկրամասի ամենանշանավոր կուլտուրական կենտրոնն է։ Սամարկանդը, Անդիժանը, Նամանգանը, Կոկանդը, Մարգելանը (բոլորն էլ Ուզբեկստանում) բամբակագործության կենտրոններն են և յուրաքանչյուրը 100 հազարի չափ բնակիչ ունի, նույնքան բնակիչ ունի Աշխաբադը Թուրքմենստանում։ Սամարկանդում մնացել են շատ նշանակալից ճարտարապետական հուշարձաններ։ Նոր քաղաքներն իրենց ծագումով և զարգացմամբ պարտական են յերկաթուղիներին։



Նկ. 82. Կամուրջ Պամիրի գետերից մեկի վրա և լեռնային շավիղ։

Ներկայումս Միջին Ասիան Միության մյուս մասերի հետ միանում է յերեք յերկաթուղային մագիստրալով։ Մեկը՝ Միջին Ասիականը, սկսվում է Կասպից ծովի ափին, Կրասնովոդսկում և Աշխաբադի միջով գնում է Բուխարա-Սամարկանդ, Ֆերգանայի հովիտը, դեպի բամբակագործության կենտրոններ՝ Կոկանդ-Անդիժան-Նամանգան։ Գլխավոր մագիստրալից ճյուղեր են բաժանվում դեպի հարավ՝ Մարից (Մերվ) դեպի Կուշկա, Նոր Բուխարայից դեպի ավղանական սահմանը, Թերմեզ, իսկ այնտեղից դեպի հյուսիս-արևելք՝ Տաջիկստանի մայրաքաղաք Ստալինաբադը։ Ավելի կարևոր է մի ուրիշ մագիստրալ, վորը Չկալովը կապում է Տաշքենտի հետ. Նա Միջին Ասիան Չկալովի միջոցով կապում է Պովոլժյեյի, ապա և Կենտրոնի հետ։ Տաշ-

քենտից այդ մագիստրալը շարունակվում է դեպի հարավ և միանում Միջին-Ասիական մագիստրալին։

Երրորդ երկաթուղային մագիստրալն արդեն կառուցվել է խորհրդային իշխանության օրով և Միջին Ասիան միացնում է Արևմտյան Սիբիրի հետ։ Այդ, այսպես կոչված Թուրքսիբն է՝ Թուրքեստան—Սիբիր երկաթուղին։ Նա անցնում է Ղազախստանի տերիտորիայով, դուրս գալով Չկալովից, ապա Տաշքենտից հյուսիս ճյուղավորվելով գնում է դեպի Ալմա-Աթա, ապա Սեմիպալատինսկ և Նովո-Սիբիրսկ։ Նրանից անջատված մի ճյուղ գնում է Ֆրունզե քաղաքը, որը Կիրգիզական ՍՍՀ-ի գլխավոր քաղաքն է։



Նկ. 83. Անապատի ավազուտներում։

Ավելի քիչ նշանակություն ունի ջրային տրանսպորտն Ամու-Դարիա գետով։ Սկսած Չարջույից, որտեղ Ամու-Դարիան կտրվում է 1 կմ երկարություն ունեցող, ՍՍՀՄ-ի ամենամեծ երկաթուղային կամուրջներից մեկով, այդտեղից սկսած Ամու-Դարիայով գոյություն ունի նավագնացություն դեպի վեր ու վար՝ մինչև գետաբերանը։ Օդային հաղորդակցությունը մի կողմից Եվրոպական մասի կենտրոնը կապում է Տաշքենտի հետ, մյուս կողմից երկրի ներքին առանձին մասերը՝ Տաշքենտի հետ։

Անապատներում ու տափաստաններում հաղորդակցությունը մինչև այժմ էլ կատարվում է գլխավորապես ուղտի քարավաններով։ Խորեզմի օազիսն այն կարևոր կետն է, դեպի ուր գնում են քարավանների ճանապարհները։ Շատ կան նաև այնպիսի ճանապարհներ, որոնցով կարող է տեղի ունենալ անիվավոր շարժում։ Այդ ճանապարհները շատ նեղ են, ամառը խիստ փոշոտ, ձմեռը ցեխոտ, շատ տեղ ջրանցքների վրայով կամուրջներ չեն գցված։ Այդպիսի անբարեկարգ ճանապարհներով ավելի հարմար է ճանապարհորդել տեղական սայլերով, որոնք շատ խոշոր անիվներ ունեն։

Մեծ ապագա յէ պատկանում ավտոմոբիլային հաղորդակցությանը։ Արդեն կառուցվել են մի քանի նոր խճուղիներ, որոնցից մեկն ամբողջ Պամիրը կտրելով՝ Օշից տանում է դեպի Խարոգ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն 3

I. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍ

1. ԽՍՀՄ Եվրոպական մասի Հյուսիսը . . . .
2. ԽՍՀՄ Եվրոպական մասի Կենտրոնը 3:
3. ԽՍՀՄ Եվրոպական մասի Արևմուտքը 46
4. ԽՍՀՄ Եվրոպական մասի Հարավը 5
Ուկրաինա 5
Ղրիմ 70
Ռոստովի մարզ 79
5. Կովկաս 82
6. Պովոլժյե 105
7. Ուրալ 119

II. ԱՍԻԱԿԱՆ ՄԱՍ

8. Արևմտյան Սիբիր 134
9. Արևելյան Սիբիր 152
10. Հեռավոր Արևելք 177
11. Ղազախստան 196
12. Միջին Ասիա 211

Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Թարգմ. Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչներ՝ Ա. Արզաքանյան, Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ծ. Գարագաշ

Գլավլիտի լիազոր՝ Զ—1072 Հրատ. № 5075 Պատվեր 839. Տիրաժ 10.000.
Հանձնված է արտադրության 16 նոյեմբ. 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 25 հունվ. 1940 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0265994

ԳԻՆԸ 2 Ռ. 20 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 80 ԿՈՊ.

11809

С. В. [illegible]ФРАНОВ
Физическая география СССР
II часть
Гиз. Арм. ССР Ереван, 1940 г.